9(47925)
Ջ-91

Մ. Ա. ՋՈՒԱԼՅԱՆ

ՋԱԼԱԼԻՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

М. К. ЗУЛАЛЯН

ДВИЖЕНИЕ ДЖЕЛАЛИЕВ И ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКОГО НАРОДА В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

(XVI—XVII века)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1966

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(Հ)
Զ-91

Մ. Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ

ՋԱԼԱԼԻՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(XVI—XVII դարեր)

538

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1966

Հայկական, թուրքական և այլ սկզբնաղբյուրների հիման վրա առաջին անգամ հայագիտական գրականության մեջ լուսաբանվում են ջալալիների շարժումների հետ կապված մի շարք հարցեր՝ ջալալիների շարժումների նախադրյալները, շարժման ընթացքն ու ունեցած հետևանքները և այլն։ Աշխատության մեջ քննարկվում են նաև տվյալ ժամանակաշրջանի Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները և քաղաքական վիճակը։

Աշխատությանը կցված են արխիվային ու պատմողական բնույթի վավերագրեր, գրականության ցանկ և այլն։

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին Փոքր Ասիայի կենտրոնական և արևելյան մասերում, ինչպես և Օսմանյան կայսրության ասիական այլ շրջաններում (Սիրիայում, Միջագետքում) լայն ծավալ ընդունած ջալալի[1] ապստամբների հակապետական շարժումների վերաբերյալ մինչև օրս էլ հայագիտական գրականության մեջ հատուկ ուսումնասիրություն գոյություն չունի, եթե նկատի չունենանք հայ աղբյուրների վկայությունների հիման վրա գրված նախասովետական և սովետական շրջանի մեր պատմաբանների առանձին աշխատություններում այդ հարցի մասին արված մասնակի դիտողությունները[2]։

---

[1] Սկզբնական շրջանում ջալալիներ կամ ջելալիներ էին կոչվում 1519 թվականին Թոխատի շրջակայքում բռնկված կրոնական երանգ ունեցող ու ոմն Ջելալի ղեկավարությամբ պետության դեմ ապստամբողները։ Հետագայում սուլթանական պետության դեմ ուղղված բոլոր տեսակի շարժումները (գյուղացիական, քաղաքային ազգաբնակչության կամ առանձին ֆեոդալների) սկսեցին անվանել ջելալիների շարժում (տե՛ս **Ahmet Refik**. On altinci asırda Rafîzilik ve Bektaşilik 1558—1591). Istanbul, 1932 s. 8—9, հմմտ. Աբշակ Ալպոյանյան. «Պատմութիւն Եւրոպիոյ հայոց», Կահիրե, 1952, էջ 97)։ Մաղաքիա Օրմանյանը «ջալալի» կոչումը ենթադրաբար կապում է քրդական ջելալի ցեղի անվան հետ։ Տե՛ս Մ. Օրմանյան. «Ազգապատում», հատ. Բ., Կ. Պոլիս, 1914, էջ 2305։ Այս տեսակետը պաշտպանում է նաև իրանագետ Բ. Բալայանը, տե՛ս **Б. П. Балаян**. К вопросу общности этногенеза шахсеван и кашкайцев, Востоковедческий сборник, I, Ереван, 1960 г. էջ 340։

[2] Այդպիսի էջերի կարելի է հանդիպել Ղ. Ալիշանի տարբեր աշխատություններում, պրոֆ. Լեոյի «Հայոց պատմություն» աշխատության երրորդ հատորում, Մ. Օրմանյանի «Ազգապատում» երկում և այլն։ Ջալալիների վերաբերյալ որոշ նյութեր կան նաև սովետահայ պատմաբան Հ. Անասյանի «Թուրքական տիրապետությունը Հայաստանում 17-րդ դարում» (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 5) հոդվածում։

Առանձին ուշադրության արժանի են ակադ. Ա. Գ. Հովհաննիսյանի և իրանագետ Հ. Դ. Փափազյանի կողմից ջալալիների շարժումներին տրված ընդհանուր գնահատականները։ Տե՛ս Ա. Գ. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. Բ, Երևան, 1959, էջ 81—83։ Հ. Դ. Փափազյան. Մատենադարանի պարսկական հրովարտակները, հատ. Բ, Երևան, 1959, էջ 12։

Մինչդեռ այդ շարժումներն իրենց հետապնդած նպատակներով ու ունեցած հետևանքներով մեծապես շոշափել են հայ ժողովրդի կենսական շահերը, անդրադարձել են նրա պատմական ճակատագրին։

Ջալալիների շարժումներն ու այդ տարիներին Շահ Աբբասի կազմակերպած «մեծ սուրգունն» («բռնի տեղահանումը») հայ ժողովրդի պատմության առավել դաժան դրվագներից էին։ Մեծ սուրգունի ամբողջ շրջանում հայ ժողովուրդը կանգնած էր կործանման եզրին։ Թուրք ու պարսիկ նվաճողները վարելով Հայաստանում իրենց «հրկիզման տակտիկան», ամայացնում էին ամբողջ երկիրը։ Հայ ժողովրդի մի հատվածն ստիպված էր լինում թողնել հայրենի երկիրը՝ օտար երկնակամարի տակ գեթ իր ֆիզիկական գոյությունը պաշտպանելու հույսով։

Ներկա աշխատության մեջ, հարազատ մնալով սկզբնաղբյուրների տվյալներին, փորձել ենք վեր հանել Հայաստանի, և նախ և առաջ, նրա արևմտյան հատվածի, սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմությունը։ Միաժամանակ ամբողջ Մերձավոր Արևելքի տվյալ ժամանակաշրջանի պատմության հարցերի վերլուծության հիման վրա փորձել ենք լուծել ջալալիների շարժումների հետ՝ կապված մի շարք քիչ լուսաբանված կամ համարյա չլուսաբանված հարցեր։ Դրանք են՝ այդ շարժումների նախադրյալների, անմիջական շարժառիթների, ընթացքի ու ունեցած հետևանքների հարցերը։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ա) ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թուրքական աղբյուրների վկայությունների հիման վրա ջալալիների շարժումների պատմության հարցերով զբաղվել է ավստրիացի նշանավոր պատմաբան Յոզեֆ Համմերը (1774—1856 թթ.) իր «Օսմանյան կայսրության պատմություն» բազմահատոր աշխատության մեջ[1]։ Եվրոպացի մյուս բոլոր գիտնականները փաստորեն իրենց տեղեկությունները ջալալիների շարժումների, ինչպես և առհասարակ Օսմանյան կայսրության ամբողջական պատմության վերաբերյալ հիմնականում քաղել են Յոզեֆ Համմերից[2]։

Տասնյակ տարիներ շարունակ Եվրոպայի ու Ասիայի գրադարաններից Համմերը նյութեր է հավաքել իր՝ «Օսմանյան կայսրության պատմությունը» գրելու համար։ «Գրքիս համար ինձ անհրաժեշտ եղավ,—գրում է հեղինակը,—երեսուն տարի նյութեր հավաքել, երեսուն տարի ջանալ ու փնտրել ու չնահանջել ոչ մի զոհողության առաջ, որպեսզի կարենամ գտնել ու գնել ամենահազվագյուտ նյութերն Օսմանյան կայսրության պատմության համար...»[3]։

---

[1] **J. Hammer**, Geschichte des Osmanischen Reiches, B VIII—IX. *1835—1844 թվականների ընթացքում այդ աշխատությունը հեղինակի խմբագրությամբ թարգմանվել է ֆրանսերեն, որը և մենք օգտագործեցինք։*

J. Hammer. Histoire de l'empire ottoman. tome VII. Paris, 1837, *էջ 330—331, 370—372*, tome VIII, *էջ 14—15, 33—35, 38—42, 58—59, 71—72։*

[2] *Տես*. **Jonquière**. Histoire de l'empire ottoman. Paris 1914, *հատ*. I—II, *ջալալիների մասին, հ*. I, *էջ 211—225*, Th. **Lavallée**, Histoire de la Turquie. Bruxelles, 1856. *ջալալիների մասին՝ հատ*. II, *էջ 36, 37 և այլն։*

[3] **J. Hammer**, Histoire de l'empire ottoman, *հատ*. I, *էջ 4։*

Համմերը հայտարարում էր, որ չկա մի աշխատություն Արևելքի պատմության վերաբերյալ, մի գիրք, որ ինքը կարդացած չլինի։

Համմերին շատ բարձր է գնահատել Կ. Մարքսը։ Իր «Թուրքական հարց» հոդվածում, նա խիստ քննադատում է եվրոպական այն դիվանագետներին, որոնք արևելյան լեզուներ չիմանալով, Թուրքիայի մասին իրենց նյութերը կուտակել են հույն թարգմանիչների օգնությամբ կամ ֆրանսիացի վաճառականներից, որոնք, ինչպես նշում է Մարքսը, բոլորովին էլ չեն հետաքրքրվել երկրի ժողովրդով, հիմնարկներով ու սոցիալական դրությամբ։ «Գովելի բացառություն է հանդիսանում,—գրում է Մարքսը,—Յոզեֆ Համմերը. Թուրքիայի գերմանացի պատմաբանը»[4]։

Իր մեծարժեք աշխատության մեջ Համմերը նկարագրում է թուրքական սուլթանների, մեծ վեզիրների ռազմական արշավանքների ընթացքը Եվրոպայում ու Ասիայում։

Համմերի աշխատության հիմնական թույլ կողմը այն է, որ նա չի կարողանում քննաբար վեր բարձրանալ դեպքերի պարզ նկարագրությունից։ Նա հաճախ բառացի կրկնում է թուրքական ժամանակագիրներին, միայն երբեմն ցուցաբերելով քննադատական մոտեցում նրանց հաղորդած նյութերի ու մատնացույց արված թվական տվյալների նկատմամբ։ Բոլոր դեպքերում չէ, որ նա կարողացել է ճշգրտել թուրքական ժամանակագիրների հաղորդած թվական տվյալները։ Այդ կոնկրետ ցույց է տալիս թուրքական ժամանակագրությանը նվիրված իր մենագրական աշխատության մեջ թուրք ժամանակակից պատմաբան Ի. Հ. Դանիշմենդը։ Ուստի և Համմերի այդ տվյալներին պիտի մոտենալ որոշակի զգուշությամբ։

Շարադրելով թուրքական ժամանակագրություններում եղած նյութերը, Համմերը միայն երբեմնակի է ցուցաբերում իր մոտեցումը, յուրովի բնութագրելով ջալալիների շարժումներն ու զատորոշելով դրանց տարբեր էտապները։ Շարժման գնահատականները Համմերի կողմից տրվում են սուբյեկտիվ-իդեալիստական դիրքերից։

Այսպես, նշելով, որ օսմանյան պետության դեմ ուղղված ջալալիների «այդ ամենածանր ու ամենավտանգավոր» ապստամբությունները, «...այնպիսի փոթորկոտ ոտնձգություններ էին օսմանյան սուլթանների իրավունքների նկատմամբ, ինչպիսիք կայսրությունը երբեք չէր տեսել իր հիմնադրման երեք հարյուր տարիների ընթացքում»[5], Համմերը նկատում է, որ այդ բոլորը առանձին սուլթանների թուլամորթության հետևանքն էր։ «Եթե Մուրադ երկրորդն իր կատարած նվաճումներով,—գրում է Համմերը,—բարձրացրեց օսմանյան պետականությունը, ապա ընդհակառակը Մուրադ երրորդը, մի տիրակալ, որն իրեն նվիրել էր ցոփության ու միստիցիզմի, կայսրության օրենքների խախտումներով լայն ճանապարհ բաց արեց զինվորական և քաղաքացիական ապստամբություններին, որոնք իր որդի Մուհամմեդ երրորդի օրոք, սկիզբ դրեցին պետական շենքի ավերմանը»[6]։

Ըստ Համմերի, այդ ապստամբությունները հետևանք էին նաև առանձին վեզիրների թույլ տված անձնական կոպիտ սխալների։ «Մուհամմեդ երրորդի մեծ վեզիրները,—գրում է Համմերը,—և հատկապես Ջիկալան (Ջղալազադե Սինան փաշան—Մ. Ջ.) Կերեստեսի (Հունգարիա) ճակատամարտում փախստականների նկատմամբ ցուցաբերած իր ծայրահեղ խստությամբ Ասիայում ապստամբության առաջին հատիկները ցանեց...»[7]։

Ըստ Համմերի, առանձին անհատներն են կերտում պատմությունը։

Ճիշտ է, Համմերն Օսմանյան կայսրության անկման երևույթները և ջալալիների ապստամբական ելույթների պատճառները իր աշխատության մի շարք էջերում փորձել է լուսաբանել հասարակության կյանքում կատարված որոշ լուրջ փոփոխություններով, սակայն այստեղ էլ նա փաստորեն վերաշարադրում է միայն 17-րդ դարի առաջին կեսի թուրք հեղինակ Կուչիբեյի կամ Կոչիբեյի սուլթան Մուրադ IV-ին ներկայացրած ուղերձի հիմնական դրույթները[8]։

Ջալալիների ապստամբությունների մասին հանգամանորեն գրում է իր «Ամասիայի պատմություն» աշխատության մեջ 19-րդ դարի երկրորդ կեսի թուրք հեղինակ Հյուսամմուդին Ամասիացին[9]։

---

[4] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. IX, Москва, 1932, էջ 387։

[5] J. Hammer, Histoire de l'empire ottoman, հատ. VII, էջ 372։

[6] J. Hammer, Նույն տեղում, հատ. VIII, էջ 44, „Si Mourad II... avait préparé par ses conquêtes la base sur laquelle son fils Mohammed II devait enlever la puissance ottomane, Mourad III, au contraire, prince donné à la débauche et au mysticisme, avait par ses violations des lois fondamentales de l'empire, ouvert une large voie aux insurrections militaires et civiles, qui, sous son fils Mohammed III, commencèrent la ruine de l'édifice gouvernemental".

[7] J. Hammer, Նույն տեղում։

[8] J. Hammer, Histoire de l'empire ottoman, հատ. VIII, էջ 45—48։

[9] آماسیه لی عبدی زاده حسین حسام‌الدین آماسیه تاریخی، استانبول، ج ۲، ۱۳۳۰ (۱۹۲۸).

Այս աշխատությունը, որի վրա հատուկ ուշադրություն է դարձրել սովետական թուրքագետ Ա. Ս. Տվերիտինովան և մասամբ այն օգտագործել ջալալիների շարժումներին, նվիրված աշխատության մեջ, բավականին փաստական նյութեր է պարունակում։ «Ամասիայի պատմության» մեջ հեղինակն օգտագործել է անհայտ արխիվային նյութեր, որոնք թույլ են տալիս ասելու, որ դա ավելի շուտ սկզբնաղբյուր է, քան թե ուսումնասիրություն։

Սակայն «Ամասիայի պատմությունը» հիշարժան է ոչ միայն փաստական նյութերի առկայությամբ, այլև նրա հեղինակի կողմից արված «մեկնություններով»։ 11 կետից բաղկացած ջալալիների ապստամբությունների իր պատճառաբանության մեջ Հյուսամուդդինն ամբողջ Թուրքիայի պատմությունը ներկայացնում է որպես «բուն Թուրքերի» (esas Türkler) և ոչ Թուրքերի (gayr-i Türkler) հետ ունեցած անվերջ պայքարի պատմություն։

Ավելորդ չենք համարում մեջ բերել Թարգմանաբար հեղինակի ուշագրավ այդ մտքերը։

«Դա կատակ չէր, այլ զորեղ մի ապստամբություն։ Որովհետև բոլոր թիմարները ու զեամեթները[10] Թուրքերից ավելի շատ ոչ Թուրքերին էր տրվում։ Թուրքերին բարձր պաշտոն ունենալը կարծես օրենքով արգելված էր»։

«Ամբողջ իշխանությունը ո՛չ Թուրքերին էր պատկանում։ Թուրքերը միայն հեռավոր կամ թե մի փոքր վիլայեթի բեյլերբեյ[11] կարող էին լինել։ Կայսերական դիվանում (ديوان همايون) ոչ մի հատ Թուրք չկար։ Դավթարդարությունից[12], նիշանջիությունից[13] հասունացած Թուրք վեզիրները շատ հազվագյուտ էին։ Միաժամանակ նրանք զրկված էին նաև սադարատից (մեծ վեզիրի պաշտոնից)։

[10] Զեամեթներ ու թիմարներ էին կոչվում պայմանական տիրապետության իրավունքով պետական հողային ֆոնդից ֆեոդալներին բաժանված հողամասերը։ Այն հողերը, որոնց տարեկան եկամուտները, ըստ գրանցման մատյանների (դավթարների), կազմում էին 20 հազարից մինչև 100 հազար ակչե (ակչե—արծաթե դրամ 4,8 գրամ կշռով) կոչվում էին զեամեթներ, իսկ տարեկան 300-ից մինչև 20 հազար եկամուտ բերող հողերը կոչվում էին թիմարներ։ Այդ հողերի տեր ֆեոդալները համապատասխան ձևով կոչվում էին զաիմներ և թիմարշիներ։ Զաիմները և թիմարշիները հայտնի էին նաև սիփահիներ անունով։

[11] Ամբողջ մի վիլայեթում իշխող ֆեոդալ, որն օժտված էր մեծ իրավասությամբ։

[12] Դավթարդարներ էին կոչվում կայսերական արխիվի գլխավոր վերակացուները։

[13] Նիշանջիները կնքապահ վերակացուներն էին։

«Վեզիրությունն ու մեծ վեզիրությունն ալբանացիներին, բոսնակներին պատկանող մի բարձրագույն պաշտոն էր։

«Ֆրենկ Իբրահիմ փաշայի մեծ վեզիրությունից մինչ այս ժամանակ (իմա՝ մինչև ջալալիների ապստամբությունը—Մ. Զ.) մեծ վեզիրատի պաշտոնի ու վեզիրությունների ղեկավարողները ոչ Թուրքերն էին։ Թուրքերի հասցեին հորինված հիմարությունները, մտացածին առասպելները բոլորը ոչ Թուրքերն էին հրապարակում ու այդ երկերեսանիների ջանքերով էր տարածվում։

«Անատոլիայում Թուրքերը ոչ-Թուրքերի այս գերիշխանության դեմ ոտքի էին կանգնում, տեղ-տեղ ապստամբության դրոշներ էին բարձրացնում։

«Հիշարժան է, որ Անատոլիայի սանջակներում, վիլայեթներում միրիլիվա[14] և բեյլերբեյի դարձած ոչ-Թուրքերի մեջ Թուրքերեն չիմացող իսլամի օրենքներից բոլորովին անտեղյակ շատ երիտասարդ մարդիկ կային, որովհետև «դեվշիրմե»-ի միջոցով վեղիր դարձածները իրենց քրիստոնյա հայրերին, եղբայրներին, ազգականներին իսլամն ընդունել տալու օրվանից միրիլիվա և բեյլերբեյի էին դարձնում։

«Հատկապես զեամեթի տերերը, սիփահիները մեծ մասամբ ոչ-Թուրքերից էին, այնինչ թիմարներն ու զեամեթները Անատոլիայում Թուրքերին պատկանող մի տիրույթ էր։

«Ոչ-Թուրքերի տեսակետից Թուրքերը ռայաթներ (գյուղացիներ) էին։ Թուրքերին ամենից շատ վշտացնում էր ոչ-Թուրքերի կամայականությունն ու բռնատիրությունը։

«Իր ժամանակին սրբազան զուրանի քարոզած իրավահավասարությունը բարձր ձայնով գոռացող ու իրենց ծառայության փոխարեն վարձատրություն պահանջող ոչ-Թուրքերը պետական պաշտոն ձեռք բերելու օրվանից Թուրքերին իրավահավասարության փոխարեն՝ արհամարհանքով, վարձատրության փոխարեն՝ կոպտությամբ էին պատասխանում։

«Այս պատճառով Թուրքերը ոչ-Թուրքերի դեմ ըմբոստացել էին ու բարձրացրել ապստամբության դրոշը։ Ոչ-Թուրքերին այսքան բարձր պաշտոններ հանձնող օսմանյան տիրակալները ոտքի կանգնած Թուրքերի աչքին փոքրացել էին։ Սակայն օսմանյան տիրակալն ևս ոչ-Թուրքերի գործադրած բռնություններից զզվել էր»։

[14] Միրիլիվա, լիվային կամ սանջակին (փոքր վարչական միավոր) իշխող ֆեոդալին տրված անուն էր։

Այսպիսով, Հյուսամմուդինի մոտ ոչ մի խոսք չկա դասակարգային պայքարի, Օսմանյան կայսրության ներքին կյանքում տեղի ունեցած որոշակի փոփոխությունների մասին։ Սոցիալական շարժումը, որի արտահայտություններից մեկը ջալալիների ապստամբությունն էր, հեղինակի մոտ ներկայացվում է որպես «համաթուրքական» ազգային պայքար ուղղված ոչ-թուրք ֆեոդալների դեմ։ Պատմության հարցերի ազգայնական մեկնաբանումն, այստեղ, իհարկե, ակնհայտ է։ Սակայն, մեր կարծիքով, սխալ կլիներ նաև բոլորովին անտեսել հեղինակի վերոհիշյալ բացատրությունը ու որակավորել այն որպես կոպիտ սխալի։ Այդ բացատրության մեջ կա, իհարկե, ճշմարտության հատիկ։

Դեվշիրմե ֆեոդալները մանուկ հասակից ստանալով ֆանատիկ մուսուլմանական դաստիարակություն, հանդիսանում էին հետադիմության ու սուլթանիզմի հիմնական հենարանը ու իրենց ծայրահեղ դաժանությամբ առելի էին, ինչպես թուրք, այնպես էլ նվաճված երկրների հոծ զանգվածների, առավել ևս այն ժողովրդի համար, որի ծոցից նրանք դուրս էին եկել։ Այս իմաստով միանգամայն միտումնավոր ու սխալ է նաև Հյուսամմուդինի կոնցեպցիային հետևող ժամանակակից թուրք պատմաբան Ի. Հ. Դանիշմենդը, երբ գրում է, թե «Դեվշիրմեները իրենց մայր հայրենիքի ու հին կրոնների նկատմամբ ունեցած հոգեկան կապերը համարյա միշտ պահել են և առիթի դեպքում թրքության նկատմամբ դավաճանությունից հետ չեն մնացել»[15]։

Ջալալիների շարժումներին անդրադարձել են նաև ժամանակակից թուրք պատմաբանները։ Հիշատակության արժանի են պրոֆեսոր Ի. Հ. Ուզունչարշըլիի «Օսմանյան պատմություն» («Osmanlı tarihi»)[16] և Ի. Հ. Դանիշմենդի «Քննական օսմանյան պատմության ժամանակագրություն» աշխատությունները[17]։

---

[15] **I. H. Danişmend.** Izahlı Osmanlı tarihi kronolojisi, Istanbul, 1950, հատ. 3, էջ 179։

[16] **I. H. Uzunçarşılı**, Osmanlı tarihi, Ankara, 1953: Ջալալիների ապրստամբությունների մասին նույն հեղինակը որոշ էջեր է նվիրել նաև իր հետևյալ աշխատության մեջ՝ Osmanlı devleti teşkilâtından kapukulu ocakları, Ankara, 1943—1944.

[17] **I. H. Danişmend**, նշվ. աշխատությունը։ Ջալալիների շարժումների վերաբերյալ մեծ մասամբ կրկնություն հանդիսացող նյութերի կարելի է հանդիպել և ժամանակակից մյուս թուրք պատմաբանների՝ Արևմտյան Հայաստանի այս կամ այն քաղաքին նվիրված աշխատություններում։

Այս երկու հեղինակների մոտ առավել ցայտուն ձևով դրսևորվում է ժամանակակից թուրք պատմագրության շովինիստական գաղափարախոսությունը։ 16—17-րդ դարերի Օսմանյան կայսրության պատմության հարցերը լուսաբանելիս, ինչպես պրոֆեսոր Ի. Հ. Ուզունչարշըլին, այնպես էլ Ի. Հ. Դանիշմենդը ավելի ծայրահեղություններ են ցուցաբերում, քան 1931—1933 թվականների ընթացքում թուրքական պատմության ընկերության (Türk Tarih kurumu) լույս ընծայած «Թարիխ» («Պատմություն») շորս հատորանոց աշխատության մեջ, որի կոպիտ աղավաղումներն իր ժամանակին քննադատվել է սովետական պատմագրական պարբերականներում։

Ինչպես պրոֆեսոր Ի. Հ. Ուզունչարշըլին, այնպես էլ Ի. Հ. Դանիշմենդն իրենց աշխատության մեջ զարգացնում են «Թարիխ»-ում Օսմանյան կայսրության 16—20-րդ դարերի (մինչև 1920 թ.) առաջադրված պերիոդիզացիան, ըստ որի կայսրության պատմությունը բաժանվում է շորս ժամանակաշրջանների՝ 15—16-րդ դարեր՝ «Վերելքի ժամանակաշրջան», 16—17-րդ դարեր՝ «Լճացման ժամանակաշրջան». 1683-ից մինչև 1792 թվականը՝ «Հետադիմության ժամանակաշրջան» և վերջապես՝ 1792-ից մինչև 1919 թ. ներառյալ՝ «Ռեֆորմների, ինտերվենցիայի և քայքայման ժամանակաշրջան»։

Մեզ հետաքրքրող «Լճացման ժամանակաշրջանում» (Durgun devri) թուրքերի անհաջողություններն այսպես են բացատրվում՝ ա) թուրքերն արտաքին աշխարհում հանդիպեցին ավելի ուժեղ ու կազմակերպված թշնամու, բ) աշխարհագրական մեծ հայտնագործությունները և եվրոպական որոշ պետությունների կապիտալիստական հարաբերությունների սկզբնական էտապն անցնելը փոխեցին ուժերի հարաբերությունները միջազգային ասպարեզում հօգուտ Թուրքիայի թշնամի եվրոպական պետությունների, գ) Թուրքիայի վրայով անցնող տարանցիկ առևտրի ուղիների խափանումը, դ) Օսմանյան ֆեոդալական դինաստիայի բարոյալքումը և ապա վերջապես՝ երկրի ներսում՝ տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխությունները։

Ըստ «Թարիխի» հեղինակների «Լճացման ժամանակաշրջանում» 16-րդ դարի վերջերից սկսած ռազմական ավարի նվազումը ու պետության կրած ֆինանսական դժվարությունները ծնունդ տվեցին ջալալիների ապստամբություններին ու ներքին այլ խլրտումներին։

Վերջին պատճառաբանությունը որոշ չափով մոտ է իրականությանը, բայց հեռու է կուռ և լրիվ գիտական բացատրությունից։

Սակայն և Ի. Հ. Ուզունչարշըլին, և, նամանավանդ, Ի. Հ. Դանիշմենդը, ըստ երևույթին, համաձայն չլինելով խնդրի վերոհիշյալ լուսաբանմանը, ձգտում են 17-րդ դարի սկզբի բոլոր ապստամբությունները բացատրել յուրովի, շովինիստական դիրքերից (ի դեպ նշենք, որ «Թարիխի» էջերում Թուրքերին վերապահված է յուրահատուկ դեր Արևելքի պատմության մեջ հնագույն ժամանակաշրջանից սկսած մինչև մեր օրերը)։ Սկսենք Ի. Հ. Դանիշմենդից, որի մոտ մեզ հետաքրքրող հարցի նկատմամբ դրսևորված շովինիստական դիրքորոշումը ավելի բացահայտ է։

Ի. Հ. Դանիշմենդն ոչ մի կերպ համաձայն չէ 16-րդ դարի վերջերից նկատված Օսմանյան կայսրության անկման երևույթները հասարակական կեցության մեջ տեղի ունեցած էական փոփոխություններով բացատրելուն։ Եթե նա խոսում էլ է 16-րդ դարի վերջին արդեն բացահայտ դարձած՝ իր իսկ խոսքերով ասած «հիվանդագին երևույթների» մասին, ապա դրանք դարձյալ ուզում է բացատրել իր սեփական կոնցեպցիայով։ Ո՞րն է այդ կոնցեպցիան։ Ամբողջ Թուրքական հասարակությունը 16—17-րդ դարերում, հատկապես հասարակության տիրապետող խավը, բաժանվում էր երկու խմբավորումների՝ «անհայրենիք» ու «դավաճան», «սրիկա ստահակներ» հանդիսացող ու մանկահավաքի (դեվշիրմեի)[17]* միջոցով իշխանության գլուխ անցած ոչ Թուրք ֆեոդալների, և Թուրք հայրենասեր ֆեոդալների ու նրանց հետևող Թուրք գյուղացիական մասսաների[18]։

Ըստ հեղինակի այդ «դավաճան» ու «անհայրենիք» դեվշիրմե ֆեոդալները «անձնական շահերից» ելնելով ոտնատակ էին անում «...պետության ու Թրքության շահերը» և իրենց գործունեությամբ ու նվաճված երկրներում ցուցաբերած «կատաղի դաժանությամբ» կայսրությանը մղում էին անդունդից-անդունդ։

«Օսմանյան պետականության անկման ամենագլխավոր ու ամենակարևոր պատճառը,—գրում է Ի. Հ. Դանիշմենդը,—հենց պետության նկատմամբ դեվշիրմեի ցուցաբերած ազետալի գործունեությունների մեջ պիտի փնտրել»[19]։

«Եթե չլինեին դեվշիրմե ֆեոդալների բռնությունները Բալկաններում,—գրում է հեղինակը,—ապա բալկանյան ժողովուրդները 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբներին զինված դիմադրություն չէին ցույց տա Թուրքերին։ Չէ՞ որ այդ նույն ժողովուրդները իր ժամանակին,—բացականչում է հեղինակը,—Թուրքական ռեժիմն ավելի արդար գտնելով կամովին իրենց երկրի դռները բաց արեցին Թուրքական նվաճողների առաջ[20]։ Բռնություններ գործադրողները միայն ու միայն, ինչպես ուզում է հավաստիացնել Ի. Հ. Դանիշմենդը,—դեվշիրմե ֆեոդալներն էին, որովհետև նրանց իրավասության ներքո էր ամբողջ իշխանությունն ու բանակը, որը դարձել էր նրանց ձեռքին մի տեսակ խաղալիք»[21]։

Ինչ վերաբերում է կոնկրետ ջալալիների ապստամբություններին, ապա այստեղ էլ Ի. Հ. Դանիշմենդը հավատարիմ է իր կոնցեպցիային։

«Բոլոր այս անատոլիական ապստամբությունների ամենակարևոր պատճառը,—գրում է նա,—կարելի է բացատրել նրանով, որ օսմանյան հասարակությունը բաժանվել էր երկու մասի՝ Թրքության և դեվշիրմեության»[22]։

Զարգացնելով այդ միտքը, նա մի քիչ ներքև գրում է. «...Ամենակարևոր պատճառը (ապստամբությունների) կարելի էր բացատրել նրանով, որ Անատոլիայի Թուրքերը դեվշիրմեների բռնություններին ու նամանավանդ դեվշիրմեների իշխանության ներքո, որպես դատապարտված մի ազգի վիճակի ընկնելու հանգամանքին, այլևս չէին դիմանում...»[23]։

Սովետական պատմագրության մեջ միակ ուսումնասիրությու-

17* «Դեվշիրմե»-ի ինստիտուտի մասին տե՛ս «Պատմա-բանասիրական Հանդես»-ում մեր լույս ընծայած հոդվածը «Դեվշիրմե»-ն (մանկահավաքը») Օսմանյան կայսրության մեջ ըստ Թուրքական և հայկական աղբյուրների («Պատմա-բանասիրական Հանդես», 1959, № 2—3)։

18 I. H. Danişmend, նշվ. աշխ., հատ. III, էջ 127—128, 131, 138, 139, 140, 145, 150, 159, 173, 178, 188, 193, 216—217 և այլն։

19 I. H. Danişmend, նույն տեղում, էջ 150։ „Osmanlı inhitâtının en büyük ve en müdhiş sebebi işte devşirme facialarında aranmaladır".

20 I. H. Danişmend, նույն տեղում, էջ 188։

21 I. H. Danişmend, նույն տեղում, էջ 131։

22 նույն տեղում, էջ 193։ „Bütün bu Anadolu isyanlarının en mühim sebebi osmanlı cemiyetinin Türklükle Devşirmelige ayrılan ikiliginde gösterilebilir".

23 նույն տեղում, էջ 194։ „...en mühim sebep Anadolu Türklerinin Devşirme zulmüne artık tahammül edemiyecek hâle gelmelerinde ve bilhassa devşirme hâkimiyeti altında mahkûm bir millet vaziyetine tahammül edemeyişlerinde gösterilebilir".

նը ջալալիների շարժումների մասին գրված է Թուրքագետ Ա. Ս. Տվերիտինովայի կողմից[24]։

Ա. Ս. Տվերիտինովայի ավյալ աշխատությունը հիմնականում գրված է 16—17-րդ դարերի թուրքական ժամանակագրությունների ուսումնասիրման հիման վրա։ Օսմանյան արխիվային նյութեր այնտեղ չեն օգտագործված, որովհետև 1946 թվականին դրանք դեռևս չէին հրատարակված։

Իր ուսումնասիրության մեջ վերլուծելով 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական դրությունը, Ա. Ս. Տվերիտինովան քննարկում է մի ամբողջական շղթա կազմող ջալալիների շարժումների գլխավոր օղակներից մեկը, այն է՝ Կարա-Յազըջիի ու իր եղբոր՝ Դելի Հասանի ապստամբության (1599—1603) հետ կապված մի շարք դրվագները։ Սակայն հեղինակի ուսումնասիրության սահմաններից դուրս են մնացել այնպիսի խոշոր ապստամբությունների պատմությունը, ինչպիսիք են՝ Կալենդար Օղլիի (1606 թ.), Ջանփոլադ օղլիի (1607 թ.) և Աբաղա փաշայի ապստամբություններն Էրզրումում (1623—1627) և այլն։

Ուսումնասիրելով Կարա-Յազըջիի, Դելի Հասանի ապստամբությունը, Ա. Ս. Տվերիտինովան իրեն առաջ խնդիր է դրել լուսաբանել մյուս ու հետագա ապստամբությունների պատճառները, շարժիչ ուժերն ու հետևանքները, ելնելով այն դրությից, թե բոլոր այդ անընդմեջ խոշոր ու մանր մյուս ապստամբությունները միևնույն պատճառը ունեն, այն է՝ «Թուրքական ֆեոդալական պետության տնտեսական հիմքը կազմող՝ հողատիրության սիստեմի խորը ճգնաժամը»[25]։ Սա այն առանցքն է, որի շուրջը պտտվում է ամբողջ ուսումնասիրությունը։ Թուրքական ու եվրոպական գրականության մեջ ջալալիների ապստամբության համար մատնացույց արված պատճառները, հեղինակը համարում է պարզապես միևնույն վերոհիշյալ պատճառի առանձին երևույթները։ Այդ երևույթները, որոնք միաժամանակ Օսմանյան կայսրության անկման նշաններն էին, դրսևորվում են կաշառակերության ձևով, բռնությունների անարգել տարածմամբ, զինվորական կազմակերպության կազմալուծումով և այլն, և այլն։

Ընդունելով հեղինակի վեր հանած ու գիտականորեն հիմնավորված այս բացատրությունը, մենք, այնուամենայնիվ, գտնում

[24] **А. С. Тверитинова.** Восстание Кара-Язылжи Дели Хасана в Турции. Москва, 1946.

[25] Նույն տեղում, էջ 4։

ենք, որ ջալալիական բոլոր ապստամբությունների միակ պատճառը վերոհիշյալը չէր։ Կարա-Յազըջիի ու Դելի Հասանի ապստամբություններից հետո եղած շարժումներն ունեին բազմերանգ բնույթ։ Թուրքական ֆեոդալների կողմից հարստահարվող ժողովուրդները՝ ջալալիներ անունով (նախ և առաջ քրդերը, արաբները և Փ. Ասիայի թուրքմենական ցեղերը) գլուխ բարձրացրին իրենց ուսերից օտար (ավյալ դեպքում օսմանյան) տիրապետությունը թոթափելու նպատակով։ Այլ կերպ ասած, այդ շարժումները վերը նշված սոցիալական բնույթի հետ միասին, իրենց հետագա զարգացման ընթացքում, ստացան տարերայնորեն արծարծված ժողովրդազատագրական պայքարի բնույթ, երբեմն պարուրված կրոնական շղարշով (հակասուննիական դրշով)։

Աշխատության մեջ Տվերիտինովան քննադատական մոտեցում է ցուցաբերել իր օգտագործած աղբյուրների նկատմամբ և հաղթահարել ու, հիմնականում, մարքսիստական ճիշտ դիրքերից է լուսաբանել մի շարք բավականին լուրջ խնդիրներ։ Սակայն գրքում հանդիպում են և այնպիսի էջեր, որոնք վկայում են, որ հեղինակը միշտ չէ, որ կարողանում է ձերբազատվել իր օգտագործած աղբյուրների թելադրանքից։ Ավելին, նա երբեմն ուղղակիորեն ենթարկվում է այդ աղբյուրների գաղափարներին։

Տեղի տալով թուրքական աղբյուրներին ու ժամանակակից թուրքական պատմագրության գաղափարական ազդեցությանը, նա «Արևմտյան Հայաստան» տերմինը փոխարինում է «Արևելյան Անատոլիա» տերմինով[26]։

Հայերեն սկզբնաղբյուրներ հեղինակին մատչելի չլինելու պատճառով աշխատության մեջ չեն օգտագործվել, եթե նկատի չունենանք Մ. Բրոսեի ֆրանսերեն թարգմանության շնորհիվ Առ. Դավրիժեցու «Պատմութեան»[27] վկայությունների մասնակի օգտագործումը։ Չեն օգտագործված նաև պարսկալեզու աղբյուրները, անգամ եվրոպական լեզուներով թարգմանվածները։

Այս հանգամանքը պատճառ է դարձել այն բանի, որ հեղինակը երբեմն հանգել է ոչ ճիշտ ու միակողմանի հետևությունների, սխալ ընդհանրացումների, ինչպես նշելու ենք հիմնական նյութի շարադրման ընթացքում։

Չնայած դրան, Ա. Տվերիտինովայի աշխատությունն ամբող-

[26] **А. С. Тверитинова.** Նույն տեղում, էջ 19—23 և այլն։

[27] **M. Brosset.** Collection d'historiens arméniens. Aracel de Tauriz. St. Pétersbourg, 1874.

538

ջությամբ վերցրած սովետական պատմագրության, թուրքագիտության կարևոր նվաճումներից է։

բ) ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Յարդ մեր ձեռքի տակ դժբախտաբար չկան վավերական արխիվային նյութեր, որոնց մենք կարողանայինք նախապատվություն տալ որպես ամենահավաստի սկզբնաղբյուրի։ Այդ արխիվային նյութերի մասին գիտենք միայն ժամանակակից թուրք պատմաբանների մի շարք աշխատություններից։

Ուստի և աղբյուրների դասավորումը մենք ստիպված ենք տալ ոչ թե ըստ բնույթի, ինչպես դա ցանկալի էր, այլ ըստ լեզուների։ Այսպես՝ ա) թուրքալեզու աղբյուրներ, բ) հայերեն աղբյուրներ և գ) աղբյուրներ եվրոպական լեզուներով։

Սկսենք թուրքական աղբյուրներից։ Նախքան բուն ջալալիների շարժումների վերաբերյալ թուրքական աղբյուրների վկայությունների մասին խոսելը, այստեղ անհրաժեշտ կլիներ ընդհանուր դիտողություն անել առհասարակ թուրք պետական-պաշտոնական պատմագիրների (وقعة نويس) հաղորդած տվյալների մասին։

Ոչ մեծ բացառությամբ թուրքական պատմագիրները սովորաբար միատեսակ են մեկնաբանում իրենց կողմից նկարագրված այս կամ այն քաղաքական իրադրությունը։ Ուսումնասիրողների մոտ հաճախ հարց է ծագում, չե՞ն վերցրել արդյոք թուրք պատմագիրներն այդ տեղեկությունները միևնույն սկզբնաղբյուրից, չե՞ն արտագրել արդյոք մեկը մյուսից, շարադրելով նյութը կամ ընդարձակ (ինչպես դա Քյաթիբ Չելեբիի մոտ է), կամ ավելի համառոտ (ինչպես դա Սոլակզադեի և մյուսների մոտ է)։ Ամենայն հավանականությամբ դա այդպես է հատկապես պատմագիրների ապրած ժամանակաշրջանից առաջ տեղի ունեցած իրադարձությունների շարահարման ժամանակ։ Սակայն, հասնելով իրենց ժամանակաշրջանին, ինչպես այդ մասին նշում է ռուս հայտնի թուրքագետ Վ. Դ. Սմիրնովը. «Նրանք դառնում են փաստերի օրիգինալ պատմիչներ, հաղորդելով այդ փաստերը կամ որպես ականատեսների և մասնակիցների, կամ որպես իրենց ժամանակակիցների կողմից ստացված տեղեկությունների զեկուցողների, մատնացույց անելով աղբյուրները, որտեղից վերցրել են այս կամ այն վկայությունները, կամ երբեմն էլ առանց մատնացույց անելու դրանք»[28]։

[28] **В. Д. Смирнов**, Очерки истории турецкой литературы, Спб, 1891, էջ 62—63։

Եվս մի դիտողություն։ Թուրք պատմագիրների մեծ մասը ապրել են Ստամբուլում ու ծառայել կամ անմիջականորեն սուլթանական պալատում և կամ մի որևէ պետական բարձր հիմնարկությունում։ Պատկանելով Ուլեմա (հոգևոր գիտնական) դասին, պատմագիրների մեծ մասը դուրս են եկել արտոնյալ խավից, ու, հետևաբար, իրենց հայացքներով պաշտպանել տիրապետող դասակարգի շահերը։ Ուստի անհրաժեշտ է քննադատական մոտեցում ունենալ, հատկապես ապստամբությունների պատմությունների հետ կապված հարցերի մեկնությունների։

Թուրք պատմագիրների աշխատությունների բովանդակությունը, հիմնականում կազմում են ռազմա-քաղաքական իրադրությունների, սուլթանների, նրանց վեզիրների և զինվորական առաջնորդների գործունեությունների, վերջինների ռազմական արշավանքների, նվաճումների նկարագրությունը և այլն։ Սոցիալ-տնտեսական երևույթների, ժողովրդական մասսաների վիճակի մասին եղած նյութերը հազվագյուտ են։ Այնուամենայնիվ, ուշադրությամբ հետևելու դեպքում, այդ հեղինակների մոտ և՛ ուղղակիորեն, և՛ անուղղակի կարելի է հանդիպել բազմաթիվ արժեքավոր փաստերի։ Հատկապես ջալալիների ապստամբությունների վերաբերյալ նյութերը զգալի տեղ են գրավում թուրք պատմագիրների աշխատություններում։

Թուրքական պատմագիրներից առաջինը, որ մենք պետք է այստեղ նշենք, դա Իբրահիմ Փեչևին է (1574—1650 թթ.)։ «Թարիխի Փեչևի» («Փեչևիի պատմություն»)[29] կոչված նրա աշխատությունն ընդգրկում է Օսմանյան կայսրության պատմությունը 1520-ից մինչև 1639 թիվը։ Իբրահիմ Փեչևիի հաղորդած տեղեկությունները մեծ մասով հավաստի են։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի նյութերը հիմնականում Փեչևին շարադրել է որպես ականատես (1593 թ. և հետագա տարիներում նա անձամբ մասնակցել է բազմաթիվ արշավանքների եվրոպական և ասիական ճակատներում)։ Պատմագիրը վարել է մի շարք վարչական պաշտոններ Անատոլիայում։ Այսպես, նա Թոխատում եղել է դեֆտերդար, ինչպես ինքն է գրում այդ մասին[30]։ Ջալալիների շարժումների մասին Իբրահիմ Փեչևին հաղորդում է համառոտ տեղեկություններ[31]։ Հեղինակի

[29] ۱۲۸۱—۱۲۸۳ تاريخ پچوى، ج ۱—۲، استانبول այսուհետև. „Tarih-i Peçevi.

[30] „Tarih-i Peçevi", հատ. II, էջ 234
«توقتده بير محل وار ايدى تحة بروهٔ لرايله مسرور ايدى بو وقت دفتردار ايكن»

[31] „Tarih-i Peçevi", հատ. II, էջ 252, 255, 270, 271, 276, 280, 311, 313, 333, 336 և այլն։

վերաբերմունքը դեպի այդ շարժումները խիստ բացասական են։ Շարժման մասնակիցներին նա անվանում է «գողեր», «ավազակներ», «պորտաբույծներ» և այլն։ Ապստամբությունների հիմնական պատճառը պետության կողմից ապստամբության ղեկավարների ձեռքից (տվյալ դեպքում Կարա Յազըջիի ձեռքից) նրանց տիրույթների բռնագրավմամբ է բացատրում[32]։

Հաջորդ թուրք պատմագիրը, որի աշխատությունը օգտագործված է մեր ուսումնասիրության մեջ, դա Սոլակզադեն է։ Նրա պատմությունը («Tarih-i Solakzade»)[33], որը գրված է սուլթան Մահմադ IV-ի ժամանակաշրջանում, ինքնին մի թույլ, կոմպիլատիվ աշխատություն է։ Սոլակզադեի պատմությունը տպագրված է Ստամբուլում 1297 թվականին (1880 թ.) և ընդգրկում է Օսմանյան կայսրության պատմությունն իր սկզբնավորման ժամանակաշրջանից մինչև 1054 թիվը (1644—1645)։ Նրա աշխատության մեջ ինքնօրինակության տեսակետից դնահատելի է միայն Մուրադ IV-ի ժամանակաշրջանին վերաբերող նյութերը։ Երկար ժամանակ Սոլակզադեի այս աշխատությունը վայելել է ժողովրդականություն իր հանրամատչելի լեզվի պատճառով։

Կենսագրական տվյալներ Սոլակզադեի մասին համարյա չկան։ Գիտենք միայն, որ նա ծնվել ու մեծացել է Պոլսում և որ նրա իսկական անունը եղել է Մեհմեդ Հեմդեմի։ Ըստ ավանդության նա մահացել է 1068 թվականին (1657—1658)[34]։

Սոլակզադեի մոտ ջալալիների շարժումների մասին եղած տվյալները շատ համառոտակի են։ Հիշարժան են և համեմատաբար ավելի ընդարձակ Աբազա փաշայի ապստամբության մասին նրա հաղորդած տեղեկությունները[35]։

Մեր թեմայի հետ առնչություն ունեցող նյութերի կարելի է հանդիպել նաև 17-րդ դարի մի ուրիշ թուրք պատմագրի՝ Մուստաֆա Նաիմայի մոտ։ «Թարիխ-ի Նաիմա» («Tarih-i Nâima»)[36] կոչված նրա աշխատությունը նույնպես մի քաղաքություն է։ Աշխատության տարբեր էջերում, Նաիման համարյա միշտ մատնացույց է անում իր օգտագործած հեղինակներին՝ Փեչեվիին, Քյաթիբ Չելեբիին (նրա մասին մի քիչ հետո) և ուրիշներին։ Նշված հեղինակներին, նա երբեմն ուղղակիորեն արտագրում է[37]։

Կա «Թարիխ-ի Նաիմայի» անգլերեն, մասնագետների հավատիացումով, ոչ հաջող թարգմանությունը[38]։

Աչքի ընկնող մանրամասնություններ կամ ուշագրավ դիտողություններ ջալալիների շարժումների մասին Նաիմայի մոտ բացակայում է։

Համեմատաբար ընդարձակ տեղեկություններ ջալալիների ապստամբությունների մասին գտնում ենք 17-րդ դարի թուրք նշանավոր պատմագիր Մուստաֆա Աբդուլլահ Քյաթիբ Չելեբիի (1609—1657 թթ.) մոտ։ Գիտական մեծ կարողություններով օժտված ու բարձր կրթություն ստացած Քյաթիբ Չելեբին կամ Հաջի Խալֆեն թողել է հարուստ գիտական ժառանգություն՝ պատմության, աշխարհագրության, կոսմոգրաֆիայի, բիբլիոգրաֆիայի և այլ գիտությունների բնագավառներից[39]։

Նրա ամենախոշոր, սավարածավալ պատմական աշխատությունը կոչվում է «Ֆեզլեքե» (ընդհանրացում)[40]. ընդգրկում է Թուրքիայի պատմությունը 1592-ից մինչև 1654 թվականը։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի (17-րդ դարի առաջին երեսնամյակի) վերաբերյալ նյութերը շարադրելիս, Քյաթիբ Չելեբին հենվում է Ի. Փեչեվիի և այլ պատմագիրների վկայություններին, ժամանակիցների բանավոր պատմվածքներին, ինչպես և որոշ արխիվային նյութերին։ Նրա պատմության առավել արժեքավոր ու առավել հանգամանալի մասը կազմում է 1630 թվականից հետո ընկած ժամանակաշրջանի մասին հաղորդած վկայությունները, երբ հեղինակը իրադարձությունների մեծ մասը նկարագրում է որպես ականատես և ժամանակակից։

Իր պատմության էջերում Քյաթիբ Չելեբին մեկ առ մեկ հիշատակում է ջալալի ապստամբների առաջնորդների՝ «ավազակապետների» անունները։ Նա ընդգծում է, որ այդ ապստամբությունները ամենածանր կացություն ստեղծեցին Օսմանյան կայսրության

---

[32] „Tarih-i Peçevi" էջ 254։

[33] صولق‌زاده همدمی تاریخ آل عثمان, այսուհետև „Tarih-i Solakzade"

[34] Սոլակզադեի մասին տես Franz Babinger... ի հոդվածը, Encyclopédie de l'Islam, հատ. IV, Paris 1934. էջ 503, 504։

[35] „Tarih-i Solakzade" էջ 725, 729—730, 734, 742—746։

[36] ۱—٦ ،۱۳۸۰ ،۱—۲ ،۱۱۴۷ تاریخ نعیما، استانبول այսուհետև „Tarih-i Nâima".

[37] **Ahmet Refik**. Nâima. Istanbul, 1932, էջ 7։

[38] **Naima**. Annals of the turkish empire from 1591 to 1659 of the christian era by Naima, translated from the turkish by Charles Traver. London. 1848.

[39] Քյաթիբ Չելեբիի կյանքի ու գիտական գործունեության մասին հատուկ բրոշյուր է գրել Ահմեդ Ռեֆիկը, տե՛ս „Kâtip Çelebi". Istanbul, 1932.

[40] فذلكه كاتب جلبى مصطفى عبدالله حاجى خليفه، ج ۱—۲، استانبول ۱۳۸۱. Այսուհետև՝ Kâtip Çelebi, Fezleke.

ասիական նահանգներում, և սուլթանական կառավարությանը անզոր դարձրին ճնշելու ապստամբների դիմադրությունը։

«Նախապես, հանգուցյալ սուլթան Մուհամմեդ խանի (խոսքը Մուհամմեդ III-ի մասին է, որն իշխել է 1595—1603 թթ.—Մ. Ջ.) օրով,—գրում է Քյաթիբ Չելեբին,—էֆլակի և էնգերուսի (Հունգարիա) պատերազմների պատճառով, իսլամական քաղաքներում պատահած ապստամբություններն ու խառնաշփոթությունները վերացնելու համար, թեև միջոցներ ձեռք առնվեցին, սակայն այդ գործի համար նշանակված մարդկանց հանցանքով (sic!) այդ շարժումներն ու ապստամբություններն արմատախիլ անել հնարավոր չեղավ. մոտ 15 տարի շարունակ (երկրում) երկպառակությունը խանգարվեց և ավազակների ապստամբությունները շարունակվեցին[41] (ընդգծումը մերն է—Մ. Ջ.)»։

Տվյալ թեմայի շարադրման համար անհրաժեշտ և ուշագրավ տեղեկություններ մենք գտնում ենք նաև թուրք աշխարհագրագետ, պատմաբան ու ճանապարհորդ Էվլիա Չելեբիի (1611—1679 թթ.) մոտ։ Հեղինակի իսկական անունն է Մեհմեդ Զիլլի իբն Դերվիշ[42]։

Քառասուն տարի շարունակ Էվլիա Չելեբին ճանապարհորդել է Օսմանյան կայսրության համարյա բոլոր նահանգներում՝ Եվրոպայում, Ասիայում ու Աֆրիկայում։

Չնայած այդ հանգամանքին, Էվլիա Չելեբին փաստական նյութերը շարադրելիս «Սեյահեթ նամեում» («Ճանապարհորդության գիրք») թույլ է տվել սխալներ ու անճշտություններ, ինչպես դա մատնացույց են անում նրա ուսումնասիրողները, այնուամենայնիվ նա շատ կողմերով, և հատկապես Օսմանյան կայսրության ներքին սոցիալ-տնտեսական պատմությունն ուսումնասիրելու տեսակետից, մնում է, որպես ամենակարևոր սկզբնաղբյուրներից մեկը։

«Սեյահեթ նամեում» Էվլիա Չելեբին մեծ մասամբ նկարագրում է Օսմանյան կայսրության այն երկրամասերը, որտեղ ինքը եղել է

[41] Kâtip Çelebi, Fezleke.

[42] اولیه چلبی محمد ظللی ابن درویش اولیه چلبی سیاحتنامه س. մեջ նաև այդ աշխատության մասնակի նոր հրատարակությունը Evliya Çelebi, seyahetnâmesi, seriyi hazirlayan Reşad Ekrem Koçu, c. I—IV, Istanbul,1944—1949. Գիտական աշխարհին հայտնի է նաև «Սեյահեթ—նամե»-ի երկու հատորներով Համմերի կողմից կատարված անգլերեն հմուտ թարգմանությունը. Evliya effendy, Narrative of travels in Europe, Asia and Africa in the seventeenth century, translated from the turkish by J. von Hammer London, vol, I pt. I, 1834, pt. II 1846, vol. II 1850.

կամ այն դեպքերը, որոնց ինքը անձամբ ականատես է եղել։ Իսկ եթե նա գրում էլ է որևէ իրենից առաջ տեղի ունեցած պատմական դեպքի մասին, ապա այդ դեպքում կամ նա վերապատմում է իր լսածը ականատեսներից (այսպես է օրինակ, ջալալիների մասին Ամասիայի կամ Էրզրումի բերդը նկարագրելիս), և կամ դիմում է թուրք պատմագիրների երկերին։

Ընդհանուր առմամբ վերցրած Էվլիա Չելեբիի աշխատությունը կարևոր նշանակություն ունի հայագիտության ուշ միջնադարյան շրջանի համար։ Շնորհիվ Էվլիա Չելեբիի «Սեյահեթ նամե»-ի, մենք պատկերացում ենք կազմում Արևմտյան Հայաստանի վարչական բաժանման մասին։ Էվլիա Չելեբիի կողմից Արևմտյան Հայաստանում նվաճող-ֆեոդալների եկամուտների թվարկումը հնարավորություն է տալիս եզրակացություն անելու այն մասին, թե ինչպես էր շահագործվում Արևմտյան Հայաստանի բնակչությունը։

Պակաս նշանակություն չունի Էվլիա Չելեբիի աշխատությունը 17-րդ դարի Հայաստանի տնտեսության, ազգագրության հարցերի ուսումնասիրման տեսակետից։ Ներկա թեմայի համար հատկապես արժեքավոր են գրքի երկրորդ հատորում՝ Արագա փաշայի ապստամբության մասին հաղորդած տեղեկությունները։

Թուրքիայի ներքին կյանքի վերլուծմանն է նվիրված 17-րդ դարի թուրք մի այլ նշանավոր հեղինակի՝ Կոչիբեյի աշխատությունը՝ «Ռիսալե-ի Կոչիբեյ» (رساله قوچی بك—Կոչիբեյի ուղերձը)[43] վերնագրով։ Այս ուղերձը կամ զեկուցումը ներկայացվել է սուլթան Մուրադ IV-ին (1623—1640 թթ.) 17-րդ դարի 30-ական թվականներին։ Ներկայումս հրապարակված է նույն Կոչիբեյի մի ուրիշ ուղերձ[44], որը կազմվել է հեղինակի կողմից մի քիչ ավելի ուշ, քան առաջինը սուլթան Իբրահիմի (1640—1648 թթ.) կարգադրությամբ։

Կոչիբեյի ուղերձները խիստ հարուստ են Թուրքիայի պետականության անկման վերաբերյալ արժեքավոր նյութերով։ Եվ այդ է պատճառը, որ այս ուղերձները վաղուց դարձել են մասնագետների ուսումնասիրման առարկան[45]։

[43] رساله قوچی بك، استانبول ،۱۳۷۷

[44] Koçi bey Risalesi, şimdiye kadar elde edilmemiş olan tarihi eserin tamamı. Eseri bulup tahsiye eden Ali Kemali Aksüt. Istanbul, 1939.

[45] В. Д. Смирнов, Кучибей Гёмюрджинский и другие османские писатели о причинах упадка Турции, СПб., 1878. А. С. Тверитинова Второй трактат Кочибея, Ученые записки Института востоковедения, том, VI, Москва—Ленинград, 1958, стр. 212—269.

Մեր թեմայի հետ Կոչիբեյի ուղերձները խիստ առնչություն ունեն և դրա համար էլ համեմատաբար ավելի հանգամանորեն կանգ կառնենք, 17-րդ դարի, այդ արժեքավոր փաստաթղթերի վրա։

Առաջին ուղերձում Կոչիբեյի հիմնական ուշադրությունը սևեռած է օսմանյան պետականության անկման պատճառների վրա։

Ըստ Կոչիբեյի, այդ անկումն սկսվում է 1582 թվականից։ Նրա կարծիքով դրանից առաջ ամեն ինչ իդեալական էր այն պատճառով, որ սուլթաններն ու վեզիրներն այլևս հաշվի չէին առնում նրա իսկ խոսքերով ասած «մեծ ու փոքր տիրույթների» տեր ֆեոդալներին։ Կոչիբեյն ընդգծում է, որ սուլթանական կառավարությունը խախտում էր զեամեթի ու թիմարի տեր թուրք ֆեոդալների ժառանգական իրավունքները, հանձնելով հողատարածները ոչ ավատական ծագում ունեցող մարդկանց, դրանով իսկ, շեշտում է նա, սուլթանը զրկվում էր իր հիմնական հենարանից։

Պետական իշխանության անկման պատճառներից մեկն էլ Կոչիբեյը համարում է ամենաբարձր պետական պաշտոնների կաշառակերության օգնությամբ ձեռք գցած մարդկանց, մարդիկ, որոնք ամբողջովին զուրկ էին պետությունը կառավարելու ունակություններից։

«[Բարձրագույն հրամանատարներն]... սկսեցին իզուր [պարգևատրման] ֆերմաններ տալ նրանց, ովքեր որ արժանի չէին, նրանց, ովքեր ոչ ծննդյամբ, ոչ ծագմամբ երբեք դիրլիքներ[46] չեն ստացել։ [Դիրլիքներ] տվեցին նաև այնպիսի մարդկանց, ինչպիսիք են ոչնչություն ներկայացնող անպիտան քաղաքի ու գյուղի ռայաթները (ցածր խավերը)»։

Այդ իսկ պատճառով Կոչիբեյն իր ուղերձում հատուկ ուշադրություն է դարձնում պետական վարչական ապարատում տարածված կաշառակերության, գողության ու կամայականություններին վրա։

16-րդ դարի վերջից ակնհայտ դարձած պետական եկամուտների կրճատումը, որ հետևանք էր անհաջող պատերազմների, ռազմական ծախսերի խիստ ավելացումը, ամենածանր ձևով անդրադառնում էին գյուղացիական հոծ մասսաների վրա։ Այդպիսի պայմաններում գյուղացիությունից գանձվող հարկերն ըստ Կոչիբեյի ավելանում էին մոտ վեց անգամ։

[46] Դիրլիք (دیرلك) «ապրուստի միջոց»։ Օսմանյան կայսրության մեջ բոլոր տեսակի ավատական տիրույթներին տրված ընդհանուր անուն։

Առաջին ուղերձում Կոչիբեյը բացահայտելով Թուրքիայի ներքին օրգանիզմում առաջացած խոցերը՝ երկրորդում՝ պահպանողական դիրքերից դեղեր է առաջարկում սուլթանական կառավարությանը, որպեսզի վերջինը կարողանա վերականգնել նախկին բարվոք վիճակը։ Վերադարձ դեպի հինը՝ Սուլեյման Կանունիի (1520—1566 թթ.) օրոք ստեղծված երանելի կարգերը—ահա Կոչիբեյի հիմնական հետևությունն ու առաջարկած դարմանը։

Կոչիբեյը իդեալականացնում էր Սուլեյման Կանունիի ժամանակաշրջանը, որպես իրականություն ընդունելով այն, ինչ Օսմանյան կայսրության մեջ ուզում էր ձևապես իրագործել սուլթան Սուլեյմանի ժամանակաշրջանի օրենսդիր՝ Մուֆտի Էբուսուուդը։ Ինչպես ցույց են տալիս պատմական փաստերը, սուլթանի կողմից վավերացված Էբուսուուդի օրենքները գրեթե որևէ ազդեցություն չունեցան ընդարձակածավալ Օսմանյան կայսրության բազմաթիվ նահանգների վարչական ու սոցիալական կյանքի վրա։ Ըստ էության նահանգների զգալի մասը, և հատկապես ասիական նահանգները շարունակեցին ապրել կիսանահապետական, կիսաֆեոդալական ու քոչվորական կյանքով։ Սուլթան Սուլեյմանին չհաջողվեց ամրապընդել կայսրության քաղաքականապես ու տնտեսապես մասնատված ժողովուրդների և ցեղերի ռազմա-վարչական խախտուտ միավորումը։

Այս հանգամանքը չի կարողանում հերքել և թուրք ժամանակակից պատմաբան Ի. Հ. Դանիշմենդը[47]։

Կոչիբեյն, իհարկե, չէր նկատում, որ իր կողմից նկարագրված երևույթները ֆեոդալական հասարակության ներսում առաջացած ճգնաժամի հետևանքն էր, ճգնաժամ, որը պայմանավորված էր այդ հասարակության զարգացման ներքին օրինաչափություններով՝ ավատական հողատիրության սիստեմի մեջ տեղի ունեցած էական փոփոխություններով (նրա իսկ խոսքերով ասած՝ «մեծ ու փոքր տիրույթների» ոչ ավատական ծագում ունեցող մարդկանց ձեռքն անցնելը), մի հանգամանք, որն իր հերթին, պայմանավորված էր առևտրա-վաշխառուական հարաբերությունների զարգացմամբ ու խոշոր կենտրոնախույս ուժ դարձած ֆեոդալների ձեռքին հսկայական հարստությունների կուտակմամբ։ Մյուս կողմից Կոչիբեյի նկարագրած երևույթները հետևանք էին և այն բանի, որ թուրքերը զավթելով հսկայական տերիտորիաներ Եվրոպայում, Ասիայում ու Աֆրիկայում, այլևս անկարող էին յուրացնել դրանք, և բավարարվում

[47] I. H. Danişmend, նշվ. աշխատ-ը, էջ 140։

էին միայն հարկերով, տուրքերով ու զինվորական կոնտրիբուցիաներով։

Թուրքական ռազմա-ֆեոդալական պետությունը կառուցված էր այնպես, որ ղեկավարող շրջանները չէին հետաքրքրվում արտադրության հարցերով։ Այստեղ Կ. Մարքսի կողմից նշված արևելյան պետության երեք գերատեսչություններից մեկը՝ ռազմական տեսչությունը, հարևան ժողովուրդների կողոպուտը ամենաինտենսիվ ձևով էր գործում։ Սակայն, 16-րդ դարի վերջին, երբ սկսում էր սեղմվել նվաճումների թափը ու խիստ կրճատվեց ռազմական ավարը, թուրք ֆեոդալները սկսեցին ամենադաժան ձևով շահագործել, ինչպես նվաճած երկրների, այնպես էլ իրենց՝ նվաճող երկրի գյուղացիությանը։ Այդ բոլորի անմիջական հետևանքը ժողովրդական դժգոհություններն էին, դասակարգային պայքարի սրումը, գյուղացիների, արհեստավորների ապստամբությունները։

Ահա այսպիսի պայմաններում է, որ Կոչիբեյն, ինչպես և նրա նախորդներն ու հետնորդները սուլթանական կառավարությանն ուղղած իրենց ուղերձներում[48] պահպանողական դիրքերից այնպիսի միջոցներ էին առաջադրում, որոնք կարող էին միայն աննշան չափով կասեցնել թուրքական կայսրության անխուսափելի անկումը։

Այժմ անցնենք հայկական սկզբնաղբյուրների տեսության։ Սկսենք հիշատակարաններից։

16—17-րդ դարերի հայ ժողովրդի պատմության հարցերը լուսաբանելու համար հայերեն ձեռագրերի հիշատակարանները դրավում են ուրույն ու շատ կարևոր տեղ։ Հիշատակարանների ամենագլխավոր առանձնահատկությունը՝ դեպքերի շարադրման պարզությունն ու անմիջականությունն է։ Որպես կանոն, հիշատակարանների գրիչները իրենց կողմից նկարագրված դեպքերի կամ անմիջական ականատեսներն են և կամ իրենց լսածի հաղորդիչները։ Հենց սրա մեջ էլ կայանում է հիշատակարանների խոշոր գիտական արժեքը։ Ընդհանուր գծերով, հիշատակարանները բացահայտում են 16—17-րդ դարերում Հայաստանի տերիտորիայում մղվող թուրք-պարսկական անընդմեջ պատերազմների հետևանքով երկրի ընդհանուր ավերման, տնտեսության անկման, նվաճողների վարած կրոնական հալածանքների, կապիտ կամայականությունների, գերեզումների հուզիչ պատկերը։

[48] Այդ ուղերձներից ամենահայտնիներն են՝ Այնի Ալիինը (1609 թ.), Ջյաթիբ Չելեբիինը (1653 թ.) և Հեղարֆենիինը (1672 թ.)։

Հիշատակարանների հիմնական թերությունը կայանում է նկարագրությունների տեղայնության մեջ։ Հիշատակագրին առավելապես հետաքրքրում է իր քաղաքի, գյուղի կամ գավառի հետ առընչվող, մեծ մասամբ քաղաքական իրադրությունների պարզ նկարագրությունը։ Այստեղից էլ գրիչների մոտ նկատվում են մեկը մյուսից կարված, ու երբեմն էլ ուղղակիորեն մեկը մյուսին հակասող տեղեկություններ։ Բացի դրանից, լինելով մեծ մասամբ հայ հոգևորականության ներկայացուցիչներ, գրիչներից ոմանք դեպքերի գնահատման մեջ ցուցաբերում են որոշ միտումնավորություն, որը իրենց հասարակական վիճակով, քրիստոնեական գաղափարախոսության սահմանափակությամբ է պայմանավորված։ Սակայն այս հանգամանքը բոլորովին էլ չի նսեմացնում հիշատակարանների արժեքը։

Մեզ առավելապես հետաքրքրող ջալալիների ապստամբությունների վերաբերյալ նյութեր պարունակող հիշատակարանները զգալի թիվ են կազմում[49]։ Այդ հիշատակարաններում հաղորդվում են Կարա Յազըջիի, Դելի Հասանի, Կալենդար Օղլիի, Ջանփոլատ Օղլիի և Արաղա փաշայի ապստամբությունների վերաբերյալ խիստ ուշագրավ տեղեկություններ։ Գրիչների ճնշող մեծամասնությունը ջալալիների շարժումների հետ կապված դեպքերը նկարագրում են ամենամռայլ գույներով։ Նրանք խիստ բացասական գծերով են ներկայացնում ապստամբության առաջնորդներին՝ անվանելով նրանց «արյունարբու գազան», «մեծ գազան», «չար վիշապն», «շունն կատաղի» և այլն, և այլն։

«...Սով սաստիկ, սուր անխնայ, գերութիւն անողորմ, աւերումն աշխարհաց և քանդումն դեղօրեից, կործանումն տանց և շարժումն [բնակչութեան] յերկրէ յերկիր...»։ Համարյա բոլոր գրիչներն իրենց հիշատակարաններում այսպես են ներկայացնում ջալալիների ապստամբությունների ունեցած հետևանքներն Արևմտյան Հայաստանում։

Ըստ գրիչների ջալալի ապստամբները հատուկ դաժանություն են ցուցաբերել հատկապես քրիստոնյա բնակչության նկատմամբ։ Խոսելով Կարա Յազըջիի մասին Մելիքսեթ եպիսկոպոս Սեբաստացին գրում է, որ նա «...անխնայ կոտորեաց բազում քրիստոնեայս և զմանուկս նոցա գերի տարեալ...»[50]։ Սակայն, մի՞թե նրանք դա-

[49] Դրանցից ամենակարևորներն են Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1875, էջ 229բ, № 7744, էջ 180բ, № 2672, էջ 400ա—401ա, № 1354, էջ 199բ—200ա, № 4912, էջ 253բ, № 2039, էջ 321բ—322ա, № 7786, էջ 249ա և այլն։

[50] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1875, էջ 229բ։

ժանութիւն էին ցուցաբերում միայն քրիստոնյաների նկատմամբ։ Պատմական փաստերը ցույց են տալիս, որ ջալալի ապստամբները չէին խնայում և «յուրայիններին», հատկապես տիրապետող խավի ներկայացուցիչներին, օրինակ՝ պետական զանազան պաշտոններ վարողներին։

Ջալալիների ապստամբությունների մասին բազմաթիվ արժեքավոր նյութերի կարելի է հանդիպել նաև 17-րդ դարի հայ պատմագիրների (Առաքել Դավրիժեցի, Գրիգոր Դարանաղցի և այլք) մոտ։

Առաքել վարդապետ Դավրիժեցին ծնվել է Թավրիզ քաղաքում 16-րդ դարի վերջին, կրթությունն ստացել է Էջմիածնի վանքում Փիլիպոս կաթողիկոսի (1633—1655 թթ.) մոտ, երկար ժամանակ ճանապարհորդել է Առաջավոր Ասիայում՝ «յաշխարհն յունաց», եղել է Իսպահանում և այլուր, որպես Էջմիածնի նվիրակի։

Առաքել Դավրիժեցին հանդիսանում էր իր ժամանակի ամենաաչքի ընկնող գիտուն մարդկանցից մեկը։ Եվ այդ է պատճառը, որ Փիլիպոս կաթողիկոսն առաջարկում է Դավրիժեցուն գրել վերջին հինգամյակի Հայաստանի պատմությունը։ Առաքել Դավրիժեցին ընդունում է կաթողիկոսի հանձնարարությունը, ելնելով հայրենասիրական զգացմունքներից։ Նա ուզում էր գրել «...զաւեր Հայաստան աշխարհին, և զնուազիլն մերոյս ազգին, և զչարութիւն մահմեդականաց»[51]։

Առաքել Դավրիժեցին քննադատորեն է մոտենում պատմական տվյալներին։ Նա համառորեն ձգտում է ստուգել հաղորդած փաստերի ճշտությունը, ճշգրտել տվյալ իրադրության թվականը։ Ինքը՝ հեղինակն իր պատմության առաջաբանում գրում է, որ «Այլև գիտելի է, զի ըստ պահանջելոյ հարկին աստանօր պարտ է դնել ըստ թուականն իբր զհիմն, և ապա յարել ի նոյն զպատմութիւն որպէս զշինուածս, ըստ օրենի պատմագրաց»[52]։

Առ. Դավրիժեցուն հետաքրքրում է ոչ միայն արևելահայերի վիճակը, որոնց շրջանում նա ապրել ու ստեղծագործել է, այլև արևմտահայերի։ Այսպես, հիմնականում նկարագրելով Արևելյան Հայաստանի տնտեսական, քաղաքական վիճակն ու եկեղեցիների ու վանքերի դրությունը, պատմիչը հաղորդում է չափազանց հետաքրքիր տվյալներ Արևմտյան և Հարավային Հայաստանի, ինչպես

[51] «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 659։

[52] Ա. Դավրիժեցի, էջ 4։

նաև Կոստանդնուպոլսի, Իսպահանի, Լվովի և այլ հայ գաղութների մասին[53]։

Առաքել Դավրիժեցու «Պատմութեան» համար հիմնականում աղբյուր են ծառայել 16—17-րդ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարանները։ Այդ մասին հեղինակն ակնարկում է իր աշխատության տարբեր էջերում։ Այսպես, նկարագրելով Շահ Աբբասի կողմից կատարված հայերի բռնագաղթը դեպի Պարսկաստան, նա գրում է. «Եւ զայս գործ (իմա՝ «մեծ սուրգունը»), որ ազգն հայոց [շահ Աբբասն] քշեաց և տարաւ, ոչ թէ մի անգամ կամ երկիցս և երիցս արար և եկած, այլ զրի հաւաստեաւ բազում առս՝ որք ինքեանք իսկ քշածք էին, յորոց հարցեալ տեղեկացայ, նաև ի յիշատակարանաց գրոց, զոր ընթերցայ (ընդգծումը մերն է—Մ. Ջ.)»[54]։

Խոսելով ջալալիների մասին, Առաքել Դավրիժեցին խիստ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում, երբեմն որոշ մանրամասնությամբ ջալալի ապստամբների պարագլուխների և բուն իսկ շարժման ընթացքի մասին։ Ամբողջ 7-րդ գլուխը, որը վերնագրված է «Յաղագս յայտնելոյ ջալալացն և սաստիկ սովուն և մարդակեր գայլացն, և այլ և այլ ևս աւարառութեանցն՝ որք ժամանեցին ի վերայ աշխարհի» նվիրված է այդ շարժումների պատմությանը ու Հայաստանի համար նրանց ունեցած աղետաբեր հետևանքներին։ Առաքել Դավրիժեցին ջալալիների ապստամբություններին անդրադառնում է նաև իր «Պատմութեան» այլ էջերում, օրինակ 361 թվականից մինչև 1664 թվականն ընդգրկող իր կազմած ժամանակագրության մեջ և այլն։

Դավրիժեցին առավել ուշադրություն է դարձնում ջալալիների Արևելյան Հայաստանում, և հատկապես Արարատյան դաշտում կատարած «չարագործությունների» վրա։ Խոսքն այն ջալալիների մասին է, որոնք Փոքր Ասիայում 1608—1609 թթ. ձախողման մատնվելուց հետո փախուստի էին դիմել և մտել Սեֆեվյան տերության սահմանները։

Պատմիչը ոչ պակաս արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև շարժման վերելքի ժամանակաշրջանի դեպքերը նկարագրելիս հենց բուն Փոքր Ասիայում։

[53] Նույն տեղում, էջ 266—279, 378—348 և այլն։

[54] Ա. Դավրիժեցի, էջ 148։ Սակայն կաթողիկոսական աթոռի ու այսպես կոչված Լուսավորչի աջի էջմիածին տեղափոխվելու կապակցությամբ (1441) Առաքել Դավրիժեցին ի հաստատումն իր դրույթների դիմում է 15-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններին և մեջ է բերում դրանցից մի քանիսը (տե՛ս նույն տեղում, էջ 416—418)։

Խիստ բացասական է Առաքել Դավրիժեցու վերաբերմունքը ջալալիների նկատմամբ։ Նա նրանց բնութագրում է որպես «աւազակք», «աւերիչք», «ապականիչք» և այլն, իսկ դրա հետ մեկտեղ չի կարողանում անտեսել ջալալիների սխրանքները, երբ նա գրում է, որ նրանք «...էին արք անուանիք՝ և յաղթողք՝ և քաջ պատերազմողք՝ և անպարտելի ախոյան»[55]։

Ջալալիների մասին հետաքրքիր մանրամասնություններ մենք գտնում ենք 17-րդ դարի հայ մյուս ականավոր պատմագիր Գրիգոր Դարանաղցու մոտ։

Գրիգոր Դարանաղցին կամ Կամախեցին (1576—1643 թթ.) ծնվել է պատմական Դարանաղյաց գավառի Կամախ քաղաքում։ Ճանապարհորդել է Ղրիմ, Ստամբուլ և Երուսաղեմ. նշանակվել է Ռոդոսթոյի հայ համայնքի հոգևոր առաջնորդը, ուր և անց է կացրել իր կյանքի վերջին տարիները։

Գրիգոր Դարանաղցու ժամանակագրությունը լույս է տեսել 1915 թ. Երուսաղեմում։

Ժամանակագրությունը գրվել է 1634—1640-ական թվականներին։ Հեղինակն իր աշխատությունը բաժանում է երկու մասի. առաջին մասն ընդգրկում է 1018—1539 թթ. ընկած ժամանակաշրջանը, որտեղ համառոտ ձևով նշվում է ամենակարևոր քաղաքական դեպքերի մասին։ Իսկական ժամանակագրությունը (երկրորդ մաս) սկսվում է 1595-ից և վերջանում է 1634 թ. դեպքերով։

Գրիգոր Դարանաղցու ժամանակագրության ամենակարևոր էջերը 16-րդ դարի վերջերի և 17-րդ դարի սկզբների քաղաքական դեպքերի նկարագրություններն են, և հատկապես նրա ստույգ տեղեկությունները ջալալիների շարժման մասին[56]։

Ջալալիների ապստամբությունների մասին խոսելիս Գր. Դարանաղցին հաճախ հանդես է գալիս որպես անմիջական ականատես։ Այսպես 1603 թ. երգնկա հաստատված ջալալիների դեպի Բաբերտ (Բայբուրտ) և Գյումյուշխանե կատարած ասպատակությունների ժամանակ, Գր. Դարանաղցին, ինչպես և մերձակա գյուղերի բնակիչները փախուստի են դիմել։ «Մեք ալ, մերձակայ գեղորէիքն ամենայն ախիւք մերովք... միաբանովք վանուցն Վահանշինոյ, դիմեցաք ի լերունքն և յանտառախիտ մացառս Կանկելի ձորոյն և կացաք մնացաք ընդ աւուրս ինչ, և լսեցաք, որ լցեալ են յերկիրն որպէս զրազմութիւն մարախոյ և կամ որպէս զուխաջուրսն»[57]։

[55] Առ. Դավրիժեցի, նույն տեղում, էջ 86։

[56] Գր. Դարանաղցի, էջ 13—22, 24—30, 35—40, 43—48 և այլն։

[57] Գր. Դարանաղցի, էջ 17։

Գր. Դարանաղցին չի սահմանափակվում միայն ապստամբ ջալալիների զեկավարների անունների թվարկմամբ կամ թե ապըստամբության ընթացքի նկարագրությամբ, նա երբեմն խոսում է այդ ապստամբությունների սոցիալական դրդապատճառների ու ունեցած հետևանքների մասին։

Ամենամռայլ գույներով է ներկայացնում ժամանակագրողը Օսմանյան կայսրության ներքին վիճակը և կառավարության ապրած ճգնաժամային երևույթները։ Դարանաղցու ասելով, ջալալիների շարժումներն երկրում ստեղծեցին այնպիսի վիճակ, որ «...ոչ գոյր խաղաղութիւն տեղի ուրեք, բայց միայն ի Կոստանդնուպօլիսն»[58] ուր մասսայաբար գաղթում էին հայ ու թուրք աշխատավոր մասսաներն իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար։

Գր. Դարանաղցու ժամանակագրությունը, չնայած իր ունեցած որոշակի թերություններին, հանդիսանում է ջալալիների ապստամբությունների վերաբերյալ կարևորագույն աղբյուրներից մեկը։

Ջալալիների շարժումների մասին մեզ հասած հայկական սկզբնաղբյուրների մեջ առանձնակի տեղ են գրավում Աղարիա Սասնեցու «Ողբ ի վերայ հարուածոց արևելեան գաւառացն և աշխարհին հայոց ի ձեռաց Ճելալեանց»[59] և Երեմիա Չելեբի Քյոմյուռճյանի «Պատմութիւն համառոտ Դճ տարւոյ Օսմանցոց թագաւորացն» ձեռագիր աշխատության ջալալիներին վերաբերող նյութերը[60]։

Աղարիա Սասնեցին, ինչպես ինքն է գրում իր հիշատակարանում ականատես է եղել իր շարադրած դեպքերի մեծ մասին։ «...Կամիմ և ձեզ ծանուցանել,— գրում է նա,— զդառնութիւն ժամանակիս և բազմազան զանցս աղետի, որ ես աչօք իմովք տեսի, զորս ի բազմաց զսակաւն պատմեցից փոքր ի շատէ տաղի—չափ ոտանաւոր, զի և դուք գիտիցէք թէ որպիսի նեղութիւն և շարչարանք գտին (հայք)»[61] և այլն։

Ինչ վերաբերում է Երեմիա Չելեբիի հաղորդած վկայություններին, ապա պիտի ասել, որ 17-րդ դարի այդ ամենախոշոր հայ գիտնականը իր գիտելիքների մեծ մասը քաղել է թուրքական և այլ աղբյուրներից, նրա հաղորդած տեղեկությունները մեծ մասամբ ճշգրիտ են, և հետևաբար արժեքավոր։

[58] Նույն տեղում, էջ 14։

[59] Այս «Ողբ»-ն ամբողջությամբ տպվել է «Հանդէս-ամսօրեայ» ամսագրի 1937 թ., էջ 306—336, նաև Բ. Կյուլեսերյան, Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայքից, Անթիլիաս, 1957, 249—262 էջերում։

[60] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1675, էջ 84բ—101ա։

[61] «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 320։

Սույն թեմայի համար ոչ պակաս նշանակություն ունեն նաև 16—17-րդ դարերի եվրոպացի ճանապարհորդների տվյալները։ Ճիշտ է, նրանց մոտ շատ հազվադեպ են հիշատակությունները ջալալիների շարժումների մասին, բայց, մյուս կողմից, նրանց քննադատորեն օգտագործումը լրացնում են մեր պատկերացումը վերոհիշյալ ժամանակաշրջանի Արևմտյան Հայաստանի տնտեսական ու քաղաքական դրության մասին։

Աշխատության մեջ օգտագործվել են Պիետրո Դելլա Վալլեի[62], Ժան Բատիստ Տավերնիեի (17-րդ դ.)[63], Ժան Շարդենի[64], Պիտտոն դե Տուրնեֆորի[65] և այլոց երկերը։

---

[62] Voyages de Pietro della Vallé en Orient, Rouen, 1745.

[63] **Tavernier Jean Baptiste**. Les six voyages de Jean Baptiste Tavernier en Perse et aux Indes, La Haye, 1713.

[64] **Jean Chardin**. Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient. Paris, 1811—1820.

[65] **Pitton de Tournefort**. Relation d'un voyage du Levant, Amsterdam, 1718.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՋԱԼԱԼԻՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՕՐԵՒՆ ԵՎ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մանր կացություն էր ստեղծվել Հայաստանում ջալալիների շարժումների նախօրեին։ Երկիրը խիստ տուժել էր արևելյան երկու հզոր պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի ու Սեֆեվյան Պարսկաստանի միջև մղվող երկարատև պատերազմների պատճառով, պատերազմներ, որոնք սկսվեցին 16-րդ դարի սկիզբներին ու վերջացան... 1639 թվականին։

Այդ պատերազմական գործողությունները երկու վերոհիշյալ պետությունների միջև մղվում էին առևտրի ուղիների տիրապետման, և հետևաբար, Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում իրենց տնտեսական և քաղաքական գերիշխանությունը հաստատելու համար։ Հայաստանն իր ուսերի վրա էր կրում պատերազմական գործողությունների ամբողջ ծանրությունը։ Այդ պատերազմական գործողությունները ավերում ու ամայացնում էին երկիրը, հայ ժողովրդին պատճառում անլուր դժբախտություններ։ Ե՛վ օսմանցիները, և՛ սեֆեվիները հայկական բարձրավանդակին տիրապետելը դիտում էին որպես ստրատեգիական մեծ նշանակություն ունեցող հանգամանք։

Քաղաքական իրադրությունն այնպես էր, որ թուրքական նվաճողներին առաջին հերթին անհրաժեշտ էր վերջնականապես նվաճել Հայկական բարձրավանդակը։ Եթե վերջինս մնար սեֆեվիների իշխանության տակ, ապա այդ դեպքում թուրք նվաճողների համար համարյա անհնար կլիներ վերջնականապես ամրապնդել իրենց խախուտ դիրքերը Մերձավոր Արևելքի նոր նվաճված երկրներում։ Մյուս կողմից, այդպիսի իրադրության ժամանակ, հենց ինքը՝ Անատոլիան կդտնվեր սեֆեվիների ներխուժման մշտական վտանգի առաջ։

Այս հողի վրա սեֆեվիների պետական շահերը խիստ բախվեցին Օսմանյան Թուրքիայի նվաճողական քաղաքականության հետ։ Այդ քաղաքական շահերը, որոնք թաքնված էին սյուննիզմի շիիզմի դեմ մղվող պայքարի շղարշի տակ, օսմանցիներին և պարսիկներին դարձնում էին անհաշտելի թշնամիներ։

Այս հիման վրա էլ 1503—1504 թթ. Հայաստանի տերիտորիայի վրա սկսվեցին պատերազմական գործողություններ վերոհիշյալ երկու պետությունների միջև, որոնք տևեցին մինչև ... 1639 թվականը։

Պատերազմները ավերում ու ամայացնում էին երկիրը։ 16-րդ դարի հայ, ինչպես և արևելյան աղբյուրներում հաճախակի կարելի է կարդալ «ամեն ինչ ոչնչացված էր», «...երկրում ոչինչ չէր մնացել, անգամ խոտը» և որ նվաճողները «քանդէին քաղաքն և զերկիր և զշէնս»։

Նվաճողների կատարած ավերածությունների անմիջական հետևանքը մահտարաժամը, համաճարակն ու սովն էր։ 1549 թ. Բարկիս գյուղում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք հետևյալը. «...եղև մահտարաժամ և մեռան անթիւ տղայք, հենց որ կալոյ ժամանակին տղայ չկայր որ զկամսն քշէր...»[1]։

Թուրք-պարսկական պատերազմների առաջին էտապն ավարտվեց 1555 թ. մայիսի 29-ին Ամասիայում արևելյան երկու պետությունների միջև կնքված հաշտության պայմանագրով։

Ըստ պայմանագրի, Օսմանյան կայսրությանն անցան Հարավային Հայաստանը (Վան, Մուշ, Բիթլիս և այլն), Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը, ամբողջ Ադրբեջանը մնաց պարսիկների ձեռքում։ Պայմանագրով նախատեսված էր, երկու պետությունների սահմանների արանքում գտնվող Կարս քաղաքը դարձնել ամայի ու անմարդաբնակ։

Սակայն 1555 թվականին Ամասիայում կնքված հաշտության պայմանագիրը չէր նշանակում հարատև խաղաղություն Արևելյան երկու պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆեվյան Պարսկաստանի միջև։ Դա, ավելի շուտ կարճատև մի դինադադար էր։ Ամասիայում կնքված պայմանագիրը չէր վերացնում երկու պետությունների միջև գոյություն ունեցող, կրոնական շղարշի տակ թաքնված, խորը քաղաքական հակասությունները։

16-րդ դարի կեսերից Թուրք նվաճողները հեռու գնացող ստրատեգիա էին մշակում։ Այդ ստրատեգիան ուղղված էր նախ և առաջ Ռուսաստանի՝ դեպի Կովկաս ու Անդրկովկաս առաջխաղացման դեմ։

Նվաճելով Անդրկովկասը, թուրքական բանակը պիտի սեպ խրեր սեֆեվիների և ռուսների միջև, վերջիններին թույլ չտալով ընդհանուր բլոկ կազմել Թուրքիայի դեմ։ Սկսած Ուզուն Հասանից (1453—1477), Իրանի տիրապետողները միշտ ձգտում էին դաշինք կնքել եվրոպական որևէ պետության հետ, Օսմանյան Թուրքիայի դեմ մի ընդհանուր բլոկ կազմելու նպատակով։ Այս առումով Վենետիկյան ռեսպուբլիկայի հետ դեռևս դիվանագիտական երկար բանակցություններ էր վարում սեֆեվյան պետության հիմնադիր շահ Իսմայիլ I (1502—1524 թթ.)։ Եվրոպայի հետ դաշինք կնքելու նպատակներ ուներ և շահ Իսմայիլի որդին՝ շահ Թահմասպը (1524—1576 թթ.)։ Հետագայում՝ 1592 թվականին, Ռուսաստանի հետ Թուրքիայի դեմ ընդհանուր դաշինք կնքելու նպատակով, Մոսկվա ուղարկվեց Շահ Աբասի հատուկ դեսպանությունը[2]։

1556 թվականին Աստրախանի գրավումը ռուսների կողմից խիստ վախեցրել էր սուլթան Սուլեյմանին (1520—1566 թթ.) և նրա պալատականներին։

Կազանի և Աստրախանի միացումը Ռուսական պետությանը, չերքեզների, կաբարդինցիների և հյուսիս-կովկասյան այլ իշխանների կողմից կամավոր կերպով մոսկովյան գերիշխանության ճանաչումը ցավոտ կերպով ընդունվեց սուլթանական պալատում։

Օսմանյան կառավարությունը ռուսական պետությունից բացահայտորեն պահանջեց իր զորքերը ետ քաշել նվաճված շրջաններից։ Ռուսաստանի կողմից թուրքական պահանջի մերժումը հասցրեց 1569 թվականի ռուս-թուրքական առաջին պատերազմին, որը թուրքերի համար վերջացավ լիակատար ձախողմամբ։

Ի՞նչ նպատակ էին հետապնդում թուրք նվաճողները, սկսելով ռուսական պետության հետ պատերազմ։ Ինչպես ճիշտ նշում է Ն. Ա. Սմիրնովը, թուրք նվաճողների նպատակը ոչ միայն Աստրախանն ու Կազանը հետ նվաճելն էր, այլև Սեֆեվյան Իրանի չեզոքացումը Ռուսաստանից[3]։

Թուրքական նվաճողների նման ստրատեգիական նպատակադրումը շուտով Հայաստանը նորից դարձրեց պատերազմական տեսական գործողությունների թատերաբեմ։

---

[1] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 9222, հիշատակարան ժ։

[2] **Н. А. Смирнов**, Россия и Турция в XVI и XVII вв., Москва, 1946, էջ 140, 151 և 157, **М. В. Фехнер**, Торговля русского государства со странами Востока, Москва, 1952, էջ 12։

[3] **Н. А. Смирнов**, նույն տեղում, հատ. I, էջ 103։

Ճիշտ է, սուլթան Սուլեյմանի մահից հետո գահ բարձրացած սուլթան Սելիմ II-ի (1566—1574 թթ.) ժամանակ Ամասիայի հաշտության պայմանագիրը 1566 թ. վերջերին երկու պետությունների միջև վերահաստատվեց։ Սակայն այս հանգամանքը դարձյալ ժամանակավոր երևույթ էր։

1571 թվականի հոկտեմբերի 7-ին եվրոպական երեք պետությունների միացյալ նավատորմից, Լեպանտոյի ծովամարտում Թուրքիայի կրած ծանր պարտությունը սեֆեվիներին հնարավորություն էր տալիս պատերազմական գործողությունների նախաձեռնությունը վերցնելու իրենց ձեռքը և ներխուժելու թուրքական սահմանները։ Սակայն 1576 թվականին, շահ Թահմասպի մահից հետո, Պարսկաստանում սկսված գահակալական կռիվները վերին աստիճանի թուլացրին Սեֆյան Իրանի հզորությունը՝ դրանով իսկ օսմանցիներին թույլ տալով խախտելու Ամասիայի հաշտության պայմանագիրը և ներխուժելու Իրանի սահմանները։ Հայաստանի համար կարճատև «խաղաղ» տարիներին նորից հաջորդեցին աղետալի պատերազմական տարիներ։

Խախտելով Ամասիայի հաշտության պայմանագիրը, օսմանյան բանակը Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ ներխուժեց Արևելյան Հայաստան։ Մյուս կողմից, 30 հազարանոց սեֆյան բանակը Թոքմաք խանի գլխավորությամբ ասպատակեց Երևանի նահանգը[4]։

1578 թ. օգոստոսի 10-ին (6 ջեմազուլ ախիր 986 թ.) Ձլդիրում տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ, ուր հաղթանակ տարան օսմանցիները։

Ներխուժելով Վրաստանի սահմանները՝ օսմանյան բանակը մեկը մյուսի հետևից գրավեց Թումեք, Ախալքալակ բերդերը և շուտով մտավ Թբիլիսի։

Ասպատակող օսմանյան նվաճողները, ականատես մի գրչի ասելով՝ «Զայս ամենայն քաղաքս և զգաւառս անմարդարնակ արարին» և «բազում անթիւ կոտորս արարին ի մէջ քրիստոնէիցն, զորս սպանեցին, և զորս գերեցուցին»։

Այդ նույն ժամանակաշրջանում օսմանյան մի ուրիշ բանակ Ուզդեմիր Օսման փաշայի գլխավորությամբ գրավեց հյուսիսային Ադրբեջանը և Դաղստանի մի մասը։

[4] I. Peçevi, Tarih-i Peçevi, հատ. II, էջ 39, J. Hammer Histoire de l'empire ottoman, հատ. IV, էջ 80։

Հաջորդ 1580 թ. ամռանը Շիրվանն ու Ղարաբաղը ասպատակության ենթարկվեց վերոհիշյալ Ուզդեմիր Օսման փաշայի և Ղրիմի թաթարների ու լեզգիների մեծ բանակի կողմից։

Օսման Ուզդեմիրի 1580 թ. կատարած ասպատակությունների մասին ահա թե ինչ է հաղորդում Իսրայել Գրիչը. «Երեկ ազգի պատուհասն՝ մահն, սովն, սուրն, գերութիւն։ Երեկ Ասման փաշէն Հոռոմացոց (իմա՝ թուրքերի—Մ. Զ.) Դամուր Ղապէն էառ ի աշխարհն Շրվանայ և կոտորեաց ազգս Ղիզիլպաշին, բազում խանս և սուլթանս և արար փախստական։ Երեկ ազգ մի կայր Ղայտաղ կուասեն և գերեաց բազում տեղիս՝ Ղարայպաղն, Ղարաղաջն, Խաչէն, Վարանդայ մինչև Տիզակ»[5]։

Փաստորեն ամբողջ Անդրկովկասը ընկավ Օսմանյան կայսրության լծի տակ։ Գրավելով Անդրկովկասը, օսմանցի նվաճողները անխնա կողոպտում էին երկրի հարստությունները։ Միայն Բաբվի նավթը թուրքերին տալիս էր «տարեկան տասը բեռ ակչե», այսինքն մեկ միլիոն ակչե (վաթսուն ակչեն մեկ ոսկի հաշվով)[6]։

Իսկ նոր նվաճված երկրներից ընդհանուր եկամուտը, թուրք պատմաբանների նվազեցրած թվերով, կազմում էր 25 միլիոն 200.000 ակչե, այսինքն՝ 420.000 ոսկեդրամ[7]։

Անդրկովկասի ժողովուրդները բոլորովին էլ չհաշտվեցին օսմանցի նվաճողների տիրապետության հետ։ Ապստամբություններ բռնկվեցին ոչ միայն Վրաստանի զանազան մասերում (Գորիում, Ախալցխայում, Ախալքալակում և այլուր), այլև Դաղստանում ու Շիրվանում։

Հետագայում, 1587 թ. թուրք նվաճողների դեմ մեծ ապստամբություն բարձրացրին Բորչալուում կազախ, բորչալի, ջավակ և շեմսեդդին թուրքմենական ցեղերը։ Այս ցեղերը Լոռի էին տեղափոխվել իրանական շահերի կարգադրությամբ։ Վերջինները նպատակ ունեին սեպ խրել վրացիների, հայերի և ադրբեջանցիների միջև, դրանով իսկ իրագործել «բաժանիր որ տիրես» հայտնի քաղաքականությունը։ Հետաքրքրական է նշել, որ Բորչալուի թուրքմենները օսմանցիների դեմ մղված պայքարում համագործակցում էին ոչ միայն սեֆեվիների, այլև վրացիների հետ[8]։

Քաղաքական այս խոշոր անցուդարձերը և նրանց աղետալի հետևանքները հայ, ինչպես և Անդրկովկասի մյուս դրացի ժողո-

[5] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 4173, էջ 85ա։

[6] I. H. Danişmend, նույն տեղում, էջ 26։

[7] Նույն տեղում։

[8] Նույն տեղում, էջ 105։

վուրդների աշխատավոր զանգվածների համար վառ ու կենդանի լեզվով նկարագրված են այդ տարիներին արտագրված հայերեն ձեռագրերի մի շարք հիշատակարաններում»։

Իրադարձությունները ամենից լավ արձանագրված են Խլաթում արձանագրված մի ճառընտիրում։ Գրիչները (Սարգիսը, Ներսեսը, Վարդանը և Հովհաննեսը) հաղորդում են վերին աստիճանի հետաքրքիր տեղեկություններ և ուշագրավ մանրամասնություններ։ Հիշատակարանը ընթերցողներին ցնցում է նվաճողների կատարած լսված ու չտեսնված վայրագությունների նկարագրությամբ, երկրի ընդհանուր ավերմամբ ու խաղաղ բնակչության մասսայական գերեվարության մասին հաղորդած մանրամասնություններով։ Այն աստիճանի ողբալի են նկարագրված պատկերները, որ գրիչներն իրավամբ գրում են՝ «...ոչ կարեմք լեզուաւ պատմել, և ոչ զաղիրն նոցա (իմա՝ Թուրք նվաճողների—Մ. Զ.) ընդ գրով արկանել»։

Այդ պատերազմական գործողությունների հետևանքով, գրիչների ասելով, նվաճողները «...զբաղում քաղաքս և զգեղս և զգաւառս աւերեալ քանդեցին, զարսն սրով սպանին և զկանայսն և զտղայսն գերի վարեցին»[10]։

Պատերազմական գործողությունների հետևանքով երկրի ընդհանուր ավերածությունը, Թուրքական իշխանության տարածումը ամբողջ Անդրկովկասում, բացասաբար էր անդրադառնում տնտեսության ու առևտրի զարգացմանը։ Խափանվել էին Պոլիս—Թոխատ—Էրզրում—Թավրիզ, Զմյուռնիա—Թոխատ—Էրզրում—Թավրիզ, Տրապիզոն—Էրզրում—Թավրիզ հիմնական առևտրական ուղիները։ Անգլիացի ճանապարհորդ Ջենկինսոնը խոսելով Թավրիզի և առհասարակ պատերազմական ոլորտի մեջ ներգրավված քաղաքների տնտեսական անկման մասին 16-րդ դարի վերջին քառորդում, գրում է, որ Պարսկաստանի «մեծագույն քաղաք Թավրիզը... չունի այն առևտուրը կամ վաճառականությունը, ինչ որ նախապես ուներ, կամ ինչպես ուրիշ քաղաքներն են այս ժամանակ, Թուրքական արշավանքների պատճառով, որոնք Սոֆիից (իմա՝ Սեֆեվյան Պարսկաստանից—Մ. Զ.) գրավել են գրեթե մինչև հիշյալ Թավրիզ քաղաքը»[11]։

---

[9] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N 6273, էջ 502—503։

[10] Տե՛ս Վ. Ա. Հակոբյան. Մանր ժամանակագրություններ, հատ. 2, Երևան, 1956, էջ 251, նաև Գ. Սրվանձտյան. Բորոս աղբար, մասն Բ, էջ 268—269։

[11] Հովհաննես Հակոբյան. Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 378։

1580 թ. գարնանը օսմանյան բանակը Էրզրումից շարժվելով դեպի Կարս ամրացրեց այդ բերդաքաղաքը, հակառակ Ամասիայի հաշտության պայմանագրի, որով նախատեսվում էր, ինչպես արդեն նշվեց, ամայի ու անմարդաբնակ թողնել քաղաքը, որպես սահմանային դեմարկացիոն գոտի։ Դրանով օսմանցիները ձգտում էին ավելի բորբոքել պատերազմական գործողությունների հուրը։

16-րդ դարի իտալացի ճանապարհորդ Վինչինցո դ'Ալեսանդրիի վկայությունից երևում է, որ դարի կեսերից ամայի էր դարձված ոչ միայն Կարսը, այլև Թուրք-պարսկական սահմանի մոտ եղած այլ շրջանները։ Նա գրում է. «Թագավորի (իմա՝ շահ Թահմասպի—Մ. Զ.) ուժը կայանում է նրանում, որ նա երկիրը ավերակ է դարձրել Թուրքական սահմանների վրա՝ ամեն կողմ վեց օրվա ճանապարհ հեռավորությամբ, և շրջանում քանդած է բոլոր ամրոցները, որպեսզի զորացնե իր դիրքերը և Թուրքերը հակում չունենան գրավելու և պահելու այն»[12]։

Կարսի ամրոցի վերանորոգման աշխատանքներին զուգընթաց օսմանյան մի ուրիշ բանակ, այդ նույն տարին, ասպատակում էր Արևմտյան Վրաստանը, ուր բռնկվել էին բազմաթիվ ապստամբություններ։ Վրացական զորքերը մղելով հերոսական պարտիզանական կռիվներ Թուրքական նվաճողների դեմ 16-րդ դարի քուրդ պատմագիր Շերեֆեդինի ասելով՝ «...զգալի վնասներ էին հասցնում մուսուլմաններին» (իմա՝ Թուրքական նվաճողներին—Մ. Զ.)[13]։

Անակնկալ հարձակումներով օսմանյան բանակին լուրջ վնասներ էր հասցնում շահ Թահմասպի որդի, երիտասարդ և տաղանդավոր զորավար Համզա Միրզան՝ իր ոչ մեծաթիվ ուժերով։ Այդ նույն ժամանակ պարսկական մի ուրիշ բանակ իմամ Կուլի խանի գլխավորությամբ պաշարեց Թբիլիսին, հրի ու կողոպուտի մատնեց քաղաքը։ Իսկ օսմանցիները իրենց հերթին Անատոլիայի բեկլերբեկ Ջաֆար փաշայի գլխավորությամբ ասպատակեցին Երևանի գավառը, ավարի ու ավերի մատնելով Երևան (Ռևան) քաղաքը։ Տեղի բնակչության մի զգալի մասը գերեվարվեց։

1584 թ. Բաղեշի գավառի Պոր գյուղում ոմն գրիչ իր հիշատակարանում խոսելով Ջաֆար փաշայի Երևանյան արշավանքի մասին, նշում է, որ նվաճողներն «...աւերեցին զհայոց աշխարհն. զվերին կողմն արևելից և արին զԵրևան և տիրեցին և զայլսն ամենայն աւե-

---

[12] Հովհ. Հակոբյան. Ուղեգրություններ, էջ 352։

[13] Chérêf-nâmeh ou fastes de la nation kourde par Chérêf-Ouddine, prince de Bitlis, հատ. II, 1-ière partie SPB, 1875, էջ 647—648, այսուհետև՝ „Chérêf-nâmeh".

րեցին և գերեցուցին, և շատ անձինս քրիստոնէից ի սուրն քարշեցին և բաղում սրբութիւնս աւերեցին և քարահատակ արարին և դեռևս կամին առնել, բայց զպատիժն նոքա կրեցին»[14]։

Թուրք պատմագիր Մ. Սելանիկին, խոսելով Ջաֆար փաշայի Երևանյան արշավանքի մասին, Երևանի ու նրա շրջակայքի ավերումը ամբողջությամբ վերագրում է Երևանի սեֆեվյան բեկլերբեկ Թոքմաք խանի կամայականություններին։ Այսպես, նա գրում է. «իսկ զզվելի Թոքմաք խանը նախապես տեղեկանալով այս մասին (իմա՝ Թուրքական բանակի դեպի Երևան արշավանքի մասին— Մ. Զ.) փախուստի է դիմում, նախապես կողոպտելով ու թալանելով [Երևան] քաղաքն ու շրջակայքը։ Այսպիսի ահավոր կողոպուտի ու հրդեհման ենթարկված Երևանի բնակիչների ողբն ու կոծը, նրանց թափած արտասուքն ու կրած թշվառությունը հայտնի դեստանի (ողբի) բնույթ ստացավ»[15]։

Թուրք պատմագիր Փեչևին Երևանյան արշավանքը նկարագրելիս որոշ առումով ավելի անաչառ է։ Նրա մոտ Երևանն ավերվում է ինչպես փախուստ տված Թոքմաք խանի, այնպես էլ օսմանյան բանակի կողմից[16]։ Խոսելով քաղաքի բնակչության և ամենից առաջ հայերի[17] մասսայական գերեվարության մասին, Փեչևին նշում է, որ գերի վերցվածները բարձրացրին այն հարցը, թե արդյո՞ք խաղաղ բնակչության գերեվարումը օրինական է, հարց, որ Մուֆթի Քեմալ փաշա Զադեն իր ֆեթվաներով (մեկնություններով) հաստատեց «օրինականությունը»։

Մուֆթին մինչև իսկ գտավ, որ «...շարիաթով թույլատրվում է գերի վերցված կանանց հետ միասին գերի վերցնել նաև նրանց փոքրահասակ երեխաներին»[18]։

[14] ՀՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ (Մեսրոպ Տեր-Մովսիսյան (Մագիստրոս), գործ № 21, էջ 63), Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 6206, էջ 291բ։

[15] „Tarîh-i Selânîkî Mustafa efendi, հատ. I, էջ 154—155։

[16] „Tarîh-i Peçevî", հատ. II, էջ 58։

[17] Որ գերի վերցվածների մեծ մասը հայեր էին, երևում է ինչպես հենց իրենց թուրք աղբյուրների տվյալներից, այնպես էլ 16-րդ դարի անգլիացի առևտրականների հանապարհորդ Ջոն Նյութերի հետևյալ վկայությունից. «Պարսկաստանի վերջին պատերազմներում (իմա՝ 1578—1582 թթ.— Մ. Զ.) շատ քրիստոնյա գերիներ էին, վերցրել Երևանում և ուրիշ տեղերում» (Հովհ. Հակոբյան. Ուղեգրություններ, մասն Ա, էջ 544)։

[18] „Tarîh-i Peçevî", հատ. II, էջ 58—59 (مسله) اسیر اولان عورتلردن تعقل ایلمین اولاد صغاری دخی انالرینه اسیر ایرتمك شرعا جائیز اولورمی (الجواب) اولور.

Ունենալով Մուֆթիի նմանօրինակ ֆեթվաները, այնուհետև գրում է Փեչևին, թուրք զավթիչներն «սկսեցին կողոպտել Երևան քաղաքն ու շրջակայքը։ Նրա (իմա՝ Երևանի—Մ. Զ.) բոլոր ոսկեզօծ և գեղեցիկ կառուցված պալատներն ավերվեցին և գետնին հավասարեցվեցին, գեղաղարդ ու ոսկեփայլ ծածկերը խորտակվեցին և 20 հազարից ավելի կանանց և երեխաների գերի տարան։ Դրանից հետո իսլամական բանակը, մեծ ավարով ու ուրախ, կայսերական բանակատեղը հասավ»[19]։

1584 թ. գարնանը օսմանյան բանակը Երևանից շարժվեց Նախիջևան, այս անգամ արդեն Ուզդեմիր Օսման փաշայի գլխավորությամբ։ Վերջինիս հաջողվել էր, ինչպես արդեն նշեցինք, իրեն ենթարկել Դաղստանն ու Հյուսիսային Կովկասի մի զգալի մասը։ Սերդար Ֆերհադ փաշան հետ կանչվեց իր պաշտոնից։

Մարանդում ու Խոյում Համզա Միրզայի 7000-անոց փոքրաթիվ զորքը անակնկալ հարձակումով մեծ կորուստների մատնեց օսմանյան 200.000-անոց բանակին։ Սակայն օսմանյան մի այլ զորախումբ 1585 թ. սեպտեմբերի 21-ին (26 ռամազան) պաշարեց ու գրավեց Թավրիզը, հրի ու սրի մատնելով քաղաքը։

Սակայն շուտով Համզա Միրզայի ջոկատի նոր անակնկալ հարձակումը պարտության է մատնում թուրքերին. ճակատամարտում իր մահն է գտնում, ի ուրախություն հայ գրիչների, Սերդար Ուզդեմիր Օսման փաշան (29 հոկտեմբերի 1585 թ.)։

Ոգևորված հաղթանակով, Համզա Միրզայի զորքը գրավում է Երևանի, Վանի և Թբիլիսիի նահանգները։ Օսմանցիների համար դրությունը դառնում է կրիտիկական։ Նորից օսմանյան բանակի գերագույն հրամանատար (սերասկեր) է նշանակվում Ֆերհադ փաշան։ Դրությունը օսմանցիների համար այն աստիճան անբարենպաստ էր, որ վերջինս 1586 թ. գարնանը գալով էրզրում, չհանդգնեց նոր արշավանք ձեռնարկել դեպի Պարսկաստան։

Սակայն Իրանում ծայր առած ներքին միջցեղային կռիվները և նոր պատերազմը Արևելքում՝ ուզբեկների հետ, բացատրում է, թե ինչո՞ւ օսմանյան բանակի պարտությունից հետո հաղթանակը նորից մնաց թուրքերի ձեռքը։

1588 թ. (996 թ.) Ֆերհադ ու Ջաֆար փաշայի զորքերը ևս մի անգամ ասպատակում ու ավերում են Երևանի ու Նախիջևանի նահանգները[20]։

[19] Նույն տեղում։

[20] I. H. Danişmend. Նույն տեղում, էջ 11։

Թե ինչ հետևանքներ ունեցան քաղաքական այս իրադարձությունները պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմ դարձած Հայաստանի և հայ ժողովրդի համար, վկայում են այդ տարիներին գրված մի շարք հիշատակարաններ։

Պատերազմական գործողությունների անմիջական հետևանքը սովն ու համաճարակն էր։

Սովի ցնցող նկարագրությունը տրված է Հովհաննիսիկ Ծարեցի գրչի և ուրիշների մոտ. «Ի սոյն ամի (1580 թ.),—գրում է գրիչը,—ընդ երկուց պատճառս՝ մահուն և սրոյն՝ եղև ահագին և անասելի սով սաստիկ, այսինքն՝ մինչ մարդիկ գազանապէս անկան ի հմայկերութեան վասն յորբ մնալոյն ի մահոյն և վասն անինչը և անյարկ շրջելոյն ի գերչացն»[21]։

Որ սովը պատերազմական գործողությունների անմիջական հետևանքն էր, երևում է Հովհաննիսիկի հետևյալ տողերից. «...քանզի ամենայն գաւառք հայոց, որ ընդ իշխանութեամբ կարմրադլխոյն կայր, քակեալ աւերեցաւ։ Եւ թէ ուրեք յանկեան մնացեալ լինէր շինութիւն զետեղէին տնանկք և մերկք, այրք և կանայք, ծերք և երիտասարդք, տղայք և յաղջկունք. և առանց յօթևանի արտասուալից դիմօք շրջէին ի դրունս յօտարաց և յերթս այլոց, առ ի խնդրել զկերակուր յանձանց իւրեանց...»[22]։

Մարդիկ ստիպված դիմում էին խոտակերության, հիվանդանում ու մահանում։

«Եւ իբրև եղև գարունն,—շարունակում է գրիչը,—սփռեցան յաղքատքն ի յերեսս դաշտաց, սկսացեալ մարմնով որպէս ղերամակս յայծեաց և իբրև զչոլորեալս հօտից, ուտելով զբանջարս վայրի և զխոտս կանաչ, և ոչ յագենային, քանզի կոչեցեալ էր յերկիր սով և զօրութիւն հացի բեկեալ ըստ մարգարէին»։ Սովի սաստկությունը տեղ-տեղ պատճառ դարձավ մարդակերության։

«Եղուկ Թշուառականիս,—գրում է գրիչը,—և պատմութեանս եղբարք քանզի բազում ի պիղծ մսէ զազիր շանս և կատուաց կամար յուղեալ (մորթեալ) եղեն և մարմնոց մարդկան ևս»[23]։

Մենք արդեն նշեցինք, որ Պարսկաստանում ծայր առած ներքին գահակալական կռիվները վերին աստիճանի թուլացրին սեֆյան պետության հզորությունը։ Այս դրությունը հնարավորություն տվեց

[21] Վ. Ա. Հակոբյան. Մանր ժամանակագրություններ, հատ. Բ, էջ 243։
[22] Նույն տեղում։
[23] Նույն տեղում։

Թուրքերին, կարճ ժամանակվա ընթացքում (1587—1590) նվաճել ամբողջ Անդրկովկասը։

1587 թ. հունիսին Պարսկաստանի գահին տիրացավ երիտասարդ ու հեռատես Շահ-Աբասը։ Հաշվի առնելով իր երկրում ստեղծված կրիտիկական դրությունը (շամլու, ռումլու, ուստաջլու, զուլքադիր թուրքմենական ցեղերի առաջնորդների ապստամբությունը ծայր աստիճան քայքայել էին երկիրը), նա դիմեց Թուրքերին՝ հաշտություն կնքելու համար։ Շահ-Աբասի նպատակն էր ժամանակավորապես շունչ քաշել, արյան մեջ խեղդել բոլոր ցեղապետների դիմադրությունը, հոգալ երկրի ռազմական հզորության մասին, և վերջապես, վերսկսել պատերազմական գործողությունները օսմանցիների դեմ, վերածելով ամբողջ Անդրկովկասը հրի ու սրի, իսկ բնակչությանը՝ մասսայական գերեվարության ու բռնի տեղահանման։

Պոլսում տեղի ունեցած երկար բանակցություններից հետո, 1590 թ. մարտի 21-ին Արևելյան երկու պետությունների միջև կնքվեց նոր հաշտության պայմանագիր։ Ըստ պայմանագրի, օսմանցի նվաճողների արյունոտ տիրապետության տակ անցավ ամբողջ Անդրկովկասը և հարավային Ադրբեջանը՝ Թավրիզի հետ միասին։

Այսպես էր քաղաքական իրադրությունը Հայաստանում 16-րդ դարի մայրամուտին։

1590 թ. Կոստանդնուպոլսում կնքված հաշտության պայմանագրով Թուրքիան մասամբ իրագործեց քաղաքական ու տնտեսական իր ծրագիրը, զավթելով Անդրկովկասի ու Հարավային Ադրբեջանի կարևորագույն առևտրական ուղիները։ Քոչվորական ու ագրարային երկիր հանդիսացող ու ֆեոդալական մասնատվածությունից ուժասպառ եղած Իրանին հասցվեց շոշափելի ռազմական ու բարոյական պարտություն։ Նվաճված ընդարձակ տերիտորիայի հարստությունը, և նախ և առաջ, մետաքսի հումքը սկսվեց կողոպտվել օսմանցի ֆեոդալների կողմից, բնակչությունը ենթարկվեց ծանր հարկատվության, կեղեքման ու կրոնական հալածանքի։ Տեղական ֆեոդալների տիրույթները կամ հափշտակվեցին, կամ թե վերջիններին պարտավորեցին արքունի գանձարանին միանվագ խոշոր վճարումներ կատարել։ Այդ բոլորը չէր կարող ընդհանուր դժգոհություն չառաջացնել նվաճողների նկատմամբ և՛ ֆեոդալների, և՛ բնակչության ամենալայն շրջաններում։

Այսպիսի իրադրության մեջ տեղական ֆեոդալները իրենց տիրույթների փրկությունը տեսան Իրանի երիտասարդ Շահ Աբաս I-ի (1587—1628 թթ.) ռազմական միջամտության մեջ։ Վերջինիս հա-

ջողվել էր Կոստանդնուպոլսի հաշտության պայմանագրի կնքումից հետո ընկած կարճ ժամանակամիջոցում ապահովել իր արևելյան թիկունքը ուղբեկների ներխուժման մշտական վտանգից, սանձահարել կենտրոնախույս քոչվոր ֆեոդալների մի մասի դիմադրությունը և երկրում անցկացնել ռազմական ռեֆորմ վերակառուցելով Իրանի պաշտպանությունը Թուրքիայի օրինակով։

Այսպիսով, Իրանի խորամանկ, հեռատես և դաժան նոր տիրակալը «աւերողն Հայաստան աշխարհին և կործանողն հայոց ազգին» Անդրկովկասի ֆեոդալների կողմից դիտվում էր որպես հույսի ու փրկության ապավեն[24], ավելի ճիշտ, որպես երկու չարեաց փոքրագույնը։

«Բազումք ոմանք,—գրում է Առաքել Դավրիժեցին,—յաշխարհէս Ատրպատականի իշխանք և կողմնակալք մահմեդականք և քրիստոնեայք գնացեալ էին առ Թագաւորն Պարսից, վասն զի յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զնոսա զազգն օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ և կեղեքմամբ զրիէին և կողոպտէին և հաւատոց կուռէճութիւն (խստութիւն) առնէին, այլ բազում տառապանօք չարչարէին ոչ միայն զազգս հայոց, այլև զազգս վրաց և զմահմեդականաց (ազգբնջանցիներ) և վասն այնր նեղութեան գնացին առ Թագաւորն Պարսից, զե թերևս նովաւ դիւրութիւն գտցին զերծեալք ի ծառայութենէն օսմանցւոց»[25]։

Շահին դիմող ֆեոդալների մեջ Առաքել Դավրիժեցին հիշատակում է մի շարք քուրդ, վրացի և հայ հոգևոր ու աշխարհիկ մեծամեծների, որոնց թվում Գեղամա մելիք Շահնազարի և Սյունյաց Քշտաղի Մելիք Հայկազի անունները, Դիզակի չորս գյուղերը և Ադուլիսի Դաշտ կոչված գյուղի «երեք մասը»[26]։

[24] Հետաքրքիր է նշել, որ այդ տարիներին արտագրված ձեռագրերի հիշատակարաններում գրիչներից ոմանք կարծես գերադասում են պարսկական տիրապետությունը օսմանյանից։ Ամենամռայլ գույներով նկարագրելով օսմանյան տիրապետությունը Հայաստանում, նրանք որոշ հույսեր են կապում Շահ Աբասի անվան հետ։ Այսպես՝ Խարայ գյուղից 1601 թ. Ղազար գրիչը գրում է. «...յաւուրս նորին (իմա՝ սուլթան Մուհամմեդ III-ին—Մ. Ղ.) այնչափ հալածումն լինել քրիստոնէից մինչև հարքն զորդիս վաճառէին»։ Հակադրելով թուրքական սուլթանը Շահ Աբասին, նա շարունակում է. «...երանի էր մեզ, թէ Թագաւորել ի վերա մեր զնա տեսանէք» (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր, № 2845, էջ 2676)։

1604 թվականին Խիզանում արտագրված ավետարանի հիշատակարանում Սարգիս քահանան Շահ Աբասին անվանում է՝ «էգիլ փ սթշահ» այսինքն «արդար Թագավոր» (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 6420, էջ 338ա)։

[25] Առ. Դավրիժեցի, էջ 15։

[26] Նույն տեղում, էջ 16։

«Եւ է պատճառ դիզակեցւոց և դաշտեցւոց գնալոյն,—գրում է վերջինների գաղթելու մասին պատմագիրը,—ծանր հարկապահանջութիւնն, կեղեքելն և կողոպտելն և կուռէճութիւն առնելն, և անխնայ սպանանելն զքրիստոնեայսն[27],—Այս բոլորի հետևանքով,—եղեալ են ամենեքեան յոյժ չքաւորք, և պարտատէրք, և մնացեալ են անհար։ Վասն որոյ փախուցեալ գնացին յերկիրն Պարսից»[28]։

Ֆեոդալներն, ըստ պատմագրի, իրենց հերթին մտածում էին «...Մտերիմք երևեսցին առաջին Շահին զուցէ դեռևս դիւրութիւն և օգտութիւն ինչ գտանիցեն ի նմանէ նեղութեանց և պարտուց իւրեանց»[29]։

Երբ Իրանում ամրապնդվում էր Շահ Աբասի կառավարությունը՝ 16-րդ դարի վերջին սուլթանական Թուրքիան անկման հայտանիշներ էր ցույց տալիս։ Ահա այս ժամանակ էր, որ երկրում ծայր էր առել ջալալիների հզոր շարժումը։

Երկրում ծայր առած ճգնաժամը, իհարկե, աննկատելի չէր կառավարող թուրք ֆեոդալներին։ Ճգնաժամից դուրս գալու ելքը նրանք գտան նոր պատերազմական ավանտյուրաների մեջ՝ եվրոպական ճակատում։ Պատերազմը հաջողություն չունեցավ։ Յուրաքանչյուր օր Կոստանդնուպոլիս էին գալիս նորանոր լուրեր թուրքերի կրած ծանր պարտությունների մասին հունգարական և վալախական սահմաններում[30]։

1593 թ. Բոսնիայում ամբողջությամբ ոչնչացվեց Հասան փաշայի զորքը։ Այդ տարին Օսմանյան պետության պատմության մեջ հայտնի է որպես «կաղմալուծման կամ պարտության տարի» (Bozgun senesi)[31]։

Եթե եվրոպական ճակատում թուրքերը լրիվ չջախջախվեցին, ապա դրա պատճառը Գերմանիայում ծայր առած կրոնական ներքին վեճերն էին։ Այդ հանգամանքը թույլ չտվեց օսմանցիների դեմ ընդհանուր հարձակում կազմակերպել։

Ջալալիների ապստամբությանը հետևեց 1600 թ. կայսրության մայրաքաղաքում բռնկված սիփահիների ապստամբությունը։ 1600

[27] Նույն տեղում։

[28] Նույն տեղում, էջ 17։

[29] Նույն տեղում։

[30] J. Hammer, Histoire de l'empire ottoman, հատ. VII, էջ 309, I. H. Danişmend, էջ 123—124, 126, 127—128։

[31] Kâtip Çelebi, Fezleke, հատ. 1, էջ 202։ I. Hammer, նույն տեղում, էջ 38։

թվականը թուրքական պատմագրության մեջ հայտնի է, որպես «ապստամբության տարի»[32]։

Շահ Աբասը ուշի ուշով հետևում էր Թուրքիայում տեղի ունեցած իրադրությունների ամենափոքր մանրամասնություններին՝ տեղեկություններ հավաքելով ամենքից և իր մոտ ապաստանած ֆեոդալներից։ «Խորամանկ շահը,—գրում է պատմագիր Առ. Դավրիժեցին,—սնոտի ու պատիր խաբեությամբ,—բարեկամ ցուցաբերելով իրեն իր մոտ ապաստանած ֆեոդալներին, զամենայն խորհուրդս սրտից նոցա չինքն գողացաւ և զամենայն որպիսութիւն աշխարհաց զել և զմուտ և զաշխարհակալ արանց իմացաւ»[33]։

Կոստանդնուպոլսի պայմանագրով Անդրկովկասի կորուստը Իրանի ղեկավարող շրջանները դիտում էին որպես ժամանակավոր երևույթ, գտնելով, որ այդ երկրամասը իրենց ժառանգական «հայրենի աշխարհն» է։ Այդ տեսակետից վերին աստիճանի ուշագրավ են Առ. Դավրիժեցու մեջբերած Զուլֆիղար խանի դիմումը Նախիջևանում պաշարված օսմանյան կայազորին։ Շահ Աբասի այդ զորավարը, հորդորելով կայազորին անձնատուր լինել, ասում էր, որ պաշտպանությունը զուր է, որովհետև գալիս է. «ինքնակալ թագաւորը բազում զօրօք,—և խնդրում է,—...զհայրենի աշխարհն իւր» (ընդգծումը մերն է—Մ. Զ.)[34]։

Նախքան օսմանցիների դեմ պատերազմ սկսելը, ինչպես արդեն նշվեց, Շահ Աբասը դեսպանություններ էր ուղարկել Եվրոպա, Մոսկվա, Գերմանիա, Իտալիա (Վենետիկ, Տոսկանիա) և Հռոմի պապի մոտ Թուրքիայի դեմ միասնական ճակատ կազմելու համար[35]։

Շահին մնում էր միայն պատերազմի առիթը, որը շուտով ներկայացավ։ Դժգոհ օսմանցիների տիրապետությունից Սալմաստի Բեկ քուրդ Ղազին ապստամբել էր օսմանցիների դեմ և դիմել էր շահի օգնության, հորդորելով նրան շարժվել դեպի Թավրիզ և պատերազմ սկսել օսմանցիների դեմ[36]։

---

[32] **Kâtip Çelebi**, Fezleke, հատ. I, էջ 202։

[33] Առ. Դավրիժեցի, էջ 18։

[34] Նույն տեղում, էջ 23։

[35] **J. Hammer**, Histoire de l'empire ottoman, հատ. VIII, էջ 38.

[36] **Kâtip Çelebi**, Fezleke, հատ. I, էջ 204. حركت شاه عجام بجانب تبريز باتحريك كورد غازى. Առ. Դավրիժեցի, էջ 15. Ընդհանրապես պետք է նշել, որ քուրդ Ղազիի ապստամբությունը օսմանցիների դեմ եղակի երևույթ չէր։ Դժգոհ օսմանյան տիրապետությունից և շալալիների շարժման ու երկրում ստեղծված անարխիայի հետևանքով բազմաթիվ քուրդ բեկեր անցան Իրանի կողմը։ Թուրքական

Օգտագործելով ստեղծված հարմար առիթը, 1603 թ. սեպտեմբերի 14-ին (7 ռեբի ուլ-ախիր) Շահ Աբասը մի քանի հազար զինվորների գլուխ անցած, սրընթաց՝ Սպահանից շարժվում է դեպի Թավրիզ։ Ճանապարհին նրան է միանում Արդեբիլի կառավարիչ վերոհիշյալ Զուլֆիղար խանը։ Շուտով Շահ Աբասը մտնում է Թավրիզ։ Օսմանցիների բռնություններից տանջահար Թավրիզի բնակչությունը մեծ խանդավառությամբ դիմավորում է շահին։

Սեպտեմբերի 29-ին (22 ռեբի-ուլ-ախիր) Թավրիզից հյուսիս-արևմուտք ընկած Սոֆյանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը պարտվում են ու նահանջում դեպի Նախիջևան, սակայն Թավրիզի բերդը գրավվում է միայն հոկտեմբերի 21-ին (15 ջմադուլ—էվվել), այսինքն՝ մոտ երեք շաբաթ դիմադրությունից հետո[37]։

զավթիչները նույնպիսի ոտնձգություններ էին կատարում քուրդ բեկերի նկատմամբ հափշտակելով նրանց ունեցվածքը։ Թուրքական ժամանակագրություններում նշվում է, որ «ռայաթի ունեցվածքի հափշտակությունից հետո»(emvâl-i reâya gaaretinden sonra, emval-i ümerâ ve hükkâmında yağ'maya kalkışıp.) «Էմիրների և հաքիմների», այսինքն ֆեոդալների ունեցվածքը նույնպես հափշտակեցին, տե՛ս J. H. Danişmend, նույն տեղում, էջ 225։

[37] Իրանագետ Հ. Դ. Փափազյանը, հենվելով Մատենադարանի պարսկական մի փաստաթղթի վրա, Թավրիզի գրավման օրը համարում է սեպտեմբերի 28-ը և Սոֆյանի ճակատամարտը հետևորդում է Թավրիզի գրավմանը (տե՛ս Հ. Դ. Փափազյան «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները», Երևան, 1959, 2-րդ մաս, էջ 13), մինչդեռ Սոֆյանի ճակատամարտը նախորդում է Թավրիզի բերդի անկմանը։ Այդ պարզորոշ կերպով վկայում են, ինչպես թուրք, այնպես էլ հայ աղբյուրները։ Այսպես՝ հենվելով Ջյաթիբ Չելեբիի «Ֆեզլեքե» աշխատությանը, Համմերն, օրինակ, գրում է. «1603 թ. սեպտեմբերի 25-ին (19 ռեբիուլախիր) տեղի ունեցավ ճակատամարտ, որտեղ օսմանցիները պարտվեցին պարսիկների թվական գերակշռության տակ...։ Օսմանցիների պարտությանը հետևեց Թավրիզի անկումը, ըստ որում բերդի գրավումը տեղի է ունենում հոկտեմբերի 21-ին։ Տե՛ս **J, Hammer**, Histoire de l'empire ottoman, հատ. VIII, էջ 39—40։ Թուրք աղբյուրների վկայությունները նույն ձևով են մեկնաբանված թուրք պատմաբան Ի. Հ. Դանիշմենտի և մյուսների մոտ (տե՛ս J. H. Danişmend, նույն տեղում, էջ 226)։

Առավել պարզ են վկայությունները Դավրիժեցու մոտ. «Յաւուրս յայսոսիկ,—գրում է նա,—եկն շահն և հասս ի Թարվեզ, չեթող զքաղաքն և անցեալ եկն ընդդէմ զօրացն օսմանցւոց։ Իսկ օսմանցիք իբրև զգացին զգալն պարսից և իմացան ստուգիւ թէ շահն ինքն է, քանզի յառաջ համարեցան, թէ զօրապետ ոմն իցէ, և իսկոյն թողեալ զպատերազմն բերդին, դարձան և եկին մերձ ի գիւղն Սոֆիան, և անդէն ի դաշտին Սոֆիանու խմբեցան ի պատերազմն յանդուգն բախմամբ»։ Այնուհետև՝ «...Եւ չետ վանելոյ պատերազմին եկն շահն և մուտ ի Թարվիզ, և կալեալ տիրեաց Թաղամին և ամենայն զաւառացն» (ընդգծումը մերն է—Մ. Զ.) Առ. Դավրիժեցի, էջ 19—20։

Տեսնելով, որ անհնարին է կասեցնել դեպի Նախիջևան արշավող պարսկական բանակի սրընթաց առաջխաղացումը, օսմանցիները «...ինչ և կարացին կողոպտել ի մերձակայ գեղօրէիցն, կողոպտեալ աւերեցին՝ և ժողովեցան ի Նախչուան»[38]:

Հոկտեմբերի 26-ին (20 ջեմազուլ-էվվել) օսմանցիները հեռանում են Նախիջևանից քաղաքի դռները բաց անելով պարսիկների առաջ:

Նախիջևանի անկմանը հետևում է Երևանի պաշարումն ու գրավումը պարսիկների կողմից, որը տեղի է ունենում նոյեմբերի 15-ին (10 ջեմազուլ-ախիր): Սակայն Երևանի այսպես կոչված «նոր բերդը» (قلعهٔ جدید)[39] գրավվում է միայն վեց ամիս պաշարումից հետո (28 մայիսի (28 զիլհիջե) 1604 թ.)[40]: Երևանի բերդը ենթարկվում է ավերվածության: Շահը «...Երևանի բերդը քանդեց, այրեց ու գետնին հավասարեցրեց»,—գրում է Ի. Փեչևին[41]:

Արարատյան դաշտավայրում շահը, որպես թնդանոթի միս, օգտագործում էր տեղի հայ ու աղրբեջանցի բնակչությանը: «Ըռադաթ» (iradî կամավոր բառից) անվան տակ նա հավաքագրում էր նրանց իր բանակին առընթեր գումարտակներում, քշելով նրանց ռազմաճակատի ամենավտանգավոր տեղերն, ուր նրանք ոչնչանում էին:

«Եւ յաւուրս յայսոսիկ,—գրում է պատմագիր Առ. Դավրիժեցին,—հրամայեաց շահն զօրացն պարսից գալ երկիր Արարատու՝ և յամենայն շրջակա գաւառս նոցա, հանել յամենայն տեղեաց արս՝ որ ասի բռադաթ: Եթե ի քրիստոնէից իցէ, և եթէ մահմեդականաց, որոյ և իցէ ազգաց ժողովել և բերել ի բանակն պարսից, զի ընդ զօրացն պարսից մարտակից լիցին, զսիբայն քշել և այլ գործակցութեամբ օգնական լինել զօրացն պարսից: Եւ ի ժամ պատերազմին յորժամ երիշ (յարձակումն) առնէին և կամ զսիբայն ի վեր քշէին, զքրիստոնեայսն յառաջ խաղացուցեալ ընդդէմ հրոյ ու սրոյ մատուցանէին, որովք կոտորեալք լինէին ազգն հայոց յերկուց կողմանց՝ յառաջուստ յօսմանցւոց՝ և յետուստ ի պարսից»[42]:

Երևանի բերդի գրավումից հետո շահը ասպատակեց Սևանա լճի, Շիրակի ու Լոռու շրջանները, անխնա թալանելով ժողովրդին ու բռնություններ գործադրելով նրա վրա: Նախավկայի վանքում գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Ի դառն և ի նեղ ժամանակին, որ որդի խուտաբանդային երեկ ի Սպահանայ... գերեաց զազգն քրիստոնէից և Խիզանն հայական ազգին որպէս զարինս վաճառէին միմեանց և ...անմեղ մարդիկ կոտորեցին և շատ անմեղ աղայք ի գրկից մաւրն խլէին... և զազգն հայոց վաճառէին...»[43]:

Թշնամու անակնկալ հարձակումներից իր թիկունքն ամրապնդելու համար շահն այդ նույն ժամանակ իր զորավարներին զորքեր տրամադրելով ուղարկում է Անդրկովկասի այլևայլ վայրեր նվաճումների և ավառության համար:

Այսպես, նա Ամիրգունա խանին ուղարկում է Գանձակ, որը «...ուր և կարաց հասանիլ, հրոյ ճարակ տուեալ և սրոյ մաշեալ, զորս կոտորեաց և զորս աւարեալ գերեաց աղխիւք և ընտանեօք և բերեալ էած յԵրևան ի լիութիւն և ի յզփութիւն բանակին Պարսից»[44]:

Դեռ պաշարված էր Երևանը, երբ շահը հրամայեց իր զորավարներին ասպատակելու և ավերելու Արևմտյան Հայաստանի գավառները և բնակչությանը բռնի տեղափոխելու Արարատյան դաշտավայր ձմռան սաստիկ օրերին:

«Իսկ շահն միշտ նստեալ ի վերայ բերդին Երևանու պատերազմէր, ոչ դադարէր յաւերելոյ զաշխարհս, և գերելոյ զազգս հայոց. քանզի առաքեաց զօրագլուխս բազում զօրօք ի կողման Արզրումայ որք գնացեալ աւերեցին զերկիրն Բասենու և զխնուսայ՝ և զդաշտն Արզրումայ՝ զայլս ուր և կարացին հասանել, քանդեալ՝ աւերեալ՝ այրեալ՝ և ապականեալ զերկիրն և զշէնսն, և զինչս և զստացուածս կողոպտեալ. և զարս սպանեալ, և զկանայս և զմանկունս գերեցուցեալ բերին յԵրևան ի բանակն իւրեանց:

Սոյնպէս և յերկիրն Արճիշու առաքեաց զօրս՝ որք գնացեալ արարին ըստ վերոյ ասեցելումդ աւար և գերութիւն և ապականութիւն ազգին Հայոց ի ժամանակս ձմեռայնոյ»[45]:

---

38 Առ. Դավրիժեցի. նույն տեղում:

39 Այդ բերդը շտապ կարգով թուրքերը կառուցել տվեցին բռնի աշխատանքի լծելով հարյուրավոր մարդկանց: Առաքել Դավրիժեցին այդ բերդի կառուցման՝ մասին գրում է. «Եւ ի հարաւային կողմն (հին) բերդին Երևանայ կից ընդ նմա պատեցին պարիսպ և շինեցին միւս ևս բերդ և մտին ինքեանք (օսմանցիք) ի ներս պատերազմական զինուք» (Առ. Դավրիժեցի, էջ 21—22): Բերդը «նոր» էր կոչվում, որպեսզի տարբերվեր 1583 թվականին Ֆերհատ փաշայի կառուցած «Հին բերդից»:

40 Kâtip Çelebi, Fezleke, հատ. I, էջ 218, J. Hammer, Histoire de l'empire ottoman..., հատ. VIII, էջ 59, I. H. Danişmend. նույն տեղում, էջ 232:

41 „Tarih-i Peçevi", հատ. II, էջ 261: ...و قلعه روانی یاقوب
یعقوب خاکه دوابو ایلدی.

42 Տե՛ս Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ ձեռագրաց Նախավկայի, հմմտ. Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. Բ, Երևան, 1959, էջ 83:

43 Առ. Դավրիժեցի. էջ 27:

44 Նույն տեղում:

45 Նույն տեղում, էջ 32—33:

Շահի զորավար Ալահվերդի խանի կողմից կատարված Արևմտյան Հայաստանի գավառների ավերման ու ավարման, իսկ բնակչության գերեվարման ու բռնի տեղահանման պատկերը այս ձևով է նկարագրում ժամանակի պատմագիրը. «...Եւ յարձակեցաւ (խանն) ի վերայ գաւառաց աշխարհի և զամենայն երկիրն Արծկեոյ հաւասար աւերեաց, և հարցին արկեալ այրեաց, և զամենայն արս կոտորեաց՝ և զինչս, և զստացուածս՝ զուստերս, և զդստերս և զկանայս յաւար և ի գերութիւն առեալ։ Եւ ելեալ անտի եկն յԱրճէշ՝ և ի Բերկրի, և ի Վան. և յամենայն գաւառս նոցա արար այնպէս... և ժողովեալ զամենայն գերեալսն, և հօրանս անդէոց, և ջոկս ոչխարաց, և երակամս ձիոց, իբրև մեծ և յորդեալ հեղեղ զամենեսեան վարեալ ածեալ բերեալ հասուցին յԵրևան ի լիութիւն բանակին պարսից»։ Մի հիշատակարանում 60.000 մարդ է հաշվվում Արարատյան դաշտ քշված բնակչության քանակը, չհաշված սպանվածներն ու մահացածները[46]։

Միայն վերոհիշյալ Ալավերդի խանը Արճեշից, Բերկրիից ու Վանից տեղահանել տվեց 23.000 հայեր[47]։

Այս բոլոր իրադարձությունները տեղի էին ունենում, երբ թագավորում էր սուլթան Մուհամմեդ III-ը։ Երբ իշխանությունն անցավ նրա հաջորդ սուլթան Ահմեդի ձեռքը (1603—1618 թթ.) ապա հսկայական բանակով Արևելք ուղարկվեց ծագումով իտալացի Ջղալ օղլի Սինան փաշան (Cicala-ն)։ Էրզրումի ճանապարհին Ջղալ օղլու խորամանկ բանակցությունների հետևանքով չալալի ապստամբների մի շարք ղեկավարներ, սովից ու երկարատև, մեծ մասամբ անհաջող պատերազմներից կատաղած ու ավարառության սովոր զորքերով միացան արշավող օսմանյան բանակին։ Ճանապարհին, չալալիները «կողոպտէին, թալանէին, զոր ինչ գտանէին և պ՝տս կերակրաց մարդոց և անասնոց և ի ձեռս անկելոց մարդոցն՝ վերին աշխարհաց շար զուլիցն նման առնէին, զերկորիսն ծամէին և այլ զանազան տանջանօք կու շարշարէին թէ՝ հոր գարոյ և ցորենոյ գոյց տո՛ւր, կամ այլ կարասիս ընչից և ստացուածոց զանձաց, զոր թաքուցեալ էք ընդ հողով։ Եւ շարշարեալքն զոր ինչ որ գտանէին, ցուցանէին՝ թէ իւրն էր, թ՝ այլոց։ Եւ այլ զոր ոչ գիտէին՝ զի՞նչ ասէին և կրկին դառն տանջանօք շարշարելով սպանէին և... գնային»[48]։

Սա շարիքի սկիզբն էր միայն։ Սինան փաշայի զորքերի թվական գերակշռության առաջ, Շահ Աբասը ստիպված եղավ նահանջել հրաման արձակելով, բռնի տեղահանված ու Արարատյան դաշտավայրն հավաքված հայ ու ադրբեջանցի բնակչությանը, ինչպես և տեղացիներին բռնի կերպով քշել դեպի Պարսկաստան։ Իսկենդեր Մունշին այդ մասին գրում է. «...զորաջոկատներ ուղարկեցին [Արևմտյան Հայաստանի գավառները], որպեսզի ավերեն ու հիմնահատակ անեն հոռոմների (իմա՝ Թուրքերի—Մ. Զ.) ճանապարհին ընկած [բոլոր բնակելի վայրերը], չթողնեն հացահատիկի ու մարգագետինների կերի հետքն անգամ, տեղափոխեն այդ շրջանների անհավատ հպատակներին այն կողմը (Պարսկաստանը) կանգ չառնեն և ոչ մի բանի առաջ այն [մարդկանց] կողոպտելու ու ոչնչացնելու գործում, որոնք բարյացակամ վերաբերվելով հոռոմներին, չեն կամենա տեղափոխվել [Պարսկաստան]»[49]։

Այդ հրեշային հրամանը շուտով ի կատար ածվեց։ Ջարհուրելի մտադրությունն իրականացնելու համար շահը դիմեց խորամանկության։ Նա իր մոտ կանչեց «զմեծամեծս երկրից հայոց», ինչպես գրում է Առ. Դավրիժեցին, հորդորելով նրանց համաձայնվել ժամանակավորապես տեղափոխվել Պարսկաստան օսմանյան զորքերի ասպատակություններից զերծ մնալու համար։ Իրականում շահի ստրատեգիական նպատակն էր ամայացնել երկիրը, որտեղից պիտի անցներ օսմանյան բանակը և որ գլխավորն է բռնի տեղահանվող բնակչությունը ամեն կերպ պիտի նպաստեր Իրանի տնտեսության ու առևտրի զարգացմանը։ Առաքել Դավրիժեցին այսպես է բացատրում այդ բռնի տեղահանության պատճառը. «Զի եկեալ օսմանցւոցն,— գրում է նա,—անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ։ Եւ ոչ գտցի կերակուր և ոռճիկ և արդ ինչ պիտոյք նոցա՝ և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեսցին զօրքն օսմանցւոց։ Նաև տարեալ ժողովուրդն լինիցին նմա անզերծանելի ճարկատու ծառայք և հողագործք մինչև ցյափտեան»[50]։ (Ընդգծումը մերն է— Մ. Զ.)։

---

[46] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 5315, էջ 208ա և բ։

[47] Առ. Դավրիժեցի, էջ 33. «... գերեցան այսքան անձինք քրիստոնէից, զորոց թիւն ԻԳՌ (23.000), ասեն գոլ՝ թող զսպանեալսն»։ Պարսիկ պատմագիր Իսկենդեր Մունշին, խոսելով մինչև Հասանկալա սեֆևյան զորքերի առաջխաղացման, երկրի ավարման ու ավերման մասին, գրում է, որ նրանք (այսինքն պարսիկները—Մ. Զ.) բերեցին նաև մոտ 20 հազար այլազգի գերիներ, որոնք արժանացան զղլբաշների շրջանում իսլամի կրոնը ընդունելու պատվին (տե՛ս А. А. Рахмани. Тарих-и алам арай-й Аббаси, как источник по истории Азербайджана. Баку 1960, էջ 101)։

[48] Գր. Դարանաղցի, էջ 43։

[49] А. А. Рахмани, նույն տեղում, էջ 101։

[50] Առ. Դավրիժեցի, էջ 38։

Հետագայում Անդրկովկասի երկրներից բնակչության՝ բռնի տեղահանման պրակտիկան շարունակվեց անգամ 1612 թ. ժամանակավոր դինադադարից հետո։ Հենվելով այս փաստի վրա պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկին գալիս է այն եզրակացությանը, որ բռնի տեղահանումը առավելապես նպատակ ուներ ամրացնել գյուղացիներին հողին և առավելագույն չափով շահագործել նրանց[51]։ Իրոք, Առ. Դավրիժեցու վերոհիշյալ վկայությունը՝ «նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անդերծանելի հարկատուք՝ ծառայք և հողագործք մինչև ցյաւիտեան» միայն մասամբ խոսում է Ի. Պ. Պետրուշևսկու եզրակացության օգտին։ Տեղահանումը կատարվում էր գլխավորապես ստրատեգիական նկատառումներով։

Ուշադրություն չդարձնելով հայ «ավագանիների» դիմադրությանը, Շահ Աբասը հանձնարարում է Ամիրգունա խանին՝ «ուր և կարասցեն ձեռնարկել, արտասահման արարեալ վարեսցեն, և ոչ թողուցեն ամենևին շունչ կենդանի, եթէ քրիստոնեայ և եթէ մահմեդական, զհաւանեալսն բանից, և զոչ հաւանեալսն և զստանտանացսն հրամանաց թագաւորին, սրով՝ և մահուամբ՝ և գերութեամբ»[52]։

Այսպիսով ոչ միայն հայ, այլև ադրբեջանցի ու մասամբ վրացի բնակչությունը քշվում էր դեպի Պարսկաստան։

Բռնագաղթվող բնակչությանը Դավրիժեցու ասելով. «...ածեալ բերեալ հասուցին ի գաւառն Արարատու, և զլայնանիստ դաշտն նորա լցին ծագէ ի ծագ, քանզի ի սաստրոտէ լեռանցն Գառնւոյ մինչ ի յեզրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին, ի դերկայնութիւնն զովիմբ կշռեաց զու, բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ»[53], այսինքն՝ մոտ 30—40 կիլոմետր ճանապարհ։

Անտանելի թշվառություն ու արհավիրք էր հասել հայ ժողովրդի գլխին։ Դա մեծագույն չարիքներից մեկն էր նրա դարավոր պատմության մեջ։

Տասնյակ հազարավոր զոհերի գնով, դաղթական զանգվածն անցավ Արաքս գետը։ Նրանց կրած անլուր տառապանքների, սովի, կամայականությունների, հայ կանանց ու աղջիկների լկումների բազմաթիվ դեպքերի, գաղաղած պարսիկ հրամանատարների կատարած վայրագությունների, ջրահեղձման դժնդակ պատկերների մասին մանրամասն գրված են Առաքել Դավրիժեցու՝ «Պատմութեան», ձեռագրերի հիշատակարանների[54], հայ կաթոլիկ քահանա Ավգուստիանոս Բաջեցու[55] և այլոց գրած էջերում։

Զարհուրելի դեպքերը խորը կսկիծով նկարագրելուց հետո Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր, ճմլին սիրտք մեր, և գալարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն եկելոյ հասելոյ թշուառութեանս ժողովրդեանս մերոյ»։

Տեղահանումը ոչ միայն մարդկային մեծ զոհեր խլեց, այլև ամայացրեց երկիրը։ Անմարդաբնակ դարձան Հայաստանի շատ գավառներ, նամանավանդ Արարատը[56]։

---

[51] **И. П. Петрушевский**, очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI нач. XIX вв, Ленинград, 1949, էջ 252—253։

[52] Առ. Դավրիժեցի. էջ 40։

[53] Նույն տեղում։

[54] Այսպես, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 1282, էջ 261բ, 262ա. կարդում ենք. «...զոմիրս շարութեան և զառ և զաւար գերութեան զոր պարսիկք ընդ հայք արարին, առաւել է քան զբաբելացւոցն առ իսրայելացիսն, զոր ոչ ոք կարէ մի ըստ միոջէ պատմել և կամ ընդ գրով արկանել. զի սկսեալ ի տանէն Շաբակայ մինչև ի Ջուղայ և տունն Գողթնեաց զհայք բնաջինջ արարեալ տարեալ հանին ի խորին պարսիկս, ի Շօշ և յԱսպահան կաթողիկոսով և եպիսկոպոսօք, քահանայիւք և ժողովրդովք, արամբք և կանամբք, ընչիւք և գոյիւք. և թողին զդաշտն Արարատեան և զնախչաւան նահանգօքն և զփարթամն Ճոխութեամբ զՋուղայ շրջագայուքն ամայի ու թափուր ի բնակչացն...»։ Համանման հիշատակարաններ կան հետևյալ ձեռագրերում.

Ձեռագիր № 5345, էջ 206բ—207բ, № 4692, էջ 613բ, № 6093, էջ 355բ, № 2843, էջ 189բ, № 5057, էջ 293ա, № 4721, էջ 655բ—656ա, № 4515, էջ 363, 364—365, 369, 373—374, Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ Մագիստրոսի (Մեսրոպ Տեր-Մովսիսյանի) գործերը, թղթապանակ № 8, էջ 86, № 10, էջ 341, № 11, էջ 19, 23, 29—35. և բազմաթիվ տպագիր հիշատակարաններ։

[55] **Augustin Badjetsi**. Itinéraire du très révérend frère Augustin Badjètzi, traduit par M. Brosset, Journal Asiatique, 1837.

[56] 17-րդ դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն խոսելով հայերի բռնի տեղահանման մասին գրում է. «Երևանի և Թավրիզի միջև ընկած ամբողջ երկիրը ամբողջովին ավերվեց Պարսկաստանի թագավոր Շահ Աբաս Ա-ի կողմից, որպեսզի թուրքական բանակը, որն առաջանում էր այս կողմերից, ոչինչ չգտնի իր գոյությունը պահպանելու համար ու կործանվի։ Նա ուզեց ամբողջ երկիրը դարձնել ամայի և Պարսկաստան տարավ Ջուլֆայի և նրա գավառների բոլոր բնակիչներին երիտասարդ և ծեր, հայրեր, մայրեր և երեխաներ...». տե՛ս Les six voyages de Jean Baptiste Tavernier, Paris, 1692, էջ 44 „Tout le païs entre Erivan et Tauris fut entièrement ruiné par Cha Abbas le I du nom, roy de Perse, afin que l'armée des Turcs qui marchoit de ce côté-là ne trouva rien de quoy subsister, se détruisit d'elle-même. It voulut rendre le païs désert, et emmena en Perse tous les habitans de Zulfa et des environs jeunes et vieux, les frères, les mères et les enfans".

«Շահը,—գրում է Առ. Դավրիժեցին,—անմարդաբնակ արար միահաղոյն զամենալի և զյուութի աշխարհս Հայոց։ Վասն զի ի քշելն զերկիրս՝ ոչ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի Պարսկաստան, այլ զբազումս։ Եւ սկսեալ ի սահմանացն Նախչուանա և անցեալ ընդ Եղեգաձոր, առ եղերք Գեղամայ, և Լոռւոյ, և զՀամզաչիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակաւան, զՋարիշատ, և մասն ինչ ի գեղօրէիցն Կարսայ, և զձորն Կաղզվանու բնաւին, և բովանդակ զերկիրն Ալաշկերտու, և գեղորայսն Մակուայ, և զերկիրն Աղբակու, և զՍալմաստու, և զԽոյայ, և զՕրմի, և որ ինչ պանդուխտք և զարիբականք մնացեալք էին ի քաղաքն և ի գեղօրայսն Թարվիզու, զդաշտն Արարատու բովանդակ, և զԵրևան քաղաք, զերկիրն Ղրխբուլաղայ, զՆաղկունեաց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն։ Եւ յառաջ քան զայս՝ զգաւառն Գառնոյ, և զԲասենու, և զԽնուսայ, և զՄանազկերտու, և զԱրծկէոյ, և զԱրճիշոյ, և զԲերկրու, և զՎանայ, աւարով և գերութեամբ բերեալ էին յԵրևան. և ընդ սուր քշեցին և տարան»[57]։

Միայն Հայաստանի որոշ լեռնային մասերում, լեռներում ու այրերում, անտառներում բնակչության մի մասին հաջողվել էր խուսափել տեղահանությունից, տեղ-տեղ դիմադրություն ցույց տալով պարսիկներին։ Այդպես վարվեցին օրինակ գառնեցիները, որոնք Դավրիժեցու պատմելով, «սրով և բրով, քարիւ և փայտիւ»[58] հարձակվեցին Ամիրգունա խանի պատժիչ ջոկատների վրա։ Պիտի ենթադրել, որ Հայաստանի այլ վայրերում էլ եղել են համանման դիմադրություններ։

Երկու հարյուր հազար բանակով հասնելով Կարս, Ջղալ օղլի Սինան փաշան տասը օր այնտեղ մնում ու այնուհետև շարժվում է դեպի Նախիջևան և իր գրած նամակներով շահին գրգռում ու ստիպում պատերազմի բռնվել օսմանցիների հետ։ Սակայն շահը իր համեմատաբար փոքրաթիվ բանակով հրաժարվում է ճակատամարտել օսմանցիների հետ և հրամայում հրկիզել ու քանդել ճանապարհի վրա ընկած վայրերն ու ցանքսերը։ Ամբողջ երկրամասը ավերված ու ամայացված լինելու և շահի դեպի Թավրիզ նահանջելու պատճառով, Սինան փաշան որոշում է ձմեռն անցկացնել Շիրվանում, իսկ գարնանը վերսկսել պատերազմական գործողությունները։ Սակայն նրա ծրագիրն հանդիպում է կատաղած ենիչերիների դիմադրությանը, որոնք պահանջում էին ձմեռն անցկացնել «Ռումի

[57] Առ. Դավրիժեցի, էջ 52—53։

[58] Նույն տեղում, էջ 47։

երկրում», այսինքն՝ Փոքր Ասիայում։ Սինան փաշան իր զորքը քաշեց դեպի Վան, սակայն շուտով պարսիկները պաշարեցին քաղաքը։ Սինան փաշան հարկադրված Վանա ծովի վրայից շարժվեց դեպի Արծկն (Ադիլչևազ)։ Քառասուն օրվա պաշարումից հետո շահն ստիպված եղավ թողնել Վանը ու հեռանալ դեպի Պարսկաստան[59]։

Վանում և նրա շրջակա գավառներում Սինան փաշայի կատաղած զորքերը կողոպտում էին բնակչությանը ու գործադրում կամայականություններ։

«Իսկ զօրքն,—գրում է Առ. Դավրիժեցին,—որք նստան ղշլաղ ի վերայ երկրին (Վանայ) իբրև զգազանն տեսլեան Դանիելի՝ կերան, և մանրեցին, և զմնացորդսն ոտից կոխան արարին. փոխանակ շինելոյ զերկիրն՝ աւերեալ քայքայեցին՝ և ի վերջին թշուառութիւնն հասուցին, թէ անողորմ կեղեքելով՝ և թէ այլ պղծագործութեամբ»[60]։

Հաջորդ տարին պատերազմական գործողությունները վերսկսվեցին։ Սինան փաշան Դիարբեքիրից, 1605 թ. օգոստոսին, շարժվեց դեպի Սալմաստ ու Խոյ։ Ուրմիո լճի մոտերքում տեղի ունեցավ մեծ ճակատամարտ։ Պարսկական բանակը ղեկավարում էր ինքը՝ շահը։ Ճակատամարտը վերջացավ օսմանցիների պարտությամբ[61]։ Օսմանցիները և ինքը Սինան փաշան հապճեպ դիմեցին փախուստի՝ ռազմադաշտում թողնելով «...զկահ և զկարասիս, զուղտս և զդրաստս, զմթերս կերակրոց, և զգանձս սնդկով և սապատով. քանզի զչրաունսն վարեալ թողին և զվրանսն կառուցեալ՝ որպէս կանխաւ կառուցեալ էր...»[62]։

Օսմանցիների պարտությունը այն աստիճան աղդեցին Սինան փաշայի վրա, որ նա նահանջի ժամանակ Դիարբեքիրում մահացավ 1605 թ. դեկտեմբերի 2-ին (21 ռեջեբ)[63]։

Թե ինչ հետևանքներ ունեցան 1603—1605 թթ. պատերազմական գործողությունները հայ ժողովրդի և Հայաստանի համար, լավագույն ձևով ներկայացնում է մեզ դարձյալ Առ. Դավրիժեցին։

«Եւ ի շարժմանէ այլոց երկուց տիեզերակալացս՝ որք զարթուցեալք են ի պատերազմ,—գրում է նա,—եթէ Սարդարն՝ որ եկն յարևմտից, և թէ շահն՝ որ ի կողմս արևելից՝ թէ որքան աւերումն

[59] J. Hammer. Histoire de l'empire ottoman, հատ. VII, էջ 59—60։

[60] Առ. Դավրիժեցի, էջ 71։

[61] Առ. Դավրիժեցի, էջ 635. «...այս պատերազմս Հոկտեմբերի քսան և հինգին եղև, և ինքն Ջղալ-Օղլին գնաց յԱմիթ և անդ մնաւ ի փետրվարի 6-ն»։

[62] Առ. Դավրիժեցի, էջ 77։

[63] Առ. Դավրիժեցի, էջ 78—79։

և բանդումն եղև աշխարհի, թէ ի գալն և թէ ի դառնալն, թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն և բռնութեամբ արին, նոյնպես և զՍուրսատն[64] որ զկնի զօրացն բերել տային, և թէ զօրքն՝ և ի ձմեռն երիվարօքն իւրեանց ղշլաղ տային, կամ զքանդումն տանց և այգեստանաց, և զկոխումն արտորէից՝ և զհանումն համբարաց՝ ցորենոյ և զայլ սերմանեաց, և աւարումն, և յափշտակումն ընչից և ստացուածոց, դուստերաց և զդստերաց, և սպանումն անպարտ անձանց, զորս ի յայտնի և զորս ի գաղտնի, և զայլ ամենայն չարիսն զոր ածին ի վերայ աշխարհի. մեզ ոչ գոյ կար թուելոց, այլ այնմ, որ թուէ զբազմութիւն աստեղաց, և ստեղծ զայնքան անձինքս որք մատնեցան անողորմ և մարդագեմ դազանացն այնոցիկ»[65]։

Պատերազմական գործողությունները Հայաստանում և ջալալիների շարժումը սկզբում նրա արևմտյան, այնուհետև արևելյան մասերում իրենց հետ բերեցին անլուր դժբախտություններ՝ սով ու համաճարակ, որը խլում էր տասնյակ հազարավոր մարդկանց կյանք։

Այս պայմաններում հայ ժողովրդի առևտրա-արհեստավորական խավը, բռնի տեղահանումներից անկախ, կամովին ևս, գաղթում էր երկրից սովից, սրից, համաճարակից ու մարախից փրկվելու հույսով դեպի Կոստանդնուպոլիս, Թավրիզ, Ասպահան, Բրակիա, Ղրիմ, Ռուսաստան, Լեհաստան և այլուր։

«Եւ յայսմ ժամանակի եղեն ցիր և ցան ազգն Հայոց և գնացին իւրաքանչիւր որ հանդէպ երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ։ Ոմանք յՈւռումելի, ոմանք ի Բուղդան, ոմանք ի Լեհ, ոմանք ի Կաֆայ, ոմանք ի ծովեզերսն Պոնտոսի, ոմանք ի Թարվիզ և յԱրտաւել՝ և ի գաւառս նոցա»[66],—գրում է Առ. Դավրիժեցին։

Չնայած արտագաղթողները աղատվում էին ֆիզիկական բնաջնջման վտանգից, սակայն ծանր ու չարքաշ էր նրանց կյանքը նոր բնակավայրերում։ Այսպես, Գրիգոր Դարանաղցին ականատեսի աչքով այսպես է ներկայացնում գաղթականների վիճակը Կոստանդնուպոլսում. «Ամենքն դեռ եկածք աղքատք և տնանկք և չքաւորք և մուրողք,—գրում է նա,—ամենայն ոք հոգայր զանձին իւրոյ զհոգ և ոչ զեղբօր կամ զազգատոհմի և կամ զընկերի, վասն որոյ անխնամ մնալով...»[67]։

Մի այլ տեղ գաղթականների մասին նույն հեղինակը գրում է. «որ են նրանք..., աղքատ և մերկք ի կարի չքաւորք, կեղեքած և թալանած՝ ..., որ զօրստօրէն հացիկն միայն հաղիւ թէ կարողանային հնարել ոմանք մեծաւ ջանիւ»[68]։

1607—1608 թթ. ջալալիների նոր ապստամբությունները Թուրքիայի ասիական մասերում, օսմանցի ֆեոդալներին հնարավորություն չտվեցին նոր պատերազմական գործողություններ ձեռնարկել սեֆեվիների դեմ։ Միայն 1608 թ. վերջերին, երբ հիմնականում ճնշվեց ջալալիների ապստամբությունը, մեծ վեզիր Կույուջու Մուրադ փաշայի կողմից, սուլթանական Թուրքիան հնարավորություն ստացավ մտածելու պարսկական ճակատի մասին։

1609 թ. աշնանը Կույուջու Մուրադի ձեռնարկած արշավը չիրականացավ ջալալիների դեմ մղված պատերազմներից հոգնած ենիչերիների ցուցաբերած դիմադրության պատճառով, որոնք վախենում էին ընկնել սովի ճիրանների մեջ։ «Ինչպես հնարավոր է պարեն գտնել էրզրումում, երբ այնտեղ սով է, ու մի կիլոգրամ գարին արժի հինգ դուկատ և բաքսիմատի (չորացած հացի) կիլոն մեկ ղուրուշ,—ասում էին նրանք»[69]։

Չնայած դրան, 1610 թ. գարնանը մեծ բանակի գլուխ անցած մեծ վեզիր Կույուջու Մուրադը էրզրում—Զալդրան—Խոյ—Սալմաստ ջարկով, մի շարք բանակցություններից հետո միայն, օսմանյան բանակը հետ նահանջեց դեպի Դիարբեքիր։

1611 թ. նոյեմբերի 20-ին (26 ռամազան 1021 թ.) կնքվեց նոր հաշտության պայմանագիր Արևելյան այդ երկու հզոր պետությունների միջև։ Հաշտության համար հիմք ընդունվեց 1555 թ. սուլթան Սուլեյմանի և շահ Թահմասպի միջև Ամասիայում կնքված պայմանագիրը[70]։

Այսպիսով՝ Թուրքիան հրաժարվում էր Մուրադ III-ի ժամանակ Անդրկովկասում կատարած իր նվաճումներից, Պարսկաստանին թողնելով Ադրբեջանը, Արևելյան Հայաստանն ու Արևելյան

---

[64] Սուրսաթ (Թուրք. sürsat բառացի տար ծախիր)։ Նշանակում էր պարենի պարտադիր մատակարարում բանակին պատերազմի ժամանակ։ Հավաքվում էր ցորենի, գարու, փայտի, անասնակերի և այլնի ձևով։ Նախատեսվում էր պատերազմից հետո հատուցել վերցված պարենի գինը, սակայն իրականում դա երբեք չէր գործադրվում (տե՛ս M. Z. Pakalın, Osmanlı tarih deyimleri ve terimleri sözlügü. III, Istanbul, 1955, էջ 300.

[65] Առ Դավրիժեցի, էջ 78—79։

[66] Նույն տեղում, էջ 88։

[67] Գր. Դարանաղցի, էջ 105—106։

[68] Նույն տեղում, էջ 127։

[69] J. Hammer, Histoire de l'empire ottoman հատ. VIII, էջ 138։

[70] „Tarih-i Peçevi" հատ. II, էջ 340։

Վրաստանը։ Իրանը պարտավորվում էր տարեկան 200 բեռ (yük) մետաքս հանձնել Թուրքիային որպես հարկ։

Այսպիսով՝ հաշտության պայմանագրով Թուրքիան դե-յուրե ճանաչում էր իր պարտությունն Իրանից։ Նա ստիպված էր այդ քայլին դիմելու այնքան, որքան, ինչպես իրավացիորեն նշում է Համմերը, «Ասիայի ապստամբությունների կործանիչ հետևանքները օսմանյան քաղաքականությանը նոր ուղղություն էին տվել և ստիպել նրան Հունգարիայի և Պարսկաստանի հետ հաշտություն կնքել...»[71]։

Որպես հատուցում իր պարտության Թուրքիան հաշտության պայմանագրում ստիպում էր Իրանին Ռուսաստանի հետ որևէ հնարավոր ընդհարման դեպքում խոչընդոտ չհանդիսանալ իրեն, այլ օգնել։ Դա, իրոք, զիջում էր Իրանի կողմից Թուրքիային։ Ըստ էության, սեֆեվյան Իրանը, ինչպես և Թուրքիան, սաստիկ վախեցած էին Ռուսաստանի հզորացումից, չնայած հենց ինքը Շահ Աբասը, ինչպես տեսանք, դեսպանություններ էր ուղարկել Ռուսաստան Թուրքիայի դեմ ընդհանուր դաշինք կնքելու համար։

Կնքված հաշտության պայմանագիրը կրում էր ժամանակավոր բնույթ։ Ոչ Օսմանյան Թուրքիան էր ուզում հաշտվել Անդրկովկասի կորուստի և ոչ էլ Սեֆեվյան Իրանը՝ իրեն համար ստուգացուցիչ մետաքսահարկ վճարելու գաղափարի հետ։

Իրոք, Իրանը հաշտության կնքումից հետո, դադարեցրեց Թուրքիային տարեկան 200 բեռ մետաքսի հղումը։ Դա առիթ հանդիսացավ պատերազմական գործողությունների վերսկսմանը։

1616 թվականի գարնանը օսմանյան 100 հազարանոց բանակը Հալեպից Հասանկալա—Սողանլու ճանապարհով շարժվեց դեպի Կարս։ Կարսի բերդը շահի կողմից ավերված լինելու պատճառով, ինչպես այդ մասին գրում է Քյաթիբ Չելեբին, տեղական բնակչությանը բռնի աշխատանքի լծելով՝ մի շաբաթվա ընթացքում վերանորոգվում է։ Դրանից հետո բանակը շարժվում է դեպի Երևան[72]։

Սեպտեմբերի 11-ին (29 շաբան) 1616 թ. Երևանի բերդը նորից պաշարվում է օսմանյան բանակի կողմից։ 55 օր տևող անհաջող պաշարումից հետո, ընկնելով պարենային ու զինամթերային դժվարությունների մեջ, օսմանյան բանակն ստիպված էր լինում թողնել պաշարումը և Կարսի վրայով հետ քաշվել դեպի Էրզրում[73]։ Օսմանյան բանակի հրամանատար Կարա Մահմեդ փաշան ստիպված էր

[71] J. Hammer. Histoire de l'empire ottoman. հատ. VIII, էջ 191։

[72] Kâtip Çelebi, Fezleke. հատ. I, էջ 314։

[73] Ան. Դավրիժեցի. էջ 355—356։

վերահաստատել 1616 թ. հաշտության պայմանագիրը։ Իրանը նոր պայմանագրով վճռապես հրաժարվում է մետաքսի հարկը վճարելուց։ Այդ պատճառով սուլթան Ահմադը շեղյալ է համարում հաշտության վերանորոգումը և պարսկական ճակատ ուղարկում մեծ վեզիր սերդար, ծագումով հայ, Խալիլ փաշային։

Օսմանյան բանակում գտնվող Ղրիմի թաթարական խան Ջանիբեկ Գիրայը 40 հազարանոց զորքով ավարի ու ավերի է ենթարկում Գյանջան, Նախիջևանը ու Ջուլֆան իր շրջակայքերով։

1618 թ. սեպտեմբերի 10-ին Փուլի Շիբեստե կոչված վայրում, թաթարական խանի և օսմանյան բանակի մի մասը պարտության է մատնվում պարսիկներից կրելով ծանր կորուստներ։

Պարտության լուրն ստանալով սերդար Խալիլ փաշան որոշում է ուղիղ շարժվել դեպի Արդեբիլ և ստիպել շահին կնքել նոր հաշտություն, որը և կնքվում է 1618 թ. սեպտեմբերի 26-ին (6 շեվվալ)։ Պայմանագրի կետերը նույնն են ինչ որ նախորդը, միայն այն տարբերությամբ, որ Սեֆյան Իրանը տարեկան 200 բեռ մետաքսի փոխարեն պարտավորվում է տալ 100 բեռ։

Այս նոր պատերազմական գործողությունների հետևանքների մասին այդ տարիներում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...Հայաստան երկիրս կոխան առնելոյ աւերեցին, զոր ոչ կարենք զաւերումն ընդ գրով արկանել...»[74]։

1618 թ. աշնանը կնքված հաշտությունը ևս երկար չտևեց։ Վերսկսված պատերազմական գործողությունների համար այս անգամ թատերաբեմ դարձավ Միջագետքը։ Օգտագործելով Բաղդադի թուրքական կայազորի հրամանատար Բեքիր փաշայի դավաճանությունը, Շահ Աբասը շուտով գրավեց Բաղդադը։

Էրզրումի շրջանում Աբաղա փաշայի նոր ապստամբությունը (1623—1627 թթ.), Եգիպտոսում ծայր առած ընդվզումները, Շահ Աբասի պատերազմական գործողությունները Միջագետքում կաշկանդում էին Թուրքիային ձեռնարկելու պատերազմական գործողություններ Իրանի դեմ՝ Անդրկովկասին տիրապետելու համար։

Այնուամենայնիվ թուրքերը մի շարք ասպատակիչ ու ավերիչ արշավանքներ ձեռնարկեցին Միջագետքից դեպի Համադան։ Թուրքերն այդ քայլին դիմում էին ոգևորված Շահ Աբասի մահից։

Համադանում թուրքերի բարբարոսությունը սահման չուներ։ Սերդար Խոսրով փաշայի հրամանով, սերդարը, որ ստացել էր «ան-

[74] Սուրմեյան Աբտավազդ արքեպիսկոպոս. Եվրոպայի հայերեն ձեռագրերը. էջ 20—23։

խիզձ խոսրով» մականունը, վեց օր շարունակ անխնա ոչնչացվեց պտղատու ծառերը, հրդեհի մատնվեց ամբողջ քաղաքը, մասսայաբար քանդվեցին տները, իսկ բնակչությունը հանձնվեց դահիճների կամայականության։

Հայաստանի տերիտորիայում պատերազմական ծավալուն գործողություններ սկսեցին 1635—1636 թթ.։

1635 թ. գարնանը հսկայական բանակի գլուխ անցած, որը ըստ Դավրիժեցու մոտ 700 հազար է, (սա ակներևորեն սխալ է)[75], սուլթան Մուրադ IV-ը շարժվեց դեպի Արևելք։

1635 թ. հուլիսի 3-ին (17 մուհարրեմ 1045 թ.) սուլթանական բանակը մտավ Էրզրում, իսկ 7 օր հետո Կարս։ Կարսից բանակը շարժվեց դեպի Էջմիածին, այնուհետև Գյոկ-Կյումբեթի (այժմ՝ Գեղանիստ) վրայով եկավ ու պաշարեց Երևանը։

Ամբողջ մի շաբաթ պաշարողների հրետանին, ժամանակակիցների վկայությամբ, կրակ էր տեղում պաշարված քաղաքի վրա, քանդելով նրա կավե պարիսպները[76]։ Երևանի հողե պարիսպները ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեյի սրամիտ նկատողությամբ, ավելի շուտ կարող էին վնասվել, քանդվել անձրևից, քան թե թընդանոթից[77]։

Օգոստոսի 8-ին 1635 թ. (23 զաֆեր, 1045 թ.) Երևանի խան Թահմազ Կուլին ստիպված եղավ բերդը հանձնել թուրքերին[78]։ Երևանի բերդը հանձնվեց Մուրթազա փաշային, որը հայկական աղբյուրներում անվանվում է «խիստ հայասեր»[79]։

Երևանից թուրքական բանակը անցնելով Արաքսը, Մարանդի վրայով շարժվեց դեպի Թավրիզ և սեպտեմբերի 12-ին (29 ռաբիուլ էվվել) մտավ քաղաքը, որը ղերծ չմնաց կողոպուտից ու կոտորածից։

Որովհետև մոտենում էր ձմեռը, սուլթանական բանակն ստիպված եղավ ետ քաշվել դեպի Դիարբեքիր (4 հոկտեմբեր, 1635 թ.)։

Օգտվելով առիթից, դահ բարձրացած Շահ Աբասի թոռ՝ շահ Սեֆին իր բանակով շարժվեց դեպի Երևան և 95 օր պաշարելուց հետո, 1636 թ. մարտի 30-ին վերադարձավեց այն։

[75] Ան. Դավրիժեցի, էջ 316։

[76] „Tarih-i Peçevi", հատ. II, էջ 437 «يكيرمى طوب كبير ايله روز وشب عدوبه امان وزمان ويرميوب»

[77] „ces murailles n'estant que de terre, la pluye y ieroit plus de mal, que le canon" J. B. Tavernier, էջ 38։

[78] „Tarih-i Peçevi" հատ. 2, էջ 438։

[79] Գր. Դարանաղցի, էջ 518, Ան. Դավրիժեցի, էջ 317։

Այս պատերազմական գործողությունները նույնպիսի ավերիչ հետևանքներ ունեցան Հայաստանի և նախ և առաջ նրա արևելյան մասի համար, ինչպես և նախորդները։

«Եւ ի շարժմանէ այս երկուց ինքնակալ թագաւորաց,—գրում է Ան. Դավրիժեցին,—աւերեալ ապականեցան աշխարհք՝ Արևելք և Արևմուտք և մանաւանդ աշխարհն Արարատու իւր շրջակա գաւառօք. վասն զի երկոքին թագաւորքն իւրեանց հեծելօք և հետևելովք անդր զումարեալ կատարեցին զգործս իւրեանց և դարձան»[80]։

1637—1638 թթ. ռազմական ընդհարումների թատերարեմը կրկին տեղափոխվեց Միջագետք, որի հետևանքը եղավ այն, որ վերջ ի վերջո Բաղդադը վերջնականապես ընկավ թուրքերի ձեռքը (25 դեկտեմբերի 1638, շաբան 1048 թ.)։

Բաղդադի պաշարման ժամանակ սուլթանի կարգադրությամբ Էրզրումի կառավարիչ Քենան փաշայի կայազորը օգնության եկած թաթարական ուժերի հետ ասպատակեցին ողջ Արարատյան նահանգը։

«Դարձեալ յայսմ ամի և թուին ՌՁԷ (1638),—գրում է Գրիգոր Դարանաղցին,—կրկին զԵրևան և զշրջակա գաւառքն գերեցուց տաթարն, այլ յորժամ թագաւորն գնաց անհուն զօրօք դեպի կողմն Պաղտատու, հրաման արար տաթար խանին ամենայն զօրօքն գնալ ի յԱրզուրումն, իսկ տէր Արզրումին Քէնան փաշան զօրաղլուխ լիցի ամենայն զօրաց ընդ հաւաքելոցն, զի միարանութեամբ գնասցեն ի վերայ Երևանու գաւառացն և գերեսցեն առհասարակ զամենայն հայք և զտաճկահաւատսն, և զամենայն անասունք զորս գտցեն՝ յաւարի առցեն, որպէս և արարին իսկ»[81]։

Բաղդադի գրավումից հետո, երկու պատերազմող երկրների միջև սկսվեցին նոր հաշտության բանակցություններ, որի հետևանքով 1639 թ. մայիսի 17-ին (17 մուհարրեմ 1049 թ.) կնքվեց հաշտության պայմանագիր Կասրե Շիրինում։ Ըստ հաշտության պայմանագրի Հայաստանը վերաբաժանվեց Օսմանյան թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև։ Արարատյան նահանգը, համաձայն պայմանագրի, մնում էր Պարսկաստանին, իսկ Բաղդադն ու Արևմտյան Հայաստանը ընկան թուրքիայի տիրապետության տակ։

Այս բաժանումն անփոփոխ մնաց մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, այսինքն՝ 1828 թ.։

[80] Ան. Դավրիժեցի, էջ 317։

[81] Գր. Դարանաղցի, էջ 578։

1639 թվականի հաշտությամբ, Հայաստանում համեմատաբար երկարատև խաղաղություն հաստատվեց և վերջ տրվեցին Թուրքպարսկական պատերազմներին։ Ստեղծվեցին որոշ պայմաններ Հայաստանի տնտեսության և նախ և առաջ, գյուղատնտեսության վերականգնման համար։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 16—17-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՖԵՈԴԱԼՆԵՐԻ ԼԾԻ ՏԱԿ

16—17-րդ դարերի Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ կապված մի շարք հարցերի լուսաբանումն անհրաժեշտ է այն տեսակետից, որ այն հնարավորություն կտա նախ՝ բացահայտելու Արևմտյան Հայաստանի բնակչության լայն խավերի ծանր ու իրավազուրկ վիճակը օսմանյան ֆեոդալների լծի տակ, ապա՝ մեծապես կօգնի ջալալիների շարժումների սոցիալ-տնտեսական արմատները հասկանալուն։ Սակայն այդ շարժման սոցիալ-տնտեսական հիմքերն ու անմիջական նախադրյալները ավելի լավ ընկալելու համար, խիստ անհրաժեշտ է այդ հարցերը քննարկել Օսմանյան կայսրության պատմության ամբողջականության մեջ։ Ուստի այս գլխում համառոտակի կանդրադառնանք միայն բուն Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և նրա ազգաբնակչության իրավա-քաղաքական վիճակի պատմության հարցերին՝ նպատակ ունենալով ցույց տալ, որ ջալալիների շարժումներն եկան լրացնելու այն դժբախտ և տխուր պատկերը, որն ստեղծվել էր այստեղ օսմանյան տիրապետության հաստատումից հետո։

17-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան Թուրքիան հասավ իր քաղաքական ու ռազմական հզորության գագաթնակետին։ Նա մի ընդարձակածավալ տերություն էր, որը տարածվում էր Ասիայի, Եվրոպայի ու Աֆրիկայի հսկայական տարածությունների վրա։

Օսմանյան տիրապետությունը նվաճված երկրներին բերեց դաժան շահագործում և ժողովրդական մասսաների բացահայտ կողո-

պուտ, կամայականության ու բռնության ռեժիմ, կրոնական անլուր հալածանք և այլն։

Իր պետական կառուցվածքով Թուրքիան 16—17-րդ դարերում հանդիսանում էր բռնապետական մի պետություն, որի գլուխ կանգնած էր սուլթանը և, որը համարվում էր «զիլ-ուլլահ», այսինքն՝ աստուծու շուքը երկրի վրա։ Սակայն փաստորեն սուլթանի անունից երկիրը ղեկավարում էին մեծ վեզիրները տեղերում նշանակված իրենց հավատարմատարների օգնությամբ։ Աղբյուրների, ինչպես և եվրոպական ճանապարհորդների վկայությամբ, նրանք բացահայտորեն կողոպտում էին երկիրը ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղ ժամանակներում[1]։

Արդարադատությունը, որը հիմնված էր շարիաթի սկզբունքների վրա, գտնվում էր մուսուլման հոգևորականության ձեռքին։ Արդարադատությունը հաճախ ֆեոդալական վերնախավի կողմից օգտագործվում էր որպես մի զենք՝ ուղղված ոչ միայն ճնշված դասակարգերի դեմ։ Դատարանը նրանց ձեռքին նաև ասիմիլատորական քաղաքականություն վարելու մի հզոր միջոց էր։ Բազմաթիվ են վկայություններն այն մասին, որ դատավորները տարբեր պատրվակներով ստիպել են հպատակ քրիստոնյաներին ընդունել իսլամի կրոնը և թրքանալ։

Հայկական ֆեոդալական դասը մեր ուսումնասիրած ժամանակաշրջանում վաղուց արդեն վերացվել էր։ Հայտնի է, որ հայկական ֆեոդալական դասի բնաջնջումն սկսվել էր դեռևս սելջուկների ժամանակաշրջանում։ Սելջուկների արշավանքները իրենց հետ միասին բերեցին ավար ու ավեր, և հայկական ֆեոդալական դասի զգալի մասը ստիպված եղավ թողնել իրենց տիրույթները բուն հայրենիքում և ապաստան գտնել Բյուզանդիայում։

Հայ ֆեոդալական դասին խոշոր հարված հասցրին մոնղոլները և հատկապես կուսումման իշխանները։ Վերջիններս բոլոր հնարավոր միջոցներով վերցնում էին հայ ֆեոդալներից նրանց տիրույթներն ու այսպիսով թուլացնում նրանց տնտեսական ու քաղաքական հզորությունը։

[1] Այդ մասին են վկայում 16—17-րդ դարերի թուրքական ժամանակագրությունները։ Նրանց հեղինակները ամենաոհիթ նկարագրում են թուրքական նվաճողների դաժանությունները նվաճված երկրներում, ինչպես և տեղական ժողովուրդների անարգել կողոպուտը։

Այդ մասին են վկայում նաև բազմաթիվ հայկական աղբյուրներ ու նախ և առաջ ձեռագրերի հիշատակարանները։

Կարա-կոյունլու (սև խոյականներ) և ակ-կոյունլու (սպիտակ խոյականներ) թուրքմենական ցեղերի տիրապետության ժամանակ (15-րդ դար), Հայաստանում հսկայական հողային տարածություններ, որպես պարգևատրում սոյուրղալի ու իկտայի իրավունքով բաժանվեցին այն քոչվոր-ֆեոդալներին, որոնք իրենց հավատարմությունն էին ցուցաբերել թուրքմեն նվաճողների նկատմամբ։

Այստեղից էլ բոլորովին զարմանալի չէ, որ 15-րդ դարի իտալացի ճանապարհորդ Ջուզեպպե Բարբարոն Հայաստանը ներկայացնում է Թուրքոմանիա (Turcomania) անունով[2]։

Նույն դարի հեղինակ Գրիգոր Խլաթեցու ասելով, այլևս հարգանք չէր մնացել դեպի հայ իշխանությունները։

Սակայն սխալ կլիներ ասել, որ հայ ավատական դասն ամբողջությամբ ոչնչացված էր։ Հոգևորական պաշտոն ընդունելը՝ փրկեց ֆեոդալական փոքրամասնությունը ժառանգական տիրությունների անխուսափելի կորուստից։

16—17-րդ դարերում Հայաստանի միայն մի շարք մասերում հայ ֆեոդալական դասի բեկորները դեռ պահում էին իրենց ավատական իրավունքների հետքերը, օրինակ՝ Լեռնային Ղարաբաղում, Սասունում ու Զեյթունում։

16—17-րդ դարերի Արևմտյան Հայաստանի մշակվող հողային տարածությունների զգալի մասը գտնվում էր թուրք, քուրդ ու այլ ֆեոդալների ձեռքին։

Սակայն հայ եկեղեցուն ու վանքերին հաջողվեց 16—17-րդ դարերում պահել որոշ հողային տիրույթներ։ Բացի դրանից, Արևմտյան Հայաստանում աննշան հողային տարածություններ շարունակվեցին մնալ հին ֆեոդալական տների մնացորդների, և հատկապես գյուղական համայնքի հարուստ խավերի ձեռքին։

Տվյալ ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում հողատիրության ձևերի մասին կարելի է գաղափար կազմել 16-րդ դարի Արևմտյան Հայաստանին վերաբերող օսմանյան օրենսգրքերի (կանոնամեների) վերլուծության, 16-րդ դարի բուրդ հեղինակ Շերեֆ-էդդինի «Շերեֆ-նամե»-ի վկայությունների, Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերի հիշատակարանների ու կալվածագրերի նյութերի հիման վրա։

Ինչ վերաբերվում է Արևելյան Հայաստանում հողատիրության ձևերի հարցերի վիճակին, ապա մենք այստեղ չենք քննարկելու

[2] Հովհաննես Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. I, Երևան, 1932, էջ 196։

դրանք, թեկուզ և համառոտակի, այնքան, որքան այդ հարցերի լուսաբանմանն է նվիրված պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու մոնոգրաֆիկ աշխատությունը[3]։

16-րդ դարում, երկիրը Թուրքերի կողմից նվաճվելուց հետո, Հայաստանի արևմտյան և հարավային մասերում մտցվել էր հողատիրության Թուրքական ֆեոդալական սիստեմը, որի էությունը կայանում է հետևյալում։ Բոլոր մշակելի հողային տարածությունները բաժանվում էին երեք հիմնական խմբի[4]։

1) Պետական հողեր (արզ-ի միրիե կամ արզ-ի մեմլեքեթ), որոնց մի մասը գտնվում էր սուլթանի, նրա ընտանիքի և պետական բյուրոկրատիայի անմիջական տնօրինության տակ, իսկ մյուս, ավելի մեծ մասը բաժանված էր խոշոր ու մանր ֆեոդալների միջև՝ որպես վարձատրություն պետության նկատմամբ վերջինների ցուցաբերած ծառայությունների։ Այդ պարգևատրական հողերը (բենեֆիցիաները) հատուկ հաշվառման (tahrir) հետևանքով ռեեստրներում (դաֆթարներում) արձանագրված տարեկան եկամտի չափի համաձայն կոչվել են խասսեր, (խասսերից ստացված տարեկան եկամուտը կազմում էր 100.000 ակչե և ավելի) զեամեթներ ու թիմարներ։ Այս հողերից ստացված եկամուտները հատկացվում էին պետական պաշտոնյաների պահանջների բավարարմանը։ Հայկական աղբյուրներում զեամեթի ու թիմարի փոխարեն օգտագործվում է կերված (կերուած) տերմինը, որն այստեղ գործ է ածվել եկամուտ իմաստով։ Զեամեթի եկամուտը կազմում էր 20,000 ակչեից[5] մինչև 100.000 ակչե, իսկ թիմարինը՝ մինչև 20.000 ակչե։

2) Հողատիրության երկրորդ տարածված ձևը՝ վակուֆներն էին, այսինքն այն հողերը, որոնք պատկանում էին մուսուլման ու քրիս-

[3] Տե՛ս **И. П. Петрушевский**, Очерки по истории феодальных отношений..., էջ 64—144։

Արևելյան Հայաստանում գոյություն ունեին հողատիրության հետևյալ ձևերը 1) պետական կամ դիվանի հողեր (արազի-ի դիվանի) 2) շահական ընտանիքի սեփական տիրույթներ (խասսե կամ խոսսե-ի շերիֆե), 3) կրոնական հիմնարկներին (ինչպես քրիստոնյա, այնպես էլ մուսուլման) տրված հողեր, 4) մասնավոր սեփականատիրական հողեր, մուլք և 5) այն հողերը, որոնք կազմում էին գյուղական համայնքների սեփականությունը։ (**И. П. Петрушевский**, նույն տեղում, էջ 78)։

[4] Վ. Ա. Հակոբյան, Մաոր ժամանակագրություններ, հատ. Բ, Երևան, 1956, էջ 559, 660։

[5] Ակչե (akçe) Թուրքական դրամի միավոր արծաթից։ Ակչե հայերեն նշանակում է սպիտակավուն։ Առաջին օսմանյան ակչեները հավասար էին 1/4 մսկալի, իսկ մսկալն 4,8 գրամ արծաթի (տե՛ս I. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilâtından kapukulu ocakları, հատ. I, էջ 464)։

տոնյա հոգևորականությանը։ Այս կատեգորիային պատկանել են հսկայական հողային տարածություններ։

3) Մասնավոր սեփականատիրական հողեր (մուլք)։ Այս կատեգորիային պատկանում էին ֆեոդալների այն հողերը, որոնք հատկացվում էին պետության նկատմամբ նրանց մատուցած հատուկ ծառայության դիմաց։ Հողատիրության այս ձևը 16-րդ դարում տարածված չէր, սակայն նույն դարի վերջին առևտրա-վաշխառուական հարաբերությունների զարգացման հետ հողատիրության այս ձևը զգալի տարածում գտավ կայսրության զանազան մասերում, ինչպես նաև Հայաստանում։ Մուլք հողատիրությունը ուներ երկու հիմնական հատկանիշ. ա) այդ հողերը կարելի էր գնել ու վաճառել, կամ ժառանգություն թողնել և բ) մուլքային իրավունքով հողատիրությունը չէր պայմանավորված պետության նկատմամբ որոշ ծառայություն կատարելու հետ։

Արևմտյան Հայաստանում մուլքի կամ հայերեն «հայրենիք»-ի իրավունքով հողային տարածություններ են տիրապետել ոչ միայն նվաճող-ֆեոդալները, այլև հարուստ հայ գյուղացիները, տանուտերները, խոջա առևտրականները և այլն, որոնց մասին են վկայում հայերեն ձեռագրերի բազմաթիվ հիշատակարանները։ Այս դեպքում, իհարկե, մուլքի այս ձևը ֆեոդալական հողային սեփականության հետ առնչություն չուներ։

Որ, իրոք, հայկական գյուղական համայնքի վերնախավն ու խոջա-առևտրական դասը քաղաքներում տիրապետում էին զգալի քանակությամբ հողերի, վկայում են ոչ միայն հայերեն ձեռագրերի հիշատակարանները։ 16-րդ դարի էրզրումի կանոնագրքում մենք կարդում ենք. «Եվ անհավատներից որոշ մարդիկ (նկատի են առնված հայերը—Մ. Զ.) քաղաքներում ու գյուղերում դարձել են անկախ ու գնել մուլքեր՝ այգիներ ու հողեր»[6]։

Ժամանակակից Թուրք պատմաբանները, ինչպես և նրանց նախորդող Թուրքիայի եվրոպացի պատմաբանները (Դ'Օսսոն, Համմեր, Բելեն, Տիշենդորֆ) և այլն, հողերի կլասիֆիկացիան կատարում են ոչ թե ըստ տիրապետության սկզբունքի, այլ հարկային հատկանիշի. «Համաձայն իսլամական օրենքի,—գրում է պրոֆ. Ուզունչարշըլին,—հողը բաժանվում էր երեք մասերի՝ ուշրիե, խարաջիե և արզ-ի մեմլեքեթ»[7], ըստ որում ուշրիեն նվաճումից առաջ կամ հետո մու-

[6] **Ömer Lûtfi Barkan**, XV ve XVI ıncı asırlarda Osmanlı imperator lug'unda zirai ekonominin hukukî ve malî esasları, հատ. I, kanunlar, Istanbul, 1945, էջ 63, այսուհետև՝ O. L. Barkan, Kanunlar.

[7] I. H. Uzunçarşılı, Osmanlı tarihi, հատ, III, մ. 2, էջ 307—308։

սուլմաններին պատկանող հողերն են, խարաջիեն՝ ոչ մուսուլման բնակչության տրամադրության տակ գտնվող հողերը, իսկ արզ-ի մեմլեքեթը, ինչպես վերևը նշվեց, պետական սեփականությունը կազմող հողերն են։ Պրոֆ. Ուզունչարշըլին վերջին հողատիրության ձևի մեջ զանազանում է 25 տարատեսակ[8]։

Ակնհայտ է, որ բուրժուական պատմաբանները միջնադարյան Թուրքիան ուսումնասիրելիս, հողատիրության իրենց սխեման կազմել են հիմնվելով 16-րդ դարի 2-րդ կեսի հայտնի օրենսդիր ու շեյխուլ-իսլամ էբուսուուդի ֆեթվաների, շարիաթի մեկնաբանությունների վրա։ Ավելորդ չենք համարում այստեղ բերել այդ ֆեթվայից առանձին հատվածներ։ «Եթե իմամը (իմա՝ սուլթանը—Մ. Զ.),—գրում է էբուսուուդը,—նվաճելով որևէ երկիր, նրա հողերը բաժանի նվաճողների միջև. ու եթե [տվյալ երկրի] ամբողջ բնակչությունը ընդունած լինի իսլամը մինչև նվաճումը... ապա այդ հողերը ուշրիե (այսինքն՝ տասանորդ) կլինեն... Եթե իմամը, նվաճելով երկիրը, չսպանի ու գերի չվերցնի [նրա բնակիչներին] և թողնի նրանց նույն տեղում և տա նրանց իրենց տնօրինության (تمليك) տակ գտնվող հողերը, ինչպես և անասունները, ապա նրանց ջիզիե հարկ պիտի նշանակել, իսկ հողի համար [նրանց վրա] նշանակված հարկը կլինի խարաջը... Իսկ խարաջը կլինի երկու տեսակ՝ առաջին՝ խարաջ-ի մուվազզաֆ (خراج موظف), որը դանձվում է [հողի համար] յուրաքանչյուր տարի որոշակի գումար, և երկրորդ՝ խարաջ-ի մուկասեմե (خراج مقاسمه), որը դանձվում է հողի ըստ տարածության համաձայն ստացած բերքի 1/10-րդ կամ 1/8-րդ մասը։ Եթե հողը շատ բերրի է, ապա օրենքը թույլ է տալիս վերցնել [որպես խարաջ] մինչև բերքի կեսը։ Հիշատակված երկու կատեգորիայի հողերն էլ պատկանում են նրանց տերերին սեփականության (ملك) իրավունքով։ Սակայն բերքատու այս երկրի (իմա՝ Ասիայի) հողերը չեն հանդիսանում... ոչ ուշրիե, ոչ էլ խարաջիե, այլ հանդիսանում են պետական հողեր (ارض مملكت) և գտնվում են պետական գանձարանի (بيت المال) տնօրինության տակ։ [Այս հողերը] տրվում են ռայաթներին (գյուղացիներին)... [Այսպիսի դեպքում] ռայաթը սիփահուն (ֆեոդալին) կվճարի խարաջի մուվազզաֆ և խարաջի մուկասեմե։ Նրանք (այսինքն գյուղացիները) չեն կարող ծախել կամ օտարել այդ հողերը։ Եթե նրանք մահանան ու ունենան որդիներ, ապա վերջինները հողն օգտագործում են նույն սկզբունքներով... Այս կատեգորիայի հողերը մինչև այն ժամանակ, երբ մուսուլմանների փադիշահի կողմից որևէ մեկին չտրվեց, որպես սեփականություն (ملك), ոչ ոքի սեփականությունը հանդիսանալ չի կարող»[9]։

Հողատիրության ձևերի այսպիսի դասակարգումը սխալ է այնքան, որքան, ինչպես երևում է հենց էբուսուուդի ֆեթվայից, թույլատրվում էր հողը գնել ու վաճառել մուսուլմանին, այսպես կոչված, «խարաջիե» հողում, իսկ ոչ-մուսուլմանին, այսպես կոչված, «ուշրիե» հողում։

Հարավային ու հարավ-արևմտյան Հայաստանում 16—18-րդ դարերում հիմնականում իշխում էին քուրդ ֆեոդալները, որոնք տիրապետում էին հսկայական հողային տիրույթների, ինչպես արփալըկի[10], բաշմակլըկի[11], զեամեթի, թիմարի, այնպես էլ հյուքյումեթի[12] յուրթլուկի և օջակլըկի[13] իրավունքներով։ Վերջին երկու ինստիտուտ-

---

[8] I. H. Uzunçarşılı, նույն տեղում, էջ 309—310։

Պրոֆ. Ուզունչարշըլին այստեղ հենվում է 17-րդ դարի թուրք հասարակական գործիչ Ավնի Օմեր էֆենդիի սուլթան Մուրադ IV-ին հղած «Օսմանյան կայսերական դաֆթարի բովանդակությունը» վերնագրված զեկուցագրի վրա։ Տե՛ս Avni Omer Efendi, Kanun-i Osmani mefhum-i defter-i hakâni, Belleten, 1951, հատ. XV, էջ 381—399։

[9] على تتبعلر مجموعاسى, 1331 հ., հատ., I, էջ 50—51, տե՛ս նաև **А. С. Тверитинова**, Восстание..., էջ 29։

[10] Արփալըկը (arpalık), բառացի գարու համար ըստ թուրքական ժամանակակից ուսումնասիրողների, զառամյալ ֆեոդալներին նվիրաբերված հողն է (տե՛ս İslam ansiklopedisi, c. I, cüz 8, İstanbul, 1942, էջ 592—594)։ Ըստ Մ. Դ. Օսոնի, արփալըկ էր կոչվում այն սանջակը (փոքր վարչական միավոր) ու նրա շրջակայքը, որը տրվում էր սուլթանական պալատի բարձրաստիճան ֆեոդալներին (տե՛ս M. d'Ohsson, Tableau général de l'empire ottoman, հատ. IV, Paris, 1814. էջ 613—614։ Արփալըկ է նվիրվել ֆեոդալներին նաև, որպես լրացուցիչ տիրույթ։ Տե՛ս „Chéréf-nâmeh", հատ. 2, մասն ա, էջ 164 և այլն)։

Դոյություն է ունեցել երկու տեսակ արփալըկ։ Մի դեպքում արփալըկը համարվել է խաս հող ու ժառանգական բնույթ է ունեցել, մյուս դեպքում արփալըկը տրվել է ֆեոդալին, որպես ցմահ կամ ժամանակավոր տիրույթ (տե՛ս Avni Ömer Efendi, նույն տեղում)։

[11] Բաշմակլըկը (başmaklık —բառացի բաշմակի, կոշիկի համար) ինչպես և արփալըկը խաս հողերի մի տարատեսակն է, որը տրվում էր պալատում բարձր դիրք ու կշիռ ունեցող կանանց։

[12] Հյուքյումեթ (hükümet) էին կոչվում ամբողջական շրջաններ, ուր հյուքյումեթի իշխողը, այսպես կոչված հաքիմը տվյալ շրջանի տեր ու տնօրենն էր։ Հյուքյումեթը ժառանգական էր (տե՛ս Chéréf-Nâmeh, հատ. II, 1-ère partie, էջ 254, 256 և այլն)։

[13] Յուրթլուկ և օջակլըկ—բառացի, որպես հայրենի վայր ու օջախ։ Դրանք նույնպես ընդարձակ շրջաններ էին, որոնք ժառանգաբար տրվում էին քուրդ ֆեոդալներին։ Հաճախ նպատակ ունենալով ապահովել պետական սահմանը յուրթլուկն ու օջակլըկը տրվում էին պետական սահմանում գտնվող տերիտորիայից։

ները ժառանգական էին։ Այդ ժառանգականությունն հաստատվում էր պետության կողմից տրված հատուկ հրովարտակի (բերաթի) միջոցով։

Չնայած այն բանին, որ հայ գյուղացիությունն Արևմտյան Հայաստանում հիմնականում մշակում էր ֆեոդալ նվաճողներին պատկանող կամ ժամանակավորապես վերջինների տնօրինության տակ գտնվող հողերը, այնուամենայնիվ, նա կազմակերպված էր ուրույն գյուղական համայնքի մեջ, ուր հողօգտագործման հետ կապված հարցերը անմիջականորեն լուծում էին հենց իրենք՝ համայնքի անդամ գյուղացիները։

16—17-րդ դարերի սկզբնաղբյուրների վկայություններից կարելի է եզրակացնել, թե դեռևս այդ դարերում ինչքան ամուր էին գյուղական համայնքի հիմքերը։

16-րդ դարում, Ասիայում և Եվրոպայում նվաճելով ընդարձակ տերիտորիաներ, Թուրք ֆեոդալներն հաճախ ստիպված էին լինում հաշվի նստել տվյալ վայրում վաղուց ի վեր գոյություն ունեցող վարչական ու սոցիալական կարգերի, սովորույթների, հարկային սիստեմի հետ և այլն, եթե դրանք անշուշտ չէին վնասում օսմանյան ֆեոդալական պետության եկամուտներին։ Պատահական չէ, որ Օմեր Բարկանի հրատարակած ու 16-րդ դարին վերաբերող օսմանյան օրենսգրքերի մեջ հաճախ կարելի է հանդիպել այսպիսի արտահայտությունների՝ «ըստ հնուց ի վեր գոյություն ունեցող օրենքների», «ըստ տեղական սովորության» և այլն։ Մի օրենսգրքում նշված է, որ «ամենալավ հարկը, դա ժողովրդի հնուց ի վեր տալու սովորած հարկն է»[14]. «En iyi vergi halkın ötedenberi vermege alısmış oldug'u vergidir», հետևաբար Արևմտյան Հայաստանում 16—17-րդ դարերում հայ համայնքի դերը դեռևս մեծ էր հայ գյուղական կյանքում։

Նկատի ունենալով գյուղական համայնքի խոշոր դերը անհրաժեշտություն է զգացվում համառոտակի կանգ առնել 16—17-րդ դարերում Հայաստանի գյուղական համայնքի հետ կապված մի շարք հարցերի վրա։ Դրանք են՝ գյուղական համայնքի կառավարումը, հողօգտագործման ձևերը, գյուղական համայնքի դասակարգային կազմը և այլն։

16—17-րդ, ինչպես և նախորդ դարերի[15] աղբյուրներում «գյուղական համայնք» տերմինի փոխարեն հանդիպում ենք «ժողովուրդ», «ժողովուրդ գեղիս» և կամ թե «ամենայն ժողովուրդ գեղիս զմեծ և զփոքր, զաղքատ և զհարուստ, զայր և զկին, զծեր և զտղա» արտահայտություններին։

Հայկական աղբյուրներում հանդիպում ենք նաև «ջամա՛ատ» արաբերեն տերմինին, որը նույնպես նշանակում է «ժողովուրդ»։

Գյուղական համայնքի գլուխ կանգնած էր «ռաիսը», «ռեսը» կամ «ձեռնաւոր»-ը. հանդիպում ենք նաև «տանուտեր», «քեդխուդա», «իշխան» և այլ տերմիններին։

Ռաիսին ընտրում էին հարուստ տանուտեր գյուղացիներից, որոնք խոշոր դեր էին կատարում գյուղական համայնքի կյանքում։ Միայն նրանք իրավունք ունեին լուծելու համայնքի կարևոր տնտեսական հարցերը։

Ռաիսը պատասխանատու էր տեղական ֆեոդալի առաջ հարկերի հավաքումն ապահովելու, համայնքի ներսում ներքին կարգ ու կանոնի պահպանման և այլ հարցերում։

Ծանոթանալով 16—17-րդ դարերի հայերեն սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հետ, պիտի ենթադրել, որ գյուղական համայնքի կախվածությունը տեղական ֆեոդալներից այս շրջանում մեծապես աճել էր։ Մյուս կողմից՝ վաշխառուական հարաբերությունների զարգացման հետևանքով հողը համայնքի ներսում սկսել էր կենտրոնանալ համայնքի հարուստ գյուղացիների կամ խոջաառևտրականների ձեռքում, որոնք, ինչպես հաճախ ենք հանդիպում հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, «հոգու փրկության» համար իրենց կալվածքներից հողային նվիրատվություններ էին անում հայկական վանքերին։

Ձեռագրերի հաղորդած տեղեկություններից երևում է նաև, որ բավականաչափ ուժեղացել էր, 16—17-րդ դարերում, դասակարգային շերտավորումը հայկական գյուղերում։ Հաճախ կարելի է հանդիպել այսպիսի արտահայտության՝ «Հարուստք և աղքատք» և այլն։

Համայնքի ներսում գյուղացիության զգալի մասը զուրկ էր հողից ու աշխատում էր կամ նվաճող-ֆեոդալի, կամ ռաիսի և կամ վանքապատկան հողերում՝ ենթարկվելով դաժան շահագործման։

Քննարկվող ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի բնակչությունը հիմնականում բաղկացած էր երկու հակամարտ դասակարգերից՝ ֆեոդալ շահագործող դասակարգից ու շահագործվող լայն գյուղական ու քաղաքաբնակ զանգվածներից։

---

[14] O. L. Barkan, Kanunlar, էջ 220։

[15] Այդ մասին տե՛ս Լ. Ս. Խաչիկյանի «Հայկական գյուղական համայնքի մասին», «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1958 թ. № 1-ում զետեղված հոդվածը։

Շահագործող խմբի մեջ մտնում էին՝ ա) խասերի, զեամեթների ու թիմարների տեր ֆեոդալ-նվաճողները, բ) զանազան քրդական աշիրեթների (ցեղերի) պետ տեղական քուրդ ֆեոդալները, ինչպես և մասամբ քոչվոր կամ կիսաքոչվոր ցեղերի ռազմական առաջնորդները, հատկապես Հարավային ու հարավ-արևելյան Հայաստանում, գ) փոքրաթիվ հայ հին ֆեոդալներն ու կալվածատերերը, դ) հայ ու մուսուլման հոգևորականության վերնախավը, ե) կենտրոնական և տեղական իշխանության բազմաթիվ պետական պաշտոնյաները։

Որոշ առումով տիրապետող դասակարգի մեջ էին մտնում նաև հայ խոշոր վաճառականները։

Շահագործվող մասսաների մեջ մտնում էին՝ ա) գյուղացիությունը (բնակչության ճնշող մեծամասնությունը) և բ) քաղաքային արհեստավորության հիմնական մասը։

Հիմնվելով սկզբնաղբյուրների վրա, քննարկենք Արևմտյան Հայաստանի հիմնական երկու դասակարգերի մեջ մտնող յուրաքանչյուր խմբի ընդհանուր վիճակը։

ա) Խասերի, զեամեթների և թիմարների տեր՝ ֆեոդալ-նվաճողները

16—17-րդ դարերում Արևմտյան և հյուսիս-արևմտյան Հայաստանում հողերն հիմնականում, ինչպես արդեն նշվեց, բաժանվել էին խոշոր ֆեոդալների միջև, որպես խասեր, զեամեթներ ու թիմարներ պայմանական տիրապետության իրավունքով։

Արևմտյան Հայաստանում խասերի, զեամեթների ու թիմարների մասին կոնկրետ ու, որոշ առումով, ճշգրիտ պատկերացում կարելի է ունենալ հենվելով 17-րդ դարի մի շարք թուրք հեղինակների հաղորդած տեղեկությունների վրա։ Այդ հեղինակները (Այնի Ալի, Էվլիա Չելեբի, Կոչիբեյ, Քյաթիբ Չելեբի և ուրիշներ), նկարագրելով Օսմանյան կայսրության վարչական բաժանումը էյալեթների (խոշոր վարչական միավորների) և սանջակների կամ լիվայի (փոքր վարչական միավորների) բերում են շատ հետաքրքիր տվյալներ Արևմտյան Հայաստանում խասերի, զեամեթների ու թիմարների քանակի, ինչպես և ֆեոդալների այդ հողերից ստացած տարեկան եկամուտի վերաբերյալ։

Հիշյալ հեղինակների տվյալների համաձայն, կայսրության ասիական մասի մարզերը բաժանվել են հետևյալ վարչական միավորների. 1) Էրզրումի էյալեթ կամ վիլայեթ, 2) Վանի էյալեթ և 3) Կարսի էյալեթ (մենք այստեղ չենք բերելու պատմական Փոքր

Հայքի, այսինքն՝ Անդրեփրատյան շրջաններին վերաբերող տվյալները)։

Համաձայն Քյաթիբ Չելեբու, Էրզրումի էյալեթի մեջ մտել են հետևյալ սանջակները՝ Էրզրում կամ Կարին, Խսպիր (Սպեր), Փասեն, Թորթում, Խնուս, Կարահիսար-ի շարկի կամ Շարին Կարահիսար, Կուզուջան, Մամերվան կամ Նարիման, Կեղի, Մշնկերտ, Մանազկերտ, Բայազետ[16]։

Միայն խաս հողերից ֆեոդալների ստացած տարեկան եկամուտն, ըստ Էվլիա Չելեբու, կազմել է 2,687,381 ակչե[17]։

Էրզրումի էյալեթում, ըստ Էվլիա Չելեբու, եղել են ընդամենը 56 զեամեթ և 2215 թիմար[18]։

Ըստ Էվլիա Չելեբու, Քյաթիբ Չելեբու և Կոչիբեյի Վանի էյալեթն ունեցել է 14 սանջակ։ Դրանք են՝ Վան, Ադելջեվազ (Արծկե), Արճեշ, Մուշ, Բարկերի, Կարկար, Կեսանի, Ասիաբերդ, Աղակիս, Բենիկուտուր, Կալաբայազետ, Բերդա, Օվաջըկ[19]։

Էյալեթում, ըստ Էվլիա Չելեբու տվյալների, միայն խաս հողերից ֆեոդալների ստացած տարեկան եկամուտը կազմել է՝ 3.525.390 ակչե[20]։

Էյալեթում եղել են 138 զեամեթ և 576 թիմար[21]։

Ըստ Էվլիա Չելեբու հաղորդած տվյալների, Կարսի էյալեթն ունեցել է հինգ սանջակ՝ փոքր Արդահան, խուջուջան, Զարեշատ, Քեհրան, Կաղզման։

Էյալեթում միայն խաս հողերից ֆեոդալների տարեկան եկամուտը կազմել է 802.530 ակչե[22]։

Վիլայեթում եղել են 1206 զեամեթ ու թիմար[23]։

Այսպիսով, երեք էյալեթներից միայն խաս հողերից ֆեոդալները տարեկան ստացել են ավելի քան 7 միլիոն գումարի հասնող եկամուտ։

Էվլիա Չելեբու վկայությամբ արփալըկի իրավունքով առանձին ֆեոդալներին տրվել են մինչև իսկ ամբողջ քաղաքներ։ Այսպես,

---

[16] „Evliya Çelebi seyahetnâmesi", հատ. II, էջ 192, Kâtip Çelebi, Cihannüma, F. B. Charmoy-ի ֆրանսերեն թարգմանությունը „Chéréf-nâmeh"-ում, հատ. Ա, առաջին մաս, էջ 162։

[17] „Evliya Çelebi seyahetnâmesi", հատ. II, էջ 192։

[18] Նույն տեղում, էջ 199։

[19] Նույն տեղում, էջ 193։

[20] Նույն տեղում։

[21] Նույն տեղում, էջ 200։

[22] Նույն տեղում։

[23] Նույն տեղում։

խոսելով Ամասիայի մասին, նա գրում է. «[Ամասիան] խոշոր քաղաք է ու մի քանի անգամ արփալըկի իրավունքով երեք թուղավոր վեզիրներին է շնորհված»[24]։ Այնուհետև նույնն է գրում Թուրք ճանապարհորդը Շաբին-Կարահիսարի մասին. «...[Շաբին Կարահիսարը] մի քանի անգամ արփալըկի իրավունքով երեք թուղավոր վեզիրներին է շնորհված»[25]։ 16-րդ դարի կեսերին Վանն ամբողջությամբ դարձյալ որպես արփալըկ շնորհվել է Ստամբուլի դաֆթարտար (ֆինանսների մինիստր) չերքեզ Իսկենդար փաշային[26]։

Խասերի, զեամեթների ու թիմարների տեր ֆեոդալները բաժանում էին իրենց հողերը այն գյուղացիներին, որոնք գրանցված էին իրենց մոտ հատուկ հաշվառման մատյաններում (դաֆթարներում) «թափու»-ի իրավունքով։ Վերջին ինստիտուտը փաստորեն իրենից ներկայացնում էր ոչ այլ ինչ, քան գյուղացիությունը հողին ամրացնելու ձևերից մեկը։ Միայն «թափու»-ի վճարումից հետո գյուղացիները հնարավորություն էին ստանում մշակելու իրենց հողակտորները[27]։ Առանց «թափու»-ի վճարման ոչ ոք իրավունք չուներ հողին տիրանալ։ «Թափու»-ն ֆեոդալի կողմից վերցվում էր ամեն անգամ, երբ հողակտորը մի հողատիրոջից անցնում էր մի ուրիշին, ըստ որում նշանակություն չուներ այն հանգամանքը, թե փոխանցումը կատարվում էր ծախելու, նվիրատվության կամ թե ժառանգության միջոցով։ Բացառություն թույլատրվում էր միայն այն ժամանակ, երբ հողը փոխանցվում էր անմիջական ժառանգին՝ որդուն, որը տիրանում էր հողին առանց «թափու» վճարելու, որովհետև Էրզրումի «կանուններամե»-ում ասված է, որ հայրական հողը իրականության մեջ հանդիսանում է որպես որդու ժառանգական մուլքը (սեփականությունը) (mülkü mevrûsû gibidir)[28]։

Դրա հետ մեկտեղ, թափուն, ինչպես ճիշտ ընդգծում է Ա. Ս. Տվերիտինովան, «իրենից ներկայացնում էր ոչ միայն հողակտորին տիրապետելու իրավունքի համար վճարում, այլև միաժամանակ դա մի պարտականություն է, որի հիման վրա հողագործը, որպես ռայաթ (գյուղացի) ամրապնդվում է ֆեոդալների հողերի որոշակի վայրում»[29]։

[24] Նույն տեղում, էջ 183։
[25] Նույն տեղում, էջ 189։
[26] Նույն տեղում, հատ. V, էջ 176—177։
[27] J. Hammer Staatsverwaltung, Վիեննա, 1815, հատ. ա, էջ 337։
[28] O. L. Barkan, Kanunlar, էջ 66։
[29] А. С. Тверитинова, К вопросу о крестьянстве и крестьянском землепользовании (УЗИВ), том XVII, Москва 1953, էջ 41։

Կանուններամեներից երևում է նաև, որ ֆեոդալները հաճախ խախտում էին այդ կարգը և տարբեր պատրվակներով հողը վերցնում էին մի հողատիրոջից և տալիս մյուսին, տուգանում էին գյուղացիներին հողը չմշակելու դեպքում նրանց պատճառած «վնասների» համար, նրանցից վերցնում էին նախատեսնվածից վեր հարկեր և այլն։

բ) Տեղական քուրդ ֆեոդալները Հարավային ու հարավ-արևմտյան Հայաստանում

Հայտնի է, որ 1515—1516 թվականներին Քուրդիստանը՝ Օսմանյան կայսրության կողմից նվաճվելուց հետո քուրդ ֆեոդալների դրությունն ամրապնդվեց Հայաստանի հարավային մասերում, Քուրդիստանի միացումը ոչինչ չփոխեց և չէր կարող փոխել այստեղ դեռևս նախորդ դարերում տիրող ֆեոդալական հարաբերությունների մեջ։ Քրդական ֆեոդալական սիստեմի էությունը կայանում էր տիրապետող, նվաճող պետությունների գերիշխանության ձևական ճանաչման մեջ, իրականում քուրդ ցեղապետները երկրի ներսում իրադրության տերն ու տնօրենն էին։

Թուրք ղեկավարող շրջանները քաջ գիտեին, որ քուրդ ֆեոդալների զինվորական ուժը ռազմական տեսակետից ռեալ է ու վտանգավոր։ Այդ ռազմական ուժը հնարավոր էր օգտագործել և օգտագործվում էր օսմանյան բանակի մղած անվերջ պատերազմներում ոչ միայն արևելյան ճակատում, այլ անգամ Եվրոպայում[30]։ Այստեղից էլ միանգամայն հասկանալի է այն մեղմ ու շողոքորթ քաղաքականությունը, որ վարում էր օսմանյան կառավարությունը քուրդ ցեղապետ ֆեոդալների նկատմամբ։ Սակայն սխալ կլիներ ու միակողմանի քուրդ ֆեոդալների ու օսմանյան պետության փոխհարաբերությունները ներկայացնել միայն վարդագույնով։ Աղբյուրների որոշակի վկայություններից երևում է, որ հաճախ օսմանյան պետությունը ձգտել է ոչնչացնել առանձին իսկական ինքնուրույնության ձգտող քուրդ ֆեոդալներին։ Այդ հողի վրա հաճախ են տեղի ունեցել արյունալի ընդհարումներ կառավարական զորքերի ու տեղի քուրդ ֆեոդալների զինված ուժերի միջև։

Ինչպես արդեն նշվեց, սուլթանական հատուկ հրովարտակներով (բերաթներով), խոշոր քուրդ ֆեոդալները (քրդական Ռուզակի կամ Ռոժակի, Դումբուլի, Պաղուկի, Մահմուդի և այլ ցեղերի առաջնորդները) կառավարության կողմից ստանում էին ամբողջական շրջան-

[30] „Chéréf-nâmeh", հատ. I, մասն ա, էջ 70։

ներ դեռևս 16-րդ դարում հյուրյումեթի[31], օջակլըկի[32] և արփալըկի[33] իրավունքներով։

Այդ իրավունքները ժառանգական էին։ Իրենց հերթին նրանց որդիներն ու ազգականները պետության կողմից պարգևատրված էին, Շերեֆեդդինի վկայությամբ, մինչև 70.000 ակչե տարեկան եկամուտ բերող զեամեթներով ու թիմարներով[34]։

Արևմտյան և Հարավային Հայաստանում 16—17-րդ և հետագա դարերում քրդական ցեղերը ընդարձակ շրջաններ էին զբաղեցրել։ Համաձայն «Շերեֆ-Նամե»-ի Վանի էյալեթում ապրել են հետևյալ ցեղերը՝ 1) Նեմիրան (نمیران) ցեղը, որը գտնվել է խիզանի էմիրի գերիշխանության տակ, 2) Մահմուդի (محمودی) ցեղը։ Նրանք ապրել են հիմնականում Խոշաբում, Վանի, Ոստանի և Սալմաստի արանքում։ 3) Դումբելի կամ Դումբուլի (دمبلی) ցեղը Սոկմանի շրջակայքերում, 4) Պազուկի (پازوکی), Արճեշի և Արծկեի (Ադիլջևազի) սանջակներում։ 5) Ռոզակի կամ Ռոժակի մեծ ցեղը, որն ապրել է Բաղեշի (Բիթլիսի) շրջակայքերում։

«Շերեֆ-Նամե»-ում հիշատակվում են նաև «Հակկերի», «Բելիլան», «Բիլբասի», «Կավալիսի», «Կիսանի» կամ «Կեյսանի», «Շեկակի» և այլ ցեղերի անուններ, որոնք բնակվում էին Հարավային Հայաստանի տարբեր մասերում։

Քուրդ ֆեոդալներն իրենց ենթակա շրջաններում, որպես գերագույն կառավարիչներ օգտվում էին լայն իրավասություններով ու ներքին բոլոր հարցերը լուծում էին իրենք։ Եվ պատահական չէ, որ 16—17-րդ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակագիրները հաճախ հիշելով այս կամ այն քուրդ ֆեոդալին, անվանում են նրան կամ «պարոն», կամ «տեր» և կամ մինչև իսկ «սուլթան»[35]։

Էվլիա Չելեբին, երբ խոսում է Հարավային Հայաստանում ու Քուրդիստանում այս կամ այն քուրդ ֆեոդալի «յուրթլուկ» և «օջակլըկ»-ի իրավունքով հատկացված տիրույթի մասին, ապա համարյա միշտ նա շեշտում է. «ներկայումս բեյի սեփականությունն է» և որ «Պոլսից ուղարկված փադիշահական հրովարտակներում (բերաթներում) բեյին մեծաշուք վեհապետ (ընդգծումը մերն է—Մ. Ջ.) տիտղոսն է տրվում... [նրա սեփականությունը] կազմող հողերը խաս են համարվում ու բոլոր եկամուտները նրան են պատկանում»[36]։

Էվլիա Չելեբու, ինչպես և 17-րդ դարի մի շարք այլ աղբյուրների վկայությամբ, Հարավային Հայաստանում և հատկապես նրա սահմանակից Քուրդիստանում սուլթանական կառավարությունը հակառակ իր կամքի չի կարողացել տեղական հողերը բաժանել իր ֆեոդալներին, որպես զեամեթներ ու թիմարներ։ Այս շրջաններում զեամեթներ ու թիմարներ անհամեմատ ավելի քիչ են եղել, քան Բարձր Հայքում կամ Արևմտյան Հայաստանի Թուրքիայի տիրապետության տակ ընկած այլ շրջաններում։ Դա ցույց է տալիս Օսմանյան կառավարության զգույշ քաղաքականությունը, իսկ որոշ առումով, իհարկե, անզորությունը քուրդ բեկերի նկատմամբ։ Այսպես, Էվլիա Չելեբու տվյալներով ամբողջ Քուրդիստանում ու Հարավային Հայաստանում (ներառյալ Բաղեշի ու բացառյալ Վանի էյալեթները) կազմել են մոտ 40 զեամեթ և ոչ ավել, քան 450 թիմար։ Շատ շրջաններում զեամեթներ ու թիմարներ բոլորովին չեն եղել։

Էվլիա Չելեբուն ուշադրությամբ կարդալիս, մասնագետ ուսումնասիրողը կնկատի, որ նա զանազանում է երեք տեսակի հյուրյումեթ՝ ա) հյուրյումեթներ, որոնք պատկանում են քուրդ բեկերին հնագույն ժամանակաշրջաններից, իր իսկ խոսքերով ասած՝ որպես արտակարգ ու անձեռնմխելի հյուրյումեթներ։ բ) հյուրյումեթներ, որոնք իր իսկ խոսքերով ասած՝ պետության կողմից տրվում են հաքիմներին (իշխողներին), որպես ազատ միրիմիրանլըք, այսինքն՝ այնպիսի հյուրյումեթներ, երբ հաքիմները պարտավոր են մշտապես վավերացնել իրենց իշխանությունը կառավարական հատուկ հրովարտակով։ Այդպիսի հյուրյումեթների թվին են պատկանում, ըստ Էվլիա Չելեբու, Ամիդի էյալեթի հինգ հյուրյումեթները[37]։ Եվ վերջապես, գ) այնպիսի հյուրյումեթներ, ավելի շուտ, «օջակլըկ-հյուրյումեթներ», որոնք հաճախ գտնվել են Պոլսի կառավարության կողմից նշանակված վիլայեթի բեկլերբեյիի կամ սանջակբեյի (կառավարիչ պաշտոնյաների) եթե ոչ անմիջական իշխանության, գեթ հսկողության տակ։ Այս դեպքում, այս հյուրյումեթները, Էվլիա Չելեբու բառերով ասած՝ «այլ էյալեթների նման զեամեթ ու թիմարներ ունեն» և որ «բեյն [այստեղ] նշանակվում ու հեռացվում է պետության կողմից»[38]։

---

31 Նույն տեղում, մասն Բ, էջ 126, հատ. 2-րդ, մասն Ա, էջ 66, 98 և այլն։

32 Նույն տեղում, հատ. II, մասն ա, էջ 10, 33, 97, 164, 167 և այլն։

33 Նույն տեղում, էջ 97, 166։

34 „Chérêf-nâmeh", հատ. II, մասն ա, էջ 196։

35 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 4515, էջ 278, 303, 327, 334, 337 և այլն։ Ձեռագիր № 6273, էջ 370, 383, 470, 483, 500, 522, 535 և այլն։

36 „Evliya Çelebi seyahetnâmesi", հատ. III, էջ 207, 209։

37 Նույն տեղում, հատ. IV, էջ 27։

38 Նույն տեղում։

Հարավային Հայաստանում քուրդ իշխողների մեջ դիրքով ու ունեցած ազդեցությամբ աչքի էին ընկնում Բաղեշի (Բիթլիսի) խաները Ռուզեկի ցեղից. «որոնց,—ինչպես գրում է Էվլիա Չելեբին,—վեհաշուք խան տիտղոսն է տրվում»[39]։

Խանության սահմանների մեջ մտնող տերիտորիայից ստացված համարյա ամբողջ եկամուտը գնում էր խանի գանձարանը։ «[Բիթլիս] քաղաք եկող ու գնացող կարավանների մաքսն ու տուրքը խանին է պատկանում»[40],—գրում է Էվլիա Չելեբին։ Իսկ «Մշո դաշտի տուրքերը,—շարունակում է նա,—Երևանը նվաճող սուլթան Մուրադ խանի կողմից խանին է շնորհված ընդմիշտ»։ Մինչև իսկ Էվլիա Չելեբու հավաստիացումով «Բիթլիս քաղաքից ջիզիեի (քրիստոնյաներից գանձված գլխահարկի) կեսը Վանի բանակին, կեսը [Բիթլիսի] Աբդուլ խանին է պատկանում»[41], մի հանգամանք. որն ուրիշ շրջաններում թույլ չէր տրվում ու քրիստոնյաներից հավաքված ջիզիեն գնում էր պետական գանձարանը։

17-րդ դարի 30—40-ական թվականներին վերոհիշյալ Բիթլիսի Աբդուլ խանն այն աստիճան իրեն ինքնուրույն էր զգում օսմանյան պետությունից, որ թույլ չէր տալիս հարևան՝ Վանի թուրք փաշային միջամտելու իր ներքին գործերին։ Իսկ երբեմն էլ, եթե Վանի փաշան փորձում էր միջամտել, ապա գործը հասնում էր մինչև իսկ զինված ընդհարման։ Խանն ամեն կերպ ընդգծում էր, որ «ես նրա էյալեթում չեմ, այլ ինքնուրույն մեծ խան եմ»[42]։

Դաժան կերպով շահագործելով բնակչությանը, նախ և առաջ գյուղացիությանը, Բիթլիսի խաները իրենց ձեռքն էին կենտրոնացրել հսկայական հարստություն։ Խիստ հիշարժան են Էվլիա Չելեբու այն էջերը, որոնք նվիրված են Բիթլիսի խանի պալատի, բաղնիքի նկարագրությանը[43]։ Այնտեղ եղած շլացուցիչ շքեղությունն ու ոսկյա իրերը ու Աբդուլ խանի այլ բազմաթիվ գանձերը ապշեցրել է թուրք հանապարհորդին[44]։

---

39 Նույն տեղում։

40 „Evliya Çelebi seyahetnâmesi", հատ. IV, էջ 88։

41 Նույն տեղում։

42 Նույն տեղում։

43 Նույն տեղում, էջ 126։

44 Աբդուլ խանի ունեցած հարստությունների մասին, հիմնականում հենվելով Էվլիա Չելեբու հաղորդած տվյալներին հատուկ հոդված է գրել Ա. Սակաղյանը (տե՛ս A. Sakassian Abdal Khan, seigneur kurde de Bitlis au XVII ème siècle et ses trésors, Journal Asiatique, tome CCXXIX, Paris 1937, avril-juin, էջ 253—270)։

Այդպիսի հարստությունը միայն Բիթլիսի խաներին հատուկ չէր։ Մյուս բոլոր ֆեոդալներն իրենց տիրապետած կալվածքներից ստանում էին անսահման հարստություններ և ունեին խոշոր ու մանր եղջերավոր անասունների բազմաթիվ հոտեր։ Էվլիա Չելեբու վկայությամբ միայն Զաբաքչուրի բեյը «...տարեկան 40 բեռ ակչեի եկամուտ ունի»[45], որը կանի 4 միլիոն ակչե։ Իհարկե, ոչ բոլոր քուրդ բեկերն էին տարեկան այդքան մեծ եկամուտ ստանում, սակայն թուրք հանապարհորդի վկայության համաձայն 130.000 ակչեից պակաս տարեկան եկամուտ ունեցող բեկ չի եղել։

Դեռ 16-րդ դարի վերջին, Չեզիրեի քուրդ բեկ Մուհամմեդը ուներ 12.000 ոչխար, 100.000 հավ[46]։ Իսկ երբ նա մահացավ, նրա գանձարանում հայտնաբերվեց 200.000 ոսկեդրամ, թանկարժեք բրդյա բազմաթիվ գործվածքներ և այլն[47]։ Բալուի քուրդ բեկը ուներ ավելի քան 10.000 ոչխար ու անհաշիվ այլ հարստություն։ Նման հարստությունները, բնականաբար, կարող էին կուտակվել միայն տեղի հայ և մասամբ քուրդ գյուղացիության դաժան շահագործման ու ապօրինի բռնությունների միջոցով։

Եվ պատահական չէ, որ հաճախ տեղի գյուղացիներն ստիպված էին թողնել հայրենի վայրերը ու գնալ այլ տեղեր։ Դեռևս 16-րդ դարի Զմշկածագին վերաբերող օսմանյան կանոնադրությունում մենք կարդում ենք. «Եվ տվյալ վիլայեթում քրդերի (իմա՝ քուրդ ֆեոդալների—Մ. Զ.) բռնությունների հետևանքով, ինչքան ռայաթներ (գյուղացիներ) ցրվեցին ու գնացին բնակվելու այլ վիլայեթներում»[48]։

16—17-դարերում նվաճողների վարած հատուկ քաղաքականության հետևանքով, Արևմտյան Հայաստանում քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերի քանակը զգալի քանակությամբ ավելացավ։

Վարվելով այդպես նվաճողներն իրենց առաջ խնդիր էին դրել տարաբաժանել ու թուլացնել տեղական նստակյաց բնակչությանը։ 16—17-րդ դարերի օսմանյան աղբյուրներում այդ քոչվորներին անվանում են յուրուկներ (yürükler թուրքերեն yürümek գնալ, շարժվել բայից) յուզդեջիներ և թերաքեմեներ։ Թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկի հրատարակած արխիվային նյութերից երևում է, որ

---

45 „Evliya Çelebi seyahetnâmesi", հատ. III, էջ 225—226։

46 „Chérêf—nâmeh", հատ. I, 2eme partie, էջ 157, 159։

47 Նույն տեղում, հատ. II, 1ere partie, էջ 28։

48 O. L. Barkan, Kanunlar, էջ 188։

քոչվորական ցեղերը տարածված են եղել հատկապես հարավ-արևմըտյան Հայաստանում[49]։

Ռազմատենչ քոչվորները սովորաբար հաշվի չէին նստում հողագործ բնակչության հետ, հասցնելով նրանց տնտեսությանը ահռելի վնասներ, բռնություններ ու կողոպուտներ գործադրելու միջոցով։

Յուրուկները անվերջ քոչում էին մի տեղից մի այլ վայր։ 16—17-րդ դարերի փաստաթղթերում նրանց անվանում են նաև ուղղակի «քոչողներ»[50] (Konar göçer)

16-րդ դարի օսմանյան օրենքներում քոչվորներին իրավունք է վերապահվում շարժվել իրենց հոտերի հետ միասին ցանկացած ուղղությամբ։ «Արոտատեղիների համար որոշակի սահմաններ չկան։ Հնագույն ժամանակաշրջաններից [որոշված է այսպես], որ կողմը որ հոտը շարժվի, այդ տեղում էլ թող արածեցվի...

Հնագույն ժամանակաշրջաններից եղած արոտավայրերի ծախելն ու բաժանելն անհամատեղելի է օրենքի հետ։ Եթե որևէ մեկը բռնի կերպով նրանց մշակի—ապա անհրաժեշտ է նորից արոտավայրերի վերածել... գյուղերի բնակիչները ոչ մի առնչություն չունեն արոտավայրերի հետ և հետևաբար չեն կարող արգելել որևէ մեկին քոչել այստեղ»[51]։

Կառավարության ամեն մի փորձ՝ սահմանափակել քոչվորների կամ նրանց առաջնորդների իրավունքները հանդիպել է հաճախ վերջինների կատաղի դիմադրությանը։ Այդպիսի դեպքերում քոչվորների հարևան նստակյաց հողագործները մեծապես տուժում էին։ Նրանք իջնում էին լեռներից ցած, ոչնչացնում էին ցանքը, կողոպտում էին գյուղի հարստությունները, քշում ու տանում էին խոշոր ու մանր եղջերավոր անասուններին և այլն[52]։

Թե ինչպիսի ահավոր չափերի էր հասնում քոչվորների խժդժությունները, երևում է 17-րդ դարի մի հիշատակարանի տեղեկություններից, ուր գրիչը հաղորդում է, որ քոչվորները «...իջանեալ ի գիւղօրայս ազգի ազգի պատճառանօք խնդրէին դրամս»։ Իսկ իջնելով լեռներից, նրանք «...յաւար արին զանասունս գեղօրէից ամենայն երկրի... և դադարեցան ճանապարհորդք և բարաւանք և

[49] **Ahmed Refik**, Anadolüda Türk aşiretleri, Istanbul, *1932*, էջ VI, X.

[50] **В. В. Гордлевский**, Государство сельджукидов Малой Азии, *էջ 64*.

[51] **А. С. Тверитинова**, К вопросу о крестьянстве..., *էջ 47*.

[52] **В. В. Гордлевский**, Государство сельджукидов..., *էջ 65*.

ամայացան ճանապարհք ամենայն, զի զրաղումս կողոպտեցին ի վաճառականաց և սպանին»[53]։

Հայաստանում քոչվորական ցեղերի քանակի ավելացումը պետի բացատրել նաև անասնապահության համար խիստ բարենպաստ հսկայական արոտավայրերի առկայությամբ։ Հայաստանի տերիտորիայի վրա քոչվորական ցեղերի մշտապես ներթափանցելու հետևանքով, հողագործությունն աստիճանաբար նահանջում էր քոչվորական անասնապահության առաջ։

գ) Փոքրաթիվ հայ հին ֆեոդալներն ու կալվածատերերը

16—17-րդ դարերում Արևմտյան Հայաստանի միայն մի շարք վայրերում (Սասուն, Զեյթուն) հայ ֆեոդալները շարունակում էին պաշտպանել իրենց դոյությունը։ Այդ ֆեոդալները ձևականորեն ենթարկվում էին սուլթանական կառավարությանը և պարտավոր էին սուլթանական գանձարանին տարեկան որոշ գումար մուծել։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հայկական աղբյուրներում հայ ֆեոդալական խավի ու կալվածատիրության ներկայացուցիչներին տրվում են՝ «մելիք», «բեկ, «պարոն», «իշխան», «տեր», «պարոնտեր» և այլ անվանումներ։

Արևմտյան Հայաստանում «մելիք»-ներ էին կոչվում ոչ միայն հայ խոշոր կալվածատերերը, այլև խոշոր վաճառականները։

Հատկապես հետաքրքիր է նշել «պարոնտեր» տերմինը։ «Պարոնտեր» էին կոչվում այն ֆեոդալ-կալվածատերերը, որոնք շարունակում էին իրենց ձեռքում պահել ժառանգական կալվածքները, լինելով միաժամանակ «պարոն» (այսինքն՝ աշխարհիկ ֆեոդալ) և «տեր» (այսինքն՝ հոգևոր առաջնորդ)։ Այսպես «պարոնտեր» էին կոչվում Արևմտյան Հայաստանում Աղթամարի կաթողիկոսները և բարձր հոգևորականության շատ ներկայացուցիչներ[54]։

դ) Հայ բարձր հոգևորականություն, նրա դերն ու կշիռը

Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում 16—17-րդ դարերում գոյություն ունեին համեմատաբար խոշոր վանքապատկան հողային տիրություններ։

Համաձայն Համ. Ոսկյանի՝ միայն Վասպուրական—Վանում

[53] ՀՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Մագիստրոս, գործ № 30, էջ 19—20։

[54] ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Մագիստրոս, գործ № 26, էջ 50, 81, գործ № 22, էջ 78։ Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 145, 776 և այլն։

կային 64 վանքեր[55], իսկ Տարոն—Տուրուբերանում (Բաղեշի շրջան)՝ 48[56]։

Վանքերի գլուխ հաճախ կանգնած էին լինում, ինչպես արդեն նշեցինք, հին աշխարհիկ ֆեոդալները, որոնք հոգևորական կոչում էին ընդունել։ Չնայած վանքապատկան կալվածքները, նույնպես ենթարկվում էին չարաշահումների ու կամայականությունների, ինչպես առանձին պետական պաշտոնյաների, այնպես էլ տեղական ֆեոդալների կողմից, այնուամենայնիվ նրանք գտնվում էին բավականին արտոնյալ վիճակում, այնքան որքան նրանք կարող էին իրենց որոշ առումով ապահով զգալ տեղական նվաճողների ոտնձգություններից և ազատված էին պետական որոշ հարկային պարտավորություններից։

Որ Արևմտյան Հայաստանում, ինչպես որ դա Արևելյան Հայաստանում էր, վանքերն օգտվում էին հարկային արտոնությունից, ապացուցվում է ի միջի այլոց և 1540 թվականին գրված Էրզրումի կանոնագրքում։ Այնտեղ ասված է. «Եվ վերոհիշյալ լիվայում (Էրզրումի սանջակում—Մ. Ղ.) սևագլուխներ (Karabaşlar) անունով հայանի հոգևորականներից յուրաքանչյուրն իր տրամադրության տակ ունի վանք։ Այդ վանքերի համար նրանց նշանակված է որոշ քանակությամբ ակչե (հարկի իմաստով—Մ. Ղ.)։ Համաձայն դաֆթարի [հարկը] վճարելուց հետո, նրանք իսպենջ (գլխահարկի տարատեսակը—Մ. Ղ.) չեն տա»[57]։

Սակայն թուրքական կառավարությունը ամեն կերպ ձգտում էր վերացնել վանքերին տրված հարկային արտոնությունները և հարկ վերցնել վանքապատկան կալվածներից։ Էրզրումի կանոնագրքի 13-րդ հոդվածից երևում է, որ տեղական իշխանությունները հոգևորականությունից գանձել են «ամուսնության փող», «ժառանգության բաժին», «առաջնորդական հարկ» և այլն։ Կամախի կանոնի 4-րդ հոդվածն ամբողջովին նվիրված է «մարհասիլե» (առաջնորդական) հարկին։

Խոսելով Մշո Սուրբ Կարապետ վանքի մասին, թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեբին վկայում է, որ վանքի «...կալվածները շատ մեծ են (وقافی عظیمدر) և որ վանականները փաշային հինգ քիսե և անսահման քանակությամբ նվերներ են տալիս և որ «յուրաքանչյուր տարի վանք այցելող մարդկանցից շատ մեծ քանակությամբ հարստություն են հավաքում»[58]։ Այս վկայությունից երևում է, որ վանքն ստիպված է եղել իր ստացած եկամտի մի զգալի մասը նվերների ձևով տալ թուրք փաշային։ Այստեղից էլ նույնպես կարելի է եզրակացնել, որ վանքերի հարկային իմունիտետը ըստ էության իրավական ֆիկցիա էր։

16—17-րդ դարերում մի շարք վանքերի հաջողվում է ընդլայնել իրենց կալվածքները, ինչպես գնելու ճանապարհով, այնպես էլ առանձին հարուստ մարդկանց, հատկապես խոջա-առևտրականների, իրենց «հոգու փրկության» համար, վանքերին արված նվիրատվությունների միջոցով։ Բացի դրանից՝ վանքերը յուրացնում էին նաև գյուղական համայնքի մշակելի հողային տարածությունները։ Սակայն վանքերի կալվածների ընդարձակման հիմնական աղբյուրը, ինչպես դա նախորդ դարերում էր, առանձին մարդկանց նվիրատվություններն էին։ Այսպես, 1564 թ. Մելիք Ղուլիջանը Բիթլիսում տարբեր վանքերի նվիրաբերել է ոչ միայն մի շարք հողակտորներ, այլև ջրաղացներ, խանութներ, այգիներ, բանջարանոցներ և այլն[59]։ Առանձին հարուստներ վանքերին նվիրել են նույնիսկ հովիվներ։ Այդպես է վարվել, օրինակ, Խոջա Ղարիբջանը Վարագում[60]։

Խոսելով Աղթամարի վանքի մասին, Էվլիա Չելեբին վկայում է, որ «վանքը շատ ծառաներ (ղուլամներ) ունի...»[61] և որ «նրանց բարիքներն այնքան շատ են,—շարունակում է նա,—որ [այնտեղ կարելի է] գտնել մինչև իսկ թռչունի կաթն ու հեռավոր երկրների բույսերը»[62]։

Որոշ վանքերի հարստացումը, այդ խառն ու վայրիվերումների ժամանակներում հայ բարձր կրոնավորների որոշ շրջաններում առաջ են բերել բարքերի անկում։ 16-րդ դարի ժամանակակից մի հիշատակագիր այսպես է ներկայացնում այդ կարգի հայ հոգևորականների պատկերը.

Մեր առաջնորդներ բովանդակ դաստուած թողեր են,
Զհոգւոցն առաջնորդութիւնն ի տաճկաց եկեալ կու խնդրեն
Թե զկաթողիկոսն ասեմ՝ արծաթով զնա մեծարեն,
Թե եպիսկոպոսին ասեմ՝ տամղաճոյ նման բամբասեն։

---

55 Գևոտ. Համ. Ոսկյան, Վասպուրական—Վանի վանքերը, Վիեննա, 1940։

56 Գևոտ. Համ. Ոսկյան, Տարոն—Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953։

57 O. L. Barkan, Kanunlar, էջ 70։

58 „Evliya Çelebi seyahetnâmesi", հատ. 3, էջ 229։

59 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 4515, էջ 291։

60 Նույն տեղում, էջ 358։

61 „Evliya Çelebi seyahetnâmesi", հատ. 3, էջ 229։

62 Նույն տեղում։

Հայոց վարդապետքն ամեն դրամի համար քարոզեն,
Ով որ դրամ չտայ՝ զայն փութով Թղթով կանիծեն։
Մեր ազգի երիցունքն հանապազ զիրար կու ննջեն
Անարծաթ պատարագօք աշխարհիս ավեր կու բերեն[63]։

Վանական միջավայրում բուն դրած ապականություններն ավելի գունեղ են ներկայացրել և 17-րդ դարի պատմագիրներ Գր. Դարանաղցին և Առ. Դավրիժեցին։ «Եւ վանորէից արեղայքն,—գրում է Գրիգոր Դարանաղցին,—որ ամէնքն առ հասարակ սուտ եպիսկոպոսք են եղեալ, վասն միմեանց նախանձու... թողեալ են զլուսազարդ վանորայսն, սփռեալ էին ի գեղորայսն և անդեայք և այգիք և բուրաստանք և հօտք խաշանց և առջարոց բազմութիւնս ստացեալ էին և եղեալ էին իբրև զմի ի մեծատանց աշխարհականացն և կալեալ էին ի կանանց տանտիկնայս ի վարձու և զանուանքն հացթուխ էին եղեալ»[64]։ *Պատկերն ամբողջացնում է Առ. Դավրիժեցին. «Վասն զի ամենայն վանորայքն ազգիս հայոց՝ իւրաքանչիւր սեպհականութիւն էր իւր զինչս առանձին—այգի և բուրաստան, փեթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց, նաև զմուտս հասարակաց վանիցս մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին։ Եւ զայն ամենայն ինքեանց, և ազգայնոց՝ և իւրեանց հաճելեաց արանց ծախէին և պետս կարեաց։ Եւ զնուիրեալ տեղիսն Աստուածոյ, որք բնակարան են նշխարաց սրբոց և սքանչելագործ, և շնորհակիր նշանաց Աստուծոյ, լցեալ էին զայնոսիկ կանամբք և տանտիկնօք և իւրեանց ազգայնօք»*[65]։

16-րդ դարի վերջերին և 17-րդ դարի սկզբներին գահակալած կաթողիկոսների մասին Առ. Դավրիժեցին գրում է. «Եւ ի շրջագայութեան իւրեանց ի մէջ ժողովրդեանն, թագաւորական ծառայ և այլազգի զօրականս շրջեցուցանէին ընդ ինքեանս, և զիրաւունս և զհասս՝ որք ի ժողովրդենէն՝ ճշտիւ և բռնութեամբ ուժգին առնուին... և կաթողիկոսքն՝ որպէս ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք դաստիճան կաթողիկոսութեան, սոյնպէս և ինքեանք ձեռնադրեալ եպիսկոպոսունքն և քահանայքն, տգետք, խոտանք, և անպիտանք,

[63] Ղ. Ալիշան. *Հայապատում*, էջ 594, *հմմտ.* Աշ. Հովհաննիսյան. *Գրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, հատ. Ա, էջ 469։

[64] Գր. Դարանաղցի. էջ 296։

[65] Առ. Դավրիժեցի. էջ 288։

ըստ սաղմոսին, որք էին լեալ պաշտոնեայք որովայնի՝ հանապազ ի գինարբուս դեգերեալք՝ գուսանօք իբր զմարմնաւոր իշխանս, յառաւօտէ մինչև ցերեկոյ հետևեալ կատակաց և լիտի բանից՝ և դատարկութեան»[66]։

Այսպիսի պայմաններում, ժողովուրդը հաճախակի է բողոքել նման հոգևորականների կատարած ապօրինությունների դեմ։ Այս տեսակետից խիստ ուշագրավ է այն բողոքագիրը, որն ուղարկել են Վան քաղաքի ու Վասպուրականի նահանգի արհեստավորները, դոլվաթավորները, իշխանները, տանուտերները էջմիածնի Մելքիսեթ կաթողիկոսին։

Բողոքագրի սկզբում նշելով, որ ամենուրեք տիրում են «օրինակաց քակմունք, կանոնաց արհամարհութիւնք, և եկեղեցական կարգաց այլայլութիւնք» հեղինակները մատնացույց են անում դրա պատճառները.

ա) «վասն արծաթասիրութեան քո», « ի վերայ եպիսկոպոսի», «այլ ոմն տգետ և հերձուածող» «եպիսկոպոս կու օրհնես»։ «Այս ի՞նչ օրէնք է,—շարունակում են բողոքագիրները,—որ մեկ կնոջ հինգ այր լինի»։

բ) Կաթողիկոսի ուղարկած նվիրակները «լիրբ, անզգամ, անամոթ և ամբարտաւան» մարդիկ են, որոնք «պճնեալ հանդերձիւք, և կրկին պաշտօնէիւք գան, և գոռոզաբար խրոխտան, և բազում ցոփութեամբ և անկարգութեամբ և արբեցողութեամբ զաշխարհս վրդովեն», «...և երիվարօք շրջին իբրև զրոնաւորս և պճնին, և ի կերակուրս և յըմպելիս ծախեն զժողովեալսն իւրեանց, յոլով կաշառս տան բռնաւորաց, և բազում տուգանս այլազգաց վասն հակառակասէր բարուց իւրեանց...»։

Այնուհետև բերվում են այլ պատճառաբանություններ՝ հոգևորականների տգիտությունը, նրանց խոսքերով ասած՝ «խաւարն, որ զլոյսն մերժե», էջմիածնի հարստությունների վաճառքը օտարներին և այլն[67]։

Այսպես էր հոգևորականության բարոյական դասալքումը և ոչ միայն վատշուեր Մելքիսեթ կաթողիկոսի ժամանակ, որի օրոք այդ երևույթներն ավելի բացահայտ դրսևորվեցին։

Ցոփ ու շռայլ կյանք են վարել ըստ Առ. Դավրիժեցու ոչ միայն

[66] Առ. Դավրիժեցի. էջ 289 և հետ.։

[67] *Տե՛ս* Գ. Վ. Սրվանձտեանց. *Թորոս աղբար*, մասն Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 279—293։

հայ հոգևորականության վերնախավը, այլև շարքայինները։ «Սոյնպէս և գեղական երիցունք՝ անուամբ միայն քահանայք, այլ ոմանք առեալ զիշխանութեան մելիքութեան, և ոմանք տանուտերութեան՝ և ոմանք պոռնիկք և երկկանայք, ոմանք յարեցեալք յիշխանս այլազգեաց, արբանեակք շարեաց գործոց նոցա՝ և մասանիշք քրիստոնէից, ոմանք ի մարմնաւոր արուեստս և ի հողագործութիւնս պատաղեալ իբրև զաշխարհականս. և բնաւին թողեալ զժամ և պատարագ»[68]։

Սակայն պետք է նշել, որ շարքային հոգևորականության վիճակը, հատկապես գյուղական վայրերում քիչ էր տարբերվում աշխատավոր ժողովրդի վիճակից։

17-րդ դարի ֆրանսիացի ճանապարհորդ, վաճառական Շարդենը, խոսելով հայ գյուղական քահանաների մասին, նշում է, որ «նրանք բոլորն էլ աղքատ են ու վատ հագնված» և որ «կարիքը նրանց մշտապես ստիպում է հոգալ գոյության միջոցների մասին»[69]։ Կասկածից դուրս է միաժամանակ և այն, որ միայն հոգևորականության միջնախավին ու վերնախավին էր հաջողվում հայ աշխարհիկ ֆեոդալների դասալքման պայմաններում տիրանալ վերջիններիս կալվածքների և գույքերի բեկորներին և տիրապետող դիրք գրավել հայ իրականության մեջ։

ե) Կենտրոնական և տեղական ապարատի պետական պաշտոնյաներ

Աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց թիվը քիչ չի եղել։ Այս պաշտոնյաները ֆինանսավորվում էին տեղական բնակչության դաժան շահագործման միջոցով։ Պետական պաշտոնյաների ճնշող մեծամասնությունը, ինչպես այդ մասին պարզորոշ կերպով վկայում են 16-րդ դարի Արևմտյան Հայաստանին վերաբերող թուրքական օրենսգրքերը, շարաշահում էին իրենց դիրքը և գործադրում բազմաթիվ բռնություններ։

Արևմտյան Հայաստանում նշված ժամանակաշրջանին վերաբերող աղբյուրներում ամենից շատ ու համարյա ամենուրեք հիշատակվում են դեֆթերդարը[70], ալայբեյին[71], չիրիբաշին[72], ենիչերի աղասին[73], սուբաշին[74], մուհթեսիբը[75], նաիբը[76] և այլն։

զ) Հայ վաճառականությունը Արևմտյան Հայաստանում ու նրա դերը 16—17-րդ դարերում

Հայ վաճառականությունը 16-րդ դարում ամրապնդվում էր ոչ միայն Հայաստանի սահմաններից դուրս, որտեղ նա ուներ իր զարգացման համար նպաստավոր հող, այլև բուն Հայաստանում։

Ամերիկայի և դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհի հայտնագործությունից հետո Առաջավոր Ասիան դեռևս ամբողջապես չէր կորցրել իր երբեմնի նշանակությունը եվրոպական առևտրի համար։ Այսպես կոչված «լևանտյան» առևտրի ոլորտները կարևորությունից չէին զրկվել։

Սև ծովի ու Տրապիզոնի վրայով կատարվող առևտուրը ինտենսիվ էր և 16—17-րդ դարերում։ Հանրահայտ է Սև ծովի դերը Անդրբկովկասի և Արևելքի հետ կատարվող առևտրում։

Սև ծովից դեպի Իրան և Հնդկաստան տանող առևտրական ուղիներն անցնում էին Հայաստանի ու Ադրբեջանի վրայով, և Հայաստանի մի շարք քաղաքներն հանդիսանում էին տարանցիկ առևտրի կենտրոններ։

Տարանցիկ ուղիներն հիմնականում հետևյալներն էին՝ Պոլիս—Թոխատ—Էրզրում—Թավրիզ, Զմյուռնիա—Թոխատ—Էրզրում—

---

[68] Ան. Դավրիժեցի. էջ 289։

[69] Jean Chardin, Voyages en Perse et autres lieux de l'Orient, հատ. II, էջ 77։

[70] Դեֆթերդարներ էին կոչվում վիլայեթի ֆինանսական գործերով զբաղվող պետական պաշտոնյաները։

[71] Ալայ բեյի բառացի ալայի (գնդի) հրամանատար, իսկ ալայը հիմնականում կազմվում էր ավատատեր-ֆեոդալների, այսպես կոչված թիմարիստ-սիփահիների (հեծյալների) զինվորական ուժերից։ Ալայ բեյին էին ենթարկվում խաղաղ ժամանակ երեք-չորս սուբաշիներ, որոնք հետևում էին տվյալ շրջանի կարգ ու կանոնին։

[72] Չիրիրաշին—սովորաբար զեամեթի տեր ֆեոդալ, որը միաժամանակ հրամանատար էր։ Չիրիրաշին պարտավոր էր մշտապես պատրաստ վիճակում պահել իր տրամադրության տակ եղած զինվորներին, իսկ խաղաղ ժամանակ հետևել քաղաքի կամ շրջանի կարգ ու կանոնին։

[73] Ենիչերիների պետ, որը հետևում էր ենիչերական կորպուսի բոլոր գործերին, միաժամանակ հանդիսանալով այդ կորպուսի գերագույն գլխավոր հրամանատարը, օժտված էր մեծ իրավասություններով։

[74] Ալայ բեյի տրամադրության տակ գտնվող պետական պաշտոնյա, որը հետևում էր կարգ ու կանոնին (ոստիկանապետ)։

[75] Մուհտասիբ (բառացի հաշվառու)։ Այն պաշտոնյան, որը լիազորված էր հետևելու արհեստավորների ու վաճառականների տախած ապրանքների գներին, և ծախված ապրանքների չափի ու կշռի ճշտությանը։

[76] Նաիբները տեղերում շարիաթական դատավորներն էին։

Թավրիզ, Տրապիզոն—Էրզրում—Թավրիզ, որոնք, ինչպես մենք արդեն տեսանք, խափանվել էին 16-րդ դարի վերջերին Թուրք-պարսկական պատերազմների հետևանքով երկրի ընդհանուր ավերվածության, Թուրքերի կողմից Անդրկովկասը գրավելու և հետագայում ջալալիների ապստամբությունների պատճառով։

Սակայն, ինչպես կարելի է եզրակացնել աղբյուրների հաղորդած վկայություններից՝ 17-րդ դարի 20—30-ական թվականներից սկսած այդ առևտրական ուղիները նորից դարձել էին խիստ բանուկ։

Ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն, խոսելով այդ նույն ժամանակաշրջանի Թոխատի մասին, գրում է. «Հատկապես նկատելին Թոխատում այն է, որ այս քաղաքը հանդիսանում է դեպի Արևելք տանող խոշոր տարանցիկ կայաններից մեկը։ Այնտեղից անվերջ գալիս են կարավաններ Պարսկաստանից, Դիարբեքիրից, Բաղդադից, Կոստանդնուպոլսից, Զմյուռնիայից, Սինոպից և այլ վայրերից»[77]։

Որպես տարանցիկ առևտրի կենտրոն, Էրզրումը բոլորովին էլ չէր զիջում Թոխատին. «Էրզրումում,—գրում է Տավերնիեն,—կան շատ կարավանսարայներ։ Այս քաղաքը, ինչպես և Թոխատը, հանդիսանում է Թուրքիայի մեծ տարանցիկ առևտրի կայաններից մեկը»[78]։

Այս հայտնի և խոշոր վաճառաշահ կենտրոններում կատարվող առևտրի զգալի մասը գտնվում էր հայ վաճառականության ձեռքում։

«Հայերը կոնտիննենտալ նահանգներում,—գրում է 17-րդ դարի Թուրքիայի ներքին կյանքի լավատեղյակ գիտնական Մ. Դ'Օսոնը,—շատ հաճախ են իրենց նվիրում վաճառականությանը։ Այդ նրանք են, և ոչ մուսուլմանները, որոնք կազմում են այդ հարուստ կարավանները, որոնք յուրաքանչյուր տարի գնում են Ասիայի տարբեր շրջանները, որպեսզի այնտեղ տարածեն աշխարհի չորս մասերի արտադրությունը»[79]։

Որո՞նք էին տարանցիկ առևտրի հիմնական ապրանքները։ Համաձայն Հակոբ Կարնեցու՝ տարբեր տեսակի թանկագին քարեր, պճնանքի առարկաները, մուշտակե զորգերը, բրդյա և մետաքսյա

[77] Les six voyages de Jean Baptiste, Tavernier, հատ. I, էջ 11—12, „Ce qu'il ya enfin le plus remarquable de Tccat, est que cette ville est un des plus grands passages de l'Orient, et quil y arrive incessament des caravanes de Perse, de Diarbequir, de Bagdad, de Constantinople, de Smyrne, de Synope at d'autres lieux".

[78] Նույն տեղում, էջ 20։

[79] M. d'Ohsson, Tableau général de l'empire ottoman, հատ IV, էջ 207։

զանազան կերպասները, Գիլանի մետաքսը («Seta Ghella») և այլն[80]։

Հայ վաճառականները շրջում էին Եվրոպայի ու Ասիայի խոշոր վաճառաշահ կենտրոնները ու կնքում մեծ առևտրական գործարքներ։ Ուշագրավ է Եվդոկիայի խոշոր վաճառական Հակոբի թողած հիշատակարանը 17-րդ դարի կեսերին, որտեղ նա գրում է. «Դարձեալ յիշեցէք զանարժան մեղօք լի անպիտան վաճառական Յակոբ որ մինչև Ը ամ ի վերայ աշխարհիս շրջէի բաղում ընչիւք ծախիւք վաճառէի զինչս իմս եթէ ծովով կամ ցամաքով. զամենայն զերկիրս տեսանէի։ Ի յերկիրն Ֆռանկաց տեսայ բազում անգամ ի Կ. Պոլիս վաճառեցի զինչս իմ, ի յերկիրն Յունաց բովանդակ տեսի. մինչ ի Հալապ, Բաղդատ, Շամ, Երուսաղէմ տեսայ, այլև պարսից երկիրն զամէն մինչ ի Խորասան տեսայ։ Բ անգամ յերկիրն Օսբեկոտուն տեսայ։ Այլև Ը անգամ ի յերկիրն Հնդստան գնացի»[81]։

Սակայն առևտրական հարաբերությունների զարգացումը մեծապես խանգարում էր Թուրքիայում կարավանային առևտրի անապահով լինելը։ Ժ. Տավերնիեն, խոսելով առևտրական ուղիների վտանգավոր լինելու մասին գրում էր, որ վաճառականներն ամենուրեք ենթարկվում էին ավազակների հարձակումներին։ «Ամբողջ Թուրքիան,—ասում է նա,—լի է ավազակներով, որոնք թափառում են մեծ բանդաներով ու սպասում ճանապարհին վաճառականներին։ Եթե նրանք հանդիպում են հարուստ վաճառականների, ապա կողոպտում են նրանց ու շատ հաճախ զրկում կյանքից»[82]։

Չնայած այսպիսի դժվարությունների, 16—17-րդ դարերում հայ առևտրականները ունեցան զգալի հաջողություններ Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրի ասպարեզում։ 16—17-րդ դարերի հայերեն ձեռագրերում հաճախակի են հիշատակվում հայ հարուստ վաճառականների անունները։ Հատկապես, այս տեսակետից աչքի են ընկնում Վանի հայ վաճառականները։ Եվ պատահական չէ, որ էվլիա Չելեբին, սխալ ընդհանրացումով նշում է, որ Վանի «հայերը հարուստ վաճառականներ են»[83]։ Վանի հայ վաճառականները հայկական աղբյուրներում հայտնի են «գոլաթաւորք» անունով (մեծահարուստ իմաստով)։

Հայ վաճառականության դերը մեծանում է, հատկապես 16-րդ

[80] Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 568։

[81] Մագիստրոս, գործ № 30, էջ 144։

[82] Les six voyages de Jean Baptiste Tavernier, հատ. I, էջ 2։

[83] „Evliya Çelebi seyahetnâmesi" (Reş,at Koçu), Istanbul, 1944, էջ 45.

դարի վերջերից սկսած, երբ Օսմանյան կայսրության մեջ վաշխառուական կապիտալը, մի նորընթաց զարգացում է ապրում։

Հայերեն ձեռագրերի որոշ նյութերից երևում են, որ հայ վաճառականության մի մասը դուրս էր եկել հին ֆեոդալական դասից։

Ունենալով իր տրամադրության տակ մեծ դրամական միջոցներ, ֆինանսավորելով սուլթանական պալատի ֆեոդալներին, և երբեմն էլ հենց իրեն սուլթանին, և որպեսզի կարողանա պահպանել իր կորցրած վաղեմի ֆեոդալական իրավունքները, վաճառականության մի մասը աշխատում էր համագործակցել նվաճող ֆեոդալների հետ։ Պետության նկատմամբ ցուցաբերած զանազան ծառայությունների համար, սուլթանական պալատը նրան հաճախ էր տալիս ավատական արտոնություններ։ Վաճառականության այս մասն Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև առհասարակ ամբողջ Առաջավոր Ասիայում անվանվում էր «չելեբի»։ Չելեբիների մի մասը դավաճանում էր իր ժողովրդի շահերին, պահանջելով անտրտունջ ենթարկվել սուլթանական կառավարությանը։

Փաստորեն, վաճառականության այս թևը ռեակցիոն դեր էր կատարում։

Հայ վաճառականության մյուս մասը հիմնականում նվիրել էր իրեն արտաքին առևտրին։ Նրանց անվանում էին «խոջաներ»։ Վերջինները բազմաթիվ թելերով կապված էին իրենց ժողովրդի հետ, և հանդիսանում էին նոր ծնունդ առնող առևտրական բուրժուազիայի առաջադիմական թևը։ Սրանց վիճակված էր որոշ դեր խաղալ արևմտահայ ժողովրդի ազատագրական պայքարում, հատկապես Եվրոպայի հետ նրա ներկայացուցիչների ունեցած բանավարություններում։ Այս ուղղությամբ դեր են կատարել նաև հայ վաճառականները, որոնք ապրում էին Եվրոպայի ու Ասիայի զանազան մասերում (Ղրիմում, Բուքովինայում, Վալախիայում ու Մոլդավիայում, Լեհաստանում, Իրանում, Հնդկաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում և այլն)։

է) Գյուղացիության (ռայաթի) դրությունը

16—17-րդ դարերում գյուղացիությունը կազմում էր արևմտյան Հայաստանի բնակչության գերակշռող մասը։ Հայ գյուղացիությունից բացի, այնտեղ ապրում էին թուրք, քուրդ, ադրբեջանցի ու թուրքմեն գյուղացիներ։ Նրանք ըստ երևույթին բաժանում էին շահագործվողների համանման ճակատագիրը։ Նրանց ընդհանուր անունով կոչում էին «ռայաթներ»։ Այդ տերմինի տակ 16—17-րդ

դարերի սկզբնաղբյուրներում հասկանում էին գյուղական բնակչությանը։ Սակայն հետագայում «ռայա» կամ «ռեայա» տերմինը, որը արաբերեն «ռայաթ» բառի հոգնակի ձևն է, Թուրքիայում ստացավ հատուկ իմաստ՝ որպես ջիզիե (գլխահարկ) վճարող կամ ոչ-մուսուլման հպատակ նշանակությամբ[84]։

Թայաթներն իրենց վրա կրում էին պետական ապարատի պաշտոնյաների ու տեղական կալվածատեր-ֆեոդալների շահագործման ամբողջ ծանրությունը և տքնում էին ինչպես պետության, այնպես էլ տեղական ֆեոդալների օգտին գանձվող բազմապիսի հարկերի տակ։

Պետության ռազմական հսկայական ծախսերն ապահովելու համար, թուրք ֆեոդալներն ամեն կերպ ձգտում էին օրինականացնել գյուղացիների ամրապնդումը հողին։ Այդ մասին պարզ կերպով վկայում են թուրքական կանոնադրությունները։ Համաձայն այդ օրենսդրական վավերագրերի, հատուկ հաշվառման մատյաններում (դաֆթարներում) գրանցված գյուղացին իրավունք չուներ ինքնակամ կերպով թողնել իր ապրած վայրն ու գնալ մի ուրիշ տեղ։ Իր հողակտորը թողնելու ու հեռանալու դեպքում ֆեոդալին հատուկ իրավունք են վերապահվում փնտրել փախուստ տված գյուղացուն, և եթե վերջինի փախուստից չէր անցել տասը տարի, հետ բերել նրան իր նախկին բնակավայրը, վերցնելով նրանից տուգանք պատճառած «վնասների» համար։

«Եվ եթե ռայաթը,—մենք կարդում ենք Էրզրումի կանոնադրությունում, իր տրամադրության տակ հող ունենալով հանդերձ փախչի, ապա սիփահին (ֆեոդալը—Մ. Ջ.) օրենքով իրավունք ունի նրան հետ վերադարձնել իր նախկին վայրը։ Սակայն մի տեղում տասը տարուց ավելի ապրողներին հետ բերելն արգելված է»[85]։

Որ գյուղացին փաստորեն կախման մեջ էր գտնվում տեղի ֆեոդալից, երևում է նաև նրանից, որ կանոնադրություններում կալվածատեր-ֆեոդալը (sahib-i arz) իրեն շրջանի ենթակա ու գրանցված գյուղացու նկատմամբ անվանվում է «տերն ռայաթի» (sahib-i

[84] 16—17-րդ դարերի թուրքական վավերագրերում «ռայա» տերմինը հաճախ օգտագործվում է նաև մուսուլման բնակչության համար։ Այդ վավերագրերում (կանոնադրում) ամբողջ հողագործ բնակչության նկատմամբ «ռայա» տերմինի օգտագործելու հետ միաժամանակ, մենք հանդիպում ենք այնպիսի բառակապակցությունների, ինչպիսիք են «անհավատ ռայաներ» (reâya keferest) կամ (reâya-i kefere) «թուրք—ռայաներ» (reâya-i etrak), «մուսուլման—ռայաներ» (reâya-i müslimin), «ռայա—զիմմի» (reâya-i izimmi)։ Տես O. L. Barkan, Kanunlar, էջ 35, 102, 200, 251, 253 և այլն։

[85] O. L. Barkan, kanunlar էջ 64։

raiyet): Թուրքական օրենսդրքերում ֆեոդալին իրավունք է վերապահվում, որպես «սահիբ ի ռայաթի» (ռայաթների տերերի) գրանցված գյուղացուց պահանջել կատարելու բազմաթիվ պարտահարկեր. «անգամ այն դեպքում,—ինչպես այդ մասին ընդգծել է Ա. Ս. Տվերիտինովան,—երբ վերջինս ցանքսը կատարել էր ոչ թե իր հողում, այլ մի ուրիշ կալվածատիրոջ հողում»[86]:

Գյուղացիները դրությունից փրկվելու ելքը գտնում էին փախուստի և այլ վայրերում վերաբնակվելու մեջ, սակայն ֆեոդալները փնտրում էին փախուստ տված գյուղացիներին ու բերում նրանց իրենց նախկին բնակավայրերը[87]:

Ամբողջ 16-րդ դարում Փոքր Ասիայում հաճախակի բնույթ էին ստացել գյուղացիների ապստամբությունները ֆեոդալական կարգերի դեմ: Այդ ապստամբությունների մասնակիցները հաճախ հանդես էին գալիս տարբեր կրոնական շղթաներով: Հատկապես ապստամբությունները հաճախակի բնույթ էին ստացել 16-րդ դարի երկրորդ կեսին կայսրության զանազան մասերում[88]:

Որքան էլ ծանր էր թուրք աշխատավոր ժողովրդի դրությունը, այնուամենայնիվ միանգամայն սխալ կլիներ այն նույնացնել ոչ-մուսուլման բնակչության վիճակի հետ: Ժամանակակից թուրք պատմաբաններից ոմանք կեղծում են պատմական փաստերը և բանն այնպես ներկայացնում, թե իբր Թուրքիայի ոչ-մուսուլման գյուղացիներն ապրել են «դրախտային» պայմաններում: Պատմաբան Էս'ատ Ուրասը այսպես է ներկայացնում իր ընթերցողներին հայերի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (խոսքը վերաբերում է ոչ միայն 19-րդ դարին, այլև նախորդ դարերին). «Օսմանյան հայերը հանգիստ կյանք էին վարում, զբաղվում էին առևտրով ու արհեստներով և շատ գոհ էին իրենց վիճակից: Զինվորական պարտադիր ծառայությունից ազատված լինելու հետևանքով, աճում էր նրանց ընտանիքի քանակը ու գնալով բարելավվում նրանց նյութական վիճակը»[89]:

Թուրքական պաշտոնական պատմագրության՝ «Թարիխի» մեջ

[86] **А. С. Тверитинова**, К вопросу о крестянстве, *նույն տեղում, էջ 25։*

[87] *Նույն տեղում։*

[88] *Տե՛ս ակադ. Գորդլևսկու հատուկ հոդվածը այդ մասին՝* **В. А. Гордлевский**, Внутреннее положение Османской империи во второй половине XVI века, (УИВ), сб. № 2, 1940, *էջ 87—118։*

[89] **Esat Uras**, Tarihte Ermeniler ve ermeni meselesi, Ankara, 1950, *էջ 152.*

պարզորեն շեշտվում է, որ կառավարման օսմանյան սիստեմն իրը ապահովում էր յուրաքանչյուր հպատակի պատիվն, ունեցվածքն ու անձը[90]:

Անվիճելի փաստ է, որ քրիստոնյա բնակչության դրությունն անհամեմատ ավելի ծանր էր: Այդ այդպես էր ոչ միայն նրա համար, որ, այնուամենայնիվ, գոյություն ուներ տարբերություն հարկերի գանձման մեջ (ջիզիե, մանկահավաք և այլն), այլև այն բանի, որ քրիստոնյաները ենթարկվում էին կրոնական հալածանքների, բռնության, կամայականության ու նրանց մշտապես սպառնում էր ֆիզիկապես ոչնչանալու վտանգը:

Սակայն թուրք ֆեոդալները միշտ չէ, որ կոտորում էին իրենց ոչ-մուսուլման հպատակներին: Ինչպես շատ պատկերավոր ձևով գրում է 17-րդ դարի ֆրանսիացի հեղինակ Միշել Ֆեբուրը «Նրանք (իմա՝ թուրքական ֆեոդալները—Մ. Զ.) համբերում են քրիստոնյաներին ու հրեաներին այն պատճառով, որ նրանցից ավելի մեծ շահ ունեն, քան իրենց հավատակիցներից, ու թույլ են տալիս նրանց ապրել ճիշտ այնպես, ինչպես դա արվում է ոչխարների ու մեղուների նկատմամբ նրանց կաթի ու մեղրի համար»[91]:

Հայ ժողովրդի, ինչպես և Թուրքիայի տիրապետության տակ ընկած այլ ժողովուրդների համար թուրքական ֆեոդալների դարավոր լուծն ունեցավ ամենաաղետալի հետևանքներ:

16—17-րդ դարերի հայկական ու թուրքական աղբյուրները վկայում են գյուղացիական հոծ զանգվածների ծանր դրության, գոյություն ունեցող հարկային սիստեմի անտանելիության, երկրի տնտեսության քայքայման, հպատակների երկրից զանգվածային գաղթերի մասին:

17-րդ դարի հեղինակ Հակոբ Կարնեցին իր «Տեղագիր վերին Հայոց» աշխատության մեջ նկարագրելով հայրենի հողի հարստությունը՝ գյուղատնտեսական մթերքների առատությունը, հակադրում է դրան, մյուս կողմից, իր հարազատ ժողովրդի ծանր վիճակի հետ, մի վիճակ, որը հետևանք էր թուրքական հարկային սիստեմի անտանելիության և թուրք պետական պաշտոնյաների կամայականությանը, նա գրում է. «...Զի ցեղ ու ցեղ և ազգի ազգի սուտ պատճառաւ հարկապահանջութիւնն և կեղեքելն անասելի է և անպատմելի, անողորմ առնուլն ի քրիստոնէից: Զի ինձ այսպէս թուի, թէ Դանիել

[90] „Tarih", *հատոր 3-րդ, էջ 3—4։*

[91] **Michel Febure**, L'état présent de la Turquie, Paris, 1675, *էջ 217։*

վասն սոցա մարգարէացաւ վասն չորրորդ գազանին, թէ ահեղ էր և զարմանալի, ուտէր և զմնացեալսն առ ոտն կոխէր»[92]։

16—17-րդ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանները լի են արցունքով ու հայ ժողովրդի ծանր վիճակի նկարագրությամբ։ Հաճախակի այդ հիշատակարաններում կարելի է հանդիպել այսպիսի տողերի՝ «...ի դառն և ի նուրբ ժամանակիս որ է տառապեալ ազգն քրիստոնէից ի չար հարկապահանջողաց...»[93] կամ թե՝ «...ի դառն և ի վշտաբեր ժամանակիս յորում կամք ի նեղութիւնս ի տառապանս ի ձեռն այլասեռից ազգեաց զի զամենեսեան շարշարեն և նեղեն, տուժեն և տուգանեն, կեղեն և կեղեքեն, և այլ ազգի ազգի վշտաւք տանջեն...»[94] և այլն։

Հայ ժողովրդի վիճակը ծանր էր ոչ միայն թուրք-պարսկական պատերազմների ժամանակ, այլև 1639 թ. արևելյան երկու պետությունների միջև կնքված հաշտության պայմանագրից հետո։

Դժգոհությունն ընդհանուր էր, ինչպես պատերազմական տարիներին արտագրված հիշատակարաններում, այնպես էլ հետո։ Այսպես, 1606 թ. Սարգիս քահանա Հիզանցին իր հիշատակարանում գրել է. «...եւ քանզի եղև աւարտումն սր գրքիս ի դառն և ի նեղ ժամանակիս յորում նեղիմք ի բռնութենէ ւ ի սաստկութենէ այլազգեաց և յանօրինաց՝ զի կայ ի մէջ աշխարհիս բազում նեղութիւն և պատուհաս սով սաստիկ, սուր անխնայ, գերութիւն անողորմ, աւերումն աշխարհաց և քանդումն գիւղօրէից, կործանումն տանց և շարժումն յերկրէ յերկիր և ոչ գտանէին բնաւ հանգիստ։ Զի ի մայրաքաղաքէն Մտամպօլայ մինչև յայս աշխարհս ուրէք շինութիւն ոչ գտանիւր, ոչ ի քաղաք և ոչ ի գիւղ, ոչ ի լերինս և ոչ ի դաշտս...»[95]։ Դրությունն ավելի ծանրացավ ջալալի ապստամբների դեմ սուլթանական կառավարության ձեռք առած կտրուկ միջոցառումների ու հետևաբար Արևմտյան Հայաստանի շատ վայրերի նոր ավերվածության պատճառով։

Որ 1639 թ. խաղաղության հաստատումից հետո էլ էական փոփոխություն չկատարվեցին հայ աշխատավոր լայն զանգվածների ծանր վիճակի մեջ, երևում է, ինչպես մեր մատենագիրներ՝ Առ. Դավրիժեցու ու Գր. Դարանաղցու, այնպես էլ այդ տարիների գրիչների հաղորդած տեղեկություններից։ Այսպես՝ 1642 թ. մի Սաղ-

[92] Հակոբ Կարնեցի, Տեղագիր վերին Հայոց («Մանր ժամանակագրություններ», հատոր Բ, էջ 56)։

[93] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 8380, էջ 267ա։

[94] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 4796, էջ 423բ։

[95] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 4721, էջ 655բ։

մոսարանի հիշատակարանում Կողոնիայից (Ղարահիսար) գրիչ Մանուել Ղարահիսարցին գրում է, որ Սաղմոսարանն արտագրված է «ի նեղ և ի դառն ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ընդ բռամբ ածեալ եղև աշխարհս ընդ չարաշուք և ընդ մարդախողող և ընդ գազանադեմ ազգին նետողաց, զոր ազգի ազգի նեղութեամբ և չարչարանաւք և հարկապահանջութեամբ կեղեքեն և աւերեն զաշխարհս, և ոչ ու[ս]տեք հասանի աւգնութիւն, ոչ յերկնէ և ոչ յերկրէ և ոչ այլ ուստեք»[96]։

Մի անանուն հեղինակ 1646 թվականին գրում է թուրքական փաշաների կեղեքումների մասին.

«Ամենայն ապրանք թուրքացն բռնութեամբ է և անիրաւութեամբ. ուստի փաշայքն պարարտանան կար զօրութեամբ քրիստոնէից և հրէից, իսկ թագաւորն զիրանայ ընչիւք փաշայիցն, զոր օրինակ առուքն լնուն և առատացուցանեն զգետս, իսկ գետքն հուսկ յետոյ իջանեն ի ծովն և կորուսանեն զգալն ևս իւրեանց և զհամբաւ ջրոյն ևս»[97]

16-րդ դարի երկրորդ կեսին, երբ օսմանյան բանակն իր ավարով ու թալանով այլևս չէր ապահովում թուրք պալատականների հարաճուն ու բազմապիսի ծախսերը, սուլթանական կառավարությունը փորձում էր հարկերի ավելացմամբ ինչ-որ ելք գտնել։ Դրա անմիջական հետևանքն էր ժողովրդի ծայր աստիճանի աղքատացումն ու մասսայական արտագաղթը երկրից։ Ահա թե ինչ է գրում 1684 թ. իր հիշատակարանում Ամթեցի Միքայելը, նշելով, որ սր. Գրքի արտագրությունն ավարտել է. «...ի ժամանակս թագաւորութեանն տաճկաց սուլթան Մահմեդի..., որն ...հարկապահանջութիւնս յոլովս... պահանջէր»,—որի հետևանքով,—«...ոմանք գլխովին իսկ անկեալ յաղքատութիւն և բնակութեանց իւրեանց փախուցեալ...»[98]։

16-րդ դարի վերջերին, հայերի վիճակն այնքան ծանր էր թուրքական տիրապետության տակ, որ նրանք, ինչպես արդեն նշվեց, նախագասում էին ղզլբաշների տիրապետությունը՝ որպես չարյաց փոքրագույնի։

Արդ, ինչպիսի՞ հարկեր էին գանձվում Արևմտյան Հայաստանի

[96] Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանի մխիթարեանց ի Վենետիկ, հատ. Ա, Վենետիկ, 1914, էջ 321։

[97] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1496, էջ 309բ, նաև Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 37։

[98] Մագիստրոսի գործերը, № 30, էջ 55—56։

բնակչությունից[99]։ Դրա մոտավոր պատասխանը գտնում ենք 16-րդ դարին վերաբերող օսմանյան կանոնադրություններում։

Այդ կանոնադրությունների զգալի մասը վերաբերում են Թուրքմենական ակ-կոյունլու պետության ականավոր տիրակալ Ուզուն Հասանին։ Վերջինս կանոնադրությունները հրապարակեց ռայաթների հարկերի ու պարհակների ճիշտ ֆիկսացիայի, տեղական ֆեոդալների և պետական պաշտոնյաների հարկահավաքման ժամանակ կամայականությունների ու չարաշահումների վերացման նպատակով։

Ընդհանրապես, Օսմանյան կայսրության մեջ, բոլոր հարկերը բաժանվում էին երկու հիմնական խմբերի՝

1) հարկեր, որոնք հիմնվում էին շարիաթի վրա (rüsüm-i şeriye կամ tekâlif-i şeriye) և 2) հարկեր, որոնք հիմնվում էին սովորույթի վրա (rüsüm-i örfiye կամ tekâlif-i örfiye)։

Առաջին խմբի մեջ մտնում էին հետևյալ հարկերը՝ աշար կամ ուշր (öşür տասնորդ) խարաջը և ջիզիեն։ Այս շարիաթական հարկերի հիման վրա տարբեր ժամանակաշրջաններում ու տարբեր տեղերում նշանակվել ու կիրառվել են բազմաթիվ ու բազմապիսի դանձումներ (համաձայն Թուրք պատմաբանների ուսումնասիրությունների ավելի քան ութսուն տեսակ)։

Սովորութային հարկերը նշանակվում էին սուլթանի հատուկ հրամանով մասնավորապես պատերազմների ժամանակ պետության արտակարգ կարիքները ապահովելու համար։ Սկզբնական շրջանում այս հարկերը ժամանակավոր բնույթ էին կրում, իսկ այնուհետև դառնում են մշտական։

Հայկական նահանգներին վերաբերվող կանոնադրությունների համաձայն այստեղ գոյություն ունեին ֆեոդալական ռենտայի բոլոր երեք ձևերը՝ պարհակային, բնատուրքային և դրամական։ Բայց բոլորից շատ տարածված էր բնատուրքը։

Բնատուրքային ռենտայից, կանոնադրություններում բոլորից հաճախ հանդիպում են հետևյալ տուրքերը՝ ուշրը կամ աշարը, խարաջը, բահրան և սալարիեն։

Աշարը կամ ուշրը Թուրքերի մոտ նշանակում էր պետության կամ ֆեոդալ-կալվածատերի օգտին մուսուլման ռայաթից վերցված բնատուրքը՝ հողագործության արտադրանքի 1/10-րդի, իսկ երբեմն էլ ավելի չափով։ Սակայն Արևմտյան Հայաստանին վերաբերող օսմանյան կանոնադրություններից պարզ կերպով երևում է, որ «ուշր»-ը

[99] Արևելյան Հայաստանում հայ բնակչությունից գանձվող հարկերի մասին տե՛ս Ի. Պ. Պետրուշևսկու աշխատությունը՝ „Очерки"..., էջ 265—272։

վերցրել են ոչ միայն մուսուլման ռայաթներից, այլև ոչ-մուսուլմաններից, տվյալ դեպքում հայերից։ Այսպես, էրզրումի կանոնադրությունում մենք կարդում ենք. «...Հին արևելյան էմիրների ստանձնած պարտավորությունների, շարիաթական վավերագրերի և աշխարհապավեն փադիշահի կարգադրության համաձայն նրանց (այսինքն ոչ-մուսուլմանների—Մ. Զ.) այգիներն ու հողերը գրանցված են տասանորդի (öşür) և սալարիե գանձելու հիման վրա»[100]։

Խարաջ—ոչ-մուսուլման բնակչությունից գանձվող հիմնական հարկերից մեկն է։ 16—17-րդ դարերում այն շարունակում էր մնալ որպես ոչ-մուսուլմաններից գանձվող հողային հիմնական տուրք։

Վավերագրերում «խարաջ» տերմինի տակ երբեմն հասկացվում է «ջիզիե»-ն (ոչ-մուսուլման հպատակներից գանձվող գլխահարկ)։ Վերջին իմաստով հարկի այս տեսակը կոչվում էր «խարաջ»-ի ռուուս» (ռուուս արաբերեն նշանակում է բստ գլխի)։

16—17-րդ դարերում Օսմանյան կայսրության մեջ «խարաջ»-ը երկու տեսակ էր. ա) խարաջ ի մուկասեմե և բ) խարաջ-ի մուվազզաֆ։

Խարաջ-ի մուկասեմեն (մուկասեմե արաբերեն նշանակում է մաս, պրոպորցիա) գանձվում էր ոչ-մուսուլման ռայաթից հողօգտագործման համար տարեկան բերքի 1/10-րդից մինչև 1/2-ի չափով։

Խարաջ-ի մուվազզաֆ (մուվազզաֆ—արաբերեն նշանակում է պաշտոնի համար) գանձվում էր ոչ-մուսուլման ռայաթից նրա ստացած տարեկան բերքից, անկախ այն հանգամանքից, թե նա հող մշակել է թե ոչ[101]։

Նշենք, որ միայն աննշան բացառությամբ հայկական աղբյուրներում «խարաջ» հասկացողության տակ հասկացվում է «ջիզիեն», այսինքն՝ գլխահարկը[102]։

Բահրա.—Բահրայի նշանակում է «մաս», «բաժին»—այսպես էր կոչվում հողային ռենտան, որը վճարում էր գյուղացին կալվածատեր-ֆեոդալին կամ պետությանը տարեկան բերքի 1/5-րդից մինչև 1/3-րդ չափով։

Սալարիե, (կամ սալարլըկ—պարսկերեն سالار բառից է, որը նշանակում է առաջնորդ, հրամանատար, պետ). տարեկան

[100] O. L. Barkan, Kanunlar, էջ 66։

[101] M. Z. Pakalın, Osmanlı tarih deyimleri ve terimleri sözlüğü, c. I, fas. VII, İstanbul, 1949, էջ 734—73

[102] Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. Բ, էջ 270, 381, 384, 418, 420, 483, 517 և այլն։

բերքի մի մասը, որը գանձվում էր գյուղացիությունից պետական պաշտոնյաների, զեկավարների (վեզիրների, բեյլերբեյի և երբեմն էլ հենց իրեն սուլթանի) օգտին։ «Որպես սալարիե,—կարդում ենք մենք էրզրումի կանոնադրությունում,—բերքի մեկ տասներորդ մասից մեկ տասանորդ (öşür) վերցնելուց հետո, յուրաքանչյուր քառասուն քիլեից վերցվում է մեկ քիլե»[103]։

Հատկապես ծանր հարկ էր Արևմտյան Հայաստանի բնակչության համար «ջիզիե»-ն (գլխահարկը)։

Դա ծանր էր ոչ միայն նրա համար, որ գոյություն չուներ հաստատուն նորմա, այլև նրա համար, որ ջիզիեն հնարավորություն էր տալիս բացահայտ կերպով կողոպտել ժողովրդին։ Թուրք պատմաբան Աբդուրրահման Վեֆիկի բառերով ասած՝ «Երբ պարզվեց, որ ոչ-մուսուլմանից ջիզիեի հետ միասին գանձում են մյուրաշիրիե[104], թահսիլդարիե[105], քեֆիլլեմե[106], զուլամ-հակկը[107] և այլ հարկեր, ապա 1246 թ. (1842—43), որպեսզի վերջ տրվի այդ չարիքին, ընդունվեց հատուկ որոշում [պետության կողմից]»[108]։

Գանձվող ջիզիեի գումարը, որպես օրենք եղել է 25 ակչե։ Սակայն ոչ ամենուր և ոչ ամեն ժամանակ պահպանվել է այդ քանակը։ Համաձայն Բիթլիսի կանոնադրության, միևնույն վիլայեթում, մի տեղի հայ բնակչությունից գանձել են 35 ակչե, իսկ մի այլ տեղից՝ 55[109]։

Սակայն Շերեֆ էդդինի տվյալներով 16-րդ դարի կեսերին Բիթ-

---

[103] Քիլեն օսմանյան չափ էր։ Գոյություն ունեին Ստամբուլի և Իբրահիլի քիլեներ։ Ստամբուլյան քիլեն տատանվում էր 18-ից մինչև 20 օկկա, այսինքն միջին 25 կգ (տե՛ս M. Z. Pakalın, Osmanlı tarih deyimleri ve terimleri sözlügü, c. II, İstanbul, 1951, էջ 281։

[104] Մյուրաշիրիե (mübaşiriye) —արաբերեն «մյուրաշիր» բառից է, որը նշանակում է «հսկիչ», «վերակացու»։ Հետևաբար, մյուրաշիրիեն դա այն գումարն է, որը սովորաբար գրվում է մյուրաշիրին, այսինքն վերակացուին։

[105] Թահսիլդարիյե (tahsildâriye—արաբերեն) —թահսիլդարին, այսինքն՝ ջիզիեն հավաքողին տրված գումարն է։

[106] Քեֆիլլեմե (Kefilleme)—ջիզիեն հաճախ գանձվում էր գյուղական համայնքից։ Որպեսզի ապահովվի ջիզիեի գանձումը, տեղական մուխթարները (լիազորները) տալիս իրենց վկայական-գրություններ նրանց, ովքեր այս կամ այն պատճառով ժամանակին չեն կարողացել վճարել հարկերը։ Այդ վկայական-գրության փոխարեն, նրանք հպատակներից վերցնում էին հատուկ գումար «քեֆիլլեմե» անվան տակ։

[107] Զուլամ հակկը (Gulâm hakkı)—զուլամ նշանակում է ծառա։ Խոսքն այստեղ վերաբերում է այն պաշտոնյային, որն ուղարկված էր պետության կողմից։ «Զուլամ հակկը» նշանակում է «ծառայի իրավունքը» կամ «ծառայի [ստանալիք] հարկը»։

[108] M. Z. Pakalın, Osmanlı tarih deyimleri... c. I, İstanbul, 1948, էջ 302։

[109] O. L. Barkan, Kanunlar, էջ 93։

լիսի վիլայեթի պետական հաշվառումից հետո, Բիթլիս քաղաքի 4000 «անհավատ հայերից» գանձել են 70-ական ակչե, որպես ջիզիե[110]։

16-րդ դարի վերջին, պետական գանձարանի կատարած գերածախսերի և ծագած ֆինանսական դեֆիցիտի հետևանքով, պետությունն իր հպատակներից որպես ջիզիե սկսեց գանձել, Կոչիբեյի տվյալներով, մինչև իսկ 240 ակչե[111]։

Այսպիսով, պետական դեֆիցիտի ծածկման կարևորագույն աղբյուրներից մեկը օսմանցի ֆեոդալների համար եղել է հպատակ ոչ-մուսուլմաններից գանձվող ջիզիեի գումարի մշտական ավելացումը։

«Եթե պետությունը դրամի կարիք ունենա,—գրում է 17-րդ դարի Օսմանյան կայսրության ներքին վիճակին քաջատեղյակ հեղինակ էբասկի էլիասը,—ապա հարկի այս տեսակը (իմա՝ ջիզիեն—Մ. Զ.) կրկնապատկվում է։ Եվ այդ կարիքը, որն հաճախ է ծնվում շունի այլ աղբյուր, բացի այն մարդու երևակայությունից, որին հանձնված է հարկի այդ տեսակի գանձումը»[112]։

Ջիզիեի գանձումը երբեք չի թողվել զիմմիներին և թիմարիստներին, այլ մշտապես վճարվել է հատուկ պետական պաշտոնյաներին։ Միայն Արևմտյան Հայաստանի հարավ-արևմտյան մի շարք մասերում, օրինակ, Բիթլիսում, ուր փաստորեն տնօրինում էին քուրդ բեկերը, Էվլիա Չելեբու տվյալներով գանձված ջիզիեի կեսը տրվում էր նրանց։ Այդ հանգամանքը վկայում է նաև 17-րդ դարի մանր ժամանակագիր Վարդան Բաղիշեցին[113]։

Թուրքիայում 16—17-րդ դարերում, փաստորեն, ոչ-մուսուլմանների համար գլխահարկ էր նաև իսպենջը։ Այդ բառի ծագումն ու նշանակությունը ցարդ վերջնականապես չի պարզաբանված։ Ենթադրվում է, որ իսպենջը պարսկերեն բառ է, բաղկացած երկու բառից՝ «իդ», որն հայերեն նշանակում է «ից» և «պենջ»՝ հինգ իմաստով, այսինքն՝ հնգից մեկը։ Ասիայի ու Եվրոպայի նվաճման ժամանակ, գերիներից թուրքերը վերցնում էին հնգից մեկը տարբեր ծառայությունների (իսկ հետագայում օսմանյան կանոնավոր բանակի շարքերը լրացնելու) նպատակով, յուրաքանչյուր գերուն գնահատելով 125 ակչե, վերցնում էին նրանց «արժեքի» մեկ

---

[110] „Chérêf-nâmeh", հատ. II, մաս ա, էջ 290—291։

[111] В. Д. Смирнов Кочибей Гёмюрджинский..., էջ 142—143։

[112] Ebasci Elias, Etat actuel de l'empire ottoman, tome I, Paris, 1792, էջ 232—233։

[113] «Մանր ժամանակագրություններ», հատ. Բ, էջ 396։

հինգերորդը, որպես փրկագին[114]։ Դա կոչվում էր պենջիկ կամ խումս։ Ենթադրվում է, որ պենջիկն ու իսպենջը միևնույն իմաստն ունեն։ Ուրեմն իսպենջը գանձվում էր հպատակ ոչ-մուսուլմաններից դիտելով նրանց, որպես թուրքական ֆեոդալների մշտական ստրուկների։

Վերջերս հայտնի արևելագետ Պաուլ Վիտտեկը իր մի հոդվածում գրել է, որ «իսպենջ»-ն ու «պենջիկը» տարբեր հասկացողություններ են, և որ «պենջիկը» հավանաբար սլավոնական ծագում ունի։ Իր այս տեսակետը, նա հիմնավորում է մեջ բերելով մի կանոնադրություն, ուր ասված է, որ պենջիկ բառը վերցվել է «անհավատների լեզվից»[115]։

Այստեղից արվում է այն եզրակացությունը, որ «իսպենջը» հողօգտագործման համար գանձված հարկն է։ Թուրք պատմաբան Օ. Լ. Բարկանը իր հերթին պնդում է, որ իսպենջը նույն ինքը ռեսմ-ի չիֆթն[116] է, որը գանձվում էր մուսուլման ռայաթներից։ «Մենք կարող ենք ասել,—գրում է նա,—որ սա (իմա՝ իսպենջը—Մ. Զ.) ռեսմ-ի չիֆթն է, կամ նրա տարատեսակը, որը գանձվում էր հարկատու յուրաքանչյուր հասուն ոչ-մուսուլման տղամարդուց»[117]։

Բարկանի հայտնած այս կարծիքը ճիշտ կարող է լինել, որովհետև Էրզրումի կանոնադրությունում պարզորեն նշված է հետևյալը՝ «Վերոհիշյալ լիվայի (իմա՝ Էրզրումի—Մ. Զ.) անհավատներից յուրաքանչյուր հարկատու իր խարաջի վճարումից հետո չիֆթի հարկի փոխարեն իր սեփհուն պիտի վճարի քսանհինգ ակչե իսպենջ»[118]։

Այնուամենայնիվ, իսպենջը փաստորեն իրենից ներկայացնում էր ոչ այլ ինչ, եթե ոչ գլխահարկ, որովհետև իսպենջը գանձվում էր բոլոր հպատակ ոչ-մուսուլմաններից «անկախ նրանից, թե նրանք հողը մշակում էին, թե ոչ»[119]։ «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ

[114] Aşikpaşazade, Tevarih-i Al-i Osman, Leipzig, 1929, էջ 50, Oruc Adil, Tevarih-i Al-i Osman, էջ 21—22։

[115] Paul Wittek, Devshirme and sharia, Bulletin of the school of Oriental and African studies university of London, vol. XVII, part II, London, 1955, էջ 272։

[116] Ռեսմ-չիֆթ (resm-i çift) —չիֆթլիկն օգտագործելու համար գանձված հարկի անունն է, որը, սովորաբար գանձվում էր մուսուլման գյուղացիներից։ Չիֆթլիկը մի հողակտոր էր, որը կարելի էր մշակել մի զույգ եզան օգնությամբ։ «Չիֆթ» պարսկերեն նշանակում է «զույգ», այստեղից էլ չիֆթլիկ բառը։

[117] O. L. Barkan, Çiftlik (Islam ansiklopedisi), c. II, Istanbul, 1945, էջ 393։

[118] O. L. Barkan, Kanunlar, էջ 65։

[119] M. Z. Pakalın, Osmanlı tarih deyimleri..., c. I, Istanbul, 1951, էջ 88։

«դաֆթար»-ում մատնանշված բոլոր տեսակի հարկերի մեջ իսպենջը առաջնակարգ տեղ է գրավում։

Մշտական պատերազմների հետևանքով արտակարգ կարիքների բավարարման համար, 16—17-րդ դարերում Օսմանյան կայսրության մեջ խիստ տարածված էին հարկերի մի շարք այլ տեսակներ, որոնք հիմնված էին սովորույթի վրա (tekâlif-i örfiye), դրանք են՝ ավարիզը, սուրսատը, իմդադի սեֆերիեն, ալաֆեն և ուլուֆեն և այլն, ինչպես նաև բազմապիսի պարհակները։

Ավարիզ—արաբերեն «արիզե» բառի հոգնակի ձևն է, որ նշանակում է «պատահական [հասույթներ]»։ Այս տերմինի տակ հասկացվում էր պետության կողմից գյուղացիների վրա նշանակված ամեն տեսակի տուրքեր ու պարհակային աշխատանքներ։ Ավարիզը գանձվում էր յուրաքանչյուր չորս-հինգ տարին մեկ անգամ, իսկ երբեմն էլ ավելի հաճախ յուրաքանչյուր ծխից կամ ընտանիքից։

Հայկական աղբյուրներում բազմաթիվ վկայությունների կարելի է հանդիպել, երբ թուրքական ֆեոդալները բռնի աշխատանքի (բերդաշինություն, ճանապարհաշինություն և այլն) են լծել Արևմտյան Հայաստանի հայ գյուղացիությանը[120]։

Սուրսաթ—թուրքերեն բառ է, որն, ըստ երևույթին, նշանակում է «պարենամթերքի պարտադիր մատակարարում»։

Սրա մասին Կոչիբեյը տալիս է հետևյալ բացատրությունը. «Այս հարկը,—գրում է նա,—դրվում է ռայաթների վրա պատերազմի ժամանակ։ Սուրսաթը տրվում է ցորենի, գարու այլուրի, փայտի ձևով, այն չափով, ինչ չափով որ նախատեսված է. և ռայաթները իրենք բերում դրանք նախօրոք պետության կողմից նշանակված վայրերն։ Մինչև որ անհրաժեշտ քանակը հավաքված չլինի, հավաքը կատարվում է գիշեր ու ցերեկ, գանձարանը դա չի վերցնում անվերադարձ, այլ վճարում է դրամ։ Դրանց (այսինքն՝ պարենամթերքի—Մ. Զ.) արժեքը վճարվում է փադիշահի գանձարանից, և այսպիսով, սեփականության իրավունքը չի խախտվում։ Սակայն, եթե պատերազմ չկա, ապա ռայաթին սուրսաթ նշանակել չի կարելի, օրենք չկա»[121]։

Այստեղ խոսվում է հատուցման մասին, որը պիտի վճարեին պետական պաշտոնյաները վերցրած ապրանքի համար, սակայն իրականության մեջ վերցված «ապրանքի արժեքը չէր վճարվում»[122]։

[120] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 6272, էջ 250ա, էջ 466 և այլն։

[121] А. С. Тверитинова, второй трактат Кочибея (УЗИВ), 1943, том VI, էջ 245։

[122] M. Z. Pakalın, Osmanlı tarih deyimleri..., c. III, Istanbul, 1955, s. 300.

Պարենամթերքի բռնի հավաքման մասին բնակչությունից՝ օսմանյան արշավանքների ժամանակ, շատ արժեքավոր տեղեկություններ դեռևս 15-րդ դարում թողել է իտալացի Անջիոլելլոն։ Ահա թե ինչ է գրել նա. «Եթե պատահի, որ անցնելով սահմանը, բանակը մտնի թշնամու երկիրը ու պարենի կարիք զգացվի,—ասում է նա,—ապա արփաէմինները (այսպես էին կոչվում պարեն հավաքող պաշտոնյաները—Մ. Զ.) պարտավոր են իրենց տիրակալին հայտնել այն վայրերը, ուր առատ հաց կա ու հրամայել, որ յուրաքանչյուր քաղաք հանձնի որոշված քանակի հաց ու գարի,—անհնազանդության դեպքում,—համայնքը կենթարկվի պատժի ու ոչնչացման»[123]։

Ալաֆ կամ ռեսմ-ի ալաֆ (ալաֆի հարկ)—«ֆուրաժ», «կեր» ֆեոդալական աշխարհազորի կամ ռազմիկների բեռնատար կենդանիների համար, նշանակում է նաև «պարենամթերք», «պարենապաշար» ռազմիկների համար, որ տրվում էր իշխանություններին՝ գյուղացիների կողմից վերջինների կարգադրությամբ ու հրամանով։

Պատերազմների ժամանակ թուրքական ղեկավարող շրջանները հպատակներից գանձում էին ևս մի հարկ «իմդադ-ի սեֆերիե» (imdâd-i seferiye) անունով, այսպես կոչված «Օգնություն արշավանքի կարիքների համար»[124]։ Պատերազմի դեպքում վերցնում էին նաև հետևյալ հարկերը՝ «իմդադ-ի ջիհադիե» (այսինքն՝ «Օգնություն սրբազան պատերազմի համար»), «բեդել-ի նյուզուլ» («իջևանի փոխարեն») և այլն։ Այս հարկերի չափը ճիշտ ու որոշակի չէր սահմանված, դա կախված էր պետական պաշտոնյաների և տեղական ֆեոդալների խղճից։

Կանոնագրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արևմտյան Հայաստանում 16—17-րդ դարերում տարածված երևույթ է եղել պարհակային աշխատանքը ֆեոդալի օգտին։ Այդ փաստաթղթերում հաճախակի հիշատակվում է ֆեոդալի օգտին կատարվող պարհակային աշխատանքը «ռեսմ-ի ըրգադիյե» անունով։ Այսպես էր կոչվում գյուղացու պարհակային աշխատանքը տարվա ընթացքում մի քանի օրվա սահմաններում։

Այդ միևնույն հարկը, Էրզանի քաղաքի կանոնագրքում, հայտնի է «ռեսմ-ի մուշակ» (resm-i muşak) անունով։ Մուշակը, ըստ երևույթին, հայերեն «մշակ» բառն է գյուղացի իմաստով, որովհետև այդ նույն կանոնագրքում ասված է, որ այս հարկը «գանձվել է հայերից» և որ «մուսուլմաններից դա չի գանձվել»[125]։

[123] Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, էջ 261։

[124] «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, էջ 487։

[125] O. L. Barkan, Kanunlar, էջ 133։

«Ռեսմ-ի մուշակը» իրենից ներկայացնում էր կամ տարեկան 6 օրյա ձրի աշխատանք ֆեոդալի օգտին և կամ թե դրա փոխհատուցումը դրամով տարեկան 24 ակչեի սահմաններում[126]։

Ֆեոդալական ռենտայի դրամական ձևերից հայկական շրջաններին վերաբերող կանոնագրքերում առավելապես հանդիպում են հետևյալ հարկերը, որոնք ոչ բոլոր դեպքերում և ոչ ամենուր միատեսակ էին գանձվում՝ ռեսմ-ի բաղ (հարկ այգիների համար), ռեսմ-ի բոստան (հարկ բանջարանոցների համար), ռեսմ-ի կովան, ռեսմ-ի կուվվերե (հարկ մեղվաբուծության համար), ռեսմ-ի աղնեմ (հարկ ոչխարաբուծության համար), ռեսմ-ի արուս (հարկ ամուսնության համար) և այլն։

Կանոնագրքերում զգալի տեղ են հատկացված տեղական կալվածատեր-ֆեոդալի և կամ տեղական կառավարչի օգտին, գյուղացիների պարտադիր «նվիրատվությունների» թվարկմանը՝ զանազան մուսուլմանական տոների առթիվ, այնպիսի հարկեր, ինչպիսիք են՝ «բայրամչեք»-ը (տոնականը), «սելամլըկը» և այլն։ Վերջինն իրենից ներկայացնում էր մի հարկ, երբ գյուղացին պարտադիր կարգով նվերներ էր ներկայացնում նոր նշանակված ֆեոդալին, կամ մի որևէ բարձրաստիճան պետական պաշտոնյային։

Կանոնագրքերում հիշատակվում են նաև հարկեր, որոնք գանձվում էին կալվածատեր—ֆեոդալների կամ պետական պաշտոնյաների կողմից «բիդ'ատներ» ընդհանուր անունով։ Բիդ'ատը արաբերեն բառ է, որը նշանակում է «նորամուծություն», այսինքն՝ շարիաթի սկզբունքներին չհամապատասխանող և նրան հակասող։

Բացի այդ, եկամտի լրացուցիչ աղբյուրներ որոնելու ճանապարհին ֆեոդալները հաճախակի տուգանում էին գյուղացիներին, վերցնելով նրանցից «բադ-ի հավա» կոչված տուրքը։

Արևմտյան և Հարավային Հայաստանի քաղաքները (Վան, Էրզրում, Կամախ, Երզնկա և այլն) 16—17-րդ դարերում հանդիսանում էին առևտրա-արհեստագործական կենտրոններ, և տարանցիկ առևտրի գլխավոր կետեր։ Կանոնագրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետությունը հարկեր էր գանձում փաստորեն բոլոր ապրանքներից, ինչպես տեղում գնված ու ծախվածներից, այնպես էլ տարանցիկ առևտրից։

Այդ հարկերը կոչվում էին «բաջ», «բաջի բազար», «թամղա-ի սիյահ», «բաջի բուղուրգ», «ինթիսաբ ռեսմի» և այլն։

[126] Նույն տեղում։

Թուրք պատմաբան Բարկանը տալիս է հետևյալ բացատրությունը այդ տերմինների մասին, որոնց հետ չի կարելի չհամաձայնվել փաստաթղթերի հետ մանրամասն ծանոթանալուց հետո.

«Բաջ բառը օգտագործվել է հարկի իմաստով, բաջ-ի թամղա նշանակում է կնիքի հարկ։ Դա յուրաքանչյուր ծախված ու կնքված ապրանքի, մշակված կտորի, քաղաքում մորթված կենդանու համար գանձվող հարկն է։ Այդ հարկը մեծ մասամբ կոչվում էր նաև «թամղա-ի սիյահ» (սև կնիք)։ Տարանցիկ առևտրի համար գանձված հարկը կոչվել է բաջ-ի բուղուրդ, այսինքն մեծ բաջ։ Վաճառման ժամանակ գանձված հատուկ հարկը կոչվել է բաջ-ի թամղա. թամղան այստեղ օգտագործվել է «բաջ», այսինքն ընդհանրապես հարկ իմաստով»[127]։

***

Հայ ժողովրդի ստորացված վիճակն արտահայտվում էր նախ և առաջ նրա իրավական դրության և ոչ այնքան հարկային սիստեմի մեջ։

Չի կարելի այստեղ մոռանալ Կ. Մարքսի դիտողությունն այն մասին, որ միայն Թուրքը պատկանում է իշխող ազգության ու կրոնին, միայն նա իրավունք ունի զենք կրել, և որ ամենաբարձր դիրք ունեցող քրիստոնյան ամենացածր աստիճանի կանգնած մուսուլմանին հանդիպելիս պիտի նրան իր ճանապարհը զիջի[128]։

«Ամենացածր և բարբարոսական ստադիայում գտնվող Թուրքական ֆեոդալիզմի» պայմաններում բացակայում էր կյանքի ու գույքի նկատմամբ որևէ ապահովություն։ Զուրկ լինելով մարդկային ամենատարրական իրավունքներից, կրոնական կույր մոլեռանդության պայմաններում, հայ աշխատավորությունը ենթարկվում էր ամենադաժան հալածանքների ու զրկանքների։

17-րդ դարի սկզբում Արևմտյան Հայաստանի գավառներում ճանապարհորդած Սիմեոն Լեհացու վկայությամբ, Թուրքերն ամեն կերպ աշխատել են վիրավորել հպատակ քրիստոնյաների ինքնասիրությունը, ստորացնել նրանց[129]։ Ահա իր ուղեգրության մեջ նա այսպես է նկարագրում հայ ժողովրդի տառապանքը.

---

[127] Islâm ansiklopedisi, c. II, Istanbul, 1952, էջ 189։

[128] **К. Маркс**, Национальности в Турции, К. Маркс, Ф. Энгельс, том IX, էջ 374։

[129] «Հանդէս ամսօրեայ», 1934, էջ 198։

«Եւ յայնմ ամի (1613 թ.), յորում ես էի Թօխաթ, ել հրաման շար, թե եկեղեցիս և վանորայս մի վառեսցեն մոմեղեն ճրագ, այլ եղէ, և թէ ուրեք գտանէին՝ տուգանէին։ Եւ այսպիսի տառապանք և նեղութիւն էին ի ձեռս Տաճկաց, վասն որոյ յոյժ աղքատ և չքաւոր են, զի միշտ զրկեն, զզվին, տուգանեն, զրպարտեն և առաւել հարկս պահանջեն. և թէ տասն որդի ունիցի ոք, ամէնէն խարամ առնուն. և թէ հեռանայ, դարձեալ առնուն։ Եւ Ստամպօլայ գաւառօք ձի, ջորի հեծնուն. և անդի Սեաստ մինչ յԱմիթ էշ և ուղտ. իսկ Սեաստուին տան էշ ոչ տեկմա չերեի, ամենն եզ կու բանեցնեն, աղ և բեռն բառնան, այլ և հեծնան»[130]։

Սիմեոն Լեհացին խոսում է նաև Հայաստանում ենիչերիների կատարած համատարած բռնությունների մասին.

«Եւ այնպէս շար էին եանչարիքն, որ քրիստոնէից չի տային ձի հեծնալ, ոչ ջորի, ոչ լաւ շուխայ ագանիլ, ոչ այդի, ոչ տուն մեծ, այլ զամենայն յափշտակէին ի ձեռաց։ Նաև առաջնորդաց չտային քննել հաս-չհաս կամ օրէնք պահել. զի թէ ոք կամէր կին առնուլ և շհասութիք լինէր, չերթային առ հովիւ կամ առաջնորդ, այլ [երթային առ] ենչարի մի և տային կաշառ, և նա դայր իրիցուն թօփուղով պսակ տայր առնել. և նա ակամայ պիտէր խօսիցն չելնէր, ապա թէ ոչ բազում շարիս անցուցանէր ի գլուխն և վնաս և տանջանք ձգէր Թուրքաց աշխարհն ամենայն այդպէս են»[131]։

Այդպիսի վկայությունն կարելի է շատ բերել։

Թուրքական ղեկավարող շրջանները ցանկանում էին, որ քրիստոնյա հպատակի արտաքինը արդեն խոսեր նրա ստորացուցիչ վիճակի մասին։ Օրինակ՝ նրանց արգելված էր հագնվել սև գույնի չալմա (գդակ)։ Արգելված էր նրանց հագնվել թանկագին կերպասեղենից զգեստներ[132]։ Արևմտյան Հայաստանի քաղաքներում քրիստոնյաներին թույլ էր տրվում ապրել միայն հատուկ թաղամասերում։

Քրիստոնյա-հպատակը իրավունք չուներ վկա լինելու դատարանում, ուր քննարկվում էր մուսուլմանի գործը։

Հայերի կրոնական հալածանքները նվաճողների կողմից հատկապես անտանելի էին դառնում Թուրք-պարսկական պատերազմների ժամանակ։ Հալածանքները երբեմն հասնում էին ծայրահեղությունների, և տարբեր կեղծ ու անհիմն մեղադրանքների հիման վրա

---

[130] Նույն տեղում, էջ 159։

[131] Հանդէս ամսօրեայ, էջ 158։ Տե՛ս նաև՝ Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 37 և հետ.։

[132] «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, էջ 422։

սպանվում էին բազմաթիվ անմեղ մարդիկ։ Այդ մասին պերճախոս վկայում են Հ. Աճառյանի և Հ. Մանանդյանի դեռևս 1912 թ. Վենետիկում հրապարակած՝ «Հայոց նոր վկաները» փաստաթղթերի ժողովածուն[133]։

Սպանություններն ու բազմապիսի հալածանքներն անմեղ մարդկանց նկատմամբ հատկապես հաճախակի բնույթ ընդունեցին 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին։ Առ. Դավրիժեցին իր «Պատմության» մեջ բերում է մի շարք այդպիսի օրինակներ[134]։

Հայ բնակչության համար հատկապես մեծ շարիք էին դառնում հավատափոխ հայերը, որոնք օգտագործելով մուսուլմանական դատարանը կողոպտում էին իրենց ազգակիցներին, և ամեն կերպ նեղում ու չարչարում նրանց։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Առ. Դավրիժեցին. «Եւ ոմանք ի նորաժամուուցն զաւակացն քրիստոնէից թողեալ զլուսապայծառ հաւատս քրիստոնեութեան դարձան և տակաւին ևս դառնան յանօրէն օրէնս Մահմետի վասն թերահաւատութեան և զողութեան և բողոքեան իրեանց. և միաբանեալ ընդ պարսից ի նեղ արկանեն զքրիստոնեայս բազում և սէր սէր հնարիւք։ Եւ մանաւանդ այնու զի տան կաշառս մահմետականաց՝ և կացուցանեն սուտ վկայս և քարշեն քրիստոնեայս առ դատաւորս մահմետականս ի դատաստան, և պահանջեն ի քրիստոնէից զոր ինչ և հնարել կային։ Յոմանց թէ պարտք պարտիս ինձ, հատու զպարտքսն քո, և յոմանց թէ ազգական քո եմ, ամենայն ինչ և ստացուածք քո ինձ հասանի՝ տուր ինձ։ Եւ այլ զրպարտութիւն զոր ինչ կարին հնարել։ Եւ դատաւորքն ըստ անօրէն օրինաց իրեանց իրաւացուցանեն զրանս ուրացողացն, թէ որովհետև նա եկեալ է յօրէնս Մահմետի, նմա հասանին ամենայն ինչք իւրոց ազգականաց։ Եւ այսպէս զրկեալ զողորմելի քրիստոնեայս յափշտակեալ զամենայն ինչս և տան ուրացողացն այնոցիկ»[135]։

«Այդ մաքիավելական հնարանքը,—գրում է միսիոներ Ռ. ԴյուՄանը,—գայթակղեցնում է շատերին կատարելու բազմաթիվ սխալներ,—որովհետև,—քրիստոնյաներից որևէ մեկը, եթե ընդունի իսլամի հավատը, ապա նույն ազգականների բոլոր ունեցվածքն անցնում է նրա ամբողջական տնօրինության տակ»[136]։

---

133 Հ. Աճառյան և Հ. Մանանդյան, Հայոց նոր վկաները, Վենետիկ, 1912, հատ. Բ, էջ 353, 517, 373։

134 Առ. Դավրիժեցի, էջ 405—436։

135 Նույն տեղում, էջ 49։

136 Raphael du Mans, Estat de la Perse en 1660, publié et annoté par Ch. Schéfer, Paris, 1890, էջ 14։

Այստեղ խոսքը Արևելյան Հայաստանի մասին է։ Սակայն ավելի վատթար էր վիճակը Արևմտյան Հայաստանում։ Հայաստանի երկու հատվածներում էլ նվաճողները հայ բնակչության նկատմամբ վարում էին ասիմիլյացիայի քաղաքականություն։ Այդ քաղաքականությունը հատկապես դրսևորվեց «դեվշիրմե»-ի (մանկահավաքի) պրակտիկայի մեջ (երեխաների բռնի հավաքում օսմանյան կանոնավոր բանակի շարքերը լրացնելու նպատակով)[137]։

«Դեվշիրմե»-ն ինքնին օրինականացված բռնություն էր։ «Դեվշիրմե»-ի փաստը Թուրքիայում ակնառու կերպով ցույց է տալիս նվաճված երկրների բնակչության իրավազուրկ ստրկական վիճակը։

Որ «դեվշիրմե»-ն հետապնդում էր հպատակ ժողովուրդների միաձուլում, վկայում են թուրքական աղբյուրների տվյալները։ Ալա-էդդինը, սուլթան Օրխանի եղբայրը, որին թուրքական աղբյուրները վերագրում են «դեվշիրմե»-ի հղացման գաղափարը, խորհուրդ էր տալիս իր սուլթան եղբորը՝ ասելով՝ «Պարտվածները հաղթողների գերիներն են. նրանց (հաղթողներին—Մ. Զ.) են պատկանում նրանց (պարտվածների—Մ. Զ.) ինչքերը, կանայք ու զավակները, իբրև օրինավոր ստացված։ Եթե երեխաները բռնի մահմեդականացվեն ու իբրև մարտիկներ պետական ծառայության մեջ առնվեն, կշահեն իրենց թե ժամանակավոր և թե հավիտենական փրկությունը»[138]։

Ենիչերական կազմակերպության հիմնումը սուլթանական կառավարության կողմից դիտվում էր նախ և առաջ որպես ռազմական ուժի՝ ինչպես սոցիալական, այնպես էլ ազգային-ազատագրական շարժումները ճնշելու համար։

Հայկական աղբյուրներում մանկահավաքի սկիզբը նշվում է 1519 թվականը։ Անանուն Սեբաստացու ժամանակագրության մեջ կարդում ենք՝ «Ի թուին ՋԿԸ (1519) բարկութիւնն Աստուծոյ սաստկացաւ և սուլթան Սելիմն տղայ ժողովեց ի քրիստոնէից»[139]։ Հ. Ն. Ակինյանը սխալվում է, իհարկե, երբ գրում է. «Հայ պատմագիրներու և հիշատակագիրներու քով առաջին անգամ մը կը հիշվի մանկաժողովը 1531 թվականին»[140]։

---

137 Այս մասին տե՛ս մեր հոդվածը՝ «Դեվշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների», Պատմա-բանասիրական հանդես, 1959, № 2—3, էջ 247—256։

138 J. Hammer, Histoire de l'empire ottoman, հատ. I, էջ 120—121։

139 Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. Ա, Երևան, 1951, էջ 169։

140 Ն. Ակինյան, Մաղաքիա Դերջանցի, տաղասաց. շինարար և բարեգործ-«Հանդէս ամսօրեայ», 1952, № 11—12, էջ 591։

Սակայն մենք փաստ ունենք և այն մասին, որ հայերից մանկահավաք կատարվել է դեռևս 1464 թվականին՝ Անատոլիայի շրջաններում։ Այդ մասին մի ձեռագրի հիշատակարանում ասված է հետևյալը։

«...Իսկ անաւրէն արքայն տաճկաց ժողովեաց զքրիստոնէից մանկունսն Ի երեր Ըստամբոլ. իսկ եպիսկոպոսն եկեալ ի հետ մանկանցն և երեր զթուղթ ազատութեան հայոց, իսկ անօրէն արքայն ոչինչ համարեցաւ զթուղթն»[141]։

Ըստ մանր ժամանակագիրների տվյալների, հայկական նահանգներում մանկահավաքներ կատարվել են նաև հետագայում 1531, 1536, 1543, 1547, 1550, 1590 և 1622 թվականներին։

Ինչպե՞ս էին կատարվում «դեվշիրմե»-ները։ Այս հարցին հիմնականում պատասխանում են սուլթանական հրովարտակներն ու հյուքմները (hüküm—վճիռ, հրաման), որոնց Ստամբուլի արխիվներից հավաքել և 1943 թ. հրատարակել է պրոֆ. Ի. Հ. Ուզունչարշըլին, որպես հավելված իր „Osmanlı devleti teşkilâtından kapukula ocakları“ աշխատության։

Մանկահավաքի պատկերը ավելի պարզ է դառնում, երբ մենք թերթում ենք Թադևոս Սեբաստացու «Ողբ ի վերայ մանկանց որ գերի տարան յԸստամպօլ» աշխատությունը[142]։

Ըստ սուլթանական հրովարտակների, հյուքմերի, յուրաքանչյուր երկու-երեք կամ հինգ տարին մեկ անգամ 8—20 տարեկան երեխաներից ու պատանիներից ֆիզիկապես «ամենաուժեղներին» ու գեղեցիկներին ընտրում ու հավաքում էին ենիչերիության համար։

Մանկահավաքի պաշտոնակատարը իրեն հանձնարարված բոլոր գավառները շրջում էր անձամբ և ընտրում էր 8—20 տարեկան երեխաներին ու պատանիներին՝ 40 տնից մի հոգի ու կարդադրում հավաքել նախօրոք նշանակված վայրը։ Չէին վերցնում թուրքերեն իմացող, Ստամբուլ այցելած ու աշքաբաց պատանիներին ու ամուսնացածներին։

Երեխաներին ծնողներից բաժանելու պատկերը ներկայացնում է մի կատարյալ ողբերգություն։ Ահա Թադեոս Սեբաստացու կողմից նկարագրված մի այդպիսի ցնցող պատկեր.

Ողորմագին դիմօք արտասուէին
Ծնողքն և ազգականքն և եղբարք նոցին
Մինչ զի զամենեսեան ի յոգր շարժէին
Զոր ոչ կարէ պատմել լեզու մարդկային։

Սեազգեստ լինէին քուրձ զգենուէին
Մոխրաթաւալ անձամբ աղաղակէին
Տարակուսեալ հոգով ի տուն նստէին
Հանգուցեալ մեռելոցն երանի տային.

Յորժամ բաժանեն զնոսա ի ծնողաց
Անդ եղև աղաղակ մեծ կոծումն և լաց
Որպէս որ բաժանեն, զգառն ի մաքեաց
Եւ եղև մեծ աղետ տարակուսանաց[143]։

Մանկահավաքի ժամանակ թուրք պաշտոնյաների դաժանությունները այնքան խիստ էին, որ հայերին կարեկցում էին նույնիսկ հարևան թուրքերը։ Այդ մասին Սեբաստացու ողբում ասված է հետևյալը.

«...Եւ զարտասուսս ասեմ տղայոց անմեղաց
Յորժամ որոշեցին զնոսա ի ծնողաց.
Պաշարեցին զնոսա նման գազանաց
Քրիստոնեա այլ ազգի շարժեցին ի լաց[144]։

Այս տողերը պարզ կերպով վկայում են, որ մանկահավաքը կատարվում էր բռնի կերպով։ Հակառակ աղբյուրների ուղղակի ցուցմունքներին թուրք պատմաբաններից ոմանք ձգտում են ցույց տալ, որ իբր թե մանկահավաքը կատարվում էր կամավոր սկզբունքներով։ Այսպես, պատմաբան Ջևվադ բեյը գրում է. «Սկզբում քահանաների գրգռումների հետևանքով դժգոհություններ էին լինում քրիստոնյաների մեջ, որոնք մտնում էին զինվորական ծառայության, բայց հետագայում, երբ իմացվեց, որ զինվորական ծառայության մեջ մտնողները առաջ էին քաշվում բարձր պաշտոնների և երբ համոզվեցին, որ կառավարությունը ոչ մի տարբերություն չէր դնում քրիստոնյայի և մուսուլմանի միջև, յուրաքանչյուրն շտապեց

---

141 Լ. Ս. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 302։

142 Ն. Ակինյան, Մաղաքիա Դերջանցի..., «Հանդէս ամսօրեայ», նույն տեղում, էջ 592—595։

143 Նույն տեղում, էջ 593։

144 Նույն տեղում, էջ 594։

իր որդուն հանձնել զինվորական ծառայության՝ առանց սպասելու մանկահավաքին»[145]։

Ի հերքումն այս դրույթի, Անանուն Սեբաստացու ժամանակագրության մեջ կարդում ենք հետևյալը.

«Ի թին ՋՁ (1531) տղայ ժողովեցին ի քրիստոնէից ահ և փախ, լաց և աղաղակ և խեղճ բաներ շատ եղև»[146]։

Մ. Օրմանյանը իր «Ազգապատում» աշխատության մեջ մանկահավաքի բռնի լինելու մասին գրում է.

«Իսկ տղաք բռնի կառնվեին, ուր որ կգտնվեին, տուներ ալ կոխելով դուրս կհանվեին, և ուր ընդդիմություն տեղի ունենար, զբնաւ զստութեամբ, կոտորածով և ավերածով կընկճվեին։ Մանկաժողովը ավելի ասիական գավառներու մեջ կկայացվեր (sic!) և քրիստոնյա տարրերուն մեջ ավելի հարստահարվողը հայը կըլլար»[147]։

Բռնություններով ու կոպիտ կամայականություններով լի էր 1543 թվականին հայկական գավառներում կատարված մանկաժողովը, որի մասին Մ. Չամչյանը իր «Հայոց պատմության» մեջ գրում է.

«Յետ բանի մը ամաց դարձեալ եղև այսպիսի մանկաժողով, և որք վերակացուք էին արար գործոց՝ բազում աղետալի գործ գործէին ընդդէմ կամաց թագաւորաց խորտակէին զտունս և կողոպտէին. ուրէք-ուրէք այրէին և զեկեղեցիս. որպէս յԵւդոկիա (Թոխատ) և տան այրելն և քակելն զութն եկեղեցիս միանգամայն ի միում աւուր, յապրիլի 9, ի թուիս Հայոց ՋՂԲ (1543)»[148]։

Եվ ահա այս դժոխային դրությունն է պատճառը, որ Մաղաքիա Դերջանցին երկրորդ անգամ (առաջին անգամ 1531 թ.) 1543 թվականին մեկնում է Պոլիս՝ Կամախի, Դերջանի և Բաբերդի (Բայբուրդի) գավառներում մանկահավաքը խափանելու նպատակով։

Ինչպես երևում է, Դերջանցուն Պոլսում հաջողվում է սուլթանից գրություն ստանալ ու խափանել տալ մանկաժողովը վերոհիշյալ գավառներում։

---

145 Djevad bey. Etat militaire ottoman depuis la fondation de l'empire jusqûà nosjours, Paris. 1882, էջ 82։ Ժամանակակից թուրք պատմաբաններից Մ. Հիլմին ուշագրավ հայտարարում է, որ իբր «Մշտական բանակը կամավոր լինելով(gönüllü olub) քրիստոնյա երեխաներից մանկահավաքի ձևով էր վերցվում» (տե՛ս M. Hilmi, Kanuni Süleymanın 1533—1535 Bagdad seferi, Istanbul, 1933, էջ 14։

146 Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. Ա, էջ 169—170։

147 Մատաթիա արք. Օրմանյան, Ազգապատում, հատ. 1, էջ 2236։

148 Մ. Չամչյան, Պատմություն հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 513։

Սակայն, ըստ Գր. Դարանաղցու Մ. Դերջանցին հանձն է առնում մանկահավաքի փոխարեն հատուկ հարկ տալ սուլթանական կառավարությանը «օղլանջի ստակ» անվան տակ։ Այդ մասին Դարանաղցին գրում է.

«Եւ այլ ասեն՝ թէ տղայժողովն, որ եղև ի սուլթան Սէլիմի աւուրսն, նա՛ գնաց վարդապետն ի յԲստամբոլ, այնքան տքնութիւն արար ի դրունս արքային և ժուութիւն արար, մեծ ստիպով խնդրեաց տեսանել զերեսս արքային, մինչ ծանուցին թագաւորին և նա կոչեաց առ ինքն և եհարց ցվարդապետն. Զի՞նչ խնդրես... ասէ վարդապետն. եթէ գտի շնորհս առաջի քո, նա՛ կամէ զՀարդուլումի (Կարնոյ) տղայ ժողովելն ինձ օժիտ այնես և ի տեղի գին տղայոցն ստակաւ հարկս դնես։ Եւ հաճոյ թուեցաւ թագաւորին, հրամայեաց այնպէս լինել, որ կուգայր տղայոց ժողովն մինչ ի Սեբաստ, և անդից դառնայր և ոչ գնայր ի մեզ, և գիտեմք, որ երեք տարին անգամ մի կու գայր հարկահանն տղայ, որ օղլանջի ստակ ասէին»[149]։

Մեծ շարիք էր հանդիսանում հայ աշխատավոր բնակչության համար հայ աղջիկների բռնի հավաքումը թուրք փաշաների ու սուլթանների հարեմների համար։

* * *

Այս բոլորին պետք է ավելացնել նաև աշխատավոր հայ ժողովրդի շահագործումը «սեփական» կեղեքիչների՝ հայ հոգևորականության, ֆեոդալների և վաճառականների կողմից։

Կաթողիկոսական աթոռը Սսից էջմիածին տեղափոխելուց հետո (1451 թ.), վերջինը նորից դարձավ հայ հոգևորականության կենտրոնը։ Էջմիածինը ամեն կերպ աշխատում էր իր ձեռքը վերցնել հայերից (որտեղ էլ որ նրանք ապրելիս լինեին) հարկահավաքման գործը։ Սակայն հանրահայտ է և այն, որ բացի Էջմիածնից, կային և այլ կաթողիկոսական աթոռներ՝ Աղթամարում, Գանձասարում, որը հայտնի էր Աղվանից կաթողիկոսություն անունով, և Կոստանդնուպոլսի պատրիարքությունը։ Ինչ վերաբերում է Սսի կաթողիկոսությանը, ապա կաթողիկոսության աթոռը Էջմիածին տեղափոխելուց հետո այն կորցրեց իր նախկին նշանակությունը։

Եվ ահա Էջմիածնի ու վերոհիշյալ այլ կրոնական կենտրոնների միջև ամբողջ 15—16-րդ դարերում գնում էր կատաղի պայքար հո-

---

149 Գր. Դարանաղցի, էջ 339—340։

գեոր տուրքերի գանձման իրավունք ձեռք բերելու համար։ Հատուկ համառություն էին ցույց տալիս էջմիածնի դեմ այս հարցում հատկապես Կոստանդնուպոլսի պատրիարքները, որոնք հաճախ հովանավորվում էին սուլթանական կառավարության կողմից։

Էջմիածնի կաթողիկոս Սիմեոն Երևանցին (18-րդ դար) իր «Ջամբռ» աշխատության մեջ բերում է շատ հետաքրքիր տվյալներ, որոնք բացահայտում են էջմիածնի կաթողիկոսների իսկական նպատակները։ Էջմիածինն ամեն կերպ աշխատում էր բացառիկ արտոնություն ձեռք բերել այսպես կոչված նվիրական հարկերը գանձելու իրավունքի մեջ[150]։

Ելնելով էջմիածնի նեղ ֆեոդալական շահերից, Սիմեոն Երևանցին հանդես է գալիս որպես մասնավոր կաթողիկոսությունների բացահայտ թշնամի[151]։

Իր հակառակորդների դեմ ծավալած պայքարում, էջմիածնին երբեմն հաջողվում էր ձեռք բերել բոլոր հայերից, որտեղ էլ նրանք ապրելիս լինեին, տուրքեր գանձելու մենաշնորհը։

Թե ինչքան ծանր էին այդ «նվիրատվությունները» աշխատավոր ժողովրդի համար, մենք արդեն ցույց տվեցինք, երբ խոսք եղավ ընդհանրապես հայ հոգևորականության դերի մասին։ Ավելորդ չենք համարում այստեղ բերել մի շարք տվյալներ 18-րդ դարի կեսերին էջմիածնում կազմված հարկերի մի ցուցակից, որը մեջ է բերել պրոֆ. Լեոն իր «Հայոց պատմության» երրորդ հատորում։

Ըստ այդ ցուցակի հարկերը բաժանվում էին երեք հիմնական խմբերի՝

1) կաթողիկոսական հարկեր,
2) եպիսկոպոսական հարկեր,
3) քահանայական հարկեր։

Առաջին խմբի մեջ, հիմնականում, մտնում էին հետևյալ հարկերը՝ ա) նվիրականք—յուրաքանչյուր հավատացյալ տալիս է ըստ իր կարողության. 2) գանձակագինք՝ դրամահավաք «հայ եկեղեցու ծաղկման համար», գ) հոգեբաժինք «հոգու փրկության համար» և կենդանության և մահվանից հետո, դ) խոստմունք «սրբազան աթոռի համար», ե) քառասնական, այն պատարագի համար, որը կատարվում էր հանգուցյալի մահվանից հետո, զ) կտակ՝ հոգուտ էջմիածնի։ Բացի այդ, հավատացյալները պարտավոր էին տալ ոսկյա և արծաթյա եկեղեցական սպասներ։ Համաձայն ցուցակի ժողովուրդը

150 Նվիրակներ էին կոչվում կաթողիկոսի լիազորված ներկայացուցիչները։

151 Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 63—99։

պարտավոր էր նաև տալ եզներ, ձիեր, կովեր, ոչխարներ, բանջարանոցներ, տներ, յուղ, մոմ և այլն։

Երկրորդ խմբի մեջ մտնում էին նույն՝ վերև հիշատակված տուրքերը, որոնց պարտավոր էր տալ ժողովուրդը հայոց կաթողիկոսին։

Բացի այդ, տուրքեր էին վերցվում երեխայի մկրտման ժամանակ, քաղաքում ապրող վաճառականներից և այլն։

Իսկ քահանայական հարկերից հիմնականում կարելի է նշել՝ տուրքեր հարսանիքից, մկրտումից, թաղման ժամանակ և այլն։

Իհարկե, այդ բոլոր տուրքերը կոչվում էին կամավոր, բայց դրանք նույնպես պարտադիր էին, ինչպես և պետական հարկերը։ Հոգևորականությունն ամեն կերպ օգտագործում էր ժողովրդի սնոտիապաշտությունը նրանց կեղեքելու համար[152]։

Այս բոլորի հետևանքով հայ եկեղեցու ձեռքում կուտակվում էին հսկայական հարստություններ։ Նախ և առաջ դա վերաբերում է էջմիածնին, որի հարստությունները ապշեցրել էին այստեղ այցելած Տավերնիեին։

«Ես երբեք չէի հավատա,—գրում է նա,—որ քրիստոնյա եկեղեցիներում այդքան հարստություն կլինի», և որ «այստեղ (էջմիածնում) կան այնպիսի հարուստ զարդարանքներ, որոնց չի կարելի գտնել և ոչ մի քրիստոնյա եկեղեցում»[153]։

***

Ի՞նչ էր իրենից ներկայացնում Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 16—17-րդ դարերում։ Թուրքական տիրապետությունը ամենաբացասական ձևով ազդեցություն ունեցավ դեռևս նախորդ դարերում անկում ապրած երկրի արտադրողական ուժերի վրա։ Ամբողջ 16-րդ դարում և մինչև 17-րդ դարի 30-ական թվականները Հայաստանի տերիտորիայում մղված պատերազմները, բնակչության բացահայտ կողոպուտը, գոյություն ունեցող ծանր հարկային սիստեմը, բնական է, նրա տնտեսությանը հասցրել էին ջգալի հարված։ Դա հատկապես նկատելի է Հարավային Հայաստանում (Բաղեշ, Արճեշ, Մուշ և այլն), ուր 16—17-րդ դարերում տիրում էին կիսաֆեոդալական և կիսանահապետական հարաբերություններ։

Արտադրողական ուժերի հետագա վերելք ու դրա հետ միաժամանակ առևտրական հարաբերությունների որոշ զարգացում ապրե-

152 Գ. Դարանաղցի, էջ 191։

153 Les six voyages de Jean Baptiste Tavernier, հատ. I, էջ 35։

ցին միայն մի շարք վաճառաշահ կենտրոններ։ Խոսքը վերաբերում է նախ և առաջ այնպիսի քաղաքների, ինչպիսիք են՝ Էրզրումը, Երզնկան, Թոխատը և այլն։ Դա պիտի բացատրել մասամբ նրանով, որ այս քաղաքները հիմնականում գտնվում էին ավերիչ պատերազմների ոլորտից դուրս և տարանցիկ առևտրի մեծ մայրուղիների վրա։ Մյուս կողմից էլ, հանրահայտ է հայերի դերը Փոքր Ասիայի արհեստների զարգացման գործում։ Հայտնի է, որ դեռևս սելջուկների ժամանակ «հայերի ձեռքին էր գտնվում մետաղամշակությունը, այնքան որքան Հայաստանում հնուց ի վեր մշակում էին մետաղը» և որ «ընդհանրապես տեղական արդյունաբերության մեջ մեծ դեր էին խաղում հայերը»[154]։

Հենց այս պատճառով էլ հայ, ինչպես և օտար աղբյուրների վկայություններից երևում է, որ սկսած սուլթան Մեհմեդ III-ից, թուրք ղեկավարող շրջանները պարբերաբար հայ արհեստավորներին, Արևմտյան Հայաստանի զանազան մասերից, բռնի քշել են դեպի Ստամբուլ[155]։ Էվլիա Չելեբին մինչև իսկ նշում է Ստամբուլի այն թաղամասերի անունները, ուր բնակվել էին Արևմտյան Հայաստանից ու Փոքր Ասիայից բռնագաղթած հայ արհեստավորները։

Արևմտյան Հայաստանի առևտրա-արհեստագործական խոշոր կենտրոններն էին Էրզրումը, Երզնկան, Վանը, որոշ չափով նաև Բիթլիսը։ Այս քաղաքների արհեստագործական արտադրությունը ապասարկում էր ոչ միայն գյուղատնտեսությանը, այլև, հիմնականում, քաղաքային տնտեսությանը։

Արհեստագործական արտադրության ամենախոշոր կենտրոնը Թուրքիայում 17-րդ դարում Ստամբուլն էր, ուր արհեստավորների զգալի մասը կազմում էին հայերն ու հույները։ Ստամբուլում բնակչության սննդի ու կենցաղային իրերի, ինչպես և արհեստավորների արտադրական գործիքների արտադրության համարյա բոլոր պահանջները բավարարվում էին տեղական արհեստագործական արտադրությամբ։

16—17-րդ դարերում Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքները վերածվել էին ռազմական ամրոցների ու քաղաքացիական վարչության կենտրոնների։ Արհեստագործական արտադրությունը, որը կարգավորվում ու ռեգլամենտացիայի էր ենթարկվում պետության կողմից, պիտի նախ և առաջ բավարարեր բանակի, պալատի ու ֆեոդալների պահանջները։

---

154 В. В. Гордлевский, Государство сельджукидов.... էջ 103։

155 I.B. Çark, Türk devleti hizmetinde Ermeniler, Istanbul, 1952, էջ 11։

Աղբյուրների տվյալներից երևում է, որ Արևմտյան Հայաստանում առավելապես զարգացած էին արհեստագործության հետևյալ ճյուղերը՝ 1) մետաղամշակման հետ կապված արհեստները, 2) տեքստիլ արդյունագործություն, 3) կաշվի արդյունաբերություն, 4) գորգերի արտադրություն, 5) բրուտագործություն և 6) քարակոփություն։ Բացի արհեստագործական արտադրությունից, Արևմտյան Հայաստանում որոշ տեղ ուներ նաև արդյունահանությունը։ Երկրի ընդերքը հարուստ է եղել օգտակար հանածոներով։ Հատկապես մեծ նշանակություն ուներ Գյումուշխանեի արծաթի հանքերը, որոնց մասին Էվլիա Չելեբին գրում է. «...այստեղ գտնված արծաթի հանքերը ոչ մի երկրում չկան... Բնակիչները ամբողջությամբ ազատված են հարկերից և պարտավոր են արծաթի հանքերը մշակել... Ունի մոտ 70 արծաթի հանք, որոնց մի մասը շահագործվում է ու մի մասն էլ անգործության է մատնված»։

Հանքային հարստությունները մեծ մասամբ պատկանում էր պետությանը, որոնք տրվում էին կամ կապալառուներին (մյուլթեզիմ) և կամ նրանց կառավարում էին պետության հատուկ հավատարմատարները՝ էմինները։ Ինչպես կապալառուները, այնպես էլ էմինները պարտավոր էին յուրաքանչյուր տարի պետությանը տալ որոշակի քանակությամբ հանքանյութ, որոշակի ձևով։ Նախատեսված քանակից ավելի արդյունահանված հանքանյութը պատկանում էր իրենց։ Ուստի և կապալառուներն ու էմինները ամենագաժան ձևով շահագործում էին հանքում աշխատող, այսպես կոչված, ռանչպարներին։

Հայտնի է, որ Թուրքիայում 16—17-րդ դարերում ֆեոդալական հարաբերությունների գերիշխանությունը իր կոնկրետ արտահայտությունը գտավ համքարական կազմակերպության ու պետական ռեգլամենտացիայի առկայությամբ, մի հանգամանք, որը որոշ աստիճանի սահմանափակում էր արտադրողական ուժերի զարգացման հնարավորությունը։

Արդ, արդյո՞ք այդ դարերում հայերը մասնակցել են գոյություն ունեցող համքարություններին, այսպես կոչված, ֆուտավատներին, ուր գերիշխում էր մուսուլմանական ֆանատիզմը[156]։

---

156 **Afet Inan.** Aperçu général sur l'histoire économique de l'empire turcottoman, Ankara 1943, էջ 54—61, նաև **В. В. Гордлевский,** Из жизни цехов в труции (к истории ахи), изб. сочинения, том I, Москва, 1960, էջ 275—286։

Պիտի ենթադրել, որ հայ արհեստավորները չեն մասնակցել ֆուտավատներին, այլ կազմակերպված կարող էին լինել ուրույն համքարական կազմակերպություններում։ Գոնե Էվլիա Չելեբու մոտ, այն մարդու, որն ամենայն մանրամասնությամբ նկարագրում է Ստամբուլի համքարություններն ու խոսում նրանց կանոնադրության մասին, ոչ մի ակնարկ չկա այդ մասին։ Աղբյուրների կցկտուր տեղեկություններից կարելի է ենթադրել, որ Արևմտյան Հայաստանում արհեստավորների ու նրանց համքարական կազմակերպությունների ներքին կյանքը կարգավորում էին ոչ միայն իրենք, համքարական կազմակերպություններն ու տեղական իշխանությունները, այլև հայ հոգևոր համայնքը, որի կարգադրությունները պարտադիր էին բոլոր արհեստավորների համար։ Համայնքը խիստ պատասխանատվություն էր կրելու թուրքական իշխանությունների առաջ, եթե խախտվեին սուլթանական հրամաններում տեղական շուկան ռացիոնալ օգտագործելու մասին նշված կարգադրությունները։

Այսպես էր երկրի ներքին իրադրությունը, երբ 16-րդ դարի վերջին բռնկվեցին ջալալիների շարժումները, որոնք ամենաբացասական ազդեցություն ունեցան երկրի ընդհանուր էկոնոմիկայի վրա, իսկ նրա բնակչությանը պատճառեցին անլուր դժբախտություններ։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՋԱԼԱԼԻՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Ինչպիսի՞ տնտեսական-քաղաքական իրադրություն էր տիրում Օսմանյան կայսրության մեջ ջալալիների ապստամբությունների նախօրեին։ Որո՞նք էին այդ հզոր շարժումների հիմնական նախադրյալները։

Սովորաբար, այս հարցերին անդրադառնալիս մասնագետ-հեղինակները (իսկ խոսքն այստեղ առաջին հերթին վերաբերվում է Ա. Ս. Տվերիտինովային) վկայակոչում են մեզ արդեն ծանոթ Կոչիբեյի ու պատմագիր Սելանիկիի ու այլոց հաղորդած տեղեկությունները[1]։ Սակայն վերջերս հրատարակված թուրք տնտեսագետ-պատմաբաններ Մ. Ակդաղի, Օմեր Բարկանի 16—17-րդ դարերի Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական պատմության հարցերին նվիրված ուսումնասիրությունները (ի դեպ այստեղ մասնագետները կհանդիպեն առաջին անգամ հրապարակված բազմաթիվ արխիվային նյութերի) նոր լույս են սփռում 16-րդ դարի վերջերին օսմանյան պետականության անկումը մեկնաբանող փաստերի վրա։ Այդ հեղինակների հաղորդած տեղեկությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ օսմանյան պետությունը սկսվել էր բայքայվել դեռևս շատ ավելի վաղ, քան մատնացույց են անում Կոչիբեյը, Սելանիկին և այլք։

Որպեսզի մեր ասածի մեջ պարզություն լինի, անհրաժեշտ է նախ և առաջ ծանոթանալ «թուրքական Մոնտեսկիյո»[2] անվանված Կոչիբեյի հաղորդած մի շարք կարևորագույն վկայությունների հետ,

[1] **А. С. Тверитинова,** Восстание Кара Языджи..., էջ 36—45։

[2] **J. Hammer,** Histoire de l'empire ottoman, հատ. IX, էջ 391։

որոնց մի մասն արդեն մեր կողմից վերլուծման ենթարկվեց սույն աշխատության առաջին գլխում։

Ըստ Կոչիբեյի օսմանյան պետականության անկումն սկսվում է 1582 թվականից։ Ինչպես նշել ենք՝ կայսրության մեջ մինչև այդ թվականը Կոչիբեյը ամեն ինչ իդեալական էր համարում։ Եվ դրա համար էլ նա կոչ էր անում սուլթանին ու բարձրաստիճան պալատականներին վերադառնալ դեպի հինը։ Ամրապնդել հողատիրության՝ զեամեթների ու թիմարների ավատական սիստեմը, թույլ չտալ, որ ֆեոդալները ներգրավվեն առևտրա-վաշխառուական հարաբերությունների ոլորտը ու ամենախիստ կերպով պատժել այն ֆեոդալներին, որոնք կլքեն իրենց սանջակները ու կմեկնեն այլ վայրեր—սրանք էին Կոչիբեյի հիմնական խորհուրդները։ «Եթե սիփահին,—գրել է նա,—մնա իր սանջակում, ապա երկրի որևէ մի անկյունում թշնամու երևալու դեպքում նա պատրաստ կլինի երեք օրվա ընթացքում իր զինվորներով դիմադրություն ցույց տալու նրան»[3]։

Սակայն, ի՞նչպես զեամեթի ու թիմարի տեր ֆեոդալները կարող են կառչած մնալ իրենց հողակտորներին, երբ վերջինները փաստորեն զավթել են մեծ վեզիրներն ու պալատականները,—բացականչում է Կոչիբեյը։ «Նրանք (խոսքը խոշոր ֆեոդալների մասին է—Մ. Ղ.)—գրում է Կոչիբեյը,—այլևայլ ուղիներով յուրացրին մշակելի հողային տարածություններ ու ամբողջ գյուղեր, ոմանք, որպես բաշմակլրկներ, ուրիշները՝ որպես արփալրկներ և այլք՝ որպես լրիվ սեփականություն[4]։ Ձեռք բերելով հսկայական հողային տարածություններ,—այնուհետև գրում է Կոչիբեյը,—խոշոր ֆեոդալները բաժանեցին դրանք իրենց ազգակիցներին ու կողմնակիցներին։ Ստանալով մեծ կաշառքներ, խոշոր ֆեոդալական պետական պաշտոնները հանձնեցին «անարժան ու ապիկար մարդկանց» ձեռքը, որոնք երկիրը հասցրին կործանման եզրին։ Եվ այդ է պատճառը,—եզրակացնում է նա,—որ «իրենց տեղում նստած զաիմներ ու թիմարիստներ բոլորովին չմնացին»[5]։

1582 թվականից հետո, հսկայական հողային տարածություններ անցան օտարների («էջներիների») ձեռքը։ Իսկ ովքե՞ր էին այդ «էջներիները», որոնց հեղինակն ուղղակիորեն հայհոյում է[6]։ Մենք արդեն տեսանք, թե ինչպես արդի մի շարք թուրք հեղինակներ (Հյուսամմուդին Ամասիացին, Դանիշմենդը և ուրիշներ) բառացի կառչում են 16—17-րդ դարերի թուրք պատմագիրների վկայակոչած հենց այս բառից, ճգնելով ապացուցել, որ «էջներիներ» բառի տակ պիտի հասկանալ մանկահավաքի հետևանքով օսմանյան ֆեոդալների շարքերն անցած ու ոչ-թուրք ծագում ունեցող քրիստոնյա հպատակների սերունդները։ Եվ ամբողջ ջալալիների ապստամբությունները, ինչպես նշեցինք, նրանց կարծիքով հանդիսանում էր բուն թուրքերի ապստամբությունը ոչ-թուրք «դեվշիրմե» ու «օտար» (էջների) տարրերի կատարած կամայականությունների դեմ։

Ինչպես ճիշտ նկատել է Ա. Ս. Տվերիտինովան «էջներիների» բառի տակ թուրք պատմագիրները հասկանում էին հասարակության ոչ ազնվական ծագում ունեցող «օտար» խավերին։

«[Օսմանյան պետականության] պատվազրկման պատճառը,—գրում է պատմագիր Մ. Սելանիկին,—հանդիսանում է այն հանգամանքը, որ հանգուցյալ սուլթան Մուրադ խանի թագավորության ժամանակ հարեմ մտան այլազգի ծագում ունեցող մարդիկ, իսկ սերգարները (զորահրամանատարները—Մ. Ղ.) ստանալով կաշառքներ, հեծելազոր մտցրին պարսիկներին, գնչուներին, հրեաներին, լազերին, ռուսներին և քաղաքաբնակներին»։ Նույնն է ասում նաև Կոչիբեյը միաժամանակ ավելացնելով, որ հեծելազոր ու առհասարակ պետական հիմնարկներ մտցվեցին «...թափառաշրջիկները, ջորեպանները, ուղտապանները, բեռնակիրները, ավազակները, գողերը և այլ բազմատեսակ մարդիկ», որոնք ոտնատակ էին անում, ամեն մի օրենք, ու դրանով իսկ հող նախապատրաստում ամեն տեսակի խռովությունների ու անկարգությունների համար[7]։

Պաշտոններն ու հողային տարածություններն, ըստ Կոչիբեյի, խոշոր պալատականների կողմից վաճառվում էին սուլթանի անունով կեղծ հրովարտակներ արձակելով։ «Մեկ տարվա ընթացքում,—գրում է Կոչիբեյը,—մեկը մյուսին հակասող մոտ հազար նվիրական հրամաններ ու վկայություններ են գրվում»[8]։

Պատմագրի վկայությամբ՝ բանակում խիստ ընկել էր կարգապահությունը։ Ֆեոդալական աշխարհազորի (սիփահիների) պատերազմին մասնակցելուց հետզհետե խուսափելու պատճառով սուլթանական կառավարությունն ստիպված ավելացնում էր ենիչերական կորպուսի քանակը։

---

[3] **В. Д. Смирнов**, Кочибей Гёмюрджинский..., էջ 90։

[4] Նույն տեղում, էջ 107—108։

[5] Նույն տեղում։

[6] **А. С. Тверитинова**, Восстание Кара Языджи..., էջ 40։

[7] **А. С. Тверитинова**, Восстание Кара Языджи..., էջ 41։

[8] **В. Д. Смирнов**, Кочибей Гёмюрджинский..., էջ 126։

Ըստ Կոչիբեյի, այս հանգամանքը դարձյալ հետևանք էր այն բանի, որ զինվորականներից խլված ավատները իբրև մասնավոր սեփականություն կաշառքի միջոցով վաճառվում կամ ընծայվում էին պալատական ծառայողներին։

Գանձարանը դատարկվել էր. երկրում ծայր էր առել խռովությունների մի ամբողջ շղթա։ Իսկ «...այդքան շարիքի, խռովության ու ալեկոծության, բնակչության ու գավառների քայքայման, գանձարանում դրամի պակասության պատճառը կաշառակերությունն էր»[9],—եզրակացնում է Կոչիբեյը։

Իսկ ի՞նչ բանի հետևանք էր կաշառակերությունը։ Այդ հարցի պատասխանը մենք չենք գտնում Կոչիբեյի մոտ։

Կաշառակերության արմատները բացահայտելու համար անհրաժեշտ է ժամանակագրական տեսակետից որոշ չափով հետ գնալ ու ցույց տալ այն էական փոփոխությունները, որոնք խոցոտեցին ու թարախապատեցին օսմանյան պետականության առողջ թվացող օրգանիզմը։

16-րդ դարի առաջին կեսին Ասիայի, Եվրոպայի ու Աֆրիկայի ընդարձակ երկրամասերի վրա, օսմանյան տիրապետության հաստատումը անտարակույս մեծ վնաս հասցրեց Մերձավոր Արևելքի վրայով կատարվող համաշխարհային առևտրի հետագա զարգացմանը։ Աշխարհագրական մեծ հայտնագործությունները փոխեցին համաշխարհային տարանցիկ առևտրի ուղիները։ Այնուամենայնիվ այսպես կոչված Լևանտյան (Մերձավոր Արևելյան) առևտրի շրջանառությունը 16-րդ ու հետագա դարերում դեռևս մեծ ծավալ ուներ։ Օսմանյան կայսրությունը լայն առևտրական հարաբերություններ էր ինչպես Եվրոպայի, այնպես էլ Արևելքի (Պարսկաստանի, Բուսաստանի, Հնդկաստանի) հետ և այլն։ Եթե 15-րդ դարում Թուրքիան հիմնականում առևտուր էր անում միայն Ջենովայի ու Վենետիկի հետ, ապա 16-րդ դարի երկրորդ կեսից նրա առևտրական հարաբերությունների ոլորտը խիստ ընդարձակվեց։ 1535 թվականին Ֆրանսիայի հետ կնքվեց բարեկամական ու առևտրական պայմանագիր, ըստ որի ֆրանսիական վաճառականներին հնարավորություն էր տրվում ազատ առևտուր անել Օսմանյան կայսրության տարբեր մասերում։ Այդ նույն տարում Ֆրանսիային սուլթան Սուլեյմանի կողմից նվիրաբերվեց, այսպես կոչված, «կապիտուլյացիա», որը ֆրանսիական առևտրին ու ֆրանսիական հպատակներին դնում էր արտոնյալ վիճակի մեջ։

[9] В. Д. Смирнов, Кочибей Гёмюрджинский, էջ 167։

1579, ապա և 1593 թվականին Անգլիան, ինչպես և հետագայում Հոլանդիան (1598 և 1612 թթ.) նույնպես հաջողեցրին Թուրքիայից կորզել նման կապիտուլյացիաներ։

Կ. Մարքսն իր ժամանակին նշում էր այդ կապիտուլյացիաների միակողմանի բնույթը։

«Որքանով որ զուրանը ամեն օտարերկրացու թշնամի է հայտարարում,—գրում է Մարքսը,—ապա ոչ ոք սիրտ չի անում հանդես գալ մուսուլմանական երկրում առանց նախազգուշական միջոցներ ձեռք առնելու։ Ուստի նման ժողովրդի հետ առևտուր անելու համարձակության դիմող առաջին եվրոպական վաճառականները փորձում էին սկզբում ապահովել իրենց անձի համար բացառիկ պայմաններ, որոնք, սակայն, հետագայում տարածվում էին նրանց ամբողջ ազգի վրա։ Այսպես է եղել կապիտուլյացիաների ծագումը։ Կապիտուլյացիաները Բ. Դռան կողմից զանազան եվրոպական ազգերին տրված դիպլոմներ, շնորհագրեր և արտոնություններ էին, որոնցով այդ ազգերի հպատակներին իրավունք էր տրվում անարգել կերպով մուտք գործել մահմեդական երկրները և հանգիստ կերպով զբաղվել իրենց գործերով ու կատարել իրենց կրոնական պաշտամունքը։ Պայմանագրերից նրանք տարբերվում են այն կարևոր հատկանշով, որ չեն հիմնվում փոխադարձության վրա, չեն քննարկվում շահագրգռված երկրների հետ համատեղ և չեն հաստատվում նրանց կողմից՝ փոխադարձ շահավետության և զիջումների հիման վրա։ Ընդհակառակը, նրանք միակողմանի կերպով շնորհված արտոնություններ են, որոնք հետևապես, համապատասխան կառավարությունը կարող է, ըստ իր հայեցողության, ետ վերցնել»[10]։

15—16-րդ դարերում, ինչպես նշեցինք, արդեն, թուրքական ռազմա-ֆեոդալական պետության ղեկավարող շրջանները չէին հետաքրքրվում արտադրության հարցերով ու հիմնականում զբաղվում էին Ֆ. Էնգելսի մատնանշած ռազմական գերատեսչությամբ։

Թուրք ֆեոդալները փաստորեն մինչև 16-րդ դարի առաջին կեսը չէին զբաղվում ոչ մշակելի հողային տարածությունների շահագործմամբ, ոչ էլ բառիս բուն իմաստով՝ առևտրով։ Հողը նրանց համար հարկերի միջոցով հավաքվող եկամտի աղբյուր էր, որն անհրաժեշտ էր բանակի կարիքներն ապահովելու համար։ Թուրքերի հարստացման հիմնական աղբյուրը նոր նվաճված երկրների կողոպուտն էր՝ ռազմաավարի (g'animet), ապա և հարկերի ու տուրքերի խիստ ավելացման միջոցով։ Այդ նպատակի համար նրանք ստեղ-

[10] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. X, էջ 8։

ծեցին ուժեղ կարգապահ մի բանակ, որը պիտի պաշտպաներ նորաստեղծ ընդարձակածավալ կայսրությանը։ Հենց իրենք Թուրքերն իրենց պետության մասին ասում էին, որ նա «սրով է ծնվել և սրով միայն կարող է պահպանվել»[11]։

Սակայն այս դրությունը երկար չտևեց։ Ռազմաավարի միջոցով տեր դառնալով մեծ հարստությունների, խոշոր ֆեոդալները ձեռք բերեցին հսկայական հողային տարածություններ։ Այժմ արդեն նրանք հողը համարում էին ոչ միայն ֆիսկալ, այլև որպես տնտեսական շահագործման օբյեկտ։ Դրան մեծապես նպաստեցին և այն, որ 16-րդ դարի վերջերից Թուրքերն սկսեցին ռազմական անհաջողություններ հանդիպել եվրոպական ֆրոնտում։ Հողագործության Թուրքական տնտեսական հիմքերը խախտվեցին։ Հողատիրության ռազմաավատական սիստեմը, որի վրա հիմնվում էր Թուրքական տիրապետությունը, կորցրեց իր նախկին նշանակությունը։

Դրան մեծապես նպաստեցին վերոհիշյալ կապիտուլյացիաների վրա հիմնված այն առևտրական հարաբերությունները, որն ունենում էր Թուրքիան Եվրոպայի հետ։ Քայքայում էր երկրի տնտեսությունը նաև Արևելքի հետ կատարվող առևտուրը։

Այսպիսով՝ 16-րդ դարի երկրորդ կեսից օսմանյան պետականության աստիճանական անկումը պայմանավորված էր մեկը մյուսից բխող երկու հիմնական գործոններով։ Դրանք են՝ ա) առևտրա-վաշխառուական հարաբերությունների թափանցումը օսմանյան հողատիրության սիստեմում, որն իր հետ բերեց հին ռազմա-ավատական հարաբերությունների քայքայումը, բայց որը չստեղծեց նորը՝ կապիտալիստականը։ Այն միայն խիստ թուլացրեց կենտրոնական պետական ապարատը և Թուրքիան հենց այս ժամանակ էլ վերջնականապես թևակոխեց այսպես կոչված «լճացման շրջանը»։ Որ առևտրա-վաշխառուական հարաբերությունների զարգացումը չէր կարող ստեղծել նոր արտադրահարաբերություններ, այդ մասին անդրադառնում է Կ. Մարքսը, նշելով, որ ասիական երկրներում «...վաշխառությունը կարող է երկար գոյություն ունենալ և ոչինչ չառաջացնել, բացի տնտեսական անկումից ու քաղաքական ապականումից,—որ նա պահպանողական է և քայքայում է միայն գոյություն ունեցող արտադրաեղանակը»[12]։

[11] Ц. Д. Смирнов, Кочибей Гёмюрджинский..., էջ 120—121։ Léon Cahun Introduction a l'histoire d'Asie, turc et mongol. Paris, 1896, էջ 3։

[12] К. Маркс, Капитал, т. III, ч. II, էջ 528 և 529։

բ) Ռազմաավարի դադարեցման պայմաններում հենց նույն առևտրա-վաշխառուական հարաբերությունների զարգացումը հասցրեց այն բանին, որ հսկայական հողային տարածություններ անցան խոշոր ֆեոդալների ձեռքը, որոնք փաստորեն դարձել էին մի-մի սատրապներ իրենց խիստ ընդգծված կենտրոնախույս տրամադրություններով։

Սկսած 16-րդ դարի երկրորդ կեսից, Եվրոպան Թուրքիայից հիմնականում արտահանում էր հում նյութ ու փոխարենը Թուրքիայի շուկաները հեղեղում պատրաստի արդյունաբերական ապրանքներով։ Իսկ արևելքից Թուրքիա էին ներմուծվում առավելապես տեքստիլ արդյունաբերության ապրանքներ։ Ինչպես երևում է Մ. Ակդաղի բերած վիճակագրական տվյալներից Պարսկաստանը, Հնդկաստանն ու Ռուսաստանը իրենց վաճառած ապրանքների փոխարեն միայն շնչին քանակությամբ ապրանքներ էին ներմուծում Թուրքիայից։ Փաստորեն վերոհիշյալ երկրների վաճառականները Թուրքիայից տանում էին միայն իրացված ապրանքների արժեքը՝ ոսկին ու արծաթը[13]։

Թուրքիայի արհեստագործական արտադրությունը, որը կարգավորվում ու ռեգլամենտացիայի էր ենթարկվում պետության կողմից պիտի նախ և առաջ բավարարեր բանակի, պալատի ու ֆեոդալների պահանջները։ Սկզբնական շրջանում այդ արտադրությունը իրոք բավարարում էր բանակի հարաճուն պահանջներին և Թուրքիան, անտարակույս, 16-րդ դարի առաջին կիսում ուներ ռազմական առավելություն Եվրոպայի նկատմամբ։ Դանդաղ էր զարգանում միայն այժմյան հասկացողությամբ թեթև արդյունաբերությունը, այն ժամանակ, երբ հատկապես Փ. Ասիայում նրա զարգացման համար գոյություն ունեին բոլոր անհրաժեշտ պայմանները (հումքի առատություն, հայ, հույն և Թուրք հմուտ արհեստավորության առկայություն և այլն)։

Սակայն 16-րդ դարի կեսերից հատկապես Եվրոպայից ներմուծվող, և թիվս որոնց և ռազմական նշանակություն ունեցող ապրանքները սկսեցին արգելակ հանդիսանալ տեղական արտադրության զարգացմանը։

Տեղական արհեստագործական արտադրության խիստ կրճատումը պետությանը կանգնեցրեց ֆինանսական լուրջ դժվարությունների առաջ։

[13] Dr. Mustafa Akdağ, Osmanlı imperatorluğunun kuruluş ve inkişafı devrinde Türkiyenin iktisadî vaziyeti, Belleten, 1959, № 3, էջ 510։

16-րդ դարի 70—80-ական թվականներին հում նյութի բացակայության պատճառով արհեստագործական արտադրությունն այնքան կրճատվեց, որ համարյա հավասարվեց զրոյի[14]։

Ամենաանհրաժեշտ ապրանքներն իսկ սկսեցին ներմուծվել դրսից։ Դրա անմիջական հետևանքը եղավ ոսկու ու արծաթի պաշարի արտահոսումը։ Այս երևույթն այնքան մեծ մասշտաբներ ընդունեց, որ կառավարությունն ստիպված եղավ միջոցներ ձեռնարկել վերահաս կործանումից փրկվելու։ Դեռևս 1559 թ. մի հրամանագրով կարգադրվում է վիլայեթների բոլոր պետական պաշտոնյաներին ամենախիստ ձևով հետևել, որ ոսկի ու արծաթ չարտահանվի երկրից[15]։ Սակայն կառավարության այս և հետագա բոլոր կարգադրությունները ոչ մի դրական հետևանք չեն ունենում[16]։

Աղբյուրների վկայությունների համաձայն խիստ կրճատվում են նաև գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Մ. Ակդաղը և մյուս թուրք պատմաբաններն այս փաստը դարձյալ ուզում են բացատրել արտաքին առևտրի ներգործած բացասական հետևանքներով։ Ըստ նրանց կարծիքի Եվրոպան այնքան էր ցորեն արտահանում Թուրքիայից, որ շուտով երկրում զգացվեց հացահատիկի սուր պակաս[17]։ Սա միակողմանի բացատրություն է։ Կանգնելով ֆինանսական ճգնաժամի առաջ, պետությունը, ինչպես և խոշոր ու մանր ֆեոդալները սաստկացրել էին գյուղացիների շահագործումը ու խիստ ավելացրել հարկերի ու տուրքերի չափը։ Քայքայված գյուղացին այլևս ի վիճակի չէր զբաղվելու գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ։

Տարեցտարի սկսեց ավելանալ դեֆիցիտը օսմանյան պետական բյուջեում։ Քյաթիբ Չելեբին իր «Դուստուր-ուլ-ամել» աշխատության մեջ այդ մասին բերում է հետևյալ հետաքրքիր տվյալները.

Թվական	Պետ. եկամուտ (յուկերով)	Պետ. ծախս (յուկերով)[18]
Հեջրեի 972 թ. (1564 թ.)	1830	1896
» 1000 թ. (1591/92)	2934	3634
» 1005 թ. (1596/97)	3000	9000[19]։

[14] Նույն տեղում։

[15] Նույն տեղում, էջ 511։

[16] Նույն տեղում։

[17] Նույն տեղում։

[18] Մեկ յուկը հավասար է եղել 100.000 ակչեի (տե՛ս В. Д. Смирнов, Кочибей..., էջ 161)։

[19] Kâtip Çelebi, Düstürül'amel (Ասիայի ժողովուրդների ինստիտուտի ձեռագիր, էջ 61բ—62ա), А. С. Тверитинова..., էջ 38։

Պետական եկամուտների ու ծախսերի այսպիսի անհամապատասխանությունը հասցրեց այն բանի, որ 1596 թ. դեֆիցիտը կազմեց 6000 յուկ, այսինքն երկու անգամ գերազանցեց կայսրության եկամուտները[20]։

Այսպիսի իրադրության մեջ կառավարությունն անընդհատ կտրել է տալիս նոր ակչեներ (akçe-icedit), ուր արծաթի տոկոսը դնալով պակասում էր։ 1580 թ. եթե ակչեի 20 տոկոսն էր արծաթ, 1610 թ. 10 տոկոսը[21]։

Այդ ակչեներն սկսվեցին անվանվել «կեղծ ակչե»-ներ («կալպ», «զուլուֆ», «մաղշուշ» անուններով)[22]։ Վերջի-վերջո գործն իսկապես հասավ ակչեի իսկական արժեքազրկմանը (kesad-i akçe)[23]։ Ընկավ նաև ոսկու տոկոսը ոսկեդրամների մեջ, փոքրացավ քաշը։

Ոսկեդրամները,—գրում էր պատմագիր Ալին,—«այնքան բարակ են, ինչպես արմավենու տերևը, և կշռում են ոչ ավել, քան մի կաթիլ վարդեջուր»[24]։

«Կեղծ ակչե»-ների շրջանառության մեջ դրվելու պայմաններում, սուլթանական կառավարությունը, ելնելով իր ֆիսկալ շահերից, գյուղերում եղած իր բոլոր հարկահան-ներկայացուցիչներին հրամաններ էր արձակում, որպեսզի հարկերը գանձվեն միայն մաքուր արծաթով կամ ոսկով[25]։ Այդ նշանակում էր գյուղացիության բացարձակ կողոպուտը։

Ինչպես գյուղատնտեսական մթերքների, այնպես էլ արհեստագործական արդյունաբերության ապրանքների գները անշեղորեն բարձրանում են։ Միայն 1585—1595 թվականների ընթացքում Ակ-

[20] А. С. Тверитинова, նույն տեղում։

[21] M. Akdağ, նշված աշխ.-ը, էջ 519։

[22] Այս մասին ավելի մանրամասն տես F.A. Belin, Essais sur l'histoir économique de la Turquie, Journal Asiatique, հատ. IV, Paris 1865, էջ 282—286։

[23] Հիջրեի 1005 (1596—159) թվականի դեպքերը շարադրելիս պատմագիր Քյաթիբ Չելեբին իր «Ֆեզլեքե» աշխատության մեջ գրում է. «Պետության մեջ դրամի վիճակը վատացավ... Հասան փաշայի կողմից կտրված նոր ակչեն շրջանառության մեջ մտավ, ըստ որի Ֆլորինը 220 ակչեից ընկավ 120-ի, իսկ զուրուշը՝ 80-ի» „Fezleke", հատ. 1, էջ 142—143)։

[24] A. de Lamartine, Histoire de la Turquie, հատ. V, Paris, 1855, էջ 195, „Le fabricant juif des monnaies, dit l'historien Ali, présenta au trésorier du sultan dix pièces d'or „aussi minces qu'une feuille d'amendier et ne pesant pas plus qu'une goutte de rosée"

[25] M. Akdağ, նշված աշխատությունը, էջ 528։

դաղի հաշվումներով գները բարձրանում են մոտ 10 անգամ[26]։ Իսկ ջալալիների ապստամբությունների ժամանակ, այսինքն՝ 1596 թվականից հետո չտեսնված ու չլսված թանկության պայմաններում գյուղացիներն ստիպված իրենց հողակտորները վաճառում են վաշխառուներին ընդամենը մի քանի կգ ալյուրի փոխարեն[27]։

Ֆինանսական ճգնաժամից դուրս գալու նպատակով օսմանյան կառավարությունը, աղբյուրների վկայությամբ, «Թեքյալիֆ-ի դիվանիյե»-ն (պետական հարկերը) կամ «Թեքյալիֆ-ի շակկան» (արտակարգ հարկերը) այդ նույն տարիներին ավելացնում է մոտ 25 անգամ[28]։ Միայն որպես «ավարիզ» յուրաքանչյուր հարկատու տնից պահանջվում է տարեկան 500 ակչե[29]։

Պատմագիր Իբրահիմ Փեչեվին միամտորեն այդ հարկերի ավելացումը վերագրում է մեզ նախածանոթ Սինան փաշայի բնավորության չար գծերին ու սպառնում նրան, թե այդ բոլոր չարիքների համար նա պատասխան կտա հանդերձյալ աշխարհում[30]։ Հատկապես խիստ ավելանում է ջիզիեի չափը։ Եթե Մուրադ III-ի ժամանակ ջիզիեն բարձրացել էր 85-ից մինչև 140 ակչե, ապա սուլթան Ահմեդի ժամանակ, համաձայն 1604 թ. սուլթանական մի ֆերմանի, ջիզիեի չափը հասնում է 500 ակչեի։ Այդ նույն ֆերմանի համաձայն քրիստոնյա հպատակներից ջիզիե է պահանջվել տասնյակ տարիներ առաջ մահացած նրանց հանգուցյալների համար[31]։

Իրոք, գյուղացիներից և, նախ և առաջ ոչ-մուսուլման հպատակներից գանձվող հարկերը չափազանց ծանր են անդրադառնում վերջինների վրա։ Կոչիբեյը իր ուղերձի 9-րդ գլխում, որը վերնագրված է՝ «Խեղճ ռայաթներից (գյուղացիներից) գանձվող հարկերի ու տուրքերի արտակարգ ավելացման մասին», գրում է. «Մի խոսքով՝ այն ճնշումներն ու բռնությունները, որոնց ենթարկվում են խեղճ ռայաթները, ոչ մի ժամանակ, աշխարհի ոչ մի երկրում, ոչ մի պետության մեջ չեն եղել։ Եթե որևէ իսլամական պետության մեջ որևէ մեկին ամենափոքր նեղություն պատճառվի, ապա ահեղ դատաստանի ժամանակ դրա պատասխանատվությունը կընկնի տիրակալի և ոչ թե նրա պաշտոնյաների վրա և տիրակալը չի կարող արդարանալ տիեզերքի տիրոջ առջև ասելով՝ «Ես իմ հպատակներին հանձնել էի այս մարդկանց։ Ցրտից սառսռած ճնշվածների հոգոցները խորտակում են տները, իսկ կեղեքվողների արտասուքները խեղդում են կայսրությունը կորստյան ալիքների մեջ։ Անհավատությունից աշխարհը չի կործանվի, այլ կանգուն կմնա, իսկ բռնությունից նա չի կանգնի»[32]։

Իր հերթին պատմագիր Մ. Սելանիկին խիստ մռայլ է նկարագրում 16-րդ դարի վերջում Օսմանյան կայսրության մեջ ստեղծված դրությունը։ «Պետության նահանգներում,—գրում է նա,—արտակարգ հարկերը հպատակ ժողովրդին հասցրին այն բանի, որ նրա համար զզվելի դարձավ այս աշխարհը և այն ամենը, ինչ գտնվում է այնտեղ։ Սիփահիները 20 տարուց ավել է, ինչ զբաղված են կրոնի թշնամիների դեմ պատերազմով, և քանի տարի է ահա, որ արևելյան նահանգները տանում են պատերազմի ծանրությունը... կառավարիչներն ու դատավորները զզվեցրին երկրի հպատակներին. մեկը մյուսի հետևից անվերջ կրկնվում են սուլթանական միևնույն հրատապ հրամանները. «Թող գանձեն ավարիզ, նյուզուլ և կյուրեկչի կամ դրանց փոխարենը»։ Օտարները (էջներիները) [մտնում են] տնից տուն և խեղճերից ու չունևորներից վերցնում են 300-ական ակչե, և սակայն [այդ եկամուտներն] ամբողջությամբ չեն մտնում պետական գանձարանը, և [դրանց մի մասը] բաժանվում են դատավորների, նահիրների և չավուշների միջև։ Իսկ խարաջ վճարող հպատակներից, ահա, արդեն քանի տարի է «բեդելի համար» («գինու փոխարեն»—Մ. Ղ.) «ավելացում նոր գլխահարկի վրա», «ավելացում գահակալման առթիվ» անուններով հարկադրում են վճարել 300-ական ակչե»[33]։

16-րդ դարի վերջին տասնամյակներին վերաբերող հայկական աղբյուրները բացահայտում են հայ ժողովրդի ծանր վիճակը Արևմտյան Հայաստանում։ 1594 թ. Աստվածատուր եպիսկոպոսը գրում է. «...այսմ ամի թուին ՌԽԳ (—1594 թ.) բազում հարկապահանջութիւն եղաւ ի թագաւորէն և այլ ամենայն զաւրացն նորա, որ անուն ծանր է մեզ գրել. բայց ձեզ ամենեցուն յայտնի է. այս տարի մեկ գլուխ դ. ֆլի խարաջ տուին, շատ մարդ ...ելան ուրացան զքրիստոս աստուածն մեր և շատ մարդիկ փախստեալ եղեն այսմ

26 Նույն տեղում, էջ 543

27 Նույն տեղում, էջ 532։

28 M. Akdağ, Նշված աշխատությունը, էջ 539։

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում, էջ 331։ (Bu bid'at seyyieyi Sinan Paşa etmiştir, cevabını ahirette vere")

31 Նույն տեղում, էջ 333։

32 „Risale-i, Koçibey", էջ 17։

33 Տե՛ս А. С. Твертинова, Восстание..., էջ 47—48։

յամի յերկրէ յերկիր և ոչ գոյր հանդիստ նոցա. ամենայն գիւղ և քաղաք միապէս էր և այլ բազում հարկ էր ծանր է մեզ գրել. մեկ ֆլի որ ժամ հաց եփեին հանց դառն էր ով որ ուտէր ի խելացն կու թափէր և կմարէր. այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, ամէն»[34]։ 1593 թ. Մխիթար դպիրը Սեբաստիայից գրում է, որ ապրում է «...ի դառն և ի նեղ ժամանակիս, որ բազում զարհուրանս և հալածանս կրեմք ի յայլ ազգաց վասն ծովացեալ մեղաց մերոց»[35]։ Սրապիոն գրիչը Շատախ-Ջերմաձորից 1596 (ՌԻԵ) գրում է, որ «...այլա(զ)գիքն զօրացեալ են ի վերայ քրիստոնէիցս։ Հարկապահանջութիւն անհաս է և անհամար. փախստական (եմք) յաշխարհէ աշխարհ»[36]։

Իսկ 17-րդ դարի սկզբին վիճակն արդեն բոլորովին անտանելի էր դառնում։ Խարայ գյուղից Ղազար գրիչը 1601 թ. գրում է, որ ավետարանը նա գրել է «...ի թագաւորութեան տաճկաց սուլթան Մ(ա)հմադին, որ յաւուրսն նորին այնչափ հալածումն լինել քրիստոնէից մինչև հարք զորդիս վաճառէին, աւր մեկ կերակուր և ոչաս առնէին...»[37]։

16-րդ դարի կեսերից, երբ աստիճանաբար սկսում է քայքայվել օսմանյան ավատական հողատիրության սիստեմը, երբ վերաբաժանվում են հսկայական հողային տարածություններ, ապա Թուրքիայում իր որոշակի դիրքն է գրավում ոչ ազնվական ծագում ունեցող տիրապետող մի նոր խավ։ Ձեռք բերելով ընդարձակ հողային տարածություններ այդ խավը, որն հայտնի է «էհլ-ի օրֆ» (ehl-i örf) անունով կատաղի պայքար է սկսում նախկին ֆեոդալների՝ այսպես կոչված այանի և էշրաֆի[38] դեմ գյուղում գերիշխանության

[34] Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց, ի Վիեննա, կազմեց Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 517։

[35] Նույն տեղում, էջ 518։

[36] Ե. Լալայան, Ցուցակ Վասպուրականի հայերէն ձեռագրաց, էջ 747։

[37] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 2877, էջ 267բ։

[38] Այաններ էին կոչվում քաղաքների, իսկ երբեմն էլ ամբողջ շրջանների կառավարիչները։ Մ. Դ.՝ Օսոնը նրանց մասին գրում է. «Վարչական գործերում քաղաքի կառավարչին օգնում էին երկու կամ երեք մարդիկ, որոնք ընտրվում էին գավառի ականավոր մարդկանց կողմից ու հաստատվում Բ. Դռան կողմից։ Նրանք կոչվում էին «այաններ, նոտաբլներ» կամ «իշ էրլերի», այսինքն՝ գործակալներ... որոշ տեղերում պրովինցիայ այս պաշտոնը դարձել էր ժառանգական, սակայն միշտ անհրաժեշտություն է եղել, որ նոր այանն ստանա ականավոր մարդկանց համաձայնությունը (Les suffrages des principaux habitants). M. d'Ohsson Tableau gênéral de l'empire ottoman, հատ. VII, Paris 1824, էջ 286, Էշրաֆներն էլ այանների նման պետական հավատարմատարներն են եղել նահանգներում։

հաստատելու նպատակով։ «Էհլ-ի օրֆի» մի զգալի մասը կազմում էին վաշխառուները, այսպես կոչված ռիբահուրները (ribahurlar)։ Վերջինները գյուղացիներին փող էին տալիս տարեկան մինչև իսկ 60% շահույթով։ Կարիքի մեջ եղած գյուղացին քայքայվում էր, իսկ վաշխառուն՝ հարստանում, հղփանում ու հաճախ զավթում էր գյուղացիների հողակտորները։ «Էհլ-ի օրֆ»-ի համար հողատիրությունն արդեն հարստության ոչ թե օժանդակ, այլ հիմնական աղբյուր էր հանդիսանում։ Նրանք սաստկացնում էին գյուղացիների շահագործումը, գանձում էին կամայական հարկեր ու տուրքեր, զրկում էին վերջիններին ոչ միայն հավելյալ, այլև անհրաժեշտ արտադրանքի զգալի մասից։ Աստիճանաբար այդ հողակտորները նրանք դարձրին իրենց «հայրենիք»-ները, որը կապված չէր պետության նկատմամբ ո՛չ զինվորական և ո՛չ էլ այլ պարտականության հետ։

Վաշխառուները խեղդում էին ժողովրդին պարտքերի տակ։ 1584 թ. (991 թ. հ.) Ամասիայի դատավորին ուղղված սուլթանական մի հրովարտակից իմանում ենք, որ Ջակալօղլու Հաջի Մեհմեդ կոչված վաշխառուն կարողացել է կուտակել 30.000 ոսկի (ֆլորի) ու անհաշիվ շարժական ու անշարժ գույք[39]։ Պարտքերը չմարելու դեպքում, պարտապանները կորցնում էին ամեն ինչ, մինչև իսկ իրենց անձնական ազատությունը։ 1602 թ. Թոխաթից եղած մի բողոքում նշված է. «Պարտքով վերցրած գումարը աղքատն ի վիճակի չէ վճարելու։ Ուստի այդպիսիների մեծ մասի այգին ու պարտեզը, անասուններն ու հողերը զավթվում են»[40]։

Վաշխառուների ամենամեծ զոհերը մարաբա գյուղացիներն էին։ 16-րդ դարի վերջերից այս ինստիտուտը, ըստ երևույթին, տարածված է եղել հատկապես Արևմտյան Հայաստանի հարավում և հարավ-արևմտյան շրջաններում։ «Մուրաբայություն» կամ «մարաբայություն» կոչված այս ինստիտուտը վաշխառության կողմից հեռուսյալ ձևով էր շահագործվում. գյուղացին պարտք էր վերցնում վաշխառուից ու իր տրամադրության տակ եղած հողը, անասունները, այգին ու պարտեզը գրավ էր դնում նրա մոտ և պարտավորվում էր տարեկան աճեցրած բերքի կեսը նրան հանձնել։ Իհարկե բաժանման ենթակա բերքի մեջ չէր մտնում տասանորդը (ուշրը), չիֆթի հարկը և այլն։

Նման պայմաններում կիսարարությունը ինչքան էլ հարատևեր, գյուղացին երբեք չէր ազատվում իր պարտքերից։ Եթե գյուղացին

[39] M. Akdağ, Նշված աշխ-ը, էջ 353։

[40] Նույն տեղում, էջ 367։

հրաժարվեր կիսրաբության սկզբունքից, ապա այդ դեպքում նրա ամբողջ ունեցվածքն անցնում էր վաշխառուի ձեռքը։ Փաստորեն գյուղացին դառնում էր վերջինի ստրուկը։ Ահա և մարաբա ինստիտուտի մասին հիջրեյի 1042 (1632—1633 թթ.) վերաբերվող Մ. Ակդաղի հրատարակած վավերագրերից մեկը, որն ավելորդ չենք համարում թարգմանաբար մեջբերել այստեղ. «Սա է Խարպուտի (Խարբերդի) ենթակա Կեսրիկ գյուղի բնակիչներից Վարդանը... որդին ու եղբոր տղան Սեմիկը և Մուշեղը և Դավիթի որդի Կոկիսը շարիաթական դատարանում Խարպուտի Կասաբայի բնակիչներից Էլհաջ Ջաֆերի որդի Հասան Չելեբիի ներկայությամբ մեկ-մեկ խոստովանեցին, որ կարիքի դրդմամբ այս Հասան Չելեբուց վերցրել ենք երեք հարյուր ռիալի ղուրուշ ու փոխարենը նրա համար դարձել ենք մարաբաներ. ցանքսի ենթակա գարու ու ցորենի կեսը հիշյալին է պատկանում, իսկ մյուս կեսը մերն է. մեր մուլք հողերում ինչ որ մշակենք բերքի ժամանակ տասանորդը դուրս գալուց հետո կես առ կես սկզբունքով բերքը պիտի բաժանենք... Եվ մեր տրամադրության ներքո գտնվող ունեցվածքն ու մուլքերից նրա մոտ գրավ դրեցինք և երաշխավորեցինք նրան այն մասին, որ եթե երբևիցե կամենանք դուրս գալ մարաբայությունից, ապա դա հնարավոր է միայն հիշյալ Հասան Չելեբուն երեք հարյուր ղուրուշ գումարը լրիվ վճարելուց հետո...»[41]։

Նման պայմաններն էին, որ ստիպում էին գյուղացուն թողնել իր հողակտորը (չիֆթլիկը), մեկնել քաղաք ու վարձվորություն (ırgadlık) անել կառավարական հիմնարկներում ու շինարարությունների վրա։ Ընդհանրապես գյուղից փախչողներին անվանում

[41] M. Akdağ, նշված աշխ.-ը, էջ 36 "Budur ki kasaba-i Harput muzafâtinden karye-i kesrik sâkinlerinden Vartan veled-i... ve karındaşı oğlu Semik ve Muşih ve Kokis veled-i David meclis-i şer'de kasaba-i Harput sâkinlerinden Hasan Çelebi bin Elhac Cafer muvacahesinde her biri ikrar ve itiraf edüp dediler ki işbu Hasan Çelebiye vacib-ül edâ üçyüz riyalî kuruş verecek deynimiz olup mukabelesinde kendüye muraba'a olduk ki arpa ve bugday'in nısıf tohumu mezburun olup ve nısf-ı ahiri bizim olup kendü mülk tarlalarımızda her ne ziraat edersevuz harman zamanı humsu çiktiktan sonra münâsafa üzere taksim edecek olduk... ve tasarrufumuzda olan emvâl ve emlakımızı yaninda rehin ve vaz'eyledik ve hem birbirimize kefil-i bil-mâl dahi olduk her ne zaman murâbaalıktan çıkarsavuz meblag-i mezbur olan üçyüz kuruşu bi't—teman mezbur Hasan Çelebiye edâ edüp bâdehû çıkacak olduk... Evasıt-i Zilkade 1042 (Diyarbekir müzesi, Harput sc № 386, էջ 124)։

էին «չիֆթբոզաններ» (çiftbozanlar), այսինքն՝ չիֆթը քայքայողներ։ Այդ պրոցեսն սկսվել էր դեռևս շատ ավելի վաղ, քան մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող ժամանակաշրջանը։ Այդ մասին են վկայում Օ. Բարկանի հրատարակած կանուններները, ուր հանդիպում ենք չիֆթբոզանների մասին բազմաթիվ հոդվածների[42]։ Չիֆթբոզանների մի զգալի մասը դառնում էին ուղղակի ճամփա կտրող ավազակներ, որոնք գործում էին ամեն տեսակի հանցագործություններ։ Այս մարդկանց անվանում էին նաև լեվենդներ (դատարկապորտ թափառաշրջիկներ)։ Սրանք դարձել էին մի սոսկալի պատուհաս ժողովրդի գլխին։ Հենց այս դատարկապորտ թափառաշրջիկներն էին, որոնք դարձան ջալալի ապստամբների հիմնական ուժը։ Եվ պատահական չէ, որ հայ մատենագրության էջերում ջալալիներ անվանվել են «զօրպայք լկտիք», «ելուզակք», «գողք աւազակք» և այլն։

Ջալալիների ապստամբությունների նախօրեին չիֆթբոզանները, լեվենդները և Առ. Դավրիժեցու մոտ մատնանշված սուխթանները[43] մի իսկական զենք էին դարձել այս կամ այն ֆեոդալի ձեռքին։ Երբեմն 100—200 հոգուց բաղկացած ու ֆեոդալների կողմից վարձակալված այդ ավազակախմբերը ունենալով իրենց տիրոջ՝ ֆեոդալի հրամանը, հարձակվում էին հարևան ֆեոդալի իրավասության ներքո գտնվող տերիտորիայի վրա ու զբաղվում կողոպուտով։ Նրանց երբեմն օգտագործում էին նաև կառավարական պատժիչ ջոկատնե-

[42] O.L. Barkan, Kanunlar, էջ 56, 65, 76, 87 և այլն։

[43] Առ. Դավրիժեցի, էջ 632։ Սուխթանները (բառացի մուսուլմանական դպրոցում՝ մեդրեսեում սովորողները) հիմնականում գյուղացու երեխաներ էին, որոնք իրենց ծնողների կողմից հանձնվել էին մուսուլման հոգևորական հիմնարկները կրթություն ստանալու նպատակով։ Գյուղերում տնտեսական վիճակն ստիպում էր ծնողներին իրենց երեխաներին մասսայաբար հանձնել մուսուլման հոգևորականների ձեռքը։ Տարրական կրթություն ստանալով, սուխթանները դուրս էին գալիս դպրոցներից ու նորից լրացնում հարկատու գյուղացիության շարքերը։ 16-րդ դարի վերջին տասնամյակներում թուրքական գյուղում տիրող աղքատության պայմաններում, նրանք կազմում էին ավազակախմբեր ու զբաղվում կողոպուտով։ (տե՛ս M. Akdağ նշված աշխատությունը, էջ 379—380)։

Հետաքրքիր է այստեղ նշել, որ 1601 թ. գրված մի հիշատակարանում գրիչ Գրիգորը Խիզանից սուխթաններին նույնացնում է ջալալիների հետ։ Գրիչը նշում է, որ ավետարանը գրված է. «...ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի յանօրինաց, եւս առաւել ի սովոյ, որ ԹՔ (900) գրամ ալիւր Թ ինը, փառայ գնեինք. ու յետոյ ետ այս նեղութեանց, այլ շար յարեաւ ի վերայ, որ շար ազգն սողրիցն եկն ի վերայ նորաշեն եկեղեցեաց (ընդգծումը մերն է—Մ. Զ.)» Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 4515, էջ 355։

րի դեմ այն ժամանակ, երբ տվյալ ֆեոդալը չէր ենթարկվում պետությանը, ասենք պաշտոնաղրկող սուլթանական հրաման ստանալու դեպքում։

Հետաքրքիր է նշել, որ Ազարիա Սասնեցին հենց այս հանգամանքի մեջ է տեսնում ջալալիների ապստամբությունների հիմնական պատճառը, գրելով հետևյալ չափածո տողերը.

«Եւ փաշայից սանճախ տրեալ
յորմէ խընդմամբ եղեն գնացեալ։
Եւ յետ սակաւ աւուրց անցեալ,
կրկին զայն տեղն այլոց տրեալ։
Եւ նա գընացեալ զնա հալածեալ,
եւ ի թախտէն ըզնա հանեալ.
Իսկ նա եղեւ յոյժ տատանեալ,
յամենեցուն անարգ թրեալ։
Վասն այն եղեւ ապստամբեալ,
յիրմէ մեծէն գրլուխ քարշեալ[44]։

Սակայն ամենից շատ այդ «ավազակախմբերն» օգտագործում էին հատկապես քրիստոնյա հարուստ վաճառականներին կողոպտելու համար[45]։

Այս բոլորը վերջնականապես կազմալուծում էին երկրի տնտեսությունը և օսմանյան պետությանը դնում անելանելի փակուղու առաջ։

Քայքայված երկրագործությունն այլևս ի վիճակի չէր բավարարելու երկրի ներքին կարիքները։ Սովի ահարկու վտանգը ջալալիների ապստամբության նախօրեին դարձել էր միանգամայն ռեալ փաստ։ Երկրագործության համար միանգամայն պիտանի հսկայական հողային տարածություններ վերածվել էին մարգագետինների։ Հենց այս ժամանակաշրջանում է, որ խիստ ավելանում են հարավային ու հարավ-արևմտյան Հայաստանում քոչվորական և կիսաքոչվորական ցեղերի քանակը[46]։

Կառավարությունը չէր կարողանում ապահովել ոչ միայն խոշոր քաղաքների, այլև մինչև անգամ մայրաքաղաք Պոլսի պարենավորումը գյուղատնտեսական մթերքներով։ Պետությունը հատուկ

[44] Տե՛ս Ազարիա Սասնեցւոյ, Որդ ի վերայ հարուածոց արևելեան դաւառացն և աշխարհին Հայոց ի ձեռաց Ճելալեանց, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 326։

[45] M. Akdağ, Նշված աշխատությունը, էջ 384—385։

[46] Տես՝ Ahmet Refik, Anadolu'da Türk aşiretleri, էջ 15, 19, 24 և այլն։

զինված ջոկատներ էր ուղարկում հեռավոր նահանգները պարենամթերք հավաքելու։ Սակայն գյուղացիները հաճախ չէին ենթարկվում սուլթանական հրովարտակներին ու տեղ-տեղ ընդհարվում էին ուղարկված զինախմբերի հետ, որոնք մեծ մասամբ բաղկացած էին լինում ենիչերիներից[47]։

Ջալալիների ապստամբություններին նախորդող՝ 1573, 1574, 1575, 1576, 1583 թվականները եղել են իսկական սովի տարիներ[48]։ Այդ տարիներին կառավարական զինված ջոկատները մտնում էին գյուղերը և բռնագրավում գյուղացու վերջին ունեցվածքը։ Մի շարք վավերագրերի համաձայն, հնգապատիկ, տասնապատիկ գներով պետական պաշտոնյաները վաճառում էին գյուղացուն հենց նրա ձեռքից խլված պարենը[49]։

Փաստորեն մինչև 1595 թ., այսինքն՝ ջալալիների ապստամբության սկիզբը Մ. Ակդաղի ասելով «Անատոլիան (իմա՝ Փոքր Ասիան—Մ. Ջ.) ամբողջությամբ սովի մեջ էր»[50]։

Սոսկալի պատուհաս էին դարձել ժողովրդի գլխին համաճարակն ու բնական աղետները՝ պարբերաբար կրկնվող երկրաշարժերը։ 4 սեպտեմբեր 1615 թվակիր իր նամակում իտալացի ճանապարհորդ Դելլա Վալլեն նշում էր, որ «համաճարակը համարյա մշտապես թագավորում է...» Թուրքիայում[51] ու խլում տարեկան հարյուր հազարավոր մարդկային զոհեր[52]։

[47] Հայ և օտար աղբյուրների վկայությամբ ենիչերիների կողմից խաղաղ բնակչության նկատմամբ կատարված կամայականությունները շափ ու սահման չեն ունեցել։ Եվ պատահական չէ, որ Գր. Դարանաղցին «ենիչերի» բառը թարգմանում է «նոր չարիք» (Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 108)։

1592 թ. Էրզրումի ու նրա շրջակայքի բնակչությունը ոտքի է կանգնել ու թույլ չի տվել, որ պետական պաշտոնյաները ենիչերիների հետ միասին կողոպտեն նրանց ցորենի ու գարու վերջին պաշարները։ Կառավարությունը ստիպված է եղել լրացուցիչ զորք ուղարկել Էրզրում ու ճնշել հանդուգն ըմբոստներին (տե՛ս I.H.Danişmend, Նշվ. աշխ-ը, հատ. II էջ 12)։

Հիջրեթի 1000 թվականին (1591—92 թթ.) հարկահավաքման ժամանակ բեկլերբեկ Իբրահիմ փաշայի կողմից ցուցաբերած չափից դուրս դաժանության պատճառով ապստամբություն բռնկվեց նաև Դիարբեքիրում (տե՛ս Asaf Halef Çelebi Nâima, Istanbul, 1953, էջ 19—20)։

[48] M. Akdağ, Նշված աշխ.-ը, էջ 491։

[49] Նույն տեղում, էջ 403։

[50] Նույն տեղում, էջ 405։

[51] Voyages de Pietro della Vallé, Rouen MDCCXLV, էջ 70։

[52] Վասն այն սաստիկ մեծ սով եղեալ,
Եւ հաց ուրեք չեղև գըտեալ,
Զի լիոր մի հաց տասն ոսկի լիալ,
Եւ զայն ոչ եղև գըտեալ։

Խոսելով այդ տարիներում տեղի ունեցած երկրաշարժերի մասին, Առ. Դավրիժեցին գրում է. «Թուին ՌԼԳ (1583) շարժ եղև յԵզընկան, յունիսի ԺԵ քաղաքն առհասարակ փլաւ. ԺԵ այր և կին մեռան։ Եթե մարդ այլ ի ներքև հողոյ մնաց, շորս կիսամահ հանեցին, որն ապրեցաւ՝ որն մեռաւ և որն սախաթ մնաց»[53]։ 1598 թվականին մեծ երկրաշարժ է տեղի ունենում Ամասիայում և Զորումում[54]։

Գյուղացիները մեծապես տուժում էին նաև համաճարակի հետևանքով իրենց անասունների մասսայական կոտորումից. «Թվ. ՌԽԴ (—1595),—գրում էր Գր. Դարանաղցին,—արջառաց շորքոտանեաց մահն անկաւ և տարածեցաւ յարևելից մինչև ի մուտս արևվու։ Եւ նեխեցաւ երկիրն ի գիշոյ հոտոյն, որ ամարային էր եղանակն...»[55]։ Արևմտյան Հայաստանի վանքերից մեկի աբեղա գրիչ Ավետիսը 1596 (ՌԽԵ) թվականին, որպես ականատես գրում է. «...ի թուականիս հայոց ՌԽԵ (1596) ի դառն և ի նեղ ժամանակիս, որ յայսմ ամի խաշանց մահ երեկ, բազում տաւար հատաւ վասն ծովացեալ մեղաց մերոց»[56]։

Այսպիսով, 16-րդ դարի վերջին տասնամյակներին Թուրքիայում հասունանում էին այն պայմանները, որոնք 17-րդ դարի նախաշեմքին ծայր տվեցին ջալալիների ապստամբություններին։

Ջալալիների ապստամբությունների պատճառը թաքնված էր օսմանյան պետության սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած խորը փոփոխություններում։ Ժամանակագիրները և մասնավորապես Գր. Դարանաղցին սուլթանի թուլամորթությամբ ու վեզիրների կաշառակերությամբ էին բացատրում ապստամբության պատճառները։ Սակայն նրանք նկատել են ուշադրավ փաստեր, որոնք կասկած չեն թողնում, որ ապստամբության հիմքում ընկած են եղել սոցիալ-տնտեսական պատճառները։ Այսպես, օրինակ, Գր. Դարանաղցին գրել է. «Եւ այս Սուլթան Մուհամմատիս (խոսքը Մեհմեդ 3-րդի (1595—1603 թթ.) մասին է—Մ. Ջ.) թուլամորթ լինելոյն և անփոյթ առնելով աշխարհացն, որ ամենայն իշխանք և դատաւորք և զօրք և զօրականք և բազումք ի ռամիկ զօրացն և ի շինականացն նեղեալ յանիրաւ դատաստանէ թագաւորին և վազիրացն, որ կաշառովք տային զիշխանութիւն դաւառապետութեանց և աշխարհակալութեանց և դատաւորութեանց, և տակաւին դեռ ի տեղին ոչ էին հասեալ, մանզուլ (պաշտոնագուրկ) առնէին և զտեղի նորա այլ ումեմն տային։ Եւ յորժամ յետինն գայր, առաջին եկեալ չտայր մտանելոյ և նստելոյ ի տեղին և երկոքին մարտնչէին ընդ միմեանս ի վերայ տեղւոյն։ Եւ զօրաժողով լինէին, ի հողագործ բռամկաց ժողովէին և մեծ բանակ լինէին. ևս այնպէս լինելով ապստամբք եղեն ամենեքեան և թագաւորէն և եղեն ջալալիք»[57]։

Խոսելով Ջալալիների ապստամբությունների նախադրյալների մասին, չի կարելի աչքաթող անել և հետևյալ կարևոր մոմենտը. այդ շարժումը լինելով, ըստ էության սոցիալական, միաժամանակ կրոնական շղարշով պարուրված ժողովրդա-ազատագրական շարժման որոշակի երանգ է ունեցել։ Ջալալի հրոսակախմբերին միացել են հատկապես շիա դավանանքին պատկանող մուսուլման քրդերը, և ոչ միայն նրանք, այլև թուրքերի դավանակից արաբները։ Երեմիա Չելեբին նշում է, որ ջալալիներին հետևում էին «Մարք-արապիկք»[58]։ Քյաթիբ Չելեբին ակնարկելով շարժման մեջ քրդերի մասնակցության մասին, գրում է. «Երբ զինվորներ Էնգերուսի (Հունգարիայի) նվիրական պատերազմին գնացին, անգիտակից թուրքերից և խավարամիտ քրդերից մի շարք ավազակներ, հպատակությունից դուրս եկան ու բռնեցին դավաճանության և ապստամբության ուղին»[59]։ Եվ վերջապես չի կարելի աչքաթող անել, պատահականություն համարել և այն, որ ապստամբության գլուխ կանգնած էին ոչ թուրք ծագում ունեցող առաջնորդներ, ինչպիսիք էին Ջանփոլադօղլին և այլք։

Այս հանգամանքը բացատրելն այնքան էլ դժվար չէ։ Նվաճելով շատ երկրներ և հպատակեցնելով նրանց ժողովուրդներին, թուրքերը չկարողացան, հակառակ իրենց կամքի ու ցանկության, լուծել իրենց մեջ տեղական ժողովուրդներին ամբողջովին։ Հպատակեցված ժողովուրդները թուրքերին դիտում էին որպես սոսկ զավթիչների ու կեղեքիչների։ Եվ ահա, 16-րդ դարի վերջերին հպատակ ժողովուրդների դաժան ու աներևակայելի շահագործումը խոր զայրույթ ու վրդովմունք առաջացրին թուրք զավթիչների նկատմամբ։ Բռնատիրվածները միայն պատեհ առիթ էին փնտրում ապստամբելու և ներկայացավ այդ առիթը։ Օսմանյան կենտրոնական պետական ապարատի թուլացման պայմաններում նվաճված ժողովուրդները

53 Առ. Դավրիժեցի, էջ 631 և հետ.։

54 Նույն տեղում, էջ 632։

55 Գր. Դարանաղցի, էջ 24։

56 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 4515, էջ 416։

57 Գր. Դարանաղցի, էջ 14։

58 Երեմիա Չելեբի, Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ օսմանցոց թագաւորացն, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1675, էջ 85ա։

59 Kâtip Çelebi, Fezleke, հատոր Ա, էջ 127—128։

ոտքի կանգնեցին ու փորձեցին թոթափել թուրքական ատելի լուծը։ 1595—1601 թվականներին ապստամբեցին վալաքները, Միքայել քաջ վոյնվոդը անկախություն էր հռչակել Վալաքիայում իր իշխանության ներքո միացնելով նաև Մոլդավիան ու Տրանսիլվանիան[60]։ 1606 թ. Կիպրոսում 80.000 հույներ ապստամբության դրոշ պարզեցին, բայց շուտով ճնշվեցին[61]։ Այդ նույն թվերին հատկապես մեծ ապստամբություն բարձրացրեց Լիբանանի ժողովուրդը[62]։ Այս շարժումները համընկնում էին ջալալիների ապստամբությունների հետ։ Անշուշտ սխալ կլիներ անդիտանալ այդ երկու շարժումների մեջ եղած օրգանական կապը։ Մյուս կողմից քրդերի շարժումները նույնպես գնում էին ուղղակիորեն ջալալիական շարժման դրոշի ներքո։ Չպիտի մոռանալ և այն, որ 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին ամեն մի հակապետական շարժում համարվում էր ջալալիական։

Քրդերի շարժումը սակայն համընդհանուր և եթե կարելի է այդպես ասել համացեղային բնույթ չէր կրում։ Առանձին քուրդ ֆեոդալները ոչ միայն չէին հովանավորում ջալալիներին, այլև որոշ թշնամանքով էին վերաբերվում կամ ուղղակի մարտերի բռնվում նրանց հետ։ Այսպես, Ազարիա Սասնեցին խոսելով ոմն ջալալի ղեկավարներից մեկի՝ Իպրիմ պեկի (ըստ երևույթին Իբրահիմ բեկի—Մ. Ջ.) Մուշում կատարած ավերածությունների մասին գրում է.

«Եւ երկրորդին Իպրիմ պեկ լեալ,
որ ի Ղուլիպայ էր նա ելեալ,
Երեք հազար զարբս կալեալ,
Եւ զամս վեց զՄուշ աւերեալ։

Այնուհետև խոսելով Իպրիմ բեկի կատարած ավերածությունների ու կողոպուտների մասին, նա շարունակում է.

Իշխան տեղոյն որ էր տիրեալ,
Շարաֆ անուն էր կոչեցեալ
Երեք անգամ հեծեալ բերեալ
Եւ ընդ նմա պատերազմեալ»[63]։

[60] Th. Lavallée, Histoire de l'empire ottoman, Paris, 1855, էջ 275—278։
[61] Գր. Դարանաղցի, էջ 98—100։
[62] Th. Lavallée, նշված աշխատությունը, էջ 46։
[63] Ազարիա Սասնեցի, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 332։

Արդ՝ նորից անդրադառնանք Հյուսամմուդինի, Դանիշմենդի և այլ ժամանակակից թուրք պատմաբանների ջալալիների ապստամբություններին տրված մեկնություններին։ Իր տեղում ցույց տվեցինք, որ վերոհիշյալ հեղինակների բացատրությունը միտումնավոր է ու սխալ։ Մեր կարծիքով Ա. Ս. Տվերիտինովան անհարկի տուրք է վճարում թուրք ժամանակակից հեղինակներին, երբ գրում է. «Պարզ է, որ բնիկ թուրք ֆեոդալները չէին կարող հանգիստ կերպով հաշտվել պետության ղեկավարման շրջանակից դուրս մնալու, իրենց իրավունքների ու արտոնությունների ուղղությունների զաղափարի հետ. դա հասցրեց այն բանին, որ նրանք օպոզիցիայի մեջ մտան սուլթանական կառավարության նկատմամբ։

Այդ օպոզիցիոն համբարին,—շարունակում է նա,—նախ և առաջ հարում էին մանր ու միջին ֆեոդալները, որոնք չունեին այնքան տնտեսական ու քաղաքական ուժ, որպեսզի կարողանային պաշտպանել իրենց, և դրա համար էլ ավելի շուտ, քան ուրիշները, նրանք սկսեցին դուրս մղվել իրենց տոհմական տիրույթներից»[64]։

Շշմարտություն է, որ մանր ու միջին ֆեոդալները գտնվում էին օպոզիցիայի մեջ սուլթանական կառավարության նկատմամբ, որը պաշտպանում էր խոշոր ֆեոդալների շահերը ու հանդիսանում էր վերջինների հենարանը։ «Թվին ՌԽԴ (1595),—պատմում է անանուն տարեգրողներից մեկը,—մեռաւ սուլթան Մուրատն և նորա որդի իւր սուլթան Մահամատն, որ է այժմ ի մերում ժամանակի, որ կատաղի և մոլեգին է դարձեր, գրեթե չկա թագաւոր... դատաստանն բարձեալ է և ոչ կայ քննութիւն և իրաւունս զրկելոյ, զի դարձեր են իրրև ձկունս մեծամեծս որ զփոքունս կլանեն... Թուի թէ լցեալ է չափ մեղաց դոցա, զի կարի շփոթեալք են, զմիմեանսբք ելանելովն աշխարհի, և կուտեն զմիմեանս առանց օտար թշնամեաց, այլ թշնամիք են առ ընտանիք իւրեանց...»[65]։

Իսկ ո՞վքեր էին այդ մանր ու միջին ֆեոդալները՝ «բնիկ թուրքե՞րը»։ Ենթադրենք մի բոպե, թե խոշոր ֆեոդալների մեծ մասը ոչ-թուրքական ծագում ունեցող, ինչպես Ի. Դանիշմենդը կասեր «դեվշիրմե»-ներ են։ Եվ իրոք դա այդպես է։ «Լինի պալատում, լինի կայսրության մեջ պաշտոններ ունեցողները ընդհանրապես դուրս են եկել պատերազմում գերվածների երեխաներից, և իրենց մոր ձեռքերից ինը տասը տարեկան հասակում խլված երեխաներ

[64] А. С. Тверитинова, Восстание Кара Языджи..., էջ 45։
[65] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 273. էջ 66բ—67ա։

են»[66],—գրում է ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն։ Կոչիբեյի, ինչպես և Թուրք մյուս պատմագիրների հաղորդած տեղեկություններից մենք արդեն գիտենք, որ խոշոր ֆեոդալների հողերը վերաբաժանում էին իրենց ազգակիցներին ու գաղափարակիցներին։ Մյուս կողմից, մենք արդեն տեսանք, որ հակառակ խոշոր ֆեոդալների կամքի, հողերն անցնում էին նաև էհլ-ի Օրֆի ձեռքը, որը հենվելով վաշխառուական կապիտալի վրա պայքարում էր խոշոր ֆեոդալների դեմ կուլ չգնալու նպատակով։ Մ. Ակդաղի ուսումնասիրությունից երևում է, որ մանր ու միջին ֆեոդալների զգալի մասը կազմում էին հիմնականում ենիչերիների սպայական կազմը և նախկին պետական զանազան պաշտոնյաները[67]։ Հանրահայտ է, որ ենիչերիները նույնպես ծագումով Թուրքեր չէին։ Այսպիսով, դուրս է գալիս, որ «դեվշիրմե» խոշոր ֆեոդալները պայքարում են նույն «դեվշիրմե» մանր ու միջին ֆեոդալների դեմ։ Ակնհայտ է, ուրեմն որ այսպես կոչված «բնիկ Թուրք ֆեոդալները» Թուրք հեղինակների մոլի ազգայնականությամբ Թունավորված երևակայության արդյունք են։ Ջալալիների ղեկավարներից մեկի մասին աղբյուրներում ասված՝ «Թիւրքէ պիլմեզ» (Թուրքերեն չիմացող)։ Չի բացառված այն, որ այդ մեկը եղած լինի «դեվշիրմե» ֆեոդալ[68]։

Օսմանցի ֆեոդալների միջև ծավալված պայքարը գնում էր ոչ Թե ազգային, այլ դասակարգային հողի վրա։ Ոչ մի քննադատության չի կարող դիմանալ, այսպես կոչված «բնիկ Թուրք ֆեոդալներին» որպես Թուրք գյուղացիության շահերի արտահայտիչներ ներկայացնող տեսակետը։ Իրականության մեջ դասակարգային պայքար էր գնում մի կողմից գյուղացիության և տեղական ֆեոդալների, իսկ մյուս կողմից վերջինների և կենտրոնական վարչության միջև։ Այդ պայքարում հաղթող էին դուրս գալիս խոշոր ֆեոդալները, քանի որ նրանց ձեռքում էր կենտրոնացված ամբողջ ռազմական ուժը։ Այդ բոլորի հետևանքով «Նրանց (իմա՝ խոշոր ֆեոդալների—Մ. Զ.) մեջ կան մարդիկ,—գրում է Կոչիբեյը,—որոնք ունեն 20—30 և անգամ 40—50 մեծ ու փոքր ավատներ»[69]։

---

[66] J. B. Tavernier, Nouvelle relation de l'intérieur du sérail, Amsterdam, 1678, էջ 2—3

[67] M. Akdag, Նշված աշխատությունը, էջ 371 և հետ։

[68] Տե՛ս Եռեմիա Չելեբի, Պատմութիւն համառօտ Դէ տարւայ օսմանցոց թագաւորացն, ձեռ. N 1675, էջ 88բ։

[69] В. Д. Смирнов, Кочибей Гёмюрджинский էջ 124։

Արդ, որոնք էին ջալալիների ապստամբությունների նախադրյալները։

ա) Օսմանյան ֆեոդալական հողատիրության մեջ առևտրավաշխառուական կապիտալի ներթափանցման հետևանքով առաջացած օսմանյան հին ռազմա-ավատական սիստեմի քայքայումը, որը կենտրոնական պետությանը զրկում է հողերից ստացվող հրկայական եկամուտներից, որի զգալի մասն անցնում է վաշխառուներին և կապալառուներին։

բ) Կապիտուլյացիաների միջոցով Եվրոպայի, ինչպես նաև մասամբ արևելյան երկրների հետ ունեցած առևտրական հարաբերությունները քայքայիչ ազդեցություն են թողնում Թուրքիայի ընդհանուր տնտեսության վրա։ Չտեսնված անկում է ապրում ինչպես արհեստագործական, այնպես էլ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Պետությունը կանգնում է ֆինանսական լուրջ ճգնաժամի առաջ։

գ) Օսմանյան ավատական հողատիրության սիստեմի քայքայումը հասարակության տիրապետող խավերի մեջ առաջ է բերում նոր փոխհարաբերություններ։ Եթե մի կողմից խոշոր ֆեոդալները ձգտում են զրկել մանր ու միջին ֆեոդալներին իրենց ավատական տիրույթներից ու իրավունքներից, ապա մյուս կողմից հասարակության մեջ իր որոշակի տեղն է գրավում ոչ-ազնվական ծագում ունեցող տիրապետող մի նոր խավ (էհլ-ի օրֆ), որն իրեն հակադրում է խոշոր ֆեոդալներին։ Այդ երկու խավերի միջև ծավալված պայքարը հետզհետե թուլացնում է օսմանյան կենտրոնական պետական ապարատը։

դ) Պետության տնտեսական ու ֆինանսական դժվարությունները ամենածանր կերպով անդրադառնում են երկրի բնակչության և հատկապես հպատակ ոչ-մուսուլմանների, ի թիվս որոնց հայերի վրա։ Խիստ ավելանում են հարկերն ու տուրքերը. ֆեոդալների կամայականություններն անցնում են ամեն մի սահման։ Գյուղացիությունը քայքայվում ու ապադասակարգայնանում է։ Գյուղացիների մի զգալի մասը վերածվում է չիֆթիրոզանների, լեվենդների, սուխտանների, որոնք դառնում են իսկական չարիք և պատուհաս ժողովրդի, նախ և առաջ հպատակ ոչ-մուսուլման ժողովրդի գլխին։ Սրանք հետագայում կազմում են ջալալիների հիմնական կորիզը։

ե) Հարկերի ու տուրքերի խիստ ավելացումը ոտքի են հանում հպատակ ժողովուրդների մի մասին Ասիայում և Եվրոպայում։ Այդ շարժումները Թուրք զավթիչների ատելի լծից ազատագրվելու նպա-

տակ էին հետապնդել։ Շարժումների մի մասն ընթացել է ջալալի-ների դրոշով (շիա քրդեր)։ Հետևաբար շարժումն իր զարգացման որոշ աստիճանում ուներ նաև ժողովրդա-ազատագրական բովանդակություն։

գ) Երկրի ներսում եղած ծանր կացությունը բարդանում է և նրանով, որ կայսրությունն այս ժամանակ վարում է պատերազմ երկու ճակատում, արևելքում՝ Իրանի հետ (1578-ից մինչև 1639 թվը), իսկ արևմուտքում՝ Ավստրիայի հետ (1593-ից մինչև 1600 թվը)։ Հատկապես եվրոպական ճակատում Թուրքիան կրում է պարտություն պարտության ետևից։ Այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունն անկում է ապրում, նրա գլխավոր ռազմական թշնամիները ամրապնդվում են։ Եվրոպայում աճում են նոր արտադրաուժեր, ծնունդ են առնում բուրժուական-կապիտալիստական հարաբերություններ այն ժամանակ, երբ Թուրքիան մտնում է այսպես կոչված «լճացման ժամանակաշրջանը»։ Օսմանյան պետությունը նման պայմաններում զրկվում է իր ամենահիմնական եկամուտի աղբյուրից՝ ռազմաավարից (g'animet)։

Վերոհիշյալ սոցիալ-տնտեսական նախադրյալները 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին ծնեցին քաղաքական մի ճգնաժամ, որն իր արտահայտությունը գտավ ջալալիների հզոր շարժումների մեջ։

Օսմանյան պետության վիճակի հետաքրքիր բնութագիրն է թողել 1592 թ. ռուս դեսպան Նաշչյոկինը. «Թուրքիայում հիմա ամեն ինչ փոխվել է,—զեկուցում է նա իր կառավարությանը,—սուլթանը և փաշաները տարված են միայն ընչաքաղցությամբ. առաջինը հարստացնում է գանձարանը, բայց թե ինչի՞ համար հայտնի չէ, ոսկին թաքցնում է սունդուկներում և ոճիկ չի վճարում զորքին, որը սոսկալի խռովք բարձրացնելով մոտենում է արքունիքին պահանջելով դեֆթերդարի կամ գանձարանապետի գլուխը։ Պետության մեջ ոչ կարգ կա, ոչ արդարություն։ Սուլթանը կողոպտում է պաշտոնյաներին, պաշտոնյաները՝ ժողովրդին և ամենուրեք թալան ու ապստամբություններ. չկա անվտանգություն ոչ ճանապարհների վրա՝ ուղևորների համար և ոչ էլ առևտրի մեջ՝ վաճառականների համար։ Երկիրը ամայացած է Պարսկաստանի հետ մղած պատերազմի և բռնությունների հետևանքով...»[70]։

[70] **Н. М. Карамзин**, История государства Российского, СПБ, 1824. Т. X էջ 175 և հետ.։ Քաղվածքը վերցված է ակադ. Ա. Գ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» գրքից, հ. 2, էջ 66։

1599 թ. իտալացի դեսպան Նիկոլո Մոտիոն իր զեկույցներում հայտնում էր հետևյալը. «Այժմ կայսրությունը գտնվում է լրիվ անկման մեծագույն վտանգի մեջ, այդ բանում ոչ ոք չի կարող կասկածել, նամանավանդ եթե նկատի առնվի նրա բանակի ոչ կատարելագործվածությունը, որպես հետևանք զինվորների աննշան քանակի, նրանց անհնազանդության, նաև դրամի պակասության, արքայի անընդունակության և արտաքին ու ներքին պատերազմների գոյության։ Ահա արդեն քանի տարի է անհաջող պատերազմում է Թուրքը (իմա՝ Թուրքական սուլթանը) նորին մեծություն կայսեր հետ, նրան հանգիստ չեն տալիս վրացիներն ու կազակները, օրը օրին պատրաստվում է նրա վրա հարձակվել Պարսիկը (իմա՝ Պարսկաստանը)։—Ապստամբեց Կարամանի Հյուսեյն փաշան, իր կողմնակից մեծ թվով զինվորներով։ Այս ապստամբությունը, եթե հունգարական պատերազմը շարունակվի, սպառնում է վերջանալ, հույս ունենք, Թուրքի ամբողջական կործանումով...»[71]։

Առհասարակ պիտի նշել, որ Եվրոպան ու Պարսկաստանը ուշի ուշով հետևում էին Թուքիայում տեղի ունեցող ամեն մի իրադրության և պատեհ առիթ էին փնտրում հարձակվելու նրա վրա։ Եվ ինչպես հայտնի է արդեն, Պարսկաստանը օգտագործելով ջալալիների ապստամբությունը ներխուժեց Թուրքիա, ետ խլեց նրանից ամբողջ Անդրկովկասը։

[71] **А. С. Тверитинова**, Восстание Кара Языджи..., էջ 32։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՋԱԼԱԼԻՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐՆ ՈՒ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ջալալիների ամենախոշոր ապստամբությունը բռնկվում է 1598 թվականին՝ Ուրֆայի շրջակայքում։ Շարժումը գլխավորել է Արգուլ Հալիմ անունով միջին դիրքի մի ֆեոդալ, որը պատմության մեջ հայտնի է Կարա Յազըջի անունով։ Այդ ապստամբության համար հիմնական շարժառիթ է հանդիսացել, ինչպես այդ մասին վկայում են թուրքական ժամանակագիրներից մի քանիսը, հետևյալը. խոշոր ֆեոդալների շահերն արտահայտող սուլթանական կառավարությունը փորձել է զրկել վերոհիշյալ Կարա Յազըջիին իր ավատական տիրույթներից ու իրավունքներից։ Ահա Ի. Փեչեվու հաղորդած հետաքրքիր տեղեկություններն այդ մասին. «Կարա Յազըջին,—գրում է նա,—հանդիսանում էր Սիվասի սանջակներից մեկի միրիլիվայի կայմակամը (կառավարիչը—Մ. Զ.)։ Միրիլիվան [այդ ժամանակ] գտնվում էր արշավանքում։ Հիշված սանջակը Ասիթանեի[2] կողմից տրվում է մի ուրիշին, երբ գալիս է նոր միրիլիվայի մուսալլիմը (տեղակալը—Մ. Զ.)։ Կարա Յազըջին թույլ չտվեց, որ նա տիրի [սանջակին]։ Երբ միրիլիվան մեծ թվով մարդկանց հետ որոշեց հարձակվել [իր վրա], Կարա Յազըջին ևս մարդիկ հավաքեց և [նոր] նշանակված միրիլիվային սպանեց։ Այնուհետև երբ հայտնի դարձավ, որ հնարավոր է նոր հարձակում իր վրա, նա ապստամ-

[1] «Նախ զարայ Եաղիջին բազում հեծելօք, որ ի Ռեէ (—1598) թուին ապրստամբեցաւ ի թագաւորէն» (Առ. Դավրիժեցի, էջ 86, 632)։

[2] Այդպես էր կոչվում Սուլթանական մայրաքաղաքը՝ Ստամբուլը։

բության դրոշ բարձրացրեց և իր շուրջը համախմբեց այդ շրջաններում եղած ավազակներին, լեվենդներին»[3]։

Այդ ապստամբության հետագա ծավալմանը մեծապես նպաստել է պատմական հետևյալ իրադրությունը։ 1596 թ. հոկտեմբերի վերջին ավստրիական ֆրոնտում Կերեստեշում (Հաջ Օվա) տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ թուրքերի և ավստրո-հունգարացիների միջև, որը վերջացավ թուրքերի հաղթանակով։ Սակայն ճակատամարտի ժամանակ թուրքերի մոտ նկատվել էին մասսայական փախուստի դեպքեր։ Ճակատամարտից հետո, ինչպես այդ մասին վկայում են թուրքական աղբյուրները, Ջղալազադե Սինան փաշան երեք օր համընդհանուր քննության է ենթարկել բանակը և տեղն ու տեղը գլխատել է տվել մի շարք ֆեոդալների։ Հեռակա կարգով ընդամենը 30.000 հոգի զրկվում են իրենց հողակտորներից։ Հատուկ հրամանով կարգադրվում է բոլոր վիլայեթների դատավորներին ձերբակալել և սպանել բոլոր փախստականներին, այսպես կոչված «ֆիրարիներին»։

Մահվան դատապարտված ֆեոդալներն անցան Փոքր Ասիա և բարձրացրին ապստամբության դրոշ։ Շուտով «ֆիրարի» ֆեոդալների շուրջը հավաքվեցին «չիֆթբոզաները», «լեվենդները», «սուխտանները» և առհասարակ սուլթանական կառավարությունից դժգոհ տարրերը։

Եվ այսպես «ֆիրարիները» նոր թափ, նոր շունչ ու լիցքավորում են հաղորդում արդեն սկսված շարժմանը (ի դեպ, նշենք, որ ոչ մի վկայություն չկա այն մասին, որ Կարա Յազըջին մասնակցած լինի Կերեստեշի ճակատամարտին), որն ընդունում է խիստ վտանգավոր բնույթ սուլթանական կառավարության համար։

Կենսագրական տվյալները Կարա Յազըջիի մասին աղբյուրներում խիստ սակավ են և երբեմն էլ հակասական։ Ըստ Հյուսամմադինի, Կարա Յազըջին եղել է՝ «Ուրֆայի շրջաններում բնակվող

[3] I. Peçevi, հատ. II, էջ 252։

قره یازیجی سیواس آلواسندن برنده بر میر لوایه قایمقام ایری
ومیرلوا عسکارایله سفره ایری اتفاق سنجاغی آستاندن آخره ویرلمیشی
میر جدددین مسلمی گلدگده قره یا زیجی ضبت ایترمدی میرلوا
گلیمخك نیاادمحه آدم ایله گلمهسی مقرر اولنمنین قره یازجی دخی
آدم جمع ایتدی وکلن میر لوایی قتل ایتدی صفره اوزرینه زیاادمجه
عسکرایله گلنمك احتمالی او لنجاق عصیان علمی قالدردی وحمله اول
سمتلرین اشقیلن ملوندن دیر.دی.

[4] Hüsamuddin „Amasya tarihi", հատ. III, էջ 348, „Urfa dahilinde sâkin kılıclu aşireti efradından Ali'nin oğlu"

Կլըջլու ցեղի երևելիներից՝ Ալիի որդին»։ Մ. Սելանիկին նրան հին շահական ծագում է վերագրում[5], ըստ երևույթին, նրա համար, որ հետագայում ապստամբած Կարա Յազըջին իրեն սուլթան է հայտարարում և անվանակոչվում է «Հաղթական Հալիմ շահ» (حليم شاه مظفر جاى)։ Նաիման, Քյաթիբ Չելեբին նրան անվանում են «Սեկպանների[6] վաշտի պետ»։ Առ. Դավրիժեցին հաղորդում է մեզ այսպիսի կենսագրական տեղեկություններ Կարա Յազըջիի մասին. «Այս եազիչիս աշխարհաւ էր Կապադովկիոյ, Սուխթայ գոլով՝ և ժամանակս ինչ եկաց ի յՈւրհայ առ մօլլայ մի ուսման աղագաւ և յետոյ եղև թֆանքչի և եկաց զինուորութեամբ ի սպասաւորութիւն այլոց իշխանաց, յաղթող ի պատերազմունս, և յետոյ ինքնագլուխ եղեալ ժողովեաց զընկերս՝ ապստամբեալ ի թագաւորէն, բազմացոյց զզօրս իւր, մինչ զի ասէին թէ, զերեսուն և զվեց հազարապետս ունէր, որ բոլուկբաշի կոչէին»[7]։ Ազարիա Սասնեցին Կարա Յազըջու մասին գրում է, որ նա «ի Սեւերակն եղեւ սրնեալ, այլև անդէն զինուորեալ»[8]։

Ամենից հավանականը պիտի համարել Առ. Դավրիժեցու հաղորդած կենսագրական տեղեկությունները, այսինքն՝ որ նա ունեցել է հասարակ ծագում, եղել է սուխտան, սակայն հետագայում վարել է մի շարք ոչ-բարձր պաշտոններ։ Եղել է զինվորական և սեկպանների պետը։ Իրեն շահական ծագում վերագրելը ապստամբներին խաբելու մի միջոց էր միայն։ Շատ շուտով ապստամբությունը լայն ծավալ է ընդունում։ Ամենուրեք հանդես են գալիս ապստամբ զեկավարներ, որոնց յուրաքանչյուրի տրամադրության տակ եղել են երեք-հինգ հազար[9], Երեմիա Չելեբիի բառերով ասած՝ «խառնիճաղանճ զունդք խուժադուժք»[10]։

Ապստամբությունը հենց սկզբից ընդգրկում է ընդարձակ տերիտորիա և շարժմանը ակտիվ մասնակցում են ոչ միայն մեզ նախածանոթ փաստորեն ապադասակարգայնացված չիֆթբողանները, լեվենդները ու սուխտանները, այլև արաբներն ու թուրքմենները։ Խոսելով Կարա Յազըջիի ապստամբության մասին Կոչիբեյը գրում

[5] I. H. Danişmend, նշվ. աշխ-ը, էջ 194։

[6] Սեկպանները կազմում էին ենիչերական զորքի մի մասը, որի պարտականությունն էր հսկել արքունու օրսորդական շներին։

[7] Առ. Դավրիժեցի, էջ 632։

[8] Ազարիա Սասնեցի, Ոդբ..., «Հանդէս ամսօրեայ» 1937, էջ 327։

[9] Hüsamuddin, նշված աշխ., հ. III, էջ 361։

[10] Երեմիա Չելեբի, Պատմութիւն համառոտ Դճ տարւոյ օսմանցոց թագաւորացն, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1675, էջ 88բ։

է. «Այսպես մի ժամանակ, այն է 1004 (1595—96) թվականին[11] անատոլիական նահանգներում հանդես եկան ջալալի ավազակները։ Անատոլիայի նահանգներում գտնվող Կարամանի, Սիվասի, Մարաշի, Հալեպի, Դամասկոսի, Ուրֆայի, Դիարբեքիրի, Էրզրումի, Վանի և Մուսուլի գյուղերն ու բնակելի վայրերը կողոպտվեցին և ավերվեցին, որոշ շրջաններ հիմնահատակ արվեցին։ Անգամ հին մայրաքաղաք Աստվածախնամ Բրուսան նույնպես ավերվեց և նրա մի շարք թաղամասեր այրվեցին։ Եվ որովհետև արաբ ու թուրքմեն ցեղերը նույնպես դուրս եկան հնազանդությունից, ու նրանց խեղճ ռայաթների վրա կատարած հարձակումներն ու կամայականությունները անցան ամեն մի սահման, ուստի այս բոլորի հետևանքով մի շարք գյուղեր նույնպես ավերվեցին»[12]։

Աղբյուրների, համարյա միաբերան, վկայությամբ, Կարա Յազըջիին սկզբնական շրջանում իր շարժումը ծավալում է Ուրֆայի շրջանում, գրավում է քաղաքն ու շրջակայքը, մեծ ավերածություններ գործում։ Ազարիա Սասնեցին Կարա Յազըջիի մասին նշելով, որ՝

«Սա ճելալոց սկիզբն եղեալ,
Եւ աշխարհի աւեր ածեալ,
Անտի յառաջ յՈւրֆա դիմեալ,
Քառասուն հազար զօրօք հեծեալ.
Եւ ըզքաղաքն պաշարեալ,
ամիսս երկու շրջապատեալ։
Եւ յետ աւուրց ի նա մրտեալ,
Եւ ըզդղեակն անդէն առեալ։
Զիւր մեծամեծսն զլխատեալ,
Եւ ի նոցա տեղքն նրստեալ։
Եւ ըզքաղաքն աւար առեալ,
զամենեսեանսն կողոպտեալ։
Նաև զօրացն իւր ցրուեալ,
զերկրաւն ամէն շուրջ տարածեալ.
Զամենեսեան զո և զրտեալ,
ի չարչարանս, ի մահ մատնեալ։
Զբոլոր զերկիրն աւերեալ,
բնաջինջ զամենն արարեալ»[13]։

[11] Չնայած որ այստեղ որպես ապստամբության սկիզբ մատնանշված է 1596—96 թ., սակայն ըստ երևույթին Կարա Յազըջին կառավարությանը սկսում է անհանգստացնել միայն սկսած 1598—1599 թվականներից։

[12] Risale-i Koçibey, էջ 18—19

[13] Ազարիա Սասնեցվոյ Ոդբ, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 327։

Առ. Դավրիժեցին իր հերթին գրում է, որ Կարա Յազըջին «...ապստամբեցաւ ի Թագաւորէն, և եկեալ յՈւրհայ քաղաք եմուտ ի բերդն, և ամրացաւ[14]»։ Գրիգոր Դարանաղցու մոտ մենք կարդում ենք լրացուցիչ տեղեկություններ. «Թվ. ՌԽՁ (1597) ոմն ապստամբ Ազիճի անուն ել ի միջոյ իւրեանց և ապստամբեցոյց զբաղումս ընդ իւր և անթիւ զօրս գումարեաց և ապականեաց զբաղում գաւառս։ Նախ ամրացաւ յամուր դղեկին Եդեսիոյ մի ամ և կէս, և եկին շատ իշխանք բազում զօրօք ի Թագաւորէն, բազում ժամանակ պատերազմեցան ընդ Եդեսիոյ և անկարացան առնուլ զնա։ Յոր կողմն որ խրամահատէին ի գրսէն՝ նա ի ներքուստ արագ ամրցրներ ի գիշերի»[15]։ Եվ վերջապես հավաստի տեղեկությունների հիման վրա գրված «Ֆեղլեքե»-ի մեջ Քյաթիբ Չելեբին գրում է, որ Կարա Յազըջին «...ավազակների գլուխն անցած... Ռուհայի (Ուրֆա) շրջակայքում ապստամբության դրոշ բարձրացրեց»[16]։

Շուտով շարժումն այնպիսի վտանգավոր ընթացք է ստանում, որ կառավարությունը Եթովպիայի նախկին բեկլերբեկ Հյուսեյն փաշային զորք տրամադրելով ուղարկում է Ուրֆա Կարա Յազըջիի ապստամբությունը ճնշելու նպատակով։ Սակայն Հյուսեյն փաշան անցնում է ապստամբների կողմը[17]։ Ի. Դանիշմենդը Հյուսեյն փաշայի այդ քայլը դարձյալ փորձում է բացատրել ելնելով իր սխալ կոնցեպցիայից։ Նա գրում է. «Ամասիայի թուրք էշրաֆներից Բուդակ բեյի որդին հանդիսացող... այս [Հյուսեյն փաշան], իմանալով ապստամբության ազգային (sic!) պատճառները գործի է անցել և ժողովրդի նկատմամբ բռնություններ գործադրող դեվշիրմեներին պատժել և նրանց տեղ ապստամբ ղեկավարներին է նշանակել, որի համար էլ դեվշիրմեների կողմից նրա հասցեին [Կ. Պոլիս] են տեղացել բողոքագրեր, ուր նրան ներկայացրել են որպես մի մարդու, որը ժողովրդի նկատմամբ բռնություններ է գործադրում»[18]։ Փաստորեն Հյուսեյն փաշան ապստամբած կարող էր լինել որևէ պետական գործչի հետ ունեցած թշնամանքից մղված։ Սխալ է նույնիսկ նրան թուրքական ծագում տալը։ Իտալացի Նիկոլա Մուտիոյի մոտ, որը մեջ է բերել Ա. Ս. Տվերիտինովան իր աշխատության մեջ, Հյուսեյն

[14] Առ. Դավրիժեցի. էջ 86։

[15] Գր. Դարանաղցի. էջ 24—25։

[16] Kâtip Çelebi, Fezleke, հատոր Ա., էջ 127։

«سر اشقیا... اولوب... روها اطرافنده... عصیان ایتمشدی»

[17] Նույն տեղում, էջ 128։

[18] Նույն տեղում, էջ 196։

փաշայի մասին կա հետևյալ կենսագրական տեղեկությունը, «Մի սուլթանուհու կողմից ծնված այս Հյուսեյնը, որը Սինան փաշայի ազգականն էր... սերալ (պալատ) բարձրացավ և զինվորական իր կարիերան անցկացրեց հիշատակված Սինանի ղեկավարությամբ...»[19]։ Կարծում ենք, որ այս վկայությունը հաղիվ թե կասկած առաջացնի։ Իսկ Սինանի դեվշիրմե լինելը հանրահայտ է։

Այս դրության առաջ Ստամբուլի կառավարությունը երրորդ վեզիր Մեհմեդ փաշային նշանակում է Անատոլիայի սերդար (զորահրամանատար), և ուղարկում ապստամբների դեմ։ Հյուսեյն փաշան համաձայնություն գալով Կարա Յազըջիի հետ, քաշվում է Ուրֆա։ Այստեղ կազմվում է ապստամբ կառավարությունը, որի գլուխ կանգնում է «Աբդուլ-Հալիմ շահը», նույնինքը՝ Կարա Յազըջին։ Սադրազամ է նշանակվում Հյուսեյն փաշան, հետագայում նշանավոր ապստամբ ղեկավարներից մեկի՝ Կալենդար օղլիի փոխարեն[20]։

Մինչ Մեհմեդ փաշայի սերդար նշանակվելը կառավարության կարգադրությամբ Կարամանիայի մութասալլիմ Չավուշ Մեհմեդ փաշան փորձում է ճնշել Հյուսեյն փաշայի ապստամբությունը, սակայն, Ակսարայի մոտ ապստամբների հետ ունեցած երկու ժամվա մարտերից հետո Մեհմեդ փաշան պարտություն է կրում ու փախչում Կոնիա[21]։

1599 թ. օգոստոսին (մուհարրեմ 1008 թ.) սերդար Մեհմեդ փաշան հազար ենիչերիներով անցնում է Իսկյուդարը և շարժվում Հյուսեյն փաշայի վրա։ Սակայն վերջինը խուսափում է սերդարի հետ մարտի բռնվելուց, և ինչպես ասացինք, գալիս Ուրֆա ու միանում Կարա Յազըջիի հետ։ Մեհմեդ փաշան գալիս ու պաշարում է Ուրֆան, սակայն գրավել այն չի կարողանում։ Պաշարվածների վիճակն էլ խիստ ծանրանում է։ Ուստի նրանք համաձայնվում են հանձնել իշխանության ներկայացուցիչներին Հյուսեյն փաշային և փոխարենը, ինչպես գրում է Քյաթիբ Չելեբին, Ամասիայի սանջակը տրվում է Կարա Յազըջիին[22]։ Հյուսեյն փաշային տանում են Պոլիս.

[19] А. С. Тверитинова, Восстание էջ 37։

[20] J. H. Danişmend, Նշված աշխ.-ը, հ. Բ, էջ 195։

[21] Kâtip Celebi Fezleke հատ. Ա., էջ 128։

J. H. Danişmend, Նույն տեղում, էջ 196։

[22] Kâtip Cèlebi, Նշված աշխ., էջ 128։ Համաձայն Առ. Դավրիժեցու հաղորդած վկայությունների, Կարա Յազըջին Ամասիայի սանջակի կառավարումն ստացել է կաշառքով. «Ի ծածուկ կաշառօք կուրացոյց զաչս վեզիրին», (Առ. Դավրիժեցին, էջ 633)։

գլխատում ու անդամահատված մարմինը ի ցույց բոլորին պատեցնում են փողոցներում[23]։

Այս դեպքերի մասին Գր. Դարանաղցու մոտ կան հետևյալ տեղեկությունները. «...Եւ յորժամ որ ոչ կարացին առնուլ (խոսքը սերդար Մեհմեդ փաշայի զորքի մասին է—Մ. Ջ.) զբերդն քաղաքովն, և մին փաշա մի այլ ապստամբեալ էր ի Թագաւորէն և եկեալ յարեալ էր առ Աղիճին (խոսքը Հյուսեյն փաշայի մասին է—Մ. Ջ.) և ասացին պատերազմողքն թէ՝ զայն փաշան առ մեզ տուէք, որ թողեալ գնամք։ Նա զառաջինն ոչ կամեցաւ տալ, նա քաղաքացիքն և իւր զօրքն ամենեքեան միաբան աղաղակեցին թէ տուր զինչ նոքա խնդրեն, զի կու նեղիմք յերեսաց սովին. լաւ է մին մարդ կորնչել, քան մեք ամենեքեանքս։ Յակամայ և ի հարկէ ետուր ի ձեռս նոցա, և նոքա կախեցին զպարսպէն և իջուցին առ նոսա։ Եւ նոքա առեալ գնացին ի բաց և այլ ոչ կամեցան պատերազմել առ ժամանակ մի»[24]։

Այսպիսով՝ Կարա Յաղրջին փաստորեն դավաճանում է իր զինակից խոշոր ֆեոդալ՝ Հյուսեյն փաշային և դառնում Ամասիայի սանջակի կառավարիչ։ Դրանով նա դավաճանում է նաև իր զորքին, որը բաղկացած էր Թուրքական աղբյուրներում հիշատակված «ավազակներից» (اشقیا) «թափառաշրջիկներից և հարբեցողներից» (اوباش و قللاش)[25]։ Ապստամբները, իհարկե, չէին կարող ներել իրենց առաջնորդի նման քայլը, և նա հաջորդ տարվա գարնանը նորից կանգնեց ապստամբության գլուխ, այս անգամ արդեն դրսևորելով հեռու գնացող փառասիրական ձգտումներ։

Մեհմեդ փաշայի կառավարական զորքերի և ապստամբների միջև շուտով ընդհարումը դառնում է անխուսափելի։ 1600 թ. ապրիլ ամսին Դիվրիկի շրջակայքում «Ջեհեննեմ-դերե» («Դժոխքի հովիտ») կոչված վայրում ունեցած ճակատամարտում, Կարա Յաղրջին պարտություն կրելով շարժվում է դեպի Սեբաստիա ավարի ու ավերի ենթարկելով ճանապարհի վրա գտնված գյուղերն ու բնակավայրերը[26]։ Այդ մասին Ազարիա Սասնեցու «Ողբ»-ում կարդում ենք.

«Եւ Եաղրճին գարունն ելեալ,
Եւ ի Սեւաստ դիմաւորեալ,
Եւ ըզքաղաքն կախեալ առեալ,
բաղում աւարս ժողովեալ.

[23] Kâtip Çelebi, նույն տեղում։
[24] Գր. Դարանաղցի. էջ 25։
[25] Kâtip Çelebi, Fezleke, հ. Ա, էջ 127։
[26] Նույն տեղում։ I. Peçevi, հատ. II, էջ 252 և այլն։

Զբոլոր երկիր գերեցուցեալ
զինչս և զապրանս յափշտակեալ։
Վասն այն սաստիկ մեծ սով եղեալ,
եւ հաց ուրեք չեղև գտեալ.
Զի լիտր մի հաց տասն ոսկի լեալ,
եւ զայն ոչ ոք եղև գտեալ.
Քանզի արտերն ամէն այրեալ
եւ զհասկ նոցա հետ իւր տարեալ»[27]։

Մի ձեռագրի հիշատակարանում գրիչ Մելիքսեթ եպիսկոպոս Սեբաստացին ուշագրավ մանրամասնություններ է հաղորդում Կարա Յաղրջիի կատարած ավերածությունների, ավարի ու գերեվարության մասին, «...Զի ի յայսմ ժամանակի որ վասն ի բազմանալոյ անարէնութեան մերոյ և ի թոյլ տալոյն ամենազաւրին աստուծոյ,—կարդում ենք հիշատակարանում,—ել ժանտաբարոյ և պիղծ թիւնաւոր մի տաճիկ Ղարայ Աղիճի անուն ի հիւսոսու (sic!) կողմանէ ի Լկն ի վերա Սեփաստիա քաղաքին և տէրն Սեփասթիու բերթին Մահմադ փաշան դեռ մանուկ գոլով երեկաւ ի նմանէ և զողեցաւ բաղում և անթիւ հեծելաւքն ի մէջ բերդին. և ամրացան ինքեանք և մատնեցաւ քաղաքն և երկիրն մարդով և անասնով, ընչուքն և ապրանաւքն ի ձեռն արեանարբու գազանին որ անխնայ կոտորեաց բազում քրիստոնեայս և զմանկունս նոցա գերի տարեալ և հանդերձիւք զարդարէին և ի սուրբ հաւատոցն մերկ արարին։ Եւ բազում աւուրս նստեալ յեղբ քաղաքին այրեաց և աւերեաց զգեղեցկայշէն քաղաքն և զաւանքն մինչ զի ամայի մնաց Սեփաստիա թեմովն ու վիճակովն բաղում ժամանակս։ Բայց գոհանամք զաստուծոյ, զի յետ սակաւ ժամանակի եղև կրկին խաղաղութիւն որ ցրուեալ և ճապաղեալ ժողովուրդն հաւաքեցաւ ի թուին ՌԾԳ (1604)»[28]։

Մի այլ հիշատակարանում ապստամբների կողմից Սեբաստիայում սպանվածների թիվը ավելի քան 20 հազար մարդ է ցույց տրվում։ Կարա Յաղրջին,—կարդում ենք հիշատակարանում,—«...աւելի քան ԻՌ (20 հազար) այր ջարդեաց և սրախողխող արար. և ութ հարիւր անմեղ տղայս ի հայոց և ի հոռոմոց գերի վարեաց և յետոյ զքաղաքն ամենայն հրով այրեաց...»[29]։

Անշուշտ, սխալ կլիներ եզրակացնել, որ Կարա Յաղրջիի ջալա-

[27] Ազարիա Սասնեցվոյ Ողբը, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 328։
[28] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1875, էջ 229բ։
[29] ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Մագիստրոսի գործերը, գործ № 30, էջ 91, գործ № 41, էջ 149 և այլն։

լինները կողոպտում, սպանում, գերեվարում էին միայն քրիստոնյա հայերին։

Նույն դաժանությունը գործադրվում էր նաև տեղի «տաճիկ» բնակչության նկատմամբ։ Այս տեսակետից շատ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում իր հիշատակարանում, Հակոբ Թոխաթեցին, ՌՃ (1601) թ. «...գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի շարականք ձեռամբ Յակոբ երիցու ի քաղաքն Թոխաթ, ի թագն Պազարճուխ, ի դառն և ի դժար ժամանակի, որ Ղարաեազրճի ոմն յարեաւ հակառակ թագաւորին, և ժողովեց իւրեան համախոհ քսան հազար այր պատերազմող։ Նախ էառ զՈւռհայ քաղաք, և տիրեց իւր բոլոր գեղի և մանր քաղաքացն։ Եւ զամենեցուն զապարանքն և զմալն առեալ, զոմանս սպանեալ, և... զաղայքն գերի առեալ։ Եւ տարի մի այլ եկեալ ի Մալաթիայ բնակեալ և զնոսա այլ թալանեալ և մերկացուցեալ ի հոգևոր և ի մարմնաւոր բարութեանց։ Եւ անտի եկեալ բազում զօրօք ի Սեբաստիայ քաղաք և մտեալ անդ. զփաշայն ի բերդն փախոյց. և զբազումս ի անկիւերացն, և ըսպահացն (սիփահիների) և շատք ի գեղէ և ի քաղքէ սպանեաց և ի սուր մաշեաց. և զտունս և զբնակութիւնս զպազաստանս և զշաղուներն նախ թալանեցին և ապա հրով այրեցին. և զնոցա տղայքն գերի առին, և իւրեանց չար գործոց կցորդ արարին, ոչ նայ ոչ տաճիկ ասին, զամենայն սրով մաշեցին (ընդգծումը մերն է—Մ .Զ.)»[30]։

Գրիգոր Դարանաղցին գրում է, որ ջալալիները «...յատուկ յատուկ շրջէին և աւար հարկանէին, սպանանէին և հրձիգ առնէին, զմանկունս և զկանայս խայտառակէին։ Ոչ թէ քրիստոնէից միայն առնէին, մանաւանդ տաճկաց առաւել անողորմաբար գործէին զամենայն չարիս, որպէս ասէ Մեծն Ներսէս թէ՝ գերեցին զմարմինս բազկի իւրեանց, այսինքն՝ յազգայինսն ոչ խնայեսցեն։ Որպէս յայտ է յերզնկա քաղաքին, որ զամենայն քաղաքն զիւրեանց մաչեթնին այլ հրով տոչորէր էին, և եօթն ժամ կայր, իւրեանց խցերովն ամբողջ անարատ մնացեր էին Աստուծոյ խնամարկութեամբն»[31]։

Գրիգոր Դարանաղցու մի այլ վկայությունից իմանում ենք, որ Սեբաստիայի պաշտպանության համար տեղի փաշան մոբիլիզացրել է քաղաքի բոլոր տաճիկ և հայ բնակչությանը Կարա Յաղրջիին դիմադրելու համար, սակայն վերջինիս հաջողվել է պարտության մատնել նրանց, մտնել քաղաք և մեծ ավերածություններ գործել։ Ջալալիները, գրում է ժամանակագիրը, «...եկին ի Սեբաստիա մեծաւ բարկութեամբ պատերազմել ընդ քաղաքին և ամբոցացն։ Եւ փաշան մունետիւ ձայնեցուց ի քաղաքացեացն՝ եթէ տաճիկք, եթէ հայք իցեն ամենայն ռամկաց ելանել ի պատերազմ ընդդէմ Հասան պեկին, և վայ է նոցա յորժամ ոչ ելանել կամեցին։ Յետ այս սպառնական բանից և կողմանց, տաճիկք և հայք դրոհ տուեալ և ելին ճակատեցան ընդդէմ նոցա։ Զառաջինն սաստիկ կոտորումն եղև յերկուց կողմանցն, և յետոյ ոյժ առեալ ի հրամանէն Աստուծոյ վասն ծովացեալ մեղաց մերոց, կոտորեցին զօրսն փաշային և զինքն ի փախուստ դարձուցին։ Եկաւ մտաւ ի միջնարերդն և նոքա մտին ի քաղաքին և անխնայ կոտորեցին զհայ և զտաճիկ և ոչ ումեք ողորմէին։ Եւ ոչ թէ միայն իւր սեփհական բնակիչք միայն էին, այլ մերձ եղեալ շրջակայ աշխարհաց և գաւառաց մարդիկք անդ էին հաւաքեալ ի շարութենէ ժամանակին և յերեսաց սաստկութեանց սովոյն։

Եւ յորժամ սաստկացաւ սուր նոցա, ելին հայք և տաճիկք արամբք և կանանմբք և տղայովք ստընդիովք մազապուրծ եղեալ դիմելով ի լերինս։ Աստ էիր տեսանել զբարկութիւնն աստուծոյ, որ ի յերկնից ուժգին հողմունք և յորդահոս անձրևք և ճայթմունք ամպոց և փայլատակմունք և կայծակունք և շաչիւն կարկտոց և յարուցմունք հեղեղաց ի վերայ փախուցելոցն։ Անդ էիր տեսանել զվայ յղեացն և ստնդիացուցն յաւուրսն յայնոսիկ, որպէս ասաց Տէրն զաղիողորմ կականմանց մօր և մանկանց դառնացելոց։

Եւ յետ այնորիկ ի վերայ ամբոցացն մարտնչէին հետ երկուց բերդիցն։ Զմինն առին և լցան ընչիւք և շատ արու մանկամբք, քանզի ասախ էր հրամէր թէ՝ վայ անոցիկ, որ ի կոյս աղջիկ և կամ ի կին, մերձենայցէ ոք, բայց միայն՝ արու մանկանց, որ շատ մանկունք յաղչկան կերպիւք ազատեցան, որ մին ամիս յաւելի նոցուն ի յեղեր քաղաքին ի վերայ Ալիս գետոյն»[32]։

Աղատվածների մեջ է եղել և մեր ժամանակագրի եղբայրը՝ Մարկոսը. «Որ ի ժամանակին յայնմիկ,—գրում է Գր. Դարանաղցին,—մեր ըստ մարմնոյ եղբայր մահտեսի Մարկոսն, որ անդ լինելով ի տիս մանկութեանն չորեքտասանամեայ գոլով, աղջիկակերպ բազում աւուրքք կու շրջէաք ի մէջ նոցա, և այնպիսի հնարիւք հաղիւ ազատեցաք, ասէր»[33]։

Կառավարությունը խիստ մտահոգված ստեղծված դրությունից, աշխատում էր ամեն կերպ ապստամբության առաջն առնել։ Եվ ահա Ավստրիայի ճակատամարտից վերադարձած Սեբաստիայի բեկլեր-

[30] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1875, էջ 299բ։

[31] Գր. Դարանաղցի, ժամանակագրություն, էջ 144։

[32] Գր. Դարանաղցի, էջ 26—27։

[33] Նույն տեղում, էջ 27։

քեկ Չերքեզ Մահմուդ փաշան սուլթանական դիվանում հայտնում է, որ Կարա Յազըջիի այս երկրորդ խոշոր ապստամբության պատճառ է դարձել սերգար Մեհմեդ փաշայի թշնամական վերաբերմունքը ապստամբության ղեկավարի նկատմամբ այն ժամանակ, երբ վերջինս «բարձրագույն էմիրություն ընդունվելու արժանի մարդ է»[34]: Չերքեզ Մահմուդ փաշայի միջամտությունն այն հետևանքն ունեցավ, որ Կարա Յազըջին ոչ միայն ներում, այլև Զորումի սանջակն ստացավ կառավարելու համար[35]: Կարա Յազըջին համաձայնվեց, բայց շուտով նորից ապստամբության դրոշ բարձրացրեց: Ինչպե՞ս բացատրել Կարա Յազըջիի նման քայլը: Մեր կարծիքով, ապստամբության մասնակիցների նրա վրա գործադրած ճնշմամբ: Կերեշտեսի ռազմի դաշտում մահվան դատապարտված միջին ու մանր ֆեոդալներն ուրիշ ելք չունեին, բացի բռնի միջոցներով տապալելու իրենց կյանքի թշնամի Պոլսի սուլթանական կառավարությունը, ուստի խորապես շահագրգռված էին ապստամբության հետագա ծավալմամբ: «Փախստական» («Ֆիրարի») հասարակ դինվորները նույնպես շահագրգռված էին ապստամբությամբ, քանի որ 1) նրանց նույնպես մահապատիժ էր սպառնում և 2) Եվրոպայում մղվող պատերազմներն այլևս հարուստ ավար չէին խոստանում, մինչդեռ ապստամբությունը ավարառության լայն դռներ էր բացել նրանց առաջ: Զիֆթբոգանները, լեվենդներն ու սուխթաններն առավել ևս շահագրգռված էին ապստամբության հետագա ծավալմամբ, նամանավանդ, որ այդ շարժումները վերջնականապես քայքայել էին երկրի գյուղատնտեսությունը ու գոյության միակ միջոցը մնում էր բնակչության և, նախ և առաջ, քրիստոնյա բնակչության կողոպուտն ու գերեվարումը: Նրանց երևակայությունը շոյում էին հատկապես նրա ավանտյուրաները: Իսկ տեղ-տեղ, եթե ապստամբներին միանում էին և երկրագործ գյուղացիները, ապա դա տեղի էր ունենում հողագործության քայքայման և հողամշակմամբ զբաղվողների դասալքման պայմաններում: Գյուղացիները միանում էին Կարա Յազըջիի «ավազակախմբերին» իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու նպատակով: Գյուղացիների մի մասի շարժմանը միանալու փաստը պիտի բացատրել նաև կեղեքիչ սուլթանական կառավարության նկատմամբ նրանց ունեցած խորը դժգոհությամբ ու ատելությամբ: Իսկ Կարա Յազըջին հանուն իր կարիերայի, ինչպես դա կտեսնենք իր տեղում, գյուղացիներին խաբեպատիր խոստումներ

[34] Kâtip Çelebi, Fezleke, հատ. Ա, էջ 139:

[34] Նույն տեղում, էջ 143:

էր անում: Նա գյուղացիների շահերի արտահայտիչը չէր. հենց նրա համար, որ նա հետապնդում էր պարզապես ուրույն ավատական շահեր: Կարա Յազըջին պարզապես ձգտում էր ստեղծել Թուրքիայից տարանջատված իր տիրույթը ու դառնալ նրա միանձնյա ղեկավարը: Եթե նա ապստամբ Հյուսեյն փաշային հանձնեց իր թշնամիների ձեռքը, ապա այդ արեց նրա համար, որ նա խիստ վախենում էր, թե նա կարող էր դառնալ ապստամբության ղեկավարը: «Հյուսեյն փաշան արտակարգ խելացի, ձեռներեց և աղդեցիկ մարդ էր,— գրում է Հյուսամմուդինը,—նրա մասնակցությունը ապստամբության, նույնքան վտանգավոր էր բարձրագույն դռան համար, ինչքան վնասակար ապստամբների ղեկավար Աբդուլ Հալիմի համար, քանի որ [շարժման] ղեկավարությունը պիտի անպայման անցներ Հյուսեյն փաշայի ձեռքը»[36]:

Այսպիսով՝ մի կողմից ապստամբության մասնակիցների գործադրած ճնշումը, մյուս կողմից իր փառասիրական տենչերն իրագործելու սին ձգտումը ստիպեցին Կարա Յազըջիին նորից շարունակելու ապստամբությունը: Իրեն արված զիջումները նա դիտում էր որպես կառավարության թուլության նշան: Եթե սկզբնական շրջանում նա իր առաջ նպատակ էր դրել վերականգնել իր կորցրած ավատական տիրույթն ու իրավունքը, ապա այժմ հասկանալի պատճառներով նրա պահանջներին սահման չկար:

Կարա Յազըջիի նոր ելույթը ճնշելու նպատակով, կառավարությունը նոր զորք ուղարկեց վեցերորդ վեզիր Հաջի Իբրահիմ փաշայի ղեկավարությամբ, նրանց առաջ խնդիր դնելով՝ «ինչ գնով էլ լինի ձերբակալել»[37] Կարա Յազըջիին ու արդեն այս ժամանակ անուն հռչակած նրա եղբորը Դելի-Հասանին («Գիժ Հասանին»): Սակայն Իբրահիմ փաշայի հետ Կայսերիի (Կեսարիո) մոտ տեղի ունեցած կատաղի մարտում Կարա Յազըջիի 20.000 հոգուց բաղկացած զորքը հաղթանակ է տանում ու ռազմի դաշտում սպանվում են «...ավելի քան հազար ենիչերի»[38]: Հաղթանակից հղփացած Կարա Յազըջին նոր անկախ սուլթանություն է հռչակում իրեն վերապահելով սուլթանի դերը: Նա ամենուր արձակում է «Սրբազան հրաման»-ներ (حكم شريف) որոնցից մեկը մեզ է հասել պատմագիր Նաիմայի շնորհիվ: Ահա այդ հրամանը. «Այս նվիրական հրամանը բերում է Կայսերիի բնակիչներից Մուհամմեդ անունով մեկը, որը Աստուծո ողոր-

[36] Hüsamuddin, Ամասիայի պատմություն, հատոր III, էջ 347:

[37] „Tarih-i Nâima", հատոր I, էջ 232:

[38] Նույն տեղում, էջ 233:

մությամբ, օսմանյան պետության սերդար Հաջի-Իբրահիմ փաշայի պարտություն [կրած] պատերազմում, կատարյալ անկեղծությամբ հպատակություն ցույց տալու համար, [նրան] բոլոր տեսակի տուրքերից և պարտքերից ազատել եմ և ներում շնորհել։ Այս կայսերական հրովարտակը նրան տվի և հրամայեցի, որ օսմանցիների իշխանությունը այս կողմերում բոլորովին վերջացած է և սուլթանությունը անվիճելի կերպով ինձ է հանձնված։ Իմ կողմից տրված [սույն] հրամանի և հրովարտակի համաձայն, նա ազատված և ներված լինելով, ոչ մի ռեսմ-ի թեքյալիֆիյե չպետք է պահանջվի նրանից, ով չի հպատակվի սույն հրամանին՝ կպատժվի։ Այս սրբազան հրամանը ստանալիս պիտի վարվել նրա կայսերական բովանդակության համաձայն։ Գրված է 1009 (1600—1601) Ռեբի-ուլ-էվվելի կեսին»[39]։

Այսպիսով՝ Կարա Յազըջին իրեն կայսր է հռչակում։ Փաստաթղթում պարզորեն ասված է. «Կայսերական հրաման տվեցի»։ Այս բոլորից հետո դժվար է նրան որևէ կերպ ներկայացնել ապստամբ գյուղացիների շահերի արտահայտիչ։ Ընդհակառակը, թույլ ենք տալիս մեզ ասելու, որ նա շարժումը սոսկ իր փառասիրական նպատակներին էր ծառայեցնում։ Այս փաստաթուղթը ցույց է տալիս նաև, որ Անատոլիան փաստորեն արդեն անջատված էր Օսմանյան կայսրությունից։

Այսպիսի վտանգավոր իրադրության առաջ, օսմանյան կառավարությունը մեծ զորք է ուղարկում ապստամբների դեմ սերդար Հասան փաշայի գլխավորությամբ։ Թշնամի ուժերն, համաձայն Քյաթիբ Չելեբու տվյալների, հանդիպում են «Էլբիստանի յայլաղում Սեփեդլու կոչված վայրում»[40]։ Կատաղի մարտից հետո, ապստամբների «երկու երրորդը»[41] կոտորվում է և Կարա Յազըջին փախչում է դեպի «Ջանիկի լեռները»[42]։ Քյաթիբ Չելեբու այս տվյալները լրիվ համապատասխանում են Աղ. Սասնեցու վկայություններին, երբ նա գրում է.

«Յետոյ Սարտարն յԱմեթայ ելեալ,
Եւ Եաղբճուն վերայ դիմեալ.
Ալպաստանու դաշտըն հասեալ,
անդէն զբանակըն հաստատեալ։
Եւ Եաղբճին անդէն հասեալ,
դէմ յանդիման ճակատ եղեալ,
Պատերազմի պատրաստ եղեալ,
եւ ի յիրեարս մարտուցեալ։
Եւ Եաղբճին փախուստ առեալ
դէպ ի Ճանիկ դիմաւորեալ։
Եւ Սարտարին անդէն ելեալ,
եւ ի Թոխատ ձմեռնացեալ»[43]։

Այնուհետև, Թոխատից Հասան փաշան ոմն Օսման փաշայի ղեկավարությամբ զորք է ուղարկում դեպի Ջանիկ՝ Կարա Յազըջիին վերջնականապես ոչնչացնելու նպատակով, սակայն, ըստ երևույթին, անհաջողության է մատնվում։

Սերդար Հասան փաշան, գրում է Աղ. Սասնեցին՝

«Զօրագլուխ մի մեծ հանեալ,
եւ Եաղբճուն վերայ յղեալ.
Իսկ Եաղբճին ըզնա կալեալ,
եւ զօրսն ամէնքն կոտորեալ։
Զօրագլուխ որ էր կալեալ,
Օսման փաշայ էր անուանեալ.
Զնա պարգեւք եղն Թողեալ,
թէ ես ձենէ չեմ երկուցեալ։
Բայց յետ երկուց ամսոց անցեալ,
պիղծ Եաղբճին այն սատակեալ»[44]։

Եվ այսպես, Ջանիկի լեռներում տարած նոր հաղթանակից երկու ամիս հետո 1602 թ. փետրվարին մահանում է Կարա Յազըջին

---

[39] Tarih-i Nâimâ, հատ. II, էջ 237—239: „Kaysariyye sâkinlerinden işbu hamil-i Hükm-i şerif Mehmet nâm kimesne Osmaniyan tarafından bi-inâvet- Illahi-Teâla mühezim olan serdar Haci İbrahim Paşa muharebesinde bu cânibe kemâl-i ihlas ile itaât itmegle cemi tekâlif—ü rüsumdan mutlak muâf eyledim ve eline bu Hükm-i Hümâyûnu verdim ve buyurdum ki inşaallahu—Teâla dest-i Osmâniyân bu taraflardan bi-l-küllîye munkati'olup saltanat bilâ' nizâ' bâna mukarrer ve mukadder oldukda tarafından ta'yin olunan ümerâ bu hükm mucibince mezburu muaf-u müsellem dutup rüsûmu tekâlifden bir nesne teklif etmiyeler. Her Kim bu hükme itâat eylemezse cezası virilup ve bu Hükm-i şerifimi elinde ibkaa idüp mazmûn-u Hümâyûnu ile 'amel eyliyeler, şöyle bileler. Tahriren fi evasitl Rebi-ül-evvel sene ti'sa ba'del-elf".

[40] „Fesleke", հատ. Ա, էջ 143։

[41] Նույն տեղում։

[42] Նույն տեղում։

[43] Ազարիա Սասնեցվոյ Ողբը, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 328։

[44] Նույն տեղում։

վերոհիշյալ վայրում[45]։ Համաձայն «Ամասիայի պատմության» հեղինակ՝ Հյուսամմուդինի, ապստամբները պահանջել են հանրապետության հռչակումը, սակայն Կարա Յազըջիի կողմից սուլթանության առաջքաշումը իր դեմ է լարել ապստամբներին, և նրանց կողմից էլ սպանվել։ Հեղինակը գրում է «...1010 (1601/2) թվականին բարձրագույն Դուռը, որպես սերդար ուղարկեց Սոկոլլու Մեհմեդ փաշայի որդի՝ Հասան փաշային։

Սակայն Աբդուլ Հալիմը (Կարա Յազըջին) վերջնականապես գոռոզացավ։ Մի կողմ թողնելով ապստամբության մասնակիցների հիմնական նպատակները, նա ստիպեց նրանց կատարել միայն իր սեփական ձգտումներն ու թագավորական ցանկությունները, [որի հետևանքով] նրանք (ապստամբները—Մ. Զ.) չճանաչեցին այլևս նրա ղեկավարությունը։ Այնինչ ապստամբության մասնակիցները ձգտում էին հասնել իրենց նպատակին, ընդունելով կառավարման հանրապետական ձևը։

Աբդուլ Հալիմի շարժումը գրգռում էր ապստամբներին։ Ապրստամբների ճամբարում եղած ներքին վեճերի ու հակասությունների հետևանքով 1010 թ. ռեջեբ ամսում (1601 դեկտ.) Աբդուլ Հալիմն սպանվեց։ Սրանից հետո երկար վեճերից ու տատանումներից հետո ապստամբները [նոր] ղեկավար ընտրեցին Աբդուլ Հալիմի եղբայր Դելի Հասան աղային»[46]։

«Ամասիայի պատմության» հեղինակի այս վկայությունը ինչքանով է հավաստի, դժվար է ասել, որովհետև ինչպես ցույց են տալիս մյուս աղբյուրները Կարա Յազըջին մահացած պետք է լինի կամ իր բնական մահով և կամ թե վերջին ճակատամարտերում ստացած վերքերի հետևանքով[47]։ Ի. Փեչեվու մոտ վկայություն կա այն մասին, որ Կարա Յազըջիի քեթխուդա (ավագ) Շահվերդին հայտնել է, որ Կարա Յազըջիի դիակը 40—50 կտորի են բաժանել ու թաղել առանձին-առանձին, որպեսզի օսմանցիները չկարողանան գտնել և այրել ամբողջական դիակը[48]։

Նշանակում է, որ Կարա Յազըջին կարողացել է սրբագործել իր անձը և ղեկավարության ու ապստամբների միջև ծագած հակասությունների և դրանց հետևանքով Կարա Յազըջիի սպանվելը նվազ հավանական է թվում։ Ապստամբների մեջ նախապես գոյություն

[45] „Fesleke“ հատ. I, էջ 173—174։

[46] Hüsamuddin, նշված աշխ.-ը, հատ. III, էջ 351 /հմմտ. А. С. Тверитинова, նշված աշխ.-ը, էջ 74։

[47] J. H. Danişmend, նշվ. աշխ-ը, հ. III, էջ 208։

[48] I. Peçevi, նշվ. աշխ.-ը. հ. II, էջ 253։

ունեցած սուր հակասությունները հետզհետե մեղմացան և նույնիսկ երբեմն վերացան։ Կարա Յազըջիի մահից հետո ջալալիների ապրստամբությունները գնալով մեծ ծավալ են ստանում։ Հենց այս ժամանակաշրջանին են վերաբերում Գր. Դարանաղցու հետևյալ տողերը. «...այնպէս զօրացան ջալալիքն՝ որպէս զարծուի և կամ որպէս զհուր որ յեղեղն ընթացի...»[49]։ Նույն հեղինակը մի այլ տեղ գրում է, որ սուլթան Ահմեդի (1603—1617 թթ.) ժամանակ «...ջալալիքն զաշխարհն Անատոլեաց ծածկեալ էին որպէս զձիւն»։ Ակադ. Վ. Ա. Գորդլևսկու բառերով ասած այս ժամանակ «նրանք (ջալալիները—Մ. Զ.) ամենուր հանդես եկան ինչպես պղպջակները եռացող ջրից»[50]։ Ինչ վերաբերում է հանրապետություն հռչակելու վերսիային՝ պիտի համաձայնվել Ա. Ս. Տվերիտինովայի այն եզրակացությանը, որ «...հազիվ թե կարելի է թույլ տալ «հանրապետություն» տերմինի օգտագործումը 17-րդ դարի սկզբի համար՝ Թուրքիայում»[51]։

Այնուամենայնիվ, սխալված կլինեինք, եթե ամբողջովին ժխտեինք գոյություն ունեցող հակասությունները ապստամբների մի մասի (նկատի ունենք միայն գյուղացիությունը) և ղեկավարության միջև։ Այստեղ մի անգամ ևս գյուղացիները կարող էին հուսախաբ լինել շարժմանը մասնակցելուց։ Ճիշտ պիտի համարել Հյուսամմուդինի այն եզրակացությունը, որ Կարա Յազըջին ղեկավարում էր շարժումը, ունենալով «սեփական ձգտումներ» և «թագավոր դառնալու ցանկություններ»։ Չենք կարող հրաժարվել այն մտքից, որ Կարա Յազըջիին հարած զանգվածները վերջ ի վերջո կարող էին հուսախաբ լինել նրանից։ Կարա Յազըջիի մահից հետո ապստամբության ղեկավարի դերն իր վրա է վերցնում նրա եղբայր՝ Դելի Հասանը, որին միանում են ևս երեք ապստամբական խմբեր՝ Շահվերդիի, Յուլար Կասդրյի և Թավիլի ղեկավարությամբ։

1602 թ. գարնանը Դելի Հասանի զորքը Ջանիկի լեռներից շարժվում է դեպի Արևմուտք։ Իր հերթին Հասան փաշան իր գերակշռող բանակով շարժվում է Դելի Հասանի դեմհանդիման։ Անցնելով Ափանազ կամ երկրորդ Եփրատ կոչված գետը, ինչպես այդ մասին վկայում է Գր. Դարանաղցին, Դելի Հասանի ապստամբները «...զզօրքն (փաշային) կոտորեցին և այլքն ցրուեցան։ Առին զիսաղինան և բաղում ոճիրս գործեցին... և զինչ որ հաճոյ թուեցան աչաց

[49] Գր. Դարանաղցի, էջ 41։

[50] В. В. Гордлевский, Внутреннее состояние Турции во второй половине XVI века (ТИВ АН СССР), сб. 2, 1940. էջ 89։

[51] А. С. Тверитинова, նշված աշխատությունը, էջ 74։

նոցա՝ առին և զայլ մնացեալքն թէ հանդերձեղենք և դիպակք պատուականք ոսկեթել և ոսկեզօծ վրանաւն՝ հրձիգ արարին և թողեալ գնացին ի բանակն իւրեանց»[52]։ Հասան փաշան խուճապահար փախչում է դեպի Թոխաթ, նրան կրնկակոխ հետևում է Դելի Հասանը։ «Եւ Հասան պէկն յորժամ եռես զիւր աջողութիւնն ի վերին զօրութենէն լինելով,—շարունակում է Դարանաղցին,—դարձեալ ուժ առեալ գրոհ տալով գնաց ի Թոխաթ ի վերայ փաշային ի պատերազմ»[53]։

Ապստամբները շուտով պաշարում են քաղաքը։ Մի ամիս տևած այդ պաշարման ընթացքում քաղաքի բնակչությունը՝ հայ թե թուրք ապրում են դժնդակ օրեր։ Օրերից մեկում սպանելով իր պարտեզում նստած Հասան փաշային, ապստամբները խուճապ առաջացրեցին պաշարվածների մոտ, մտան քաղաք, կատարեցին շլված վայրագություններ, կողոպտեցին ու գերեվարեցին բնակչության մի մասը և հրդեհի մատնեցին ամբողջ քաղաքի ծաղկուն թաղամասեր։ Ա. Ս. Տվերիտինովան հենվելով Ի. Փեչևու հաղորդած տեղեկությունների վրա, գրում է, որ իբր թե բնակչությունը աջակցել է Դելի Հասանին ընդդեմ Հասան փաշայի[54]։ Կարծում ենք, որ պաշարված բնակչության մեջ հազիվ թե գտնվեին մարդիկ, որ գործակցեին Դելի Հասանին այնքան, որքան չէր բացառված, որ Ջանիկից սկսած մինչև Թոխատ նրանց կատարած ավերածությունների մասին լսած չլիներ բնակչությունը։ Ի միջի այլոց, Թոխատի պաշարման ու գրավման ու այնտեղ կատարված շլված խժդժությունների մասին, հայ աղբյուրներն հաղորդում են ընդարձակ տեղեկություններ, որոնք բացակայում են թուրքական աղբյուրներում։ Այստեղ՝ Թոխատում ու նրա շրջակայքում հայ բնակչության համար ստեղծված ծանր վիճակի մասին չափածո ողբեր են գրել Ստեփանոս Թոխատեցին[55], Հակոբ Բաթուկենցը[56], Ազարիա Սասնեցին և այլն։

[52] Գրիգոր Դարանաղցի, էջ 28։

[53] Նույն տեղում, էջ 29—30։

[54] А. С. Тверитинова, նշվ. աշխ-ը, էջ 75։

[55] Ստեփանոս Թոխատեցի, Ողբ և ոտանաւոր տաղ ի վերայ Եւդոկիա մեծի քաղաքին որ այժմ Թոխաթ ասի, զոր անօրէն և անհաւատ տէլու Հասան Ղարայ եագրմի զալի և ճելալի յայտնեցաւ և զերկիրս հայոց և հոռոմոց յՈւռհայ մինչ ի յՈւսկուտարն՝ ծովեզերաք և բոլորօրն հանդերձ երից և աւերեաց, թալանեց և գերեց, զրպոդաս սպանեց և զշատս փախոյց։ (Տե՛ս Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 605—608)։

[56] Հակոբ Բաթուկենց, Ողբ ի վերոյ Եւդոկիա քաղաքին՝ որ այժմ ասի Թոխաթ, զոր ոմն անօրէն Տէլու Հասան ասեն որ էկաւ այրեաց և աւերեաց զաշխարհն. (տե՛ս Ղ. Ալիշան, նույն տեղում, էջ 608—610)։

Ազ. Սասնեցու հաղորդած տեղեկությունները լրիվ համընկնում են թուրքական աղբյուրների տվյալներին։ Ողբասացը նկարագրում է, թե ինչպես համեմատաբար փոքրաթիվ զորքով Դելի Հասանը նենգության ու խաբեության միջոցով հաղթեց կառավարական հիսուն հազարանոց (sic!) բանակին, մտավ քաղաք... Սակայն լսենք դեպքերի ժամանակակցին։

«Իսկ Հասան պէկն զարունն եկեալ
Հասան փաշին վերայ եկեալ.
Ոչ թէ բաղում զօրօք դիմեալ,
միայն հազար արամբ զընացեալ։
Յորժամ եղև Թոխաթ մերձեալ,
եւ մեծ Սերտարին դայն լրեալ.
Անթիւ զօրս նա ժողովեալ,
յիսուն հազար արրս կազմեալ։
Իսկ Հասան պէկն կեղծաւորեալ,
եւ զՍերտարն նենգիւ խափեալ,
Թէ ես չեկի պատերազմել,
կամիմ հետ քեզ միաբանել։
Եւ նա ի բան նորա պատրեալ,
եղև անհոգ ուրախացեալ։
Զհեծեալ այսր անդրր թողեալ
զՀասան պէկն ի միտ չածեալ։
Յանկարծակի փողն զոչեալ,
զօրք Ճելալուն պատրաստ գրտեալ
Փալք ի փալաց ներս մրտեալ
զմեծ Սերտարրն փախուցեալ։
. . . . . .
Զոր Հասան պէկն զգհետ մրտեալ,
Հասան փաշան բերդրն մրտեալ։
Իսկ Ճելալեաց զորրս գրտեալ,
զամենեսեան ընդ սուր անցեալ։
Զտուն և զտեղ բաղրին առեալ,
զինչս և զրարիսրն ժողովեալ։
Յաւուր միում փաշայն եկեալ,
ընդ պատուհանրն նայեցեալ.
Իսկ թշնամեաց զընա տեսեալ,
հարեալ զընոյն և սատակեալ։
Եւ Հասան պէկն զայն իմացեալ,
զամէն քաղաքն ի հուր այրեալ.
Զմարդիկ նորա զրնաւ չընչեալ,
երիս ամիսս աւեր ածեալ»[57]։

[57] Ազարիա Սասնեցվոյ Ողբը, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 329—330։

Թոխատի ու նրա շրջակայքում Դելի Հասանի կատարած ավերածությունների, քաղաքի հրկիզման, բնակչության կողոպտման, գերեվարման ու ֆիզիկական ոչնչացման մասին սրտաճմլիկ շափածո տողեր են թողել նաև, Ստեփանոս Թոխատեցին և Հակոբ Բաթուկենցը։ Այս երկու հեղինակներն էլ եղել են դեպքերի անմիջական ականատեսներ կամ վերապատմել են իրենց լսածը։ «...Եւ Ստեփանոս Թոխաթեցին երեցս զորն աչօք տեսի և զորն ակընջօք լուայ, և զսակաւ բանս ասասցի անյարմար գոլով»[58],—գրում է Ստ. Թոխատեցին։

Ստեփանոս Թոխատեցին խոր կսկիծով է նկարագրում իր հայրենի քաղաքի կործանումը։ Արհավիրքներից մաղապուրծ, գտնվելով տարագրության մեջ Ղրիմի Կաֆա քաղաքում, նա գունեղ պատկերներով նկարագրում է իր քաղաքի հարստությունը, այնտեղ գոյություն ունեցող կյանքի բազում բարիքներն ու հեշտ ապրուստը մինչև վերահաս աղետը։ Ջալալիների ապստամբությունների նախօրյին հայրենի քաղաքի մասին Ստեփանոս Թոխատեցին գրում է.

Շատ զեղօրայք շէն, բարելի
Այգով, արտով, պաղչով ի լի
Ջրով առատ բոյս գրանչարի
Եղեմ դրախտին էր նըմանի։

Կամ՝

Շուկայքն բարով ի լի
Վայ ինձ որ ես անտի ելի,
Վաճառականաց էր նա տեղի,
Ի չորս կողմանց գային յայանի,
Ծախվէր բեռնով ապուրշումնի
Եւ այլ զինչ որ բեռով լինի։

Կամ՝

Վաճառականք, ճանապարհորդք
Գնային Շիրվան և Շամախի,
Շամ ։ Հալապ ։ յԿոստանդնոպլի
Պուռսայ և այլ բազում տեղի[59]։

[58] Ղ. Ալիշան. Հայապատում, մ. II, էջ 605։

[59] Ղ. Ալիշան. Հայապատում, մ. Բ, էջ 606, 608, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 2672, էջ 401բ, 402բ։

Գտնվելով տարանցիկ առևտրի ամենարանուկ ճանապարհի վրա, Թոխաթում կային, ինչպես իր տեղում մենք նշել ենք, բոլոր անհրաժեշտ պայմանները հայ մեծատուն-վաճառականների ուռճացման համար։ Սակայն տարբեր վիճակում էին գտնվում հայ աշխատավոր մասսաները և հաղիվ թե «շուկայքն բարով ի լի»-ից կարողանային օգտվել նրանք։

Գալով ջալալիների կողմից Թոխատի պաշարման մեղ առավել հետաքրքրող հարցին, Ստ. Թոխատեցին գրում է.

«Քաղաքացիքն հազար բարով
Ըգտունն և զտեղն ձրգեցին,
Ելեալ փախեան, ոմն ի բիրդին,
Ոմանք լերին, շատք ի սարին.
Ոմանք գիմեանս կորուսին
Եւ գրանել ոչ կարացին.
Ոմանք բոկիկ և գրլխիբաց
Եւ թալանած ի շուրջ գային.
Ոմանք ամսով հաց չըգտին
Եւ ըղերանց խոտն ուտէին,
Ջիրեանց բարիքն այլք ուտէին՝
Ինքեանք հեռուստ հաչեալ լային»[60]։

Այնուհետև գրավելով քաղաքն ու նրա շրջակայքը՝

«Զգեղ և քաղաք թալանեցին,
Ոչ հոր թողին ոչ պահունի
Զամէն հանին նրման նեռին.
Յետոյ հրով բորբոքեցին
Զոսկով նախշած ըգլարդրեանին.
Նման տաճարին հանց քանդեցին
Մինչև ի հիմն հասուցին.
Էրեցին գտան և ըգտեղի.
Զմանուկ տղայքն արին գերի,
Ոսկի արծաթ և զդումաշնի՝
Զայն թալանեցին անյազելի.
Ըզշուրջառներն և զրսգեստնի,
Զոսկի ծածկոց սուրբ սեղանի՝
Զիոց ծածկոյթ արին յայտնի.
Եւ զայլս՝ հագուստս ճիվանի
Զխաչ և զրսկիհ՝ զարծաթ-ոսկին
Ի այլ սրբութիւնքս տաճարին՝
Զիոց բրախտ (զարդ) շինել տուին.
Եւ խընդային վերայ նոցին։

[60] Ղ. Ալիշան. նույն տեղում, էջ 606։

Իրոք, Թոխատում կողոպուտի հետևանքով ջալալիների ձեռքն ընկած հարստությունը եղել է շատ մեծ. «...փողերը վահանով, իսկ մահուզը, չուխան և այլ թանկագին ապրանքները թուրով չափում և իրար մեջ բաժանում էին»,—վկայակոչում է պատմագիր Նաիման[61]։

Խոսելով ջալալիների կատարած սպանությունների մասին Ստ. Թոխաթեցին այնուհետև շարունակում է.

Ըսպանելոցն թիւն ոչ ասին
Կամ փախուցեալք լեր ւ ի սարին,
Ոմանք քաղցած և ծարաւի
Մերկ և բոկիկ և անօթի.
Եւ ըսպանեալքն ի փողոցին՝
Շունք և գազանք զայն ուտէին.
Եւ ոչ որ էր թաղեր զնոսին»[62]։

Քաղաքի կործանումն այն աստիճան զարհուրելի էր, որ Հակոբ Բաթուկենցը բացականչում է՝

«Թոխաթ քաղաք աւաղելի
Քո ճոխութիւնդ յէ՞ր չերևի
Արդ ես եղեալ դդ ամայի
Եւ նըշաւակ ամէն ազգի»[63]։

Թոխատը ջալալիների ձեռքն ընկնելու անմիջական հետևանքն էր տեղի հայ բնակչության տարագրությունը հյուսիս, արևմուտք և արևելք.

«Քո բնակիչք միանգամայն
Եղեն ամենքն ցիր և ցան.
Յօտար երկիր պանդխտեցան
Ի Ֆռանկստան և Պարսկաստան»[64]։

գրում է Հակոբ Բաթուկենցը։

---

61 Տե՛ս Naimâ, նշվ. աշխ., հատ. I, էջ 245։

62 Ղ. Ալիշան, նույն տեղում, էջ 609։ Հակոբ Բաթուկենցն էլ իր հերթին հետևյալն է գրում ջալալիների կատարած սպանությունների մասին.

«Յայնժամ ըզծերսն կոտորեցին,
Զերիտասարդսն գլխատեցին,

63 Եւ զգեղեցիկ մանկունքս քոյին
Ի ծնողացն զատեցին» (տե՛ս Ղ. Ալիշան, նույն տեղում, էջ 609)։

64 Նույն տեղում։

Այսպիսով, Թոխատի անկումով սկսվում է հայերի զանգվածային փախուստը Արևմտյան Հայաստանից ու Անդրեփրատյան հայաշատ շրջաններից դեպի Կ. Պոլիս, Արևելյան Եվրոպա։ Հետագա տարիներին այդ փախուստը գնալով ավելի մեծ ծավալ է ընդունում։

Թոխատը ջալալիների կողմից գրավվելուց հետո, Դելի Հասանի հրամանով քաղաքի կառավարումն հանձնվում է ոմն Մահմուդ Չավուշին, որը շարունակել է ավարառումն ու ավերումը։ Այդ մասին Թոխատցի Մաղաքիա գրիչը հաղորդում է. «Նոր Թիմուրլանկ՝ Մահմուտ Չավուշն եկեալ բաղում քրիստոնեաց տանկօք յաշխարհն մեր, թվ. հայոց ՌՃԱ (1602) եկն ի վերայ Եւդոկիոյ զզօրս քաղաքին պարտեաց և արար բաղում աւեր և թաղթան (ծաղրի առնել) և հրձիգք և բազումք ի գրեաց իմոց հրձիգ եղեալ և զբազումս թաղթան արարեալ, որոց մեծն այս էր, և յետ երից ամսաց գրի զայս ոչ քրիստոնէի միոյ ձեռն և բաղում ծախիւք հազիւ թափեցի»[65]։

Թոխատի անկումից հետո՝ Հասան փաշայի սպանության լուրը երբ հասնում է մայրաքաղաքը, սուլթանական կառավարությունը կարգադրում է Դիարբեքիրի բեկլերբեկ Խոսրև փաշային Դամասկոսի, Հալեպի ու Մարաշի զորքերի հետ դուրս գալ Դելի Հասանի դեմ։ Իմանալով այդ մասին Դելի Հասանը Թոխատում ունեցած իր գլխակորույս հաջողություններից արբեցած, 20—30 հազարանոց զորքով[66] շարժվում է Արևմուտք՝ արևմտյան Անատոլիայի նահանգները գրավելու[67]։ Այդ շրջանների ռազմական նահանգապետը՝ Մուհաֆիզ Ահմեդ փաշան իմանալով թշնամու գերազանց ուժը փախչում է դեպի Քյութահիա[68]։ Դեկտեմբեր ամսին Քյութահիան պաշարվում է Դելի Հասանի կողմից, սակայն սաստիկ ցուրտ ձմեռն ստիպում է նրան թողնել Քյութահիայի պաշարումը ու գնալ Կարահիսար ձմեռելու։

Դելի Հասանի արևմտյան Անատոլիայում կատարած ավերածությունների մասին, Ազ. Սասնեցին գրում է.

Եւ Հասան պէկն անտի (իմա՝ Թոխաթից—Մ. Զ.) ելեալ,
Եւ յԷստամպոլ դիմաւորեալ.
Եւ յինչ երկիր որ պատահեալ,
Քար վրայ քարի չեղն թողեալ[69]։

---

65 Առշակ Ալպոյաճյան, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, էջ 283։

66 I. Peçevi, նշվ. աշխ.-ը, հատ. II, էջ 270։

67 Kâtip Çelebi, նշվ. աշխ.-ը, հատ. Ա, էջ 184։

«ویانده جمع اولان اشقیا یکیرمی اوتوز بیندن ارتق ایدی»

68 Նույն տեղում։

69 Ազարիա Սասնեցվոյ Ողբը, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 330։

Սուլթանական կառավարությունը ստիպված էր նոր սերդար նշանակել Գյուղելչե Մահմուդ փաշային և ուղարկել Դելի Հասանի դեմ։ Սակայն 1603 թ. հուլիսին Պոլիս է գալիս Դելի Հասանի պատգամավոր Շահվերդին և ներողամտություն խնդրում սուլթանից՝ «իր գործած ոճիրների համար»[70]։ Թագավորը ներում է Դելի Հասանին ու «...սիրով զնա ընկալեալ»[71]։ Դելի Հասանին շնորհվում է Բոսնիայի սանջակը։ Ներողության են արժանանում նաև Դելի Հասանի վեց մոտիկ աջակիցները, որոնք նույնպես պարգևատրվում են բարձր պաշտոններով։ Դելի Հասանի մարդկանցից 400 հոգի ընդունվում են սուլթանական կանոնավոր բանակի շարքերը ու ուղարկվում սկզբում Ռումելի, ապա և ավստրիական ճակատը[72]։

Սակայն, թուրք պատմագիրների տվյալներով Դելի Հասանը Բոսնիայի սանջակում շարունակում է իր ապստամբական շարժումները։ «Նա սերդար Մուհամմեդ փաշային տարօրինակ վերաբերմունք էր ցույց տալիս, մերթ հպատակվում և մերթ ըմբոստանում նրա դեմ»[73]։ Բոսնիայի բնակչությունը նրա կարճատև իշխանության ժամանակ ենթարկվում էր բացահայտ կողոպուտի ու վայրագ բռնությունների։ Դելի Հասանը բանակցություններ մեջ է մտնում Վենետիկի և Հռոմի պապի հետ՝ ծախելով Դալմատիայի Դեսնե բերդը 100.000 ոսկով։ Շուտով Քյաթիբ Չելեբիի բառերով ասած՝ «մեծ դավաճանությունը» բացահայտվում է և 1605 թ. վերջին Դելի Հասանը գլխատվում է Բելգրադում[74]։

Այսպես է վերջացնում իր արկածալի կյանքը նաև Կարա Յազըջիի եղբայր՝ Դելի Հասանը։ Ինչպես մի ժամանակ իր եղբայրը, նա ևս ստանալով սուլթանական կառավարությունից շնորհներ, դադարում է ապստամբական շարժումը ղեկավարելուց։ Այստեղից էլ պարզորեն հետևում է, որ երկու եղբայրներն էլ չեն հանդիսացել շահագործվող թուրք գյուղացիության շահերի արտահայտիչներ։

Դելի Հասանի մահից հետո, ջալալիների շարժումը շարունակվում ու էլ ավելի էր ընդարձակվում։ Կազմակերպվում են բազմաթիվ ապստամբական նոր խմբեր, դրանց ղեկավարների մականուն-

70 Kâtip Çelebi, նշվ. աշխ.-ը. հատ. 1, էջ 193։
71 Անդ. Սասնեցի, նույն տեղում։
72 Kâtip Çelebi, նույն տեղում։
73 Նույն տեղում։
74 Նույն տեղում, էջ 272—273։

ները միայն շատ բան են ասում ապստամբների վարքի ու հետապնդած նպատակների մասին։ Քյաթիբ Չելեբիի բառերով ասած, սրանք «...զենք ու զինամթերք ձեռք բերելով, հեծյալ ու հետևակ առանձին խմբերով ցրվեցին երկրի տարբեր մասերը ու շարունակեցին թալանն ու կողոպուտը, բռնություններն ու բռնաբարությունները»[75]։ Երեմիա Չելեբին մեկ-մեկ թվարկում է ջալալի նոր ապստամբների ղեկավարների անունները, միաժամանակ տալով նրանց համապատասխան բնութագիրը։

Չենեֆիր—գրոան Ալի փաշայն,
Քան զանճոռնիսշն ցասուցեալ.
Ճանփոլատ—Օղլինի զինի
Կիւճիւկ Ահմետն փրքացեալ։
Հիւսէին փաշայն եազի.
Խրդախելով մրրրկացեալ.
Թաւիլ պիղծն յերկարաձգի
Եւ արկածիքն էր զազրացեալ։
Ինճե-Ղարան ըստուարացաւ
Եօլայ-սրդմազրն լայնացեալ.
Ղապալ-զուռնան էր բարձրացեալ.
Իլար-զոտին էր խրստացեալ։
Ղալենտեր-օղլին զումուս
Ապտալ-զասրմրն սաստկացեալ.
Քեսէ-Սէֆէրն փաքուսեալ.
Եւ քէսէքէսրն սրածու լեալ։
. . . . . .
Սիրի-պօյուկն անպատկառի
Եւ Սաթրճին զսուրրն սրոեալ,
Կիճ-Մուհամեան զկիճրն ցուցեալ,
Քան զթունաւորս թունաւորեալ։

Այսպիսով «քեսեքես» (կտրի հա կտրի), «քեօր ղայա» (կույր ապառած), «Թանկրի-թանրմազ» («անաստված»), «Թուփուզի պօյուկ» («Մեծ թուփուզավոր»), «Ապուխանչեր» («Դաշույն պահող»), «Սիրի-պօյուկ», «զարա-սահաթ» («շարժամ») և այլն մականուններ են, որոնք խոսում են այն մասին, թե ինչպիսի շարագործություններ կարող էին գործել նրանք[76]։

75 Kâtip Çelebi, նշվ. աշխ., հատ. 1, էջ 389։
76 Երեմիա Չելեբի, Պատմութիւն համառոտ Դճ տարւոյ օսմանցոց թագաւորացն, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1675, էջ 88ա և 88բ։

Առ. Դավրիժեցին հիշատակում է հետևյալ ջալալի ապստամբ ղեկավարների անունները։ «Հուսեյին փաշայ՝ ՌԽԸ (1529) թուին ապստամբեցաւ ի Թագաւորէն։ Քօսայ Սաֆար ՌԽԸ (1599) թուին ապստամբեցաւ։ Ահմատ փաշայ ՌԾ (1601) թուին ապստամբեցաւ։ Ինջաղան ՌԾԴ (1603) թուին ապստամբեցաւ։ Յուլարդստրին ՌԾԴ (1605 թուին ապստամբեցաւ։ Թաւուլն ՅԲԴ (12.000) մարդով ՌԽԲ (sic!) թուին ապստամբեցան։ Այս թաւուլիս եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք։ Մահմատ փաշայ (20.000) մարդով։ Մանօղլի։ Ջանփօլատօղլի Ալի փաշայ։ Սորին եղբայրն՝ զորայ անունն ոչ գրտաք, Քօսօղլի, այս այն Քօսօղլին է, որ բաղում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշղներն եղանակին։ Գզիրօղլի Մուստաֆայ բէկ Ռ (1000) մարդով. և սա ևս ընկեր է Քօսօղլւոյն՝ զոր յոլով տեղիս ի մէջ իւր խաղին զսա յիշէ։ Միւս Մուստաֆայ բէկ։ Ղարաղաշ։ Դալունասիոյ։ Եօլայ սրդմազ, թանդրի թանիմազ։ Գօկապախան Զրփլախ։ Քէսաաքէս։ Քրլու։ Ղարասահաթ։ Աղաջդանփիրի։ Սոքա ամենեքեան ջալալիք էին, որք ոչ հնդանդէին թագաւորին. և ոչ ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին, այլ աշխարհաւերք և աշխարհակործանք. և ուր և լսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անդր հասանէին, աւերեալ կողոպտէին և զշինուածսն հրդեհեալ այրէին։

Ի մերձակայից Կոստանդնուպօլսի՝ մինչև ցԵրևան քաղաք. ի Բաղդատայ մինչև զԴամուրղափուն, զսպիտակ ծովու մէջն և զսեաւ ծովու մէջն. այս եղերքս՝ զորս ծրագրեցի, զսոցա մէջն զայսքան աշխարհս յաւեր և յապականութիւն դարձուցին»[77]։

Այսպիսով, ամբողջ Փոքր Ասիան ոտնատակ է արվում ջալալիների կողմից։ Շարժումը այնքան մեծ ծավալ էր ընդունել, որ սպառնում էր մինչև իսկ մայրաքաղաքին։ Դարդանելից ոչ հեռու Այդինն ու Սարուխանը թալանման ու հրկիզման էին ենթարկվել։

Ապստամբության նոր ղեկավարներից աշքի ընկնողները շարունակում էին փաստորեն այն նույն գիծը, որը մի ժամանակ վարում էին իրենց նախորդներ՝ Կարա Յազըջին և Դելի Հասանը։ Ըստ «Ամասիայի պատմության», երբ Դելի Հասանին կառավարության կողմից նվիրաբերվում է Բոսնիայի նահանգը, ապա այն նույն ժամանակ ապստամբության նոր ղեկավարներ՝ Կարակաշ Ահմեդին տրվում է Ռեվանը (Երևանը), թեքելու Մեհմեդ աղային՝ Թավրիզը, Կալենդար-օղլի Մեհմեդ աղային՝ Գյանջան և Դելի Զուլֆիդարին էլ Մարաշի սանջակները[78]։ Սակայն վերջինները հրաժարվում են կառավարական այդ պարգևներից և շարունակում են ապստամբությունը։ Դա, մեր կարծիքով, բացատրվում է նրանով, որ նախ նրանք կասկածանքով էին մոտենում կառավարության այդ առաջարկությանը, և երկրորդ՝ հատկապես Դելի Հասանի Թոխատի շրջակայքում ձեռք բերած մեծ հարստությունը շլացրել էր նրանց և նրանք պատրաստ էին արշավանքներ կազմակերպելու նոր ավարի ու թալանի համար[79]։ Այդ նպատակին հասնելու համար ջալալի ապրստամբների նոր ղեկավարները հարձակվում էին մեկը մյուսի վրա, ավարում ու ասպատակում էին ամբողջ շրջաններ։ Այդ պարագային դարձյալ խաղաղ բնակչությունն էր, որ ենթարկվում էր հաղթող կողմի վայրագություններին ու կողոպուտին։ Այսպես, 1603 թ. օգոստոսին, վերոհիշյալ Կարակաշը կամ Ղարաղաշը Երզնկայից հարձակվում է Բարբերդում ու Գյումյուշխանեում հաստատված ջալալիների վրա ու հաղթում նրանց։ Սարսափահար տեղի բնակչությունը փախուստ է տալիս մոտակա լեռներն ու ձորերը։ Այդպես են վարվում նաև Վահանշենի վանականները, որոնց մեջ է եղել և մեր ժամանակագիր Գր. Դարանաղցին, որը հաղորդում է այդ դեպքի հետ կապված մանրամասնություններ. «Դարձեալ յայսմ ամի և թվ. ՌԾԲ (1603 թ.)-ին,—գրում է նա,—յորժամ էաք ընդ վարդապետին ի վանս Վահանշէնին և յօգոստոսի ամսոյն ԺԹ. նա բոթալից գուժկան երեկ առ էրիզ փաշացիքն, որ մեկ եղբայրն ի մեր վանաց գիւղն ի Վահանշէն նստէր և միւս եղբայրն՝ յՕձագեղն։ Եւ Մուրատխանցի Ալի փաշան և Մուստաֆա պէկն և Իբրահիմ պէկն ի Կումիւշխանային ձորին, նոցա այլ գուժկան գնացին թէ Ղարաղաշ անուն զօրպա պաշի բաղում զօրօք ջալալովք եկն նստաւ յԵրզնկան։ Թէ սոքա և թէ նոքա ձայն տուեալ միմեանց գնացին ժողովեցան ի մեծ բլուրն և եղեն բանակ մեծ և ելեալ միաբանութեամբ խրոխտաբար գնացին ի վերայ նոցա, և նոցա լուեալ զգալուստ նոցին պատրաստեցին զինքեանս պատերազմի։ Եւ սոքա կամեցան ի գիշերի գնալով ի վերայ նոցա, այլև նոքա յառաջ եկին և թողին ոչ ի բանակն խառնելով... այնպէս դիմելով ի վերայ Մուրատխանցեցն և էրիզացն, զոմանս կոտորելով և զոմանս կարեվէր խոցոտելով։ Եւ փաշանին և այլքն ի զօրացն բաղումք փախելով հաղիւ կարացին զերծանել ի նո-

[77] Առ. Դավրիժեցի, էջ 86—87։

[78] I. N. Danişmend, նշված աշխ.-ը, հատ. III, էջ 219։

[79] Մեր կարծիքով, հավատի չէ Իսկենդեր Մունշիի այն վկայությունը, որ իբր վերցնելով իր վրա ապստամբության ղեկավարությունը Կարա Յազըջիի մահից հետո, նրա եղբայր Հասան Բեկը (Դելի Հասանը) ի հակադրություն նրան (Կարա Յազըջիին) հաղվագնպ նեղում էր առևտրականներին և ռայաթներին...» (Տե՛ս А. А. Рахмани, Тарих-и алем арай-и Аббаси. էջ 140։

ցանէն և նկուն եղեալ՝ ելեալ եկին ամօթալի երեսօք, և ցրուեալքն և վիրաւորքն երկու շաբաթէն յետոյ եկին մին մին։

Եւ յետ քանի աւուրց դարձեալ գուժկան երեկ թէ՝ Ղարաղաշն ամենայն զօրօվն դիմեալ կուգան ի Բարերդս, ոմանք հաւատային և ոմանք ոչ։ Զինչ տեսաք որ վերի դաշտի մարդիկն քոչ էին արեր ամենայն ախիւք իւրեանց և եկին անցան գնալով ի լեռինս և յանտառս մայրաց։ Եւ ապա մեք այլ մերձակայ գեղորէիքն ամենայն ախիւք մերովք ընդ վարդապետին և միաբանովք վանացն Վահանշինոյ դիմեցաք ի լերունքն և յանտառախիտ մացառս Կանկեյի ձորոյն և կացաք մնացաք անդ աւուրս ինչ և լսեցաք, որ լցեալ են յերկիրն, որպէս զրազմութիւն մարախոյ և կամ որպէս զուխաջուրսն։ Նմանապէս և նորա ամենակեր մարախոյ նման սպառեր էին զամենայն երկիրն ի կերակրոց և նման հեղեղաց ապականեալ էին, որ զվաստակոց արդիւնքն դեռ էին հորեր և իշտեմարաններ, զոր ինչ կերեալ էին և զմնացեալսն ընդ պղոտայսն էին ցրուեալ խառն ընդ կաւից և՝ շինուածոցն հուր էին արկեր։ Բայց քաղաքին ոչինչ կարացին առնել վասն ամրոցի դղեկին, այլ չորս հազար զուրուշ տալով նոցա, զի մի հրձիգութիւն արասցեն քաղաքին և ամենայն արտաքին շինուածոց նոցին։ Եւ առեալ զկաշառս ի բաց գնացին ճեպով, զի կասկածանաց ահի զրոյց երկիւղի գոյժ լսելով նոցա թէ՝ Սերաստիոյ Ահմատ անուն փաշան կուգայ ի վերայ իւրեանց բազում զօրօք։ Քանզի երկու անգամ յաղթահարէր զնոսա, վասն որոյ երկիւղալից լինէին ի նմանէն, վասն որոյ չուեալ գնացին ուր և կամեցան»[80]։

Այսպիսով, ստեղծվեց մի դրություն, երբ Իսկենդեր Մունշիի բառերով ասած՝ ջալալիները «խռովություններ սարքեցին, և նրանցից յուրաքանչյուրը գործում էր համաձայն իր կամայականության»[81]։ Եվ Շահ Աբասը, ինչպես մենք տեսանք, չհապաղեց օգտագործել բարենպաստ պայմանները, հարձակվեց Թուրքիայի վրա Անդրկովկասը «Սեֆեվիների դինաստիայի տիրապետության ոլորտը վերադարձնելու»[82] նպատակով։ Չի բացառված այն հանգամանքը, որ շահը իր լրտեսների միջոցով կապեր հաստատած լիներ ջալալի ապստամբների ղեկավարների հետ։ Եվ իր հերթին ջալալիների համար անհրաժեշտ էր որևէ հզոր հենարան ունենալ իրենց պայքարում սուլթանի դեմ։ Իսկ այդ հենարանը, բնականաբար,

[80] Գր. Դարանաղցի. էջ 41—43։

[81] Իսկենդեր Մունշի, Թարիխ-ի ալեմ արայ Աբբասի, հատ. I, էջ 440, ցիտատը վերցված է Ա. Ռահմանիի գրքից Тарих-и алем арай-и Аббаси, էջ 95։

[82] Նույն տեղում։

պարսից շահը պիտի լիներ։ Հետագայում, ջախջախված ջալալիների մնացորդները, իրենց առաջնորդ Կալենդար-օղլիի ղեկավարությամբ անցնելով Իրան, հավաստիացնում էին շահին, թե իրենք «անկեղծորեն նվիրված են» նրան, որ «Հոռոմների (Թուրքերի) դեմ [ջալալիների] ելույթները հետևանք էին մեծարգո շահի ու նրա կառավարության նկատմամբ իրենց տածած բարեկամության և նվիրվածության»[83]։

Ի. Պ. Պետրուշևսկին, հենվելով Իսկենդար Մունշիի այն հաղորդման վրա, թե արդեն իսկ 1603 թ. Հարավային Ադրբեջանն ու Շիրվանը բռնկված էին ջալալիների շարժումով, կարծում է, թե «ադրբեջանցի ֆեոդալները և հայ հոգևորականությունն ու վանականությունը» դիմում էին շահին հենց ջալալիների շարժումից ազատվելու համար[84]։ Ի. Պ. Պետրուշևսկու հայտնած այս կարծիքը արդարացիորեն քննադատվել է ակադ. Աշոտ Հովհաննիսյանի «Դրվագներ...» աշխատության մեջ[85]։ Եվ իրոք, Առ. Դավրիժեցու, և ժամանակակից հայ բոլոր հիշատակարանների վկայություններով հաստատվում է, որ ջալալիների տարածումն Անդրկովկասում ոչ թե նախորդել, այլ հաջորդել է 1603—1605 թվականների իրանական արշավանքներին։

Առաջին անգամ, ջալալիները պիտի Անդրկովկաս մուտք գործած լինեն Ջալալեդդին Սինան փաշայի զորքի հետ, երբ վերջինին հաջողվեց նրանց սիրաշահելու միջոցով ներգրավել նրանցից մի մասին, իրանական արշավանքի մեջ։ Նրանց մի զգալի մասը կոտորվեց այդ արշավանքի ընթացքում։ Իրանական արշավանքի ժամանակ էլ ջալալիները կողոպտում էին ճանապարհի վրա ընկած գյուղերի ու բնակելի ավանների բնակչությանը, բռնաբարում էին կանանց և կատարում այլ խժդժություններ այն աստիճան, որ տեղի բնակչությունը աղիողորմ դիմում էր Սինան փաշայի օգնությանը[86]։

Սակայն իրանական արշավանքին ջալալիների որոշ խմբերի մասնակցությունն ու նրանց ունեցած կորուստները (կոտորումը) չթուլացրեց շարժումը՝ ընդհակառակը, դրանից հետո էլ այն նոր ուժով բորբոքվեց։ Խիստ ավերվեց ու ավարվեց ամբողջ Փոքր Ասիան։ Այդ տարիներին հայ, ինչպես և թուրք ժողովուրդը կրեցին

[83] А. А. Рахмани, նշվ. աշխ.-ը, էջ 113։

[84] И. П. Петрушевский, Очерки..., էջ 326։

[85] Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. Բ, էջ 81—82։

[86] Գր. Դարանաղցի. էջ 44։

անասելի դժբախտություններ։ Առաջացած ահռելի սովը, սրի ու հրի հետ միասին, հարյուր հազարավոր մարդկանց կյանքն էր խլում։ Ահա թե ինչպես է ներկայացնում այդ ժամանակաշրջանում ջալալիների շարժումների պատմությունը Ազարիա Սասնեցին.

«Ապա Ղալանտար օղլին լեալ,
յԱնկիւրիոյ եղև ելեալ.
Նա շատ չարիք երկրի ածեալ,
բազում գաւառս շրջապատեալ...
. . . . . .
Զկնի նորա խարախաշն լեալ,
եւ սա բազում չարիս գործեալ.
Ի Մելտինե յԱմիթ եկեալ,
Նասրը փաշայն զնա ըսպանեալ։
Ապա Շապանըն պիղծ ելեալ,
յոլով զոգիս նա խողխողեալ.
Ապա յԱմթայ եղև հալածեալ,
եւ ի Խարբերդ կործան անկեալ։
Հինգերորդին էր Զիլիֆզար,
անթիւ զօրօք էր նա լցեալ,
Եւ մինչ զերկիրն աւեր ածեալ,
ի Սարտարէ մի ըսպանեալ։
Վեցերորդին փիլի կոչեալ,
արիւնարբու շուն երևեալ.
ԶՂայսար քաղաք նա աւերեալ,
Բայց ուրանօր նա սատակեալ։
Եօթներորդն էր Եալա-Սրդմազ,
Խիստ անողորմ զինչ զՅուդաս,
Եւ սա նեղեաց զքրիստոնեայս,
բայց անողորմ զինչ զՀերովդիաս։
Ութերորդին Շեյթան-չաքուշ,
որ շատ արար զուլում և կուռ,
Սա աւերեաց քաղաք և պուրճ
յեռոյ ըսպանեալ ի յառիւծուց։
Իններորդն էր Եալա-կիրմազ,
զինչ չար արար քան ըզԴիւդաս.
Զբազմաց արիւնս վաթեց զինչ սաղ,
ապա կորեաւ ի նոյն յորսայս։
Ապա Քափանաք-օղլին լեալ,
որ Թուրքմանն յառաջ եկեալ.
Զկեղս երկիրն նա աւերեալ,
ապա զնորայն զբլուխն հատեալ։
Եւ արտաքոյ քան զսոսայ լեալ,
վեց ճելալիք այլ ևս յայտնեալ.

Նախ առաջինն էր Ապուսեֆ,
որ զխնուս քանդեց առանց նրսեֆ,
Այնքան սա խեղճ բաներ արաւ,
մինչ զի ճակատն եղջիւր բուսաւ»[87]։

Այնուհետև՝ Իպրիմ բեկ կոչված ջալալին հազար մարդով ասպատակում ու ավերում է Մուշի շրջակայքը «զամս վեց»։ Միր Մահմեդ ջալալին, որ «ի Մերտենայ էր նա ելեալ.

Որ և զՄերտին և զՄծրին,
Մինչև յԱմիթ նա աւերեալ»։

Մյուս ջալալի առաջնորդը՝ Քոսա Սաֆարը որ՝

«Ի յԱնթափու եղև ելեալ,
Քըսան հազար զօրքս կազմեալ
Եւ զամբս եօթն զերկիրս գերեալ.
Ի յԱնթափու մինչ Արզրում
Անթիւ բազում արար զուլում.
Յետոյ եղև հնազանդեալ,
ԶԱրզրումու սանճախն առեալ»[88]։

Ազարիա Սասնեցու մոտ, հինգերորդ Ջալալին, որ մեծ ավերածություններ է գործել, եղել է Միր Աղդին Բաղեշի քուրդ Միր Շարաֆի եղբայրը։ Նա իբր ավերել է Միջագետքից մինչև Շիրվան (sic!)։ Նրա կատարած ասպատակությունների մասին Ազարիա Սասնեցին գրում է.

«Հինգերորդին Միր Աղդին լեալ,
ի Ճիղիրու երկրէն ելեալ.
Միր Շարաֆին եղբայր մի լեալ,
որ յեղբօրէն, ապստամբեալ.
Անթիւ զօրօք (sic!) զօրապնդեալ,
եւ աշխարհի աւեր ածեալ։
Նախ զՀասանքեֆ նա աւերեալ,
եւ զՅամետին յուրն կոխեալ։
Զտորայ երկիրքն թալանեալ,
մինչև Մծրին բընաջինջ լեալ։
Եւ ըզճիղիր յոյժ աւերեալ,
մինչ ի Պոհտան նա խարխարեալ.

87 Ազարիա Սասնեցվոյ Ողբը, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 333։
88 Նույն տեղում, էջ 333։

Եւ ի Սղերթ քաղաք մրտեալ,
Շուրջանակի զնա պաշարեալ.
Զիշխանս նորա անդէն սպանեալ,
Եւ ըղքաղաքն առեալ նստեալ։
Եւ ըզկուրտլան յոյժ աւերեալ
Եւ զՎրտրկան գերի տարեալ,
Եւ ի բրֆրայ նորա սկսեալ,
Մինչ ի Թրկալրն Թալանեալ։
Եւ ըզՄատան նա կողոպտեալ,
Մինչ ի Շիրվան (sic!) աւեր ածեալ»[89]։

Միր-Շարաֆը բազմիցս ընդհարվում է իր եղբոր հետ, բայց միշտ էլ պարտվում է։ Ուստի խորամանկությամբ Միր Շարաֆը կանչում է իր մոտ իր եղբորը՝ Միր Ազդին և դավադրաբար սպանում նրան, նաև՝ «ըզզօրսն կոտորեալ, որպէս փոշի սփիւռ եղեալ»[90]։

Եվ վերջապես վեցերորդը դա քուրդ Ալին է։ Ըստ երևույթին, խոսքն այստեղ վերաբերում է քուրդ Ջանփոլադ Ալիին։ Սրա ղեկավարած ապստամբությունը ամենաուժեղն էր նախորդների համեմատությամբ։ Սա՝ Սասնեցու բառերով ասած՝

«Ուր և կային ապստամբեալ,
Մեծաւ սիրով առ ինքն կոչեալ։
Այսպէս անթիւ զօրս կազմեալ,
Արիւնարբուք ամէնն լեալ»[91]։

Եվ իրոք, Կալենդար օղլիի հետ միասին մի քանի տարի շարունակ Ջանփոլադ օղլին իր զորքով ասպատակության ենթարկեց ոչ միայն Փոքր Ասիան, այլև Ասորիքն ու Միջագետքը։

Թուրքական աղբյուրներում Ջանփոլադ Ալիի ապստամբության համար հետևյալ պատճառն է մատնանշվում։ 1605 թ. աշնանը, երբ Սինան փաշան պարտություն է կրում Թավրիզի մոտակայքում ու հաղիվ փախչում է Վան, այնտեղ նրան է ներկայանում քուրդ իշխան Ջանփոլադ զաղեն այն հույսով, որ պարգևատրվում կստանա Սինան փաշայից՝ օսմանյան բանակի մնացորդները հաջողությամբ Վան տեղափոխելու գործում մատուցած ծառայության համար։ Սակայն Սինան փաշան տեղն ու տեղը սպանում է նրան։ Եվ ահա նրա եղբայրներ Ալիբեկն ու Խզրրբեգը իրենց հրամանատարության տակ գտնվող 30.000-ոց զորքի գլուխ անցած շարժվում են դեպի Հալեպ և ապստամբում սուլթանական կառավարության դեմ[92]։ Իհարկե Սինան փաշայի նման վերաբերմունքը միայն առիթ կարող էր ծառայել ապստամբության համար։ Իսկական պատճառը պիտի փնտրել այն քաղաքականության մեջ, որ վարում էր օսմանյան կառավարությունը առավել ինքնուրույնության ձգտող քուրդ բեգերի նկատմամբ, այն է՝ վերացնել վերջինների անկախությունը և ուղղակիորեն ենթարկել նրանց Բ. Դռանը։ Այստեղից էլ Ջանփոլադ Ալիի շարժումը պիտի դիտել որպես թուրք զավթիչների ձեռքից ազատագրվելու մի փորձ։ Որ իրոք դա այդպես է, երևում է նրանից, որ շուտով Ջանփոլադ Ալիին է միանում Լիբանանի Դրուզների առաջնորդ Ֆախրեդդին Մանօղլին։ Այս երկու ապստամբ ղեկավարները, գրում է Համմերը,—«...իրենց միացյալ ուժերով սպառնում էին Սիրիան մի անկախ թագավորություն դարձնել»[93]։

Իրաքում ջալալի Ահմեդ Թավիլի կամ Երկարի որդի Մուհամմեդը կարողանում է պարտության մատնել մեծ վեզիր Հասան փաշայի զորքերը շնորհիվ այն բանի, որ նրան աջակցում են քրդական Սուխրան և արաբական Աբուրեշ ցեղերը[94]։ Անշուշտ, այս աջակցությունը դարձյալ ատելի օսմանյան տիրապետությունը տապալելու մի փորձ էր։

Ջանփոլադի և Ֆախրեդդին Մանօղլիի ապստամբ զորքերը Համայում պարտության են մատնում Թրիպոլիի հարբիմ՝ էմիր Տուսուֆ իբնու Սայդային, ներխուժում են Դամասկոս, հրի, սրի ու կողոպուտի են մատնում քաղաքը։ Այնուհետև ապստամբները շարժվում են դեպի հյուսիս, մտնում Կիլիկիա, ուր գտնվում էր Ջանփոլադի ֆեոդալական տիրույթը՝ Քիլիսը։ Այդ բոլորը նշանակում էր, որ փաստորեն Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան ամբողջությամբ անջատվել էին կայսրությունից։ Որպեսզի այդ անջատմանը օրինական բնույթ տա Ջանփոլադ Ալին, դրամ է կտրել տալիս իր անունով և իսլամական կրոնի դրույթների համաձայն, որպես սյուղերեն արքա խութբն (աղոթք) է կարդալ տալիս մզկիթներում։ Նա մինչև իսկ դիվանագիտական հարաբերությունների մեջ է մտնում ու 1607 թ. հոկտեմբերի 2-ին առանձին պայմանագիր կնքում Տոսկանայի արքայազուկ Ֆերդինանդի հետ։ Նա բանակցություններ է վարում նաև այլ պետությունների հետ[95]։

89 Ազարիա Սասնեցվոյ Ողբք, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 333—334։
90 Նույն տեղում։
91 Նույն տեղում, էջ 333—334։

92 J. Hammer, Histoire de l'empire ottoman. հատ. VIII, էջ 88։
93 Նույն տեղում, էջ 114։
94 Նույն տեղում, էջ 113։
95 Նույն տեղում, էջ 114։

Եվ ահա այսպիսի ահավոր վտանգ էր կախված Օսմանյան կայսրության գլխին։ Մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Սարուխանն ապստամբվում էր Կարա Սայիդի ու Կալենդար-օղլիի որդու կողմից։ Կնալի կոչված Ջալալին հրի ու սրի էր մատնում ամբողջ Բրուսայի նահանգը։ Մուսելլի շավուշն ու Ջեմշիդը իրենց փաստական իշխանությանն էին ենթարկել Կոնիայից մինչև Ադանա ընկած շրջակայքը[96]։ Ինքը Կալենդար-օղլին զավթել էր ամբողջ Կենտրոնական Անատոլիան։

Սուլթանական կառավարությունը 1607 թ. ամռանը այս անգամ ապստամբների դեմ է ուղարկում ռազմի դաշտերում կոփված ծերունի սերդար «կույուջի» (հոր փորող) Մուրադ փաշային։ Սակայն փորձված Մուրադ փաշան քաջ գիտեր, որ հնարավոր չէ միայն զենքի ուժով ճնշել ապստամբությունը։ Եվ նա դիմեց խորամանկության։ Ապստամբության շատ առաջնորդներին նա խոստացավ կառավարական զանազան պարգևներ ու ավատներ, իրեն Կալենդար օղլիին Անկարայի սանջակը, պայմանով, որ վերջինս թույլատրի օսմանյան բանակի ազատ անցումը նրա զավթած տերիտորիայից՝ Ջանփոլադի դեմ գնալու համար։ Կալենդար օղլին համաձայնվում է։ Կայսերական հրովարտակն իր ձեռքում ունենալով Կալենդար օղլին շարժվում է դեպի Անկարա։ Ճանապարհին, թուրքական աղբյուրների տվյալներով, նա հրի ու կողոպուտի է մատնում ամբողջ շրջակայքը[97]։ Երբ նա մոտենում է Անկարային, ապա քաղաքի դատավոր Վելդանդադե Մեվլանա Ահմեդը թույլ չի տալիս նրան մտնել քաղաք։ Եվ երբ Կալենդար օղլին ուղում է իմանալ, թե ինչու կադին չի ուղում ենթարկվել կայսերական հրամանին, վերջինը պատասխանում է. «Չնայած դուք սանջակբեկ եք նշանակված, բայց չեկաք որպես այդպիսին, այլ եկաք որպես ավազակ ու խռովարար։ Դուք կողոպտեցիք կարավանները, այրեցիք բերդերը...»[98]։ Կատաղած Կալենդար օղլին պաշարում է քաղաքը, սակայն այն գրավել նա չի կարողանում։ Ստանալով օգնական ուժ պաշարվածները ստիպում են Կալենդար օղլիին հետ նահանջել[99]։

---

[96] Kâtip Çelebi Feşleke, հատոր I, էջ 294—295։

[97] Նույն տեղում, էջ 292—293։

[98] J. Hammer նշվ. աշխ.-ը, հատ. VIII, էջ 118։

«دوسنجاق سنا توجيه صورتى او لنعيش امل سن بويده سنجاق
بكلرى هيننده گللميوب جلاليلر صورتنه گلدينز بونا دليل بودركه گلوب
فقراذن منزاعى ايجينه قوندوذز وعصب ايله الدنينز ...»

[99] Katip Çelebi, նշվ. աշխ.-ը, հատ. I, էջ 293։

Իսկ մինչ այդ Կույուջի Մուրադ փաշային հաջողվում է ճնշել Մուսելլի Ջավուշի և Ջեմշիդի ապստամբությունները Բրուսայի և Կիլիկիայի շրջակայքում։ Այնուհետև նա Ջանփոլադի հետ ունեցած մի շարք մարտերում գլխովին ջախջախում է նրա և Ֆախրեդդին Մանօղլիի միացյալ զորքերին։ 1608 թ. դարձանը Ջանփոլադը թողնելով Ասորիքը հաղթական սերդարին, մտնում է Փոքր Ասիա, Հայաստան ու Ճանապարհին կատարում մեծ ավերածություններ։ Այդ մասին համեմատաբար մի ընդարձակ հիշատակարան է թողել գրիչ Սրապիոնը Տրապիզոնից։ Մեջ բերենք այդ հիշատակարանն ամբողջությամբ. «...Որ և աղդմանէ շարին բնակարանն բանսարկուի մեծ դազանն և շար վիշապն, շունն կատաղի և երկրորդ ընարսակն (sic!), պիղծն Ալիփաշան Ճանփօլատին որդին որ ժողովեաց բազում զորս ԿՌ (60.000) հետևակ անկման և քան զայս աւելի և ոչ պակաս զինուորս ձիաւորս տիրեաց բռնութեամբ երկրին Տիրերոյ որ Հայապասի և բազում քաղաքաց և գեղօրէից. աւեր էած, զոր թէ գրեաք մի ըստ միոջէ չէ բաւական տանել թխթոյ։ Որ և սոյն շարէն ապստամբեալն շարն և ժանդն տասնապատիկք զսա պիղծ Թաւուլն և եկեալ ԺՌ (10 հազար) հեծելօք ի յերկիրն Կիլիկեցոց և առեալ զԱտանայ, զԹարսիս, զՍիս, զՂարսի բազում աւեր էած և ԵՃ (500) արս մատաղ տղայք գերի տարաւ ի Ատանոյ, և անտի դիմեալ ի վերայ երկրին Մարաշոյ աւերելով և եկեալ հասաւ ի Սեփաստիայ և անտի եկեալ ի եկեղեցաց գաւառն և բազում աւեր էած էրկիցս և երիցս որ սովոր(եալ) էր պիղծ արենարբուն որ թոյլ ետ աստուած վասն ծովացեալ մեղաց մերոց և այլ բազում աւեր էած աշխարհի մինչև ի մեծ ծովեղերն Եփեսոսի Զմռին. և անտի դարձեալ եկն Իկոնիան ի Գաղատիայ ի Կաստամոնի և անտի ի մեծն Պոնտոս Տրապեզոն և այրեաց զքաղաքս զայս և գնաց կրկին ի Երզնկան, զոր տէր աստուած մեր ոչ կամեցաւ զկորուստ մարդկան, այլ ետուր զօրութիւն ալևոր Մուրատ փաշային որ եկեալ բազում զօրօք էառ զմեծ զոռոգն զՃանփուլատի որդին և անխնա կոտորեաց և զինքն փախստական արար և ամենայն տունն բնաջինջ արար և այլ բազում կոտորս արար ի յերկիրն Տիրերոյ և անտի եկեալ դիմեաց ի վերա շարին որ Թաւուլ ասէին և եկեալ եհաս ի մեծ դաշտն Տարօնոյ և կոտորեաց զնոսա անխնայեաբար. փախուց զսակաւու մինչև ի զղբլպաշն և ինքն քաջ ծերն (իմա՝ Կույուջի Մուրադ փաշան) որ աստուած զօրացուց նստաւ ի մեծ դաշտն Բաբերդու և զօրս արձակեաց այսր և անդր և բազում գերեալ ի ապստամբ պարոնացն և փաշաներուն բերեալ սուր եդ ի վերա եսպան և զոր գտանէին բերէին և սպանէին և արար մեծ խաղաղութիւն ի վերայ երկրի։ Եւ դարձաւ

խաղաղութեամբ ի Ստամպոլ առ թագաւորն իւր որ զօրացնողն Քրիստոս երկար ժամանակ տացէ սուլթան Ահմատին և իւր մեծ վեզիրին Մուրատ փաշային ամէն»[100]։

Այսպիսով, հեղինակի վերաբերմունքը Ջանփոլադի ղեկավարած շարժմանը խիստ բացասական է, որովհետև նա ավերել է Փոքր Հայքի մի շարք վայրերը և բռնություններ է գործադրել։ Հիշատակարանում փառաբանվում է սերդար Կույուշի Մուրադը, որին հաջողվել է վերահաստատել խաղաղությունը երկրում։ Սակայն ինչ է շահել աշխատավոր ժողովուրդը այդ խաղաղությունից։ Համարյա ոչինչ։ 1609 թ. արտագրված մի ավետարանում գրիչներ Ստեփանոսն ու Մինասը Համիթից իրենց հիշատակարանում մեզ տեղեկացնում են, որ այսպես կոչված խաղաղության հաստատումից հետո ժողովրդի վիճակն էլ ավելի վատթարանում է հարկապահանջության ավելացման պատճառով։ Նրանք գրում են. «...Դարձեալ գրեցաւ սա ի դառն և ի նեղ ժամանակին, զի խիստ են զօրցած թշնամիք թագաւորին առաՀկաց սուլթան Ահմատին զի յայսմ ամի ել զաւրավար մի Մուրատ անուն ի թագաւորէն բազում զօրօք և սակաւ մի խաղացոյց զընտանի թշնամիք թագաւորին։ Այլ քրիստոնէից ոչ գոյ հանդիստ, այլ որչափ երթայ հարկապահանջութիւն բազմանայ (ընդգծումը մերն է—Մ. Ջ.) այլ յուսամք յաստուծոյ զի ի հանդերձեալ կեանքն զժամանակիս քրիստոնեայքն ընդ արիւնահեղ մարտիրոսն դասեսցէ»[101]։

Այնուհետև ջալալի Ջանփոլադի զորքը, որը հիմնականում կազմված էր նույն շիֆթրոզաններից, լևենդներից, Կերեշտեսի փախստականներից և անշուշտ քրդական ցեղերից իրենց արշավանքների ընթացքում մեծ վնաս էին հասցնում ոչ միայն հայ, այլև տեղի թուրք, արաբ բնակչությանը։ Ջանփոլադի և Մանոլիի ապրստամբական շարժումը պիտի դիտել որպես առաջադիմական, քանի որ դա դրուզ ու քուրդ ժողովուրդների զգալի մի հատվածի սուլթանական ատելի լծից ազատագրվելու մի փորձ է եղել։ Այդ շարժումը, մյուս կողմից, սոցիալական բնույթ է ունեցել։

Հետաքրքիր է նշել, որ նույն տեղում Գր. Դարանաղցին Ջանփոլադին դրական գծերով է ներկայացնում՝ համարելով նրան «խաղաղասեր և աշխարհաշէն»։ Սուլթան Ահմեդին տված բացատրության մեջ, Ջանփոլադը իր ջալալի դառնալու հանգամանքը բացատրում է մեծ վեզիր Նասուհ փաշայի իր նկատմամբ ցուցաբերած

[100] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1354, էջ 199բ, 200ա։

[101] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4912, էջ 253բ։

անարդարացի վերաբերմունքի։ Եվ իրոք, ինչպես մենք տեսանք, Ջղալազադե Սինան փաշան Ջանփոլադի եղբորը, իսկ Նասուհ փաշան ապստամբության դրոշը բարձրացրած հենց իրեն՝ Ալի Ջանփոլադի նկատմամբ վարեցին հալածանքի քաղաքականություն։ Դա մի քաղաքականություն էր, որ վարվում էր իսկական և ոչ թե ձևական անկախության ձգտող քուրդ ֆեոդալների նկատմամբ։ Ահա և Գր. Դարանաղցու ժամանակագրությունից վերցված այն հետաքրքիր հատվածը, որը վերաբերում է Ալի Ջանփոլադի շարժմանը։ «Եւ յայսմ ամի և թվի (իմա՝ 1608 թ.), յորժամ էաք յԵրուսաղէմ, նա տէրն Քիլիսոյ՝ Ջանփոլատն ապստամբեալ էր և ջալալի լինելով՝ զՀալապ և զՇամ (Դամասկոս) խիստ նեղ էարկ, մինչև յԵրուսաղէմ այլ հիսար կրեցաք և ի նեղ անկաք։ Յետոյ Մուրատ փաշան կոտորեց զամենայն ջալալի զօրս նոցա ի Հալապ, և ինքն երեք հարիւր ոգով հազիւ զերծեալ մազապուրծ լինելով անկանելով ի Քիլիս և առնելով զմայրն և զփոքրիկ տեսլեամբ գեղեցիկ և գնալով առ թագաւորն ի Կոստանդինուպոլիս ի հնազանդութիւն և տալով զմայրն որդովն հանդերձ պատանդս թագաւորին և գանկատ առնելով ի ձեռանէ Նասուֆ փաշային և այլոցէն թէ՝ նոքա զիս ոչ կամաւ ջալալի արարին։ Բազում ջալալի զօրօք գային ի վերայ երկրին և աշխարհին իմոյ՝ յաւարի և հրձիգ առնել։ Եւ այլ առ նոցա ահից զօրս անթիւս գումարեցի ընդդէմ նոցա, զի յաղթեցից նոցա և ազատեցից զաշխարհն իմ, և ժողոված զօրս ջալալի դարձան, այլ ոչ կարացի հնազանդեցուցանել ինձ։ Եւ ստոյգ և իրաւ՝ այնպիսի խաղաղասէր և աշխարհաշէն էր, և ի բուն պապանց ի վեր ունէին զիշխանութիւն երկրին իւրեանց, զոր յակամայ շարացուցին։ Եւ այսպիսի աղետիւք պատմեաց թագաւորին, և թագաւորն զթացեալ ի նա, ետ փաշայութիւն զՊուտում, զտեղի Հասան պէկի՝ եղբօր Ազիճուն։ Եւ գնացեալ անդէն և զօրքն, որ սովոր էին ջալալութեան, կամեցան գործել ըստ սովորութեանն իւրեանց և պոստանցիքն անդէն սպանին զինքն և զջալալի զօրսն իւր, որպէս զՀասան պէկն արացին»[102]։

Ջանփոլադ Ալիի ապստամբության ճնշումով ջալալիների շարժումը վերջ չէր գտնում։ Կալենդար օղլին, թողնելով Անկարայի պաշարումը իր զորքով շարժվել էր դեպի Բրուսա և ասպատակում էր քաղաքի ամբողջ շրջակայքը[103]։ Ճանապարհին, նա իմանալով Ջանփոլադի պարտության մասին, կոչ արեց վերջինին միանալ իր

[102] Գր. Դարանաղցի, էջ 101։

[103] Kâtip Çelebi, նշվ. աշխ., հատ. I, էջ 298, J. Hammer, նշվ. աշխ.-ը։ հատ. VIII, էջ 122։

զորքի հետ և համատեղ պայքարել ընդհանուր թշնամու՝ սուլթանական կառավարության դեմ[104]։ Ջանփոլադը համաձայնվեց, բայց վերջին պահին փոխեց իր որոշումը[105], գնաց Կ. Պոլիս ու, ինչպես տեսանք Դարանաղցու ժամանակագրությունից վերցված հատվածից, ներողություն խնդրեց սուլթանից, ստացավ Բուդումի սանջակը Բոսնիայում, ուր և նրան սպանեցին։

Մեր կարծիքով Ջանփոլադ Ալիի նման դիրքը պիտի բացատրել այդ երկու ապստամբ զեկավարների տարբեր նպատակներ հետապնդելու մեջ։ Եթե Ջանփոլադը ձգտում էր իր իշխանության ներքո եղած քրդական ցեղերին ու նրանց զբաղեցրած տերիտորիան ազատագրել օսմանցիների տիրապետությունից, ապա Կալենդար օղլու ապստամբությունը հետապնդում էր նույն նպատակը, ինչ-որ Կարա Յաղրջիինը, այն է՝ սուլթանական կառավարության դեմ ժողովրդական խորը դժգոհություններն օգտագործել սեփական կարիերայի՝ նոր թագավորություն ստեղծելու համար։

Բրուսայի շրջակայքի Կալենդար օղլիի կողմից՝ ասպատակվելու մասին Գր. Դարանաղցու մոտ կարդում ենք. «մեծ Կալենդար օղլին ...զՊուրսա յաւարի էառ և շատ խայտառակութիւն գործեաց ընդ կանայս և ընդ մանկունս նոցա...»[106]։

Գր. Դարանաղցին հիշատակում է 1609 թվականին ապստամբության գլուխ կանգնած մյուս ջալալի առաջնորդների անունները, որոնք գործել են հիմնականում Արևմտյան Հայաստանի տերիտորիայում։ Դրանք ենք՝ Մուրատխանցի երեք եղբայրները, Մուրադ փաշան, Իբրահիմ բեկը, Մուստաֆա բեկը, Շիրին բեկը և Թավուլը։ «Զայս Անատոլի լցեալ էին ապստամբօք,— գրում է Դարանաղցին,— և յորժամ գնաց սա (իմա՝ սերդար Կույուջի Մուրադը) հրամանաւ սուլթան Ահմատին ի պատերազմ ընդդէմ նոցա, որ ոչ գոյր թիւ համարոյ զօրաց նոցին, որոց գլխաւորքն էին նախ Մուրատխանցի երիս եղբարցն, որ բնակեալ էին ի ծործորին Ծոնախու, որ այժմ Կումիշխանա ասեն, Մուրադ փաշա անուն և Իբրահիմ պէկ և Մուստաֆա պէկ, և ի մեր Կամախու բերդն Շիրին պէկ անուն և թաւուլ, որ անհուն էր զօրքն...»[107]։

[104] Նույն տեղում։ Կալենդար օղլին հորդորում էր Ջանփոլադին, թե «ես կառնեմ քո վրեժը» سنن القلندر بن الورده

[105] Նույն տեղում։

[106] Գր. Դարանաղցի, էջ 142—143։ «Բրուսայի փողոցներից ոմանց հրի ու ոմանց կողոպուտի ենթարկեց», կարդում ենք Քյաթիբ Չելեբիի մոտ։

[107] Նույն տեղում, էջ 143։

Սերդար Մուրադ փաշան իր ամբողջ ուշադրությունը սևեռում է վերոհիշյալներից ամենավտանգավորի՝ Կալենդար-օղլիի վրա։ Եվ 22 րեբի ուլ-էվվել 1017 թվականին (15 օգոստոս 1608 թ.) թշնամի բանակներն հանդիպում են Ալաջա-Չայրը կոչված վայրում (Էլբիստանից ոչ հեռու)։ Հաղթում է Մուրադ փաշան, որից հետո Կալենդար-օղլիի զորքի մնացորդները Էրզրումի և Արդահանի վրայով անցնում են թուրք-իրանական սահմանը և իրենց հպատակությունն են հայտնում Երևանի Ամիրդունա խանին։

Հետաքրքրությունից զուրկ չէր լինի այստեղ մեջբերել այն ելույթի մի շարք դրույթները, որ ունեցել է, համաձայն թուրք պատմագիրների, Կալենդար օղլին Ալաջա-Չայրրի ճակատամարտի նախօրեին գումարված ռազմական խորհրդում։ «Ես դադարեցի օսմանցիներին հնազանդվել այն ժամանակ, երբ այդ նենգերի ու կեղեքիչների (իմա՝ օսմանցիների—Մ. Ջ.) գոռոզությունն հասավ գագաթնակետին ու նրանց տիրապետությունը ճզմեց աշխարհը,— ասում է Կալենդար օղլին։ Սակայն օսմանյան տիրապետության դեմ ըմբոստացած այդ նույն Կալենդար օղլին հետևյալ կերպ է շարունակում իր ելույթը,—Մենք ասպատակեցինք Միխալիջի, Այդընի և Սարուխանի շրջանները և վերադարձանք հսկայական ավարով։ Կոնիայում ...մենք կողոպտեցինք ամբողջ շրջանը։ Եվ այդ բոլորից հետո պարտության դեպքում,—թող մեր արարքները պատմվեն բերնից բերան, որպեսզի նրանց հիշատակն անմահանա»[108]։ Կալենդար-օղլիի և ջալալի մյուս ապստամբ զեկավարների կատարած չարագործությունները, երկար ժամանակ մնացել է ժողովրդի հիշողության մեջ, սակայն այդ հիշատակությունից ժողովուրդը միայն նզովք ու սոսկում է ապրել։

Շուտով Կույուջի Մուրադին հաջողվում է ամենայն դաժանությամբ ճնշել վերոհիշյալ մյուս ապստամբ զեկավարների դիմադրությունը և արժանանալ «կայսրության սուրը» («seyf-ud-devlet») «սուլթանաթի վերականգնող» («muhi-es-saltanat») էպիտետներին։ Կույուջի Մուրադը գերի ընկած ապստամբության մասնակիցներին գլխատել է տալիս, իսկ նրանց դիակները հրամայում նետել հատուկ պատրաստված հորերի մեջ։ «Զայսքան բազմութիւն ջալալեացս, որ փոքր ի շատէն գրեցաք ի կարճոյ համառօտիւ, նա ի մեկ տարոյն մէջն իսպառ կոտորեաց և բնաջինջ արար և եբարձ ի միջոյ աշխարհէն, որ ի միոյն վերայ թագաւորն առ ահիցն ահեղից անկարացեալ

[108] J. Hammer, նշվ. աշխ.-ը, հատ. VIII, էջ 126 և հետ.։

գնալոյ, սա Աստուծով զօրացեալ՝ Մուրատ փաշան իսպառ ջնջեաց, որպէս Գեդէոն երէք հարիւր արամբ զՄադիամացիս։ Եւ զՄուրադ-խանցիքն և զմեր Շիրին պէկն ի Խախտեաց դաշտին, այսինքն որ Բաբերդ ասի, ի Սուներ գեղջն կոտորեր և հորեր էր լցեր, զոր ինքն փորել կուտայր յառաջագոյն յամենայն իշխանսն՝ վասն ջալալեացն և ամենայն վնասակարացսն, յորոցմէ գանգատէին մնացորդքն երկրին՝ կոտորէր և ի գրին արկանէր և երկու երեք մարդ ի վայրն կային, որ զձգածն խտիֆով շարէին, զոր տեսուչք պատմեցին։ Եւ մեր շորս ամաց յետոյ ընդ նոյն ճանապարհաւ անցաք, ի ձմեռան աւուրքն էր, տեսաք զհորերն մեծամեծ տան չափ. մէկ երկու փլեր էր, որ զբերանն ծածկեալ էր փայտիւ և հողով։ Եւ այսպէս բարձան ամբարիշտքն երկրէ և պակասեցան որպէս զծուխ զի պակասէ և ոչ տեսին զփառս Աստուծոյ»[109]։

Վերջին ամենախոշոր ճակատամարտը ջալալիների և Կուլուջի Մուրադ փաշայի միջև, Իսկենդեր Մունշիի տվյալներով տեղի է ունենում Էրզրումի շրջակայքում (1608 թ. աշնան)։ Կրելով ծանր պարտություն, ջալալիների մնացորդները, թողնում են Թուրքիայի սահմանները և ապաստարան են փնտրում սեֆեվիների երկրում[110]։

Նույն Մունշիի վկայությամբ, Երևանի Ամիրգունա խանը շատ սիրալիր ընդունում է ջալալիներին, սկզբում տեղավորում է նրանց էջմիածնում (Ուշքիլիսե), ապա ուղարկում Թավրիզ[111]։

Պարսիկ պատմագիրն այնուհետև նշում է, որ շուտով ջալալիների մոտ առաջանում են տարաձայնություններ, ուստի նրանք բաժանվում են մանր ու երբեմն էլ հակամարտ խմբավորումների[112]։

Շահ Աբասը շատ «հյուրընկալ ու սիրալիր» ընդունում է ջալալիների մի շարք առաջնորդներին, հատկապես Կալենդար-օղլիին[113]։ Շահի նպատակն էր օգտագործել ջալալիներին թուրքերի և հատկապես սահմանագլխում գտնվող քրդական ցեղերի ապստամբությունը ճնշելու համար[114]։ Այդ ժամանակ մեծ ապստամբություն էր բարձրացրել Բերադոստ քրդական ցեղը Ամիր խանի գլխավորությամբ։

---

109 „Tarih-i Nâima“, հատ. II, էջ 258։

110 Գր. Դարանաղցի, էջ 144։

111 А. А. Рахмани, Тарих-и алем арай-и Аббаси, էջ 113։

112 Նույն տեղում, էջ 114։

113 Նույն տեղում։

114 Նույն տեղում, էջ 114—115։

Վերջինը իրեն Ուրմիայի, Ուշնուի և մոտակա շրջանների անկախ կառավարիչ էր հայտարարել[115]։

Պարսիկների և ջալալիների միացյալ ուժերը պաշարել էին հին Դոմդոմ բերդը, սակայն գրավել չէր հաջողվում երկար ժամանակ։ Պաշարման ընթացքում ջալալի առաջնորդներն իմացան, որ սուլթանական կառավարությունը ներում է շնորհում նրանց, ովքեր կթողնեն ծառայությունը շահի մոտ և կվերադառնան Թուրքիա։ Ջալալիները հատկապես պաշարման ընթացքում Կալենդար օղլիի մահից հետո, մասսայաբար թողնում ու հեռանում են Սեֆեվիների երկրից[116]։ Չնայած դրան, պարսիկներին հաջողվում է ամենադաժան ձևով ճնշել Բերադոստ քրդական ցեղի ազատագրական շարժումը ու սպանել նրա առաջնորդ Ամիր-խանին։ Սակայն պարսիկներին չհաջողվեց քուրդ ժողովրդի ազատասիրական կամքը վերջնականապես ճղմել։ Նրանք կրկին ապստամբեցին 1615 թվականին։ Այդ ապստամբությունը նույնպես ճնշվեց[117]։ Քրդերն ապստամբում էին ոչ միայն Իրանի, այլև, ինչպես տեսանք, սուլթանական Թուրքիայի դեմ։ Նրանց նույնպես անվանում էին ջալալիներ, այսինքն՝ ապստամբներ։ Քրդերի շարժումները որոշակիորեն ազատագրական բնույթ ունեին։

Սակայն Իրանի սահմանը մուտք գործած ջալալիներից բոլորը չէ, որ շահի կողմից ուղարկվեցին քուրդ ապստամբների դեմ։ Նրանց մեջ կային այնպիսիք, որոնք մնացին Արարատյան դաշտավայրում։ Առ. Դավրիժեցու «Պատմությունն» ուշադիր ընթերցողը կնկատի միաժամանակ, որ առանձին ջալալի խմբեր Արարատյան դաշտավայրում հաստատվել էին դեռևս մինչև 1609 թվականը, այսինքն՝ մինչև Կալենդար-օղլիի փախուստն Իրան։ Պիտի ենթադրել, որ դրանք Արարատյան դաշտավայր էին թափանցել, ինչպես նշվեց, Ջղալազադե Սինան փաշայի զորքերի հետ։ Չի բացառված, որ Արարատյան դաշտավայրում հաստատված ջալալիները կարող է լինեին տեղացի մուսուլմաններից, որոնք ըստ երևույթին օգտագործում էին պատերազմական գործողությունների հետևանքով ստեղծված որոշ նպաստավոր պայմանները։ «Եւ ի մէջ երկուց տիեզերակալացս այսոցիկ, այսինքն շահին և Ջղալօղլուն,—գրում է Առ. Դավրիժեցին,—ամայի մնաց երկիրն Արարատու իւրովք մասնաւոր գաւառօքն. քանզի շահն գնաց ի Թարվէզ՝ և ոչ է ձեռնհաս. և Սար-

---

115 А. А. Рахмани, Тарих-и алем арай-и Аббаси, էջ 114—115։

116 Նույն տեղում։

117 Նույն տեղում, էջ 116։

դարն Օսմանցւոց մեռաւ, և ինքեանք ի մէջ իւրեանց ի խռովութիւն կան զի ոչ են միաբանք։ Վասն որոյ պարոնայք ոմանք՝ որք խրախուսեալ յուսային ի զօրութիւնս անձանց իւրեանց, գային և տիրէին երկրին Արարատու՝ այսինքն Երևանայ»[118]։ Տեղացիներից էր, հավանաբար, Առ. Դավրիժեցու հիշատակած քանաքոլու Մահմադը, որը «եկեալ տիրացաւ աշխարհին»[119], այսինքն՝ Արարատյան երկրին։ Եկվորներից պիտի համարել նաև Առ. Դավրիժեցու հիշատակած Թոփալ-Օսման փաշային, որն հաղթում է Քանաքոլու Մահմադ փաշային, ձմեռային կայան է դարձնում իրեն համար Կարփի գյուղը և ասպատակություններ սփռում շրջակա գավառներում։ Կարփիից,— գրում է մեր պատմագիրը՝ Թոփալ Օսմանը, «...Առաքէր զզօրս իւր ի շրջակայ գաւառս և ի գիւղս բերել ինքեանց և անասնոց իւրեանց կերակուրս։ Եվ գնացեալ արքն՝ յոր շէն և մտանէին, ոչ շատանային բաւականաւն, զի յիր գրաւականն՝ աւելորդաց ձեռն արկանէին, քանզի կալեալ զարսն կախէին, զոմանս յոտից՝ և զոմանս ի բազկաց և զոմանս յերկուորեաց, և անողորմ դանիւ հարեալ բրածեծ առնէին՝ մինչ անշունչ լեալ իբր զմեռեալ դառնային. և ոմանք ևս ի տանջանս մեռանէին։ Ոմանց զականջս կտրէին, և ոմանց ընդ քիթն նետ հարեալ շրջեցուցանէին։ Եւ այսպէս չարաչար տանջանօք չարչարէին ցուցանել նոցա համբարս ցորենոյ, և գարւոյ. դարանս և պահարանս գանձուց և ստացուածոց»[120]։

Համաձայն պատմագրի հաղորդած տեղեկությունների ջալալիներն Արևելյան Հայաստանում «Այսպէս արարին զամենայն շրջակայ զգիւղսն և զգաւառսն... Զապարանու երկիրն, զՂրխբուլայ երկիրն՝ զՇաղկունուց ձորի երկիրն, զԳառնու ձորն, զՈւրծայ ձորն և յայնկոյս գետոյն Երասխայ՝ զՍահաթայ երկիրն՝ զԿողբ և զԱղջաղալէն»[121],—գրում է Առ. Դավրիժեցին։

Հատկապես ողբերգական վիճակ են ապրում Գառնիի բնակիչները։ Ջալալիներից ահաբեկված, նրանք թաքնվում են մի գետնափոր ու մեծ այրու մեջ։ Ջալալիները կրակ են վառում քարախորշի դռան առաջ, «որպէս զի ծուխ հրոյն մտեալ ի յայրն վտանգեսցէ զնոսա, որք ի ներքս իցեն»[122]։ Հինգ հարյուր մարդուց ավելի ապաստանյալները «...ամենեքեան շնչարդելք եղեալ նուաղեցան, և թուլացեալ թալկացեալ անշնչացան իւրաքանչիւր յիւրում տեղւոջ և առհասարակ արք՝ և կանայք ծերք և տղայք՝ և մատաղ մանկտիք ի միասին մեռան, և ի նոցանէ ոչ ոք ել արտաքս»[123]։ Ջալալիների մեկնումից հետո շրջակա գյուղերի բնակիչներն օգնության են հասնում այրու մեջ գտնվածներին և մի մասին կարողանում են դուրս հանել ու փրկել[124]։

Մեծ դժբախտություն է հասնում նաև Գեղամա (Գեղարքունի) երկրի բնակիչներին։ Սովահար ու ավարառության սովոր ջալալիները կողոպտում են տեղի բնակիչների ցորենի ու գարու վերջին պարենը։ «Եւ ապա խորհեցան,—գրում է Առ. Դավրիժեցին,—գնալ յերկիրն Գեղամայ, որ է Գեղարքունի, քանզի գիտէին թէ անդ են համբարք ցորենոց և գարւոյ, և ջոկք ոչխարաց և անդէոց, որ է պախրէք՝ յոլովք գոն։ Վասն որոյ յոլովք ի զօրացն Ջալալաց ելեալ գնացին յերկիրն Գեղամայ. և զրազում գիւղս կողոպտեալ աւար հարին։ Եւ բացեալ զհամբարս նոցա զցորենոյ և զգարւոյ, և նոցին տեարց ձեռօքն բարձին նոցա անասնոցն, և զնոսին կալան պահակ որ է կոռ, վարող և քշող բեռնակիր անասնոցն, որովք բերէին զցորեանն ի բնակարանս իւրեանց»[125]։

Ջալալիները Գեղարքունիքում գերեվարում են կանանց ու երեխաներին, որպեսզի ամենաթանկ գնով ծախեն նրանց իրենց ծնողներին։ «Այլ և կանայս, և տղայս գերացուցին բերին ընդ ինքեանս. որպէսզի տեարք գերեացն արծաթ և ոսկի վասն նոցին գնոցն բերեալ դարձուցեն զգերիսն»։ Ջալալիները կատարում են զանազան այլ խժդժություններ Արարատյան դաշտավայրում,—«Եւ այսպէս զամենայն գեղօրայս գաւառացն Արարատու յաւեր և յապականութիւն դարձուցին. և ի կերակրելի սերմանեաց և ի բնակչաց թափուր արարին»։

Առ. Դավրիժեցու վկայություններից երևում է, որ Արարատյան դաշտավայրի հայերից ոմանք նույնպես մասնակցել են կողոպուտներին, որպես ջալալիներ. «Այլ և ի քրիստոնէից ազգէ՝ արք ոմանք, որք ոչ ունէին զերկիւղն Աստուծոյ յինքեանս, իբրև տեսանէին թէ այլազգիքն որպէս առնեն, ինքեանք ևս սկսան այսպէս առնել. վասն զի աչօք տեսին և սրտիւ յօժարեցան. եթէ յայտնի յափշտակութեամբ և թէ գաղտնի գողութեամբ այնպէս առնէին, քան-

118 Նույն տեղում։
119 Առ. Դավրիժեցի, էջ 79։
120 Նույն տեղում։
121 Նույն տեղում, էջ 80։
122 Նույն տեղում, էջ 81։

123 Նույն տեղում, էջ 82։
124 Նույն տեղում, էջ 82
125 Նույն տեղում։

զի երկիրն անտէր և ամայի էր յաշխարհակալ բռնաւորաց, և ամենայն ոք զախորժակս կամաց իւրոց կատարէր»[126]։

Արևմտյան Հայաստանում հայերի ջալալիների շարժումներին մասնակցելու մասին եղած վկայությունների մենք չենք հանդիպել։ Արևելյան Հայաստանում հայերի մասնակցության խնդրին որոշ ազդեցություն կարող էր գործել և հարևան ադրբեջանական ժողովրդի դիմադրական շարժումը թուրքերին դեռևս մինչև Շահ Աբասի Անդրկովկաս արշավելը։ Հայտնի է, որ նրանց նույնպես սխալմամբ անվանում էին ջալալիներ։ Իսկենդեր Մունշիի հաղորդած տեղեկություններից երևում է, որ 1603—1604 թվականներին ամբողջ Ադրբեջանում հասարակության ներքին խավերը ըմբոստացել էին թուրքական սուլթանի դեմ[127]։ Հենց այս ժամանակ է, որ պատմական ասպարեզ պետք է եկած լինի իրեն Քյոռօղլի անվանած ջալալին, որի մասին Առ. Դավրիժեցին գրում է, որ «...այս այն Քյոռօղլին է, որ բազում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշղներն եղանակեն»[128]։ Ինչքանով է հավաստի Առ. Դավրիժեցու հաղորդած այս վկայությունը, դժվար է ասել։ Ընդունելի պիտի համարել պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու հայտնած այն կարծիքը, թե «հավանաբար, ջալալիական շարժման ղեկավարներից մեկը ընդունած լինի Քյոռօղլի անունը, որը ժողովրդական է եղել նախորդ դարերում ձևակերպված լեգենդի շնորհիվ»[129]։ Առ. Դավրիժեցու վկայությունից երևում է, որ պատմական Քյոռօղլին գործել է Հայաստանում և Ադրբեջանում։ Համաձայն մեզ հասած ավանդությունների, նա գործել է Սալմաստի—Խոյի շրջաններում։ Պիտի ենթադրել, որ Քյոռօղլիի կերպարը ժողովրդական է եղել նաև Հայաստանում։ Ուստի և ջալալի Քյոռօղլու խմբերին հայերի մասնակցության հարցը բացառված չէ, քանի որ նրա ղեկավարած շարժումը եղել է և՛ սոցիալական, և՛ ազատագրական (տվյալ դեպքում թուրքերի ու պարսիկների դեմ)։

Ջալալիների առանձին խմբեր, ըստ երևույթին, դեռևս երկար ժամանակ մնացին Արևելյան Հայաստանում։ Զաքարիա սարկավագը Հայաստանում ջալալիների մասին հիշատակում է անգամ 1630 թվականից հետո[130]։

Այսպիսով՝ վերևը շարադրվածից պարզ է, որ Արևելյան Հայաստանի բնակչությունը նույնպես տուժում էր ջալալիների շարժումներից։ Սակայն անհամեմատ ավելի ծանր և ողբերգական վիճակ ստեղծվեց Արևմտյան Հայաստանի գավառների աշխատավոր բնակչության համար։ Այդ մասին միաբերան վկայում են մեր մատենագրական տվյալները։ Հայ ժողովրդի համար ստեղծված ծանրագույն դրությունը պատկերավոր ձևով մեզ ներկայացրել է Երեմիա Չելեբի Քյոմյուրճյանը։ Ահա և առանձին հատվածներ այդ մասին.

Խառնիճաղանճ գունդք խուժագուժք
Չոր տեսանողք էին սարսեալ.
Զկանայս մանկամբ քարշին գերի
Եւ ընդ իրեանս շղթացուցեալ։

Ջալալիները «ի բնակչաց շատ հարկս առնուն

Զընդդիմացեալսն ի սուր քաշեալ։
Վայ ասորոց յայնժամ եհատ.
Հաղար եղուկ և զաղջս պատեալ.
Զի եղեն թափառական.
Մոլորական ցիր և ի ցան լեալ։
Ի բնակութեանց և ի հայրենեաց,
Յակամայ կամս են տարագրեալ.
Հալածեն տարամերժեն.
Հարք շատք յորդւոցն բաժանեալ[130ա]։

Ավելի մռայլ գծերով է ներկայացնում ստեղծված ծանր վիճակն Հայաստանում Ազարիա Սասնեցին՝

Այս ամենայն չարս որ գտեալ,
ի մեր մեղացըն գործեցեալ
Հայաստանու հիմըն քակեալ
մինչև ի սպառ զնա կործանեալ։
Հաղար քառասուն թուին սկսեալ
մինչև վաթսունն ժամանեալ.
Եւ առաւել չարիք ցուցեալ,
զաշխարհս Հայոց բընաւ ջնջեալ։

Այնուհետև՝

Ի Թավրիժոյ մինչ ի Ստամպօլ
քար վերայ քարի ոչ մընացեալ.
Այլ ամենայնըն փախուցեալ,
երկրոց երեսիր սփռեալ ցրուեալ»[131]։

126 Նույն տեղում։

127 Նույն տեղում, էջ 83, 84, 85։

128 А. А. Рахмани, Тарих-и алем арай-и Аббаси, էջ 95։

129 Առ. Դավրիժեցի, էջ 87։

130 И. П. Петрушевский, Очерки.... էջ 328.

130ա Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1675, էջ 85բ։

131 Ազ. Սասնեցու Ողբը, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 324։

Թուրք-պարսկական պատերազմներն ու ջալալիների շարժումը մի կողմից, և գյուղացիների մասսայական փախուստը իրենց տեղերից, այլ խոսքով՝ հասարակական արտադրության և վերարտադրության պրոցեսի տևական խանգարման պատճառով, երկրում համատարած սով սկսվեց, որը կլանեց հարյուր հազարավոր մարդկանց կյանքը։ «...Հողագործք և երկրագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյին,—գրում է Առ. Դավրիժեցին,—յերկիւղէ և յահէ սոցա (իմա՝ ջալալիների) փախուցեալք ի բերդս և ի դղեակս, և ի փապարս լերանց ամրանային և ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կուտ բարձաւ ամենեին և սկսաւ լինել սղութիւն հացի և ամենայն ուտելի իրաց և ոչ գտանիւր, և այն ևս ծանր գնոյ»։ Ընդհանուր սովի առաջացման պատճառ է դառնում նաև բնական աղետը՝ մարախը։ «Եւ ի ժամանակի սղութեանն այս,—շարունակում է Դավրիժեցին,—եկն մարախ յընդհանուր Միջերկրայս և եհար միանգամայն զամենայն երկիրս և եկեր զխոտ, զբոյս և զայլ կանաչ որ երևիւր։ Յորոյ յետագայ եղև սով սաստիկ և բնաւին ոչ երևիւր հաց և կերակուր, և այլ ինչ ուտելի»[132]։

Սովն այն աստիճան է սաստկանում, որ «սկսան ուտել զմեռեալս և ոչ թաղէին՝ այլ ուտէին. քանզի զօրացեալ էր ի վերայ աշխարհի սովն։ Եւ բազումք ի բազում տեղիս զկենդանի մարդս ըմբռնէին և ուտէին»[133]։

Սովի ճիրանները տարածվել էին ամբողջ Փոքր Ասիայի, Միջագետքի ու Անդրկովկասի վրա։ «Եւ եղև սովս այս ի մէջ երկուց մեծ ծովուցն, այսինքն՝ Սպիտակ (Միջերկրական) ծովուն, և Սեաւ ծովուն ի մերձակայ գաւառացն Կոստանդնուպօլսոյ մինչև ի գաւառսն Թարվիզու, ի Բաղդատոյ մինչև ի Դամուրդափուն, այսքան եղերացս մէջն եղև սովն»[134]։ Սովն սկսվում է 1606 թվականին և վերանում միայն 1609 թվականին։ «Եւ եղև սկիզբն սովուս ի ՌԾԵ (1606 թ.) թուին, յայսմ ամի թոյլ էր սովն և ոչ էր խիստ, իսկ ի մտանելն ՌԾԶ (1607 թ.)թիւն, և ի ՌԾԷ (1608 թ.) կարի սաստկացաւ, և ի մտանելն ՌԾԸ (1609) թուլացաւ, և ի ՌԾԹ (1610) բարձաւ բնաւին...»[135]։

Սովն ու սուրը ստիպում էին հայ բնակչության, հատկապես արհեստավոր տարրերին արտագաղթել երկրից և օտար ամպերի տակ փնտրել ապրուստի միջոց ու ապահով կյանք։ Դարձյալ Առ. Դավրիժեցին մեզ հաղորդում է արտագաղթի ճանապարհները։ «Եւ յայսմ ժամանակի եղեւ ցիր և ցան ազգն հայոց և գնացին իւրաքանչիւր ոք հանդէպ երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ։ Ոմանք յԱռումէլի, ոմանք ի Բուղդան, ոմանք ի Լեհ, ոմանք ի Կաֆայ, ոմանք ի ծովերսն Պոնտոսի, ոմանք ի Թարվէզ և յԱրտաւէլ՝ և ի գաւառս սոցա։ Զի յազգէն հայոց՝ որքան զարիպականք կան յուսացեալ գաւառս, յայս ժամանակիս և յայս պատճառէս են գնացեալ»[136]։

Անշուշտ, ինչքան էլ արտագաղթը զանգվածային բնույթ ունենար, այնուամենայնիվ, հայ բնակչության զգալի մասը մնում էր իր հայրենի երկրում։ Նրանք, որոնց չէր հաջողվել մերկ ու բոկոտն, անոթի ու ծարավ հեռանալ իրենց ծննդավայրից, ամեն կերպ պիտի աշխատեին պահպանել իրենց ֆիզիկական գոյությունը։ Չնայած այն բանին, որ մեր աղբյուրները չեն վկայում այդ տարիներին եղած հավաքական կրոնափոխության երևույթների մասին, սակայն պատմության ինստիտուտի արխիվում պահպանված «Նյութեր Դերսիմի քրդերի կենցաղից» աշխատության մեջ Գ. Հալաջյանի բերած տվյալները մտածել են տալիս մեզ այդ ուղղությամբ։ Գ. Հալաջյանը բերում է Սեբաստիայի և Դերսիմի շրջանի այն գյուղերի անունները, որոնք պահել են հայկական անվանումը, սակայն, որոնց բնակչությունը իսլամացած է։ Այդ գյուղերից են՝ Փշկրթաղ—փրկչաթաղ, Սուրբ Լուս, Հանդեսի, Վարդան Շահ, Մելիք թաղ, Խորան թաղ, Նորգեղ և այլն։ Այս գյուղերի բնակիչները համաձայն Հալաջյանի, իրենց կենցաղում պահպանել են բազմաթիվ հայկական սովորույթներ։

Այդ գյուղերից յուրաքանչյուրում մինչև օրս էլ, կանգուն կամ ավերակ վիճակում, պահպանվել են մեկ կամ մեկից ավել հայկական եկեղեցիներ։ Գ. Հալաջյանը բերում է Դերսիմում տարածված

---

132 Ազարիա Սասնեցու Ողբը, «Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 335։

133 Առ. Դավրիժեցի, էջ 88։

Սարգիս քահանա Հիզանցին Վանից 1606 թ. խոսելով երկրի ընդհանուր ավերածության ու սովի մասին գրում է. «...և քանզի եղև աւարտումն սր. դրքիս ի դառն և ի նեղ ժամանակիս յորում նեղիմք ի բռնութենէ ։ ի սաստկութենէ այլազգեաց և յանօրինաց՝ զի կայ ի մէջ աշխարհիս բազում նեղութիւն և պատուհաս սով սաստիկ, սուր անխնայ, գերութիւն անողորմ, աւերումն աշխարհաց և քանդումն գեղօրէից, կործանումն տանց և շարժումն յերկրէ յերկիր և ոչ գտանէին բնաւ հանդիստ։ Զի ի մայրաքաղաքէն Ստամբօլայ մինչև յայս աշխարհս ուրէք շինութիւն ոչ գտանիւր, ոչ ի քաղաք և ոչ ի գիւղ, ոչ ի լերինս և ոչ ի դաշտս։ Եւ ի ...բազումք ի սովոյ և ի ցրտոյ մեռանէին ի տունս և ի դուրս, ի փողոցս և ի հրապարակս» (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4721, էջ 655բ)։

134 Առ. Դավրիժեցի, նույն տեղում։

135 Նույն տեղում, էջ 92։

136 Նույն տեղում, էջ 92։

այն ավանդությունը, որ Դերսիմ բառը առաջացել է այդ շրջանում բնակվող հայերի հոգևոր առաջնորդ Տեր-Սիմոն անվան աղավաղումից։ Վերջինը ջալալիների վտանգից իր ժողովրդին փրկելու համար ընդունում է հարևան ալևի (շիա) քրդերի կրոնը և կորցնում իր ազգային դեմքը[137]։

Այս ավանդությունը ճշմարտապատում կարող է լինել այնքանով, որքանով հարևան այդ երկու ժողովուրդները՝ հայերն ու քրդերը ջալալիների ասպատակությունների ժամանակ կարող էին մերձեցած լինել զավթիչների դեմ պայքարում։ Իսկ ինչ վերաբերում է կրոնափոխության ու հետևաբար միաձուլման, ապա հաղիվ թե կարելի է ընդունել, որ դա կատարվել է միանգամից 1605—1607 թվականներին։ Պիտի ենթադրել, որ այդ կրոնափոխության ու միաձուլման երևույթը եղել է երկար դարավոր մերձեցման պրոցեսի հետևանք, նամանավանդ, եթե նկատի ունենանք, որ լեռնային այդ մասի բնակչությունը կտրված է եղել հայկական լեռնաշխարհի մյուս շրջանների բնակչությունից։ Ջալալիների ասպատակություններն արագացնում են այդ պրոցեսը։

***

Փոքր Ասիայում ջալալիների ապստամբությունը ճնշելուց հետո սուլթանական կառավարության առաջ իր ամբողջ հասակով ծառացավ մի հարց՝ վերականգնել երկրի քայքայված էկոնոմիկան և նախ և առաջ գյուղատնտեսությունը։ Անհրաժեշտ էր առանց հապաղելու լուծել այդ հարցը և կարգավորել պետական ֆինանսները։ Դատարկված պետական գանձարանը լրացնելու միակ միջոցը մնում էր գյուղացիության դաժան շահագործումը։ Սակայն, ինչպես տեսանք, գյուղացիության զգալի մասը ջալալիների ապստամբությունների օրերին լքել էին իրենց հայրենի օջախները ու մեկնել Արևմուտք, Պոլիս և այլուր։ Ուստի և շուտով, հատուկ սուլթանական հրովարտակ է հրապարակվում այն մասին, որ բոլոր Պոլիս ու այլ խոշոր

[137] Տե՛ս Գ. Հալաջյան, Նյութեր Դերսիմի քրդերի կենցաղից, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ) էջ 115—119։ Հետաքրքիր է այստեղ նշել, որ Դերսիմի շրջանի հայերի և ալևիի քրդերի միջև շատ ընդհանրություններ են եղել կենցաղի, սովորությունների նիստ ու կացի մեջ։ Դերսիմի քրդերը բարյացակամ վերաբերմունք են ունեցել դեպի հայերը, որն արտահայտվել է նույնիսկ ժողովրդական բանահյուսության մեջ (տե՛ս Գ. Ս. Երեմյան, Պատմություն Չարսանճաղի հայոց, Բեյրութ, 1956, էջ 76—88)։

քաղաքներն ապաստանած գյուղացիները երեք ամսվա ընթացքում պիտի վերադառնան իրենց հայրենի վայրերը։ Հրովարտակին չենթարկվող անձանց կառավարությունը մահապատիժ էր նախատեսում։ Եվ շուտով սկսվում է Պոլսի նորաբնակների գաղթը (սուրգունը) դեպի Արևմտյան Հայաստանի գավառները։ Գր. Դարանաղցին, որպես անմիջական ականատես, հատուկ գլուխ է նվիրել սուլթանական վերոհիշյալ հրովարտակին ու հայերի ինչպես և տաճիկների (Թուրքերի) սուրգունին։ Ահա թե ինչ է գրում նա։ «Եւ յորժամ յետ դարձաւ Մուրատ փաշան ի կոտորածէ ջալալացն, մեծաւ յաղթանակաւ եմուտ յԿստամբօլ, բոլոր քաղաքն ամենայն ելին ընդ առաջ նորա, որպէս հզօր թագաւորի, որ էր թվ. ՌԾԸ (1609) և ի մուտ իններորդին, և մէկ քանի օր հանգիստ էառ։ Եւ յետոյ հրաման հանեց ի թագաւորէն և իւր հրամանաւն մունետիւ ձայնէց ամենայն քաղաքին թէ՝ աստից երեք ամիս՝ ամենայն ոք, որ յԱնատոլուէն եկէր, ամենայն ազգ և ազգինք զձեր պատրաստութիւնն տեսէք, որ հաղբը (պատրաստ) լինիք. սուրկուն կառնեմ, ամենայն ոք իւր հայրենի տեղիսն կու դրկեմ, յետոյ չպատճառէք զանպատրաստութիւնն. ահա ասացի ձեզ, այսուհետև անպարտ եմ ի ձէնջ յայնմ ժամանակին»[138]։

Ինչպես պարզվում է Գր. Դարանաղցու վկայություններից շատ նորաբնակներ չեն ցանկացել վերադառնալ իրենց նախկին վայրերը, որովհետև արդեն մի կերպ ընտելացել էին նոր բնակավայրին։ Նրանցից ոմանց սուլթանի գործակալներին կաշառելու և այլ միջոցներով ու հնարներով հաջողվում է մնալ իրենց տեղում։ Եվ «որ եղի իսկ այնպէս,—գրում է Գր. Դարանաղցին,—որպէս են բազումք աստ և անդ հնարեցան և կացին, ոմանք կաշառօք և ոմանք յարքունի գործակալութեան աղագաւ ի շինումն տան աղօթարանի, որ ճամի ասեն՝ յանուն սուլթան Ահմատի կոչեն, և շատք՝ ի մեծամեծաց իշխանաց հովանիս ի ներքոյ թեւոց ապաւինելով զերծան և այլ բազում աստ եւ անդ յենելով պատսպարեցան»[139]։

Բայց նորաբնակների մեծ մասն ստիպված է լինում բռնության տեղի տալ ու մեկնել հայրենի վայրերը։ «Եւ տեսաւ որ (նորաբնակիչը) ասելով չեն ելաներ,—կարդում ենք Գր. Դարանաղցու մոտ,—նա եպարքոսին հրաման արարին, որ բրովք են Ֆալախովք շրջեսցին ի քաղաքին և զորս գտանիցեն արտաքոյս, դանիւք կշտամբեսցեն, և որ ոք ի տուն իցեն և ի ներքոյս անյայտ տեղոջ, զիւրեանց ուլամայսն կոչեցին, այսինքն՝ զիմամ և զմուզրի, որ մաղին ասեն,

[138] Գր. Դարանաղցի, էջ 144—145։

[139] Գր. Դարանաղցի, էջ 145—146։

և սպառնական բանիւք պատուիրեցին թէ՝ ամենայն թաղերն և ի դրացութիւններն, որ ամենայն ոք զիւր վարձաւորն արտաքսեսցեն և արարին այնպէս»[140]։

Գյուղացիների դիմադրությունը սուլթանական հրովարտակին շատ բնական է, քանի որ իրենց հայտնի վայրերը վերադառնալուց հետո, նրանց սպասում էր նոր դաժան շահագործումը, պետական պաշտոնյաների չարաշահությունն ու բիրտ կամայականությունը։

Այսպիսով՝ ավարտվում է Կարա Յաղըջիի, Դելի Հասանի, Ջանփոլադի, Կալենդար օղլիի և մյուսների կողմից ղեկավարված հուժկու ապստամբական շարժումը սուլթանական կառավարության դեմ վերջինի հաղթանակով։ Սակայն դա դեռ չէր նշանակում, որ ջալալիների շարժումներին առհասարակ մեկընդմիշտ վերջ է տրվում։ Ամբողջ 17-րդ և անգամ 18-րդ դարերում հակակառավարական ելույթները, որոնց մասնակիցներին նույնպես անվանում էին ջալալիներ, շարունակվում են։ Ամենաաչքի ընկնողն այդ շարժումների մեջ դա Էրզրումի Աբազա փաշայի գլխավորածն է։

140 Նույն տեղում։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԷՐԶՐՈՒՄԻ ԱԲԱԶԱ ՓԱՇԱՅԻ ԲԱՐՁՐԱՅՐԱՏ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Սանձելով ջալալիների մի շարք ղեկավարներին, սուլթանական կառավարությանը հաջողվեց վերականգնել նախկին կարգերը Փոքր Ասիայում և խաղաղություն վերահաստատել, որը, սակայն, կարճատև եղավ։ Ջալալի ապստամբների մնացորդները թաքնվում էին սարերում, ձորերում, անտառներում ու շարունակում էին տեղ-տեղ դիմադրություն ցույց տալ կառավարությանը։

Հաստատված խաղաղությունից ժողովրդական զանգվածների և, նախ և առաջ, գյուղացիության վիճակը ոչ միայն չէր բարելավվում, այլև, ինչպես տեսանք նախորդ գլխում, ավելի էր վատթարանում։ Եվրոպական ճակատում թուրքերի կրած ռազմական անհաջողություններն ու հետևաբար, ռազմաավարի նվազումը, տասնհինգ տարի շարունակ ջալալի ապստամբներին ճնշելու նպատակով կատարված արտակարգ պետական ծախսերը, անհաջող պատերազմները պարսիկների հետ, և վերջապես չորսից-հինգ տարի տևած մեծ սովի տարիները պետական եկամտի հիմնական մասից (գյուղացիներից գանձվող հարկեր) զրկվելը, վերջնականապես դատարկել էին պետական գանձարանը։

Այսպիսի իրադրության մեջ, օսմանյան պետության առաջ դրված էին լուրջ խնդիրներ, որոնց անհրաժեշտ էր անհապաղ լուծել։ Սակայն ինչպե՞ս։ Նախկին ձևով, այն է՝ գյուղացիության բացարձակ կողոպուտի, բազմաթիվ ու բազմապիսի կամայականությունների միջոցով։ Կային այնպիսի պետական գործիչներ, ինչպես կենտրոնում, այնպես և նահանգներում, որոնք գիտակցում էին գյուղացիների նկատմամբ կիրառված հնավանդ այդ մեթոդների արատավորությունը ու աշխատում էին հանուն քայքայված գյուղատնտեսու-

թյան վերականգնման, հետևաբար, պետական եկամուտների ապահովման, վարել ավելի զգույշ ու մեղմ քաղաքականություն։ Կային և այնպիսիները, որոնք հին բիրտ մեթոդների կատաղի կողմնակիցներ էին։ Այսպիսիների իշխանության տարիներին, գյուղացիները մասսայաբար փախչում էին հայրենի վայրերից։ Գր. Դարանաղցին, և առհասարակ հայկական աղբյուրներում, առաջին տիպի պետական գործիչներն անվանվում են «բարի», իսկ երկրորդները՝ «չար»։ Խոսելով ջալալիների ապստամբության ճնշումից հետո էրզրումում նշանակված ոմն Հասան Փաշայի մասին, Գր. Դարանաղցին գրում է. «Եւ Հարզուլամին խաղաղասեր, հեզաբարոյ և ողորմած, գթած և երկիւղած փաշայ մի կայր խնամատար աշխարհի՝ Հասան անուն, այնքան խաղաղութիւն էր արկեր յերկրի, որ գրեթե գայլք և գառինք ի միասին ճարակէին»[1]։ Հասան փաշային հաջորդել է Զիլֆիղար անունով մի ուրիշ փաշա, որն եղել է «այր անողորմ և դաղանաբարոյ»[2]։ Այդպիսի «չար» փաշաների իշխանության օրերին «...չքաւորութիւն էր յաշխարհն»[3] և բիրտ կամայականությունների օրենքն էր տիրապետում։ Այդպիսի պայմաններում «շատք փախան, ոչ նորեկքն՝ այլ հինքն այլ»[4], այսինքն ոչ Պոլսից վերադարձածները։

Անշուշտ, Գր. Դարանաղցին չի գիտակցում, որ երկու դեպքում էլ՝ և՛ «բարի», և՛ «չար» փաշաները արտահայտում էին նույն օսմանյան ֆեոդալական պետության շահերը, միայն այն տարբերությամբ, որ առաջինները ջալալիների ապստամբություններից հետո ստեղծված պայմաններում ավելի հեռատես էին, քան երկրորդները։ Ջալալիների ապստամբություններից առաջինները որոշ եզրակացություններ էին արել, իսկ երկրորդները, ինչպես ասում են, ոչինչ չէին սովորել և ոչինչ էլ չէին մոռացել։ Ըստ երևույթին, հեռատես պետական գործիչ է եղել հենց ինքը՝ սուլթան Օսման II-ը (1618—1622 թ. թ.), որին ապստամբ ենիչերիներն սպանում են 1622 թվականի մայիսի 15-ին։ Այս տեսակետից հետաքրքիր է այն բնութագիրը, որ տալիս է սուլթան Օսմանին Գր. Դարանաղցին։ Սուլթանն,— ասում է նա, «...յոյժ խելացի էր և հոգացող աշխարհաց և ասախով և հնարաւոր, բայց սաստիկ արծաթասէր էր և ոչ դնէր պատիւ ումեք։ Այլակերպէր և ի շուրջ գայր վասն դիտեցողաց զամենայն վնասակարութիւն զօրացն և իշխանացն և ամենայն գործոց մարդկան շարութեանցն և խորհէր ըստ դէնի նամոսաց իւրեանց առնել զամենայն բարեկարգութիւն թագաւորութեանն»[5]։ Եվ իրոք, ի՞նչ էր սուլթան Օսմանի սպանության պատճառը, եթե ոչ պետական ապարատը ուժեղացնելու, գյուղացիության շահագործման նորմաները կարգավորելու, կենտրոնախույս ուժերը սաստելու կամքը։

Ի. Հ. Դանիշմենդը հենվելով թուրքական աղբյուրների վրա հետևյալ կերպ է բացատրում սուլթան Օսմանի սպանությունը (Hâile-i Osmaniyye), ա) անկման, քայքայման ճանապարհը բռնած ու կոսմոպոլիտ համայնքի կերպարանքն ստացած անկարգապահ ենիչերիների ու սիփահիների կորպուսի մեկընդմիշտ ոչնչացման մասին սուլթանի մտադրությունը, բ) մայրաքաղաքը Պոլսից Անատոլիա տեղափոխելու, պետությանը իբր ավելի «թուրքական»« ազգային» կերպարանք տալու սուլթանի նպատակը։ գ) Բարձր հոգևորականության տնտեսական ու ֆինանսական կարողությունն ու ազդեցությունը չեղոքացնելու նպատակով նրանց պետական գործերի ղեկավարումից հեռացնելու սուլթանի ցանկությունը, դ) տարազի փոխելու հարցը և այլն[6]։

Թվում է, թե Դանիշմենդն այստեղ ևս թույլ է տալիս որոշ չափազանցություն։ Հազիվ թե, Օսմանը դիմեր այդպիսի ծայրահեղ միջոցառումների, հատկապես մուսուլման հոգևորականության նկատմամբ։ Անընդունելի պիտի համարել նաև այն կարծիքը, թե տեղափոխելով մայրաքաղաքը Անատոլիա, սուլթանը նպատակ էր ունեցել ստեղծել «ազգային», «թուրքական» պետություն։

Իրականության մեջ, սուլթան Օսմանը թուրքական ֆեոդալական վերնախավի այն ներկայացուցիչն էր, որը որոշակի դասեր էր վերցրել երկրի ներքին կյանքում տեղի ունեցած մեծ խլրտումներից՝ ջալալիների ապստամբություններից։ Սուլթանի նպատակն էր ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք կանխեին նոր ապստամբությունները, և որ գլխավորն է, կարգավորեին պետական ֆինանսների ահա տասնյակ տարիներ շարունակ գոյություն ունեցող դեֆիցիտի հետ կապված հարցերը։ Բնական է, որ նման պայմաններում, սուլթանը որոշ չափով պիտի սահմանափակեր ոչ միայն բարձր հոգևորականության (ուլեմա դասի), այլև որոշ ընդդիմադիր խոշոր ֆեոդալների ավատական իրավունքները։ Կարճ ասած՝ սուլթան Օսմանը միապետական նկրտումներ էր ցուցաբերում և դրանով

[1] Գր. Դարանաղցի, էջ 155։
[2] Նույն տեղում, էջ 158։
[3] Նույն տեղում, է 159։
[4] Նույն տեղում, էջ 166։
[5] Գր. Դարանաղցի, էջ 205—206։
[6] J. H. Danişmend, նշված աշխատությունը, հատոր III, էջ 292։

իսկ հակադրում էր իրեն կենտրոնախույս ուժերին[7]։ Վերջիններն էլ սուլթանի դեմ իրենց պայքարում հենվում էին ենիչերիների բիրտ ուժի վրա։ Իսկ ենիչերիներն այն ժամանակ «զազանացան և վիշապացան ամենայն ուրեք»[8] և սկսեցին իրենց կամքը պարտադրել կառավարող շրջաններին։ «Եւ զուլքն (իմա՝ ենիչերիները),—ճիշտ նկատում է Գր. Դարանաղցին,—կատաղեալ յարևելից յարևմուտս վիշապացան, իւրեանց կամն մնաց՝ որպէս կամէին այնպէս առնէին, զթագաւոր, զվազիր իւրեանցն բարօքն դնէին, թէ հետ իւրեանց կամացն չգնայր՝ քարակոծ առնէին զվազիր սպարապետն, և երկու ամիսն կամ երեք՝ մեկ վազիր այլ փոխէին»[9]։ Ջալալիների նկատմամբ կառավարության տարած հաղթանակը ենիչերիները վերագրում էին իրենց ու զգում երկրի լիիրավ տերն ու տնօրենը։ Ռազմաավարի պակասության ու երկրի ընդհանուր քայքայվածության պայմաններում, նրանք կոպիտ կամայականություններ էին թույլ տալիս բնակչության նկատմամբ։ Եվ ահա այս բոլորն ստիպում էր որոշ հեռատեսությամբ օժտված սուլթան Օսմանին իր պայքարի սուր սլաքն ուղղել նաև ենիչերիների դեմ։ Եվ նա զոհվեց այդ պայքարում ժամակակիցների շատերի վրա թողնելով «բարի» արքայի և ռամիկների «պաշտպանի» համբավ։ Սուլթանի սպանման լուրն ստանալիս «...որք շար ծառայքն էին թագաւորին, խնդային և որք բռամիկքն էին, աշխատէին և կոծ առեալ ողբայաք զանտերունչ լինել մեր»։ Այնուհետև՝ «Թէպէտ որ այլասեռ էր (Օսմանի մասին է խոսքը—Մ. Ղ.), նա ցանկ էր և պահապան, որ յետ նորա ինչ կրեց բաղում նեղութիւնս եւ վիշտս ամենայն աշխարհ ի պատառող գայլացն երկու ամ...»[10]։

Եվ այսպես սպանվեց սուլթան Օսմանը և ենիչերիների կողմից գահ բարձրացվեց խելակորույս Մուստաֆա I-ը (1622—1623 թթ.) երկրորդ անգամ. սուլթան Մուստաֆան լոկ մի խաղալիք էր ենիչերիների ձեռքին։ Սուլթանի խելագարությունը նրանք վերագրում էին նրա սրբությանը ու մարգարեությանը[11]։ «Երկու տարի և կես եկաց, նա բնաւ յաստնաւորէն խապար չունէր, ոչ զչարն գիտէր, ոչ զբարին խելագարութեան արմունք շատ պատմէին գիտողքն և տեսողքն՝ ծիծաղելիս, որպէս զմեր հայոց Շիդար թագաւորն, թէ գրեմք մի ըստ միոջէ զամենայն՝ յերկարումն կու լինի և ձանձրութիւն կառնէ լսողացն»[12]։

Սուլթան Օսմանի սպանությունը որոշակի գժգոհություն էր առաջացրել ֆեոդալական վերնախավի չափավոր թևի ներկայացուցիչների մոտ։ Տեղ-տեղ սկսել էին ապստամբություններ բռնկվել կառավարության ու նրա ներկայացուցիչների՝ ենիչերիների դեմ։ Այնթաբում Կաղիաբդուլ Բաքի էֆենդին, Թրաբլուս-էս-շամում (Թրիպոլի) տեղի բեկլերբեկ Սեյֆ օղլի Յուսուֆ փաշան հրամայել էին գլխատել բոլոր ենիչերիներին[13]։ Սակայն ամենամեծ ապստամբությունը Աբազա փաշայի գլխավորածն էր Էրզրումում, որն, ինչպես ասվեց, տևեց վեց տարի և ալեկոծության մեջ պահեց բարձր ու փոքր Հայքերի հայ բնակչությանը։ Աղբյուրները միաբերան վկայում են, որ Աբազան նախկինում եղել է ապստամբ Ալի Ջանփոլադի աջակիցներից մեկը, գերի է ընկել Կույուջի Մուրադ փաշայի ձեռքը, սակայն ներում է ստացել Կապուտան փաշա (Նովակալ) Խալիլի, (ի դեպս սա ծագումով մարաշցի հայ է) միջնորդությամբ։ Նովակալ Խալիլ փաշան որդեգրել է Աբազա փաշային ու նրան նշանակել սկզբում Մարաշի, ապա և Էրզրումի բեկլերբեկ[14]։ Ընդհանրապես պիտի ենթադրել, որ նա ծնվել ու դաստիարակվել է մի աբազա (աբխազ) ֆեոդալի ընտանիքում։ Գր. Դարանաղցին, ինչպես և մի շարք այլ հայ աղբյուրներ դրական գծերով են ներկայացնում Աբազա փաշային։ «Յորժամ էր թվ. ՌՀԲ (1623)-ին, ի ժամանակի Սուլթան Մուստաֆային, որ ոմն ...որ Յապազայ ասեն, վասն յաղգէ յապազայիցն լինելոց կոչի անուամբ,—գրում է Դարանաղցին,—նա տիրէր հրամանաւն սուլթան Օսմանին և էր ի սպասու զինուորական դասուցն մեծ Խալիլ փաշային և սիրելի և որդեգիր, և սիրող քրիստոնէից, մանաւանդ ևս առաւել հայոց վշտատես տառապեալ աղգացս, հոգածու և խնամակալ աշխարհաց և սիրող աղքատաց ամենայն ազգաց»[15]։ Հայերի նկատմամբ նման վերաբերմունքը Աբազա փաշայի կողմից միանգամայն հնարավոր է, որովհետև այս ֆեոդալը լինելով մեր մատնանշած չափավոր թևի կարկառուն ներկայացուցիչներից, չէր կարող անտարբեր լինել դեպի աշխատասեր հայ ժողովուրդը։ Մյուս կողմից նրա վրա որոշ ազդեցություն կարող էր

---

[7] Գր. Դարանաղցի, էջ 206։ «...եւ ուլամայքն և ամենայն ծառայքն ընդդէմ դարձան կամաց թագաւորին...»։

[8] Նույն տեղում, էջ 210։

[9] Նույն տեղում, էջ 207։

[10] Նույն տեղում, էջ 210։

[11] Նույն տեղում, էջ 208։

[12] Նույն տեղում։

[13] J. H. Danişmend, նշվ. աշխ.-ը, հատ. III, էջ 316—17։

[14] Նույն տեղում, էջ 317։

[15] Գր. Դարանաղցի, էջ 212։

գործած լինել Խալիլ փաշայի ծագումով հայ լինելու հանգամանքը[16]։ Աղբյուրների վկայություններից երևում է, որ Աբազա փաշան դեմ է եղել գյուղացիների նկատմամբ կիրառվող ծայրահեղ կամայականություններին։ Նա կողմնակից է եղել, եթե կարելի է այդպես ասել, գյուղացիների «օրինական» շահագործման ու օսմանյան ֆեոդալական հասարակության տնտեսական ու քաղաքական հզորության հետագա ամրապնդմանը։ Նա քաջ գիտակցել է, որ բռնություններն ու կամայականությունները կարող էին միայն քայքայել երկրի ընդհանուր էկոնոմիկան ու կաղմալուծել պետությունը։ Ահա թե ինչու նա հանդես էր գալիս գյուղացիների «պաշտպանի» դերում, լսում նրանց բողոքները ու ձգտում վերացնել չարիքի աղբյուրը։ Այս տեսակետից խիստ հետաքրքրական են Գր. Դարանաղցու հետևյալ վկայությունները Էրզրումի շրջանի հայ գյուղացիների բողոքի ու Աբազա փաշայի վերաբերմունքի մասին։ «Օր մի փաշան ի զբօսանս կու գնայ յայս գեղօրէքն (իմա՝ Էրզրումի մոտ գտնվող Կանեց, Մուտուկա և այլ գյուղերում—Մ. Ղ.),—գրում է Դարանաղցին,—նա յոտն կու անկանին, կու գանգատին ի տեղացի ենկիչարեցն. մեք գերի եմք ի ձեռս նոցա ամենայն ընդանովք մերովք վասն անվճար սուտ պարտուց նոցին. անճարակութենէ մեկ քանի ղուրուշ ի փոխ եմք առեալ և ի հարկապահանջութիւնն եմք տուել, մեկին տասն շահ վճարել եմք՝ չկարողացաք աղատիլ, այնչափն շատցուցին, զարտ և զանդաստան և զամենայն արջառ և զտունքն իւրեանց եմք տուել և իւրեանց մարապութիւն կառնեմք, և զիհաց մի գնալու ճարակ չունիմք, ի՞նչ կու հրամայես, ո՞րպէս խրատ կուտաս մեզ տիրաբար,—Ապա երբ փաշան,—շարունակում է Դարանաղցին,—...լուաւ զայս աղետաշարժ գանկատն, նա ճմլեցաւ ի սրտին և զալարեալ աչիւք արտասուեաց զեղկութիւն նոցա ի ձեռաց անողորմ գաղանասիրտ թշնամեացն և դարձաւ մխիթարեաց զգեղջացիքն ասելով. մէկ քանի օր սապո (համբերություն) արարէ՛ք և համբերեցէ՛ք և յԱստուծոյ խնդրեցէ՛ք, որ ինձ օգնական լինի, ինշալլահ (այսինքն՝ եթէ հաճո է աստուծուն) ես զձեզ կազատեմ»[17]։

Մեծ թիվ էին կազմում ենիչերիները Էրզրումում, որովհետև քաղաքը գտնվում էր սահմանագլխում։ Ուստի և տեղի բնակչությունը առավել ևս ենթարկվում էր ենիչերիների չափ ու սահմանն անցած կամայականություններին։ Պոլսում, ինչպես և Թեոդոսիոսում,—գրում է Գր. Դարանաղցին,—«...շատք էին (ենիչարիք) վասն պահպանութեան ընդդէմ պարսից, վասն չար ժողովոյն որ անդ էին՝ ոմանք ի բնակչաց և ոմանք յարքունուստ եկեալ սակս պահպանության, զոր պակճի և նոպաթճիք կոչեն, և առնէին ոճրագործութիւնս և անիրաւութիւնս զրկանաց, յափշտակէին, կեղեքէին և որ սակաւ մի ընդդէմ դառնայր, սպանէին և զտունքն կոխել ջանային ոչ թէ զոամկացն միայն, այլ զմեծամեծացն ևս»[18]։

Սպանելով սուլթան Օսմանին ու գահ բարձրացնելով խելակորույս Մուստաֆային, ենիչերիները Պոլսում իրադրության տեր էին դարձել։ Եվ եթե մի որևէ վեզիր փորձեր փոքր ինչ դիմադրություն ցույց տալ նրանց, ապա անմիջապես ապստամբում էին, պաշտոնազուրկ անում ու հաճախ գլխատում ընդդիմադիրներին, և այսպիսով, ահ ու սարսափի մեջ պահում երկիրը։ Եվ ենիչերիները,—գրում է Դարանաղցին,—«...բորբոքեալ էին չարութեամբ, որպէս զդազան կատաղիք էին դարձեր, որ բնաւ չունէին ահ ու երկիւղ յումեքէ, և ոչ ոք էր կարող ասել նոցա՝ թէ զի՞նչ կառնէք։ Եւ ամենայն մեծամեծ իշխանքն զօղեալք էին և սասանեալք, և բարձաւ դատ և դատաստանք և ահ և երկիւղ և իրաւունք յերեսաց նոցա և լցաւ քաղաքն վայիւ և աղաղակաւ»[19]։

Աբազա փաշան գիտակցում է, որ միայնակ ինքը չի կարող պայքարել ենիչերիների ու նրանց հովանավորողների դեմ։ Ուստի, ինչպես այդ մասին վկայում է Ի. Փեչևին, որն այդ ժամանակ եղել է Դիարբեքիրի դեֆթերդարը, Աբազա փաշան նամակագրությունների միջոցով կապվում է Անատոլիայի մի շարք սանջակբեկերի հետ և կոչ է անում միասնաբար հանդես գալ ենիչերիների դեմ[20]։ Ի. Փեչևին վկայում է նաև, որ Աբազա փաշայի ուղարկած մարդիկ հատուկ բանակցություններ էին վարում Դիարբեքիրի բեկլերբեկ Հաֆիզ Ահմեդ փաշայի հետ[21]։ Գործին քաջատեղյակ Ի. Փեչևիի հաղորդած տեղեկություններից երևում է նաև, որ Հաֆիզ Ահմեդ փաշան, Աբազային միանգամայն կողմնակից լինելով հանդերձ որոշ զգուշություն է ցույց տվել, ու սպասել ապստամբության համար առիթի, սակայն դրա հակառակ, Աբազա փաշան տաքարյուն շտապողականությամբ ապստամբության դրոշ է բարձրացնում։ Ամե-

---

[16] Արշակ Ալպոյաճյանը Խալիլ փաշային համարում է Կեսարացի հայ (տե՛ս Պատմություն Եվդոկիո հայոց, էջ 217)։ Դանիշմենդը պահպանված թուրքական վավերագրերի հիման վրա գրում է, որ նա մարաշցի հայ էր։

[17] Գր. Դարանաղցի. էջ 216։

[18] Նույն տեղում, էջ 212—213։ Թուրք ռազմական պատմաբան Ջևվադ բեյի տվյալների համաձայն Էրզրումում մշտապես 626 ենիչերիներ են եղել (տե՛ս Djevad bey, Etat militaire de l'empire ottoman, էջ 164)։

[19] Նույն տեղում, էջ 213։

նայն հավանականությամբ օգտագործելով այն հանգամանքը, որ օսմանյան բանակի զգալի մասն զբաղված էր այն ժամանակ Միջագետքում արաբական իրաք ներխուժած պարսկական զորքերի դեմ մղվող մարտերով։ Արդյոք Աբազա փաշան նախօրոք չի՞ համաձայնեցրել իր ապստամբության ժամանակը՝ բանակցությունների մեջ մտնելով Շահ Աբասի հետ։ Բացասաբար պիտի պատասխանել այս հարցին։ Հետագայում, Աբազա փաշան, իրոք, բանակցություններ վարեց պարսիկների հետ և նրանցից օգնություն խնդրեց, սակայն նա այդ քայլին դիմեց միայն այն ժամանակ, երբ զգաց, որ իր պարտությունն անխուսափելի է։ Աբազա փաշայի նպատակը երբեք չի եղել օսմանյան դինաստիայի իշխանության տապալումը։ Ընդհակառակը, նրա ամբողջ ցանկությունն է եղել ամրապնդել օսմանյան թագավորությունը, որին նա կամենում էր տեսնել բարեկարգ վիճակում և առանց ենիչերական խժդժությունների։ Իր քառյակներից մեկում նշելով, որ ինքն ապստամբել է «Սուլթան Օսման խանից արյան վրեժը առնելու» նպատակով, Աբազա փաշան գրում է.

Մուրազը է գնալ Ստամպոլ
Ու կարգավորել գահն օսմանյան
Լինել սուլթան Մուրադ խանի վեզիրը
Եթե մեռնեմ դրանից հետո՝ ցավ չէ ինձ համար[22]։

Իսկ որպեսզի օրինական բնույթ տա ենիչերիների դեմ մղած իր պայքարին ու համախոհներ շահի, նա այդ պայքարին փորձում է «սրբազան կռվի» տեսք տալ. իր քառյակներից մեկում նա գրում է, որ ենիչերիներին կոտորելու անհրաժեշտության մասին աստծուց է եղել նշանը, և որ «նրանցից այլևս ես երես դարձրի» իբր թե ասել է իր տեսած մի տեսիլում ենիչերիների օջախի ավանդական հիմնադիր, սրբացված Հաջի Բեքթաշը[23]։

---

[20] „Tarih-i Peçevi", հատոր II, էջ 393։

[21] Նույն տեղում։

[22] I.H. Danişmend, նշվ. աշխ., հ. III, էջ 317։ murâdımdır İslâmbol'a varmaga, 'Al-i Osmanın tahtını düzmege, Sultan Murad Han'a vezir olmaga, Andan sonra ölürsemde gam degül.

[23] Նույն տեղում, էջ 317։

Hak'dan bana bir işaret olupdur, yeniçerileri kırmak gerektür, kuma kurdum Haci-Bektaş deyüpdür, Dönderdüm yüzümü anlardan demiş.

Ապստամբությունն սկսվում է այսպես։ Աբազա փաշան խիստ նախազգուշացնում է ենիչերիներին, որ բռնություններ չկատարեն։ «...Մի կատաղություն առնեք և զուլում ունեք մինչ մեկ փողոյ չափոյ և զմեկ մարդ կարի փոքր է՝ մի վշտացնեք, նեղէք կամ կռվահարէք, զայիլ չեմ որ գիտենայք»,—ասել է Աբազա փաշան ենիչերիներին, ավելացնելով միաժամանակ, որ,—«յԸստամբոլու վերայ մի գնայք մտօք և թէ ոչ՝ ես ձեր հախէն կարող եմ գալ։ Եւ յորժամ զայսպիսի սպառնական բանքեր որ լսեցին,—գրում է Դարանաղցին,—այլ առաւել զայրացան և բորբոքեցան ի չարութիւն և փաշան մարդ ուղարկելով առ նոսա թէ՝ վասն է՞ր այդպէս կառնէք, ձեզ պատուիրեցի ո՞չ՝ թէ անիրաւութիւն մի առնէք»,—Ենիչերիների կատաղությունը հասնում է խռովության, և նրանք սպառնում են փաշայի մի քանի մարդկանց,—«Նա զայս պատգամս ղրկելով, նա զփաշան այլ կու անարգեն և զղրկած մարդիկն այլ կու ծեծեն և զօրաժողով կու շինեն և կու գնան ի վերայ փաշային, սարային (պալատի) վերայ թվանք կուձգեն, զմեկ քանի մարդն փաշային կու սպաննեն։—Խիստ զայրացած փաշան,—կու պատրաստէ զիւր մարդիկն ի պատերազմ և այլ զօր կու հաւաքէ և Աստուծով կու յաղթէ զնոսա. նախ զբերդին դրունքն զամենեսեան կու փակէ և զթշնամիքն զամէնն կու ըմբռնէ և զեղու տնաղքն առ ժամն զամէնքն ի դուրս կու վարէ կանամբք և որդովք, որ ի նոցա ձեռացն յառաջագոյն զանգատ էին արարեր գեղջացիքն՝ կանցիք, Մուտուռկացիք և կեղացիք, որ մեծամեծ գեղան և յառջև Արզրումի,—Աբազա փաշան այնպիսի ջարդ է տալիս ենիչերիներին, որ,—ենկիչարի անուն ոչ ոք չմնաց ի Կարին քաղաքի և աղատեցան գեղացիքն քաղաքայնովքն հանդերձ և օրհնէին զԱպաղան, որ փրկիչ եղև նոցունց և զոհանային զԱստուծոյ, որ զօրացոյց զնոսա, այսինքն՝ զԱպաղան զօրօքն հանդերձ»[24]։ Արիստակես Խարբերդցին իր «Ոտանաւոր ասացեալ Արիստակէս վարդապետէ» չափածո պատմվածքի մեջ գրում է, որ Աբազա փաշան՝

Զարքային արիւնն խընդրէր՝
Վրէժխնդիր նմա լինէր.
Զենկիչերիքն կոտորէր[25]։

Այնուհետև՝

---

[24] Գր. Դարանաղցի, էջ 215, 216, 217։

[25] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 2039, էջ 321բ։

Վասն այն մեծացաւ, զօրացաւ.
Մէջ աշխարհիս համբաւեցաւ.
Զարիւն թագաւորին առաւ.
Սրտին կամքն կատարեցաւ[26].

Պատմագիր Նայիման Աբազա փաշայի կողմից Էրզրումում ենիչերիներին կոտորելու առթիվ գրում է. «1031 թ. (1621—1622 թթ.), երբ տեղի ունեցավ սուլթան Օսման II գահընկեցությունը, Աբազա փաշան՝ լսելով այդ, որոշեց փադիշահին սպանողներից՝ ենիչերիներից վրեժ լուծել... զինվոր և հարստություն հավաքելու ընդունակ լինելով, մեծ թվով սեկբաններ հավաքեց։ Նա հատկապես հարգանք էր ցույց տալիս անվանի, քաջ և կարող մարդկանց։ Ենիչերիները խիստ ինքնահավան էին դարձել և գոռոզացել էին, Էրզրումումն էլ անկարգ և ապօրինի շարժումներից հետ չէին մնում, Էմիր-ուլ ամիրայի մարդկանց (ֆեոդալներին) նեղություններ պատճառում, իրար հայհոյում ու անարգում էին։ Աբազա փաշան խառնակչություններ առաջացնողներին, հայհոյողներին և կռվողներին, անխնա կերպով կոտորեց, կախեց իր ձեռքն անցած ենիչերիներին և Էրզրումը նրանցից մաքրեց»[27]։

Աբազա փաշայի սրից մի կերպ ազատված ենիչերիների մի մասը գալիս է Ստամբուլ ու կառավարությանը խիստ բողոքում նրանից։ Էրզրումից լուր բերող ենիչերիները գրգռում ու ոտքի են հանում Ստամբուլում գտնվող իրենց օջախակիցներին։ «Եւ յորժամ զայս համբաւս լուաւ շար ծառայիցն թագաւորին,—կարդում ենք մենք Դարանաղցու մոտ,—և բարկացան յոյժ և երկունք կալան զբնակիչս զուլիցն և շար ծառայիցն և ստիպէին գրգռելով զվազիրն և զամենայն վերակացուս թագաւորութեանն, զի ընկեսցեն զնա յիշխանութենէ Թեոդուպօլսոյ և հանցեն ի նմանէ և բերցեն յՍտամբօլ կամ ի միջոց տեղի, զի դիւր լիցի ըմբռնել զնա և առնուլ ըստ նա զինչ և կամեսցին»[28]։

Շուտով Պոլիս են գալիս նաև այն ենիչերիները, որոնց հաջողվել էր պատսպարվել Էրզրումի բերդում և դիմադրություն ցույց

[26] Նույն տեղում։

[27] „Tarih-i Nâima“ հ. II, էջ 253։ Նաիմայի այս հատվածը բերել ենք Ա. Խ. Սաֆրաստյանի թարգմանած քաղվածքներից (տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», Երևան, 1961, էջ 82)։

[28] Գր. Դարանաղցի, էջ 217։

տալ Աբազա փաշային։ Էրզրումի նախկին կառավարիչ Հուսեյն փաշայի միջնորդությամբ բերդում պաշարված ենիչերիների ու Աբազա փաշայի միջև համաձայնություն է կայանում այն մասին, որ ենիչերիներն անհապաղ կհեռանան Էրզրումից ու կգնան Ստամբուլ[29]։ Մինչ այդ, Աբազա փաշային հաջողվել էր, ըստ երևույթին, իր կողմնակից ֆեոդալների աջակցությամբ կոտորել նաև Ախալցխայում և նրա շրջակայքում գտնվող ենիչերիներին[30]։

Տեղի տալով ենիչերիների խիստ բողոքին ու սպառնալիքներին, Ստամբուլի կառավարությունը մի հրամանագրով Աբազա փաշային Էրզրումի փոխարեն, նշանակում է Սեբաստիայի բեկլերբեկ։ Աբազա փաշային, գրում է Դարանաղցին,—«Հրաման զրկեցին իբր ի թագաւորին բերանոյն թէ՝ ահա մանզուլ ես, էլ եկո, Ըստամբօլ և թէ ոչ կամիս գալ յՍտամբօլ, ահա հրամանագիր հրովարտակի լիցի քեզ վասն Սեբաստիոյ իշխանութեան»[31]։

Սուլթանական հրովարտակում Էրզրումի բեկլերբեկ նշանակված Դիարբեքիրի նախկին կառավարիչ Մուստաֆա փաշան երբ ուղարկում է իր մութասալլիմին (տեղակալին) Էրզրում, որպեսզի վերջինս ստանձնի վիլայեթի ժամանակավոր կառավարումը, Աբազան մերժում է քաղաքն հանձնելու։ Մութասալլիմն ստիպված հետ է քաշվում (17 նոյեմբեր 1622 թ. 13 մուհարրեմ 1032)[32]։ Ստանալով մութասալլիմի ներկայացուցիչների ձեռքից սուլթանական հրովարտակը ու ընթերցելով այն,—Աբազա փաշան, ինչպես նկատում է

[29] J. Hammer, նշվ. աշխ.-ը, հատ. VIII, էջ 330 և հետ.։

[30] „Tarih-i Nâima„, հատ. II, էջ 253։ «Հետո իր էյալեթին ենթակա Ախասխայի բերդում եղած բերդապահ ենիչերիներից 70-ի չափ մարդ կոտորեց. Վրաստանի սահմանները նրանցից մաքրեց»։

Աբազան կարդում ենք մենք Արիստակես Խարբերդցու մոտ՝

Ի Կարնոյ քաղաքէն ելաւ
Մինչ Ախլցխէ ինքն հասաւ։
Բազում զօրօք զնա պաշարեաց
Մեծ մեծ թօփերն յորժամ ձգեաց
Զդուռը և զդրանգիքն ի բաց մերժեաց.
. . . . . .
Ապա՝ ինքն հրամայեաց
Մեծ իշխանքը ժող(ով)եաց
Հանդիսարանն եղաւ գնաց։
Եւ ենկիչերիքն կոչեաց
Մեծ դատաստան ինքն առնէր»։

(Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 2039, էջ 321)։

[31] Գր. Դարանաղցի, էջ 217։

[32] „Tarih-i Solakzade“ էջ 725։

Գր. Դարանաղցին,—«...գիտաց զննգութիւնն, որ դաւաճանութեամբ էր, ասաց ընդ նոսա զայրացմամբ. անհնար է կամաւ իմով ելանել ինձ աստի։ Եւ էառ զգիրն և ետուր ի պահեստի և սպառնացաւ նոցա թէ՝ գնացէք ի յետ առ առաքիչն ձեր, ոչ՝ զօր կուղարկեմ, զամենեսեանդ կու կոտորեմ չարաչար մահուամբ, որ թռչնոց և գազանաց կու լինիք»[33]։

Իսկ ենիչերիներն անընդհատ խռովություններ էին բարձրացնում Ստամբուլում ու կառավարությունից պահանջում կտրուկ միջոցառումներ ձեռնարկել Աբազայի դեմ։ Վերջինի խնամակալ հայրը՝ Կապուտան Խալիլ փաշան նամակ է գրում Աբազա փաշային, և խորհուրդ է տալիս նրան ենթարկվել կառավարությանը ու հանձնել բերդը. «Բերդից դուրս արի և եթէ ինձ հարգում ես մի հակառակվիր իմ խոսքին»[34],—գրում է Խալիլ փաշան Աբազային։ Սակայն Աբազան այս անգամ էլ չի ենթարկվում կառավարությանը, չվրստահելով նրա անկեղծությանը։ «Նա յորժամ դափուճին գնաց առ նա և ետուր զթուղթն (այսինքն՝ Խալիլ փաշայի նամակը—Մ. Ջ.) յորժամ վերծանեաւ զրանն գրելոցն և ոչ կամեցաւ լսել, ասաց. ես գիտեմ, որ նա առ ահի նոցա գրել է զայս, ես գիտակ եմ և ինքն այլ, որ աստից ելանելոյն պէս զիս չարաչար մահուամբ կու սատակին. ես յարևուս պեղար չեմ, չէ հնար ինձ կամովք իմովք ելանել աստի, գնա՛ այսպէս ասա՛»[35]։

Կատաղած ենիչերիները նույն տարվա դեկտեմբերի 23-ին (19 սաֆեր) պաշարեցին իրենց ազային ու բացականչեցին. «Աբազայի ապստամբությունը հենվում է Կապուտան Խալիլ փաշայի և վեզիրի ազամ Սաթուրջի Մուհամմեդ փաշայի բարյացակամության վրա, որովհետև այս վերջինի եղբայր Հուսեյնը իր աղջկան ամուսնացրել է խռովարարի հետ»[36],—վկայում է Սոլակզադեն։ Իզուր ենիչերիների սպաներն աշխատում էին հանգստացնել ենիչերիների կատաղությունը։ Շարժվելով սարայ (պալատը) նրանք հանդիպեցին Կապուտան Խալիլ փաշային և գոռացին՝ «քեզ հանձնյանալու համար, վեզիր-ի ազամը երբեք չի պատժի Աբազային, որը գոռոզանում է քո հովանավորությունից»[37]։ Սպաներին հաջողվում է մի

[33] Գր. Դարանաղցի, էջ 217—218։

[34] „Tarih-i Solakzade“ էջ 729։

[35] Գր. Դարանաղցի, էջ 218։

[36] „Tarih-i Solakzade“, էջ 730, J. Hammer նշված աշխ.-ը, հատ. VIII, էջ 331։

[37] „Tarih-i Solakzade“, էջ 730։

կերպ ցրել ենիչերիներին, սակայն հաջորդ օրը նրանք նորից են հարձակվում սարայի վրա և սուլթանն ստիպված տալիս է հետևյալ սրբազան հրովարտակը՝ (խաթ-ի շերիֆը)։ «Ես պաշտոնազուրկ արեցի էրզրումի բեկլերբեկին։ Այդ հարցում Խալիլ փաշան մեղավոր չէ։ Ուստի և դուք չպիտի անհանգստացնեք նրան»[38]։

Ըստ երևույթին, սուլթանական կառավարությունն աշխատում էր Աբազայի ապստամբության խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով, վերջինին համոզելու ու սիրաշահելու միջոցով։ Այն ժամանակ, երբ պարսիկների հետ նորից պատերազմ էր գնում կառավարությանը բոլորովին էլ ձեռնտու չէր Աբազա փաշայի ապստամբության շարունակվելը։ Սակայն դեռևս կային և սուլթան Օսմանի այնպիսի կուսակիցներ, որոնք դրդում էին Աբազային ընդլայնել ապստամբությունը։ Սուլթան Օսմանի մայրը մինչև իսկ նրան քաջալերելու համար Ֆեթվա է ուղարկում։ «Յորժամ որ եկ դափուճին և խապար երեր՝ թէ չէ հնար ելանել անտի (այսինքն՝ Աբազայի էրզրումից դուրս բերումը),— գրում է Գր. Դարանաղցին,—և հուսահատեալ լսեցին և սկսան քսմնոտել և երկեան երկիւղ մեծ չար ծառայքն, և ուրախ եղեն ամենայն տան թագաւորութեանն՝ մայրն և ամենայն բարեկամք Սուլթան Օսմանին և ամենայն մեծամեծ իշխանք և ամենայն ուլամայքն և ամենայն աշխարհքն վասն զօրանալոյ նորա և խնդրէին օգնութիւն Աստուծոյ։ Եւ մայր Սուլթան Օսմանին Ֆաթվայ առ ի մուֆթուն վասն տիրասպանացն վրէժխնդրութեանն և ինքն այլ գրեաց գիր զօրանալոյ և քաջալերութեան թէ՝ զօրացիր և քաջ լեր, Աստուած է քեզ օգնական վասն անպարտ արեան որդոյն իմոյ»[39]։

Ոգևորված որոշ զեկավար շրջանների նման խրախուսանքից Աբազա փաշան անհապաղ ձեռնամուխ է լինում բանակի կազմակերպման գործին։ Թուրքական աղբյուրների տվյալներով, նրա գրոշի ներքո շուտով 40.000-անոց զորք է հավաքվում[40]։ Նրա բանակի զգալի մասը, ինչպես մատնանշում են աղբյուրները, կազմված էր Կարա Յազըջիի, Ջանփոլադի, Կալենդար օղլիի, Սայիդի, Թավիլի և այլոց ապստամբական բանակի մնացորդներից, որոնց, ինչպես արդեն նշեցինք, հաջողվել էր թաքնվել։

[38] Նույն տեղում։

[39] Գր. Դարանաղցի, էջ 218—219։

[40] „Tarih-i Peçevi“ հատ. II, էջ 399։

Անցնելով մեծ բանակի գլուխ, Աբազա փաշան սկսեց ասպատակել Փ. Ասիայի մի շարք շրջանները։ Նա հարձակվեց Կարահիսարի վրա, որի սանջակբեկը՝ Մուրթազա փաշան տասն օր նրան դիմադրելուց հետո անցավ ապստամբների կողմը։ Շուտով գրավվեց և Սեբաստիան ու Աբազան եկավ պաշարեց Անկարան (Գալաթիան), սակայն գրավել քաղաքը այնպես էլ նրան չհաջողվեց[41]։ Աբազա փաշան ճանապարհին անխնա կոտորել էր տալիս բոլոր ենիչերիներին։ «Եւ գունդս զօրաց առաքեաց ընդ ամենայն տեղիս տերութեանն իւրոյ և հրամայեաց թէ՝ ուր որ ենկիչարիք գտանէք, սատակեցէք և զտունն նորա աւար հարկանեցէք, մի ողորմէք կանանց և տղայոց նոցա, այլ անխնայ կոտորեցէք։ Եւ ելեալ տարածեցան ի վերայ երկրի և ուր գտանէին՝ սպանանէին և զտունք նոցա յաւարի առնուին»[42]։ Սեբաստիայում, ինչպես այդ մասին պատմում է Նաիման, Աբազան իր մոտ է կանչում երեք հայտնի զորբա ենիչերիներին, երեքին էլ ուղտերի վրա փայտով մեխել է տալիս, ուսերը ծակում, մեղրամոմ լցնում և վառել տալիս, «իրենց փաղիշահին չխնայող մարդկանց վիճակն այս է» ասելով քաղաքում ցուցադրում[43]։

Շուտով Աբազա փաշային են միանում Մուրթազայից բացի ևս մի քանի բեկլերբեկեր և սանջակբեկեր, որոնց թվում և Մարաշի բեկլերբեկ Կլավուն-Յուսուֆ փաշան իր տասը հազարանոց զորքով, սակայն որին Աբազան գլխատել է տալիս, կասկածելով նրա նենգության վրա[44]։

Փոքր Ասիայի թուրք ֆեոդալների մի մասի դեպի Աբազայի կողմը թեքվելը ի նկատի ունի Արիստակես Խարբերդցին, երբ գրում է.

«Մեծ մեծ խաներն առ ինքն եկան
Եւ պարոնայք ամենեքեան
Ըստ նմա եղան միաբան,
Թէ ուր է մեծ արքայն Օսման»[45]։

[41] Մի ձեռագրի հիշատակարանում գրիչ Գինոս երեցն էրզրումից, անվանելով Աբազա փաշային «չար բռնաւոր էրզրում քաղաքիս» գրում է, որ ՌԼԳ (1624) թվին, ելան միահամուռ բազում զօրօք Ղարահէսար առին, զՄութազա փաշան հնազանդեցուցին և կոտորելով գնացեալ հասին յԱնկարիայ քաղաք և պաշարեցին ժ (10) ամիս այլ ոչ կարացին առնուլ» (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7786, էջ 249ա)։

[42] Նույն տեղում։

[43] Tarih-i Nâima", հատ. II, էջ 298։

[44] Նույն տեղում։

[45] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2089, էջ 322ա։

Այնքան է հղորանում Աբազա փաշան, որ գտնվեցին մարդիկ, որոնք չէին կասկածում նրա հաղթանակի մասին։ Ելույթ ունենալով Աբազայի բանակի առաջ, Կեսարիայի մուսուլմանների հոգևոր պետը դիմելով ապստամբների առաջնորդին ասում է. «Դու սիրված ես աստուծո կողմից, նա է քեզ տվել ուժ ու հղորություն կեղեքիչների (ենիչերիների) դեմ. մի վախենար, բախտը քեզ հետ է»[46]։ Սակայն, այնուամենայնիվ, Աբազա փաշան չի կարողանում գրավել Անկարայի բերդը, չնայած յոթ ամիս պաշարում է այն։ «Մինչ եօթն ամիս պատերազմեցան և ոչ կարացին առնուլ զբերդն և ոչ բերդացիքն զնոսա կարացին ընդոստուցանել ի տեղացիէն և փախուցանել»[47]։

Ստամբուլի կառավարությունը Աբազայի դեմ սերդար է նշանակում Ջղալօղլի Սինան փաշայի որդի՝ Մահմուդ փաշային դեռևս 1623 թ. մայիսին (ռեջեբ 1032 թ.)։ Սակայն վերջինն իմանալով Աբազայի գերազանց ուժը, ստիպված է լինում շրջհարվել նրա հետ ու քաշվել Բրուսա։ Իսկ երբ արդեն հասնում է ձմեռը, իր հերթին, Աբազա փաշան թողնում է Անկարայի բերդի պաշարումը և քաշվում է իր զորքով Նիգդե քաղաքը։ Սերդարի նպատակն էր Բրուսայում համալրել իր անկարգապահ բանակի շարքերը, Ստամբուլից լրացուցիչ ռազմամթերք ստանալ և ապա ընդհանուր հարձակում գործել Աբազայի դեմ։ «Նա (իմա՝ սերդար Մահմուդ փաշան) գնաց նստաւ իր Պուրսայ քաղաքն,—գրում է Դարանաղցին,—թէ զան հաւաքին շար զուլքն, նա յիւրեանց կողմն էր գնալն և ոչ գնալն, թագաւորն (Մուրադ IV-ը) մանուկ տիօր դեռ էր նստեր, չէին ահ և երկիւղ կրեր որպէս այժմ, յուշ և յապաղելով գնային՝ թալանելով, կեղեքելով ժողովրդոցն ի Պուրսայ և եղեն բանակ մեծ»[48]։

1624 թ. գարնան և ամռան ամիսներին օսմանյան բանակն անցնում է գործողության Աբազայի դեմ։ Մինչ այդ, սերդար Մահմուդ փաշան նամակ է գրում Աբազա փաշային, խորհուրդ տալով նրան անձնատուր լինել ու ներման արժանանալ[49]։ Աբազան մերժում է սերդարի առաջարկը և պատրաստվում է ճակատամարտի, որը և տեղի է ունենում 1624 թ. օգոստոսին[50] (2 զիլկադե 1033 թ.)

[46] J. Hammer, Նշվ. աշխ., հատ. VIII, էջ 347։

[47] Գր. Դարանաղցի, էջ 220։

[48] Գր. Դարանաղցի, էջ 221։

[49] Tarih-i Peçevi", հատ. II, էջ 398—399։

[50] Նույն տեղում, Գր. Դարանաղցին այսպես է նկարագրում մի ամբողջ օր տևած այդ արյունալի ճակատամարտը։ «Եւ անդ էիր տեսանել զճաթման թօփիցն և թվանկիցն և զուլսս նետիցն և զշղոալ սուսերացն և զծուխ խաւարին և զտոփիւն վահանացն և զաղաղակ վիրաւորացն յերկուց կողմանց անկելոցն մինչև ի մուտս

Կեսարիայից ոչ հեռու գտնվող Սեփեդլու կոչված վայրում, ուր պարտվում է Աբազան ու փախչում իր բանակի մնացորդներով դեպի Էրզրում։ Աբազա փաշայի Սեփեդլուում կրած պարտությունն աղբյուրներում պատճառաբանվում է նախ՝ ճակատամարտի ընթացքում Աբազային միացած Սեբաստիայի ու Շարկի-Կարահիսարի կառավարիչների՝ Թայյար Մեհմեդ փաշայի և Մուրթազա փաշայի դավաճանությամբ, որոնք անցնում են թշնամու կողմը, 2) կառավարական զորքերի թնդանոթներում ունեցած գերազանցությամբ։ Ինչպես բացատրել Աբազային նախկինում դաշնակցած ֆեոդալների դավաճանությունը։ Այդ ֆեոդալներից և ոչ մեկը նպատակ չուներ օսմանյան դինաստիայի տապալումը։ Եթե ենիչերիների որոշ ծայրահեղ կամայականությունները վրդովեցրել էին նրանց, ապա այժմ, երբ Ստամբուլում, իշխանության գլուխ էին կանգնած նորից սուլթան Օսմանի կողմնակիցները ու գահ էր բարձրացվել սուլթան Մուրադ IV-ը (1623—1640), նրանք իրենց միսիան համարում էին ավարտված։ Կարծում ենք, որ չենք սխալվի, եթե ասենք, որ նույնը կաներ և ինքը՝ Աբազան, սակայն նա չէր վրստահում կառավարության ներման խոստումներին։

Գալով Էրզրում, Աբազա փաշան անհապաղ ձեռնամուխ է լինում նոր ավելի մեծ բանակի կազմակերպման գործին։ «Եւ յԱպազան գնաց յԱրզրումն և ամրացաւ ի տեղին և շատ զօրս գումարեաց քան զառաջինն եօթնապատիկ»[51],—կարդում ենք Գր. Դարանաղցու մոտ։

Այդպիսի բանակի ստեղծումը պահանջում էր մեծ ու արտակարգ ծախսեր։ Ուստի այդ ծախսերը կատարելու համար Աբազան ուներ միմիայն մի միջոց՝ խիստ ավելացնել տեղի բնակչությունից գանձվող հարկերի ու տուրքերի չափը։ Եվ այս հանգամանքն է, ըստ երևույթին, պատճառն այն բացասական վերաբերմունքի, որն ունի Գինոս գրիչն Էրզրումից Աբազայի նկատմամբ։ «Եւ այս պիղծ Ապազայս,—գրում է նա,—նոր շարիք արաւ և քրիստոնէից զապրանք, զկերակուր թալնեց և ելից ի բերդն. և այլ առաւել շարութիւն այնէր, որ մարդն տունէն դուրս ելից, զտունն և զկալն ամէնքն կրակեց և տոչորեց, և մնաւ ամրացաւ բերդն»[52]։ Գրիգոր Դարանաղցին,

արևու։ Մինչ գիշերացաւ և Յապազան և ամենայն զօրքն խորհեցան թեթևանալ յամենայն ծանրութենէն և ի տեղին ի վայր թողին, միայն լոկ ամենայն զօրքն գիշերագնացեալ՝ գնացին շատ աւուր ճանապարհաւ յետ, զէպ ի վեր ի Կարին յամրոցի՝ ի Թեոդուպոլիսն» (Գր. Դարանաղցի, էջ 221—222)։

51 Գր. Դարանաղցի, էջ 222։

52 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7786, էջ 249ա։

սակայն, բացատրում է Աբազայի կողմից հարկապահանջության ավելացումը, նշելով միաժամանակ, որ ծանր վիճակի մեջ ընկան ոչ միայն հայերը, այլև տեղացի Թուրքերը։ «Եւ այս անգամ (Աբազան) սկսաւ հարկապահանջութեամբ տառապեցուցանել զշխարհին մարդիկն,—գրում է նա,—զշինական ռամիկսն և զքաղաքացիսն՝ զթուրք և զհայք, վասն երկու պատճառի, նախ՝ որ մերկացան ի ժամ պատերազմին, երկրորդ՝ առ ահի շատ զօրս գումարեաց, որ պիտոյ էր նոցա թոշակ և համբարանոց»[53]։

Սերդար Մահմուդ փաշան հետապնդելով Աբազա փաշայի փախուստ տված զորքին հասնում է մինչև Դերջանի հովիտը, սակայն մոտալուտ ձմեռն ստիպում է նրան հրաժարվել Էրզրումը պաշարելու մտքից և բանակցությունների մեջ մտնել Աբազա փաշայի հետ, որի արդյունքը լինում է խաղաղության հաստատումը՝ փոխադարձ զիջումների հիման վրա։ Սուլթանական կառավարությունը նորից ճանաչում է Աբազային, որպես Էրզրումի բեկլերբեկ։ Իր հերթին, վերջինն համաձայնվում է Էրզրումի բերդում թողնել երկու հազար ենիչերիների։ Այս դրությունը, ինչպես կարելի է կռահել աղբյուրների վկայություններից, տևում է բավականին երկար՝ մինչև 1627 թվականը։ Նշված տարվա օգոստոսին պարսկական բանակը պաշարել էր Ախալցխայի բերդը։ Օգոստոսի 17-ին (5 զիլհիջե 1036 թ.) կառավարության հատուկ հրամանով Ախալցխա էր ուղարկվել Անատոլիայի բեկլերբեկ Դիշլենկ Հյուսեյն փաշան՝ պաշարվածներին օգնելու նպատակով։ Անատոլիայի բեկլերբեկը մի նամակով դիմում է Աբազա փաշային միանալ իր 4—5 հազարանոց բանակին ու համատեղ հետ շպրտել պարսիկների հարձակումը։ Աբազա փաշան համաձայնվում է, սակայն այն պայմանով, որ սերդարությունը իրեն հանձնվի։ Մյուս կողմից, իր ձեռքն ընկած մի գաղտնի նամակից, Աբազա փաշան տեղեկանում է, որ կառավարությունն իր դեմ թակարդ է լարել և նախապատրաստում է իր սպանությունը, որը պետք է կատարվեր բերդում գտնվող ենիչերիների ձեռքով։ Կատաղած Աբազան կարգադրում է 800 ենիչերիներին իր աչքի առաջ սրի անցկացնել[54]։ Դիշլենգ Հյուսեյն փաշայի և Աբազայի միջև ընդհարումը դառնում է անխուսափելի։ Մի ճակատամարտում փայլուն հաղթանակ է տանում Աբազան։ Գերի ընկած Դիշլենգ Հյուսեյն

53 Գր. Դարանաղցի, էջ 223։

54 J.H. Danişmend, նշվ. աշխ.-ը, հատ. III, էջ 337—338։

փաշային ու բոլոր ենիչերիներին Աբազան սրից է անցկացնում։ Իսկ Ախալցխան ընկնում է սեֆեվի պարսիկների ձեռքը[55]։

Այսպիսի իրադրության մեջ, մեծ վեզիր Խալիլ փաշան թողնում է պարսկական արշավանքը և իր ամբողջ բանակով շարժվում ապստամբ Աբազա փաշայի դեմ։ Այդ արշավանքին, ի միջի այլոց, մասնակցում է նաև Վրաստանի էմիրներից Մողրավը (Սաակաձեն)։ Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին 41 օր պաշարվում է Էրզրումը մեծ վեզիր Խալիլ փաշայի կողմից, սակայն գրավել քաղաքը նրան չի հաջողվում, թնդանոթի պակասության պատճառով։ Իսկ «վերահաս ձմեռվա ցրտերն ստիպեցին (օսմանցիներին) հրաժարվելու բերդի պաշարումից և մեկնելու ձմեռելու վայրերը»[56]։ «Եւ ամենայն բանակն փախեան և Խալիլ փաշան ընդ նոսա»[57],—գրում է Դարանաղցին։

Անհաջողության մատնված Խալիլ փաշան պաշտոնազրկվում ու նոր վեզիր-ի ազամ է դառնում Խոսրեվ փաշան։ Թոխատում օսմանյան բանակը մեծ պատրաստություններ է տեսնում Աբազա փաշայի դեմ նոր հարձակում կազմակերպելու նպատակով։ Զգալով վերահաս մահացու վտանգը, Աբազա փաշան դեսպանություններ է ուղարկում ու բանակցությունների մեջ է մտնում Շահ Աբասի հետ՝ օգնություն հայցելով ու խոստանալով անվերապահ հպատակություն[58]։ Շահ Աբասը չի հապաղում օգնական ուժ ուղարկել Աբազային[59]։ Մեծ վեզիր Խոսրեվ փաշան իմանալով այդ մասին, զեկուցում է կառավարությանը՝ «Եթե չշտապենք, ապա անխուսափելիորեն էրզրումը, Բաղդատի նման, թշնամու ձեռքը կընկնի»։ Իսկ կառավարությունը կարգադրում է մեծ վեզիրին անմիջապես շարժվել Աբազա փաշայի վրա։

Զեռնարկելով արշավանքը ապստամբ փաշայի դեմ, վեզիր-ի ազամ Խոսրեվ փաշան դիմում է խորամանկության։ Նա ամենից առաջ աշխատում է մեկուսացնել Աբազային, զրկի դնելով վերջինի զենքը ,այն է՝ ցույց տալ իրեն գյուղացիների շահերի հոգացող, այլ կերպ ասած՝ դիմել դեմագոգիայի։ «Եւ այս Խոսրոֆ փաշան յոյժ հոգացող էր աշխարհաց և բոայիցն և ահարկու ի վերայ զօրացն և կարի առաւել ասախով, և շատ զուլում այնողք կոտորէր ընդ գնալն

[55] Նույն տեղում։

[56] „Tarih-i Solakzade", էջ 744։

[57] Գր. Դարանաղցի, էջ 224։

[58] „Tarih-i Solakzade", էջ 745։

[59] Նույն տեղում։

և ամենայն շարագործքն սարսէին ի նմանէ և քննութիւն առնելով կու գնայր և լաւ ունկն կու դնէր դանկատաւորացն»[60]—միամտորեն գրում է Գր. Դարանաղցին։

Որպեսզի վերջնականապես կազմալուծի Աբազայի բանակը վեզիր-ի ազամը «...հրաման յղեաց յամենայն տեղիս տէրութեանն թէ՝ Յապազին մարդիկն, որ մեր չգնացած իքան փախչին և գան ի քաղաքայնիդ. նա ոչ մերձենայք ի նոսա շարութեամբ, այլ սիրով ընկալարուք զնոսա և զամենայն կարիս և զպիտոյս նոցա կատարեցէք և սիրով ճանապարհի դրէք, և ուր կամիցին գնալ երթիցեն խաղաղութեամբ»[61]։ Խոսրեվ փաշայի նման դիրքն իրոք շուտով բարոյալքում է Աբազա փաշայի զինվորներին, որոնց մի մասը անցնում է մեծ վեզիրի կողմը։ «Եւ յորժամ (լուան) Յապազացիքն զայս լուր համբաւոյս սկսան ի փախչել և շատքն փախան և եկին առ վեզիրն և սիրով ընկալաւ զնոսա»[62]։ Տեսնելով իր բանակայինների փախուստը «...Յապազան յամենայն անցս ճանապարհաց պոլուկ եդիր, զփախչողքն չթողուին գնալ՝ ոչ հայ և ոչ տաճիկ»[63]։ Իր հերթին դիմելով հենց իրեն Աբազային, մեծ վեզիրը հնազանդվելու կոչ է անում, խոստանալով ներում. «Ինչո՞ւ եք ապստամբում վսեմաշուք փադիշահի դեմ, եթե ձեր նպատակը դիրլիք (ավատ) ստանալն է, եկեք ու արժանացեք ձեր ցանկացած դիրլիքին. անվայել է ձեզ նման քաջերին համառել ապստամբության մեջ։ Ընդսմին, դուք գիտեք, որ ապստամբությունը վերջ չունի։ Յարդ ո՞վ է կարողացել Օսմանցու հետ չափվել, որ Առազան չափվի... փադիշահական Ֆերմանի համաձայն, ձեր գործած ոճիրները պիտի ներվեն ու պիտի ստանաք ձեր հայցած դիրլիքները, նպատակս է խրատել ձեզ, իսկ ուշացրած զղջումը օգուտ չի տա»[64]։

Աբազա փաշան այս անգամ էլ չի հավատում մեծ վեզիրի անկեղծությանը ու մերժում է նրա առաջարկը։ Օսմանյան բանակն առաջ շարժվելով օգոստոս ամսում գրավում է Երզնկան, ապա և Հասանկալան (27 օգոստոս—26 զիլհիջե)[65]։ Սեպտեմբերի 5-ին կամ 6-ին (6/7 մուհարրեմ) Էրզրումն արդեն պաշարվում է Խոսրեվ փաշայի կողմից։ Ստանալով զանազան խոստումներ, Աբազա փաշայի

[60] Գր. Դարանաղցի, էջ 24։

[61] Նույն տեղում, էջ 225։

[62] Նույն տեղում։

[63] Նույն տեղում։

[64] „Tarih-i Solakzade" էջ 745 և հետ.։

[65] Նույն տեղում։

զորքի սպայական կազմը լքում է նրան ու անցնում Խոսրեվ փաշայի կողմը։ Մյուս կողմից, վախենալով քաղաքի ընդհանուր ավերածությունից, ինչպես երևում է Գր. Դարանաղցու վկայությունից, բնակչությունը ճնշում է բանեցրել Աբազայի վրա, որպեսզի վերջինս անձնատուր լինի։ «Եւ սկսաւ շքաւորել Յապազան և եկն Խոսրոֆ փաշան,—գրում է Դարանաղցին,—ամենայն բուռն զօրութեամբ ի վերայ Յապազին ի Թեոդուպոլին և սկսաւ պատնէշ կանգնել և փլաւան, մինչ զպարիսպն մեկ դիէն փլոյց և Յապազան ի ներսեւանց կանգնել ջանայր զփլածն։ Եւ տեսին քաղաքացի գլխաւոր տաճիկքն և ամենայն բարեկամքն իւր, որ չէր հնար դէմ կալոյ, նա սկսան աղաչական բանիւք ոգորել ընդ նմա թէ՝ հնազանդ լեր Հրամանաց թագաւորին, և թէ ոչ կամիս լսել մեզ, մեք այլ շարութեամբ կու ջանամք քեզ»[66]։

Պաշարման 12-րդ օրը (19 մուհարրեմ—18 սեպտեմբեր) Աբազա փաշան հուսահատ վիճակում անձնատուր է լինում մի քանի օր տևած բանակցություններից հետո[67]։ «Եւ ելեալք ի քաղաքէն ոմանք ի մեծացն և յօլամացն եկին մօտ առ վազիրն և սկսան պաղատելով միջնորդել և ցածուցանել զբարկութիւն նորա և վազիրն՝ այլ սիրով և յօժարութեամբ ընկալաւ զպաղատանս նոցա և դաշնադիրք եդին երդմամբ մեծաւ, զի ոչ վնաս առնել նմա և կամ ոմանք մեծի և փոքու վասն նորա։ Եւ դարձան միջնորդքն առ փաշան՝ ի Յապազան և ասացին զամենայն հրամայեալսն ի վազիրէն և նա խրն-

[66] Գր. Դարանաղցի, էջ 225. Նույնն է գրում և Գրիգոր երեց Կալոնացին իր հիշատակարանում. «Ապա այս Խոսրով փաշայս,—գրում է նա,—խաղաղութիւն սերմանելով գնաց ի յԱպազայի վերայ և ոչ կարաց մենամարտել, մտաւ ի յամրանոց բերդն և զԱստուած ոչ յուսացաւ, այլ ի յամրանացն յուսացաւ, հիսար եղաւ, որ ոչինչափ քրիստոնեայք մնացին ի յանաւրէն հետ ի բերդն և Խոսրով փաշային զաւրքն շատ էր, թուով ՃՁՌ (180 հազ. (sic!) պատերազմեցաւ ի յամրոցին ի վերայ և Աստուծոյ աջողութեամբն խաղթեցին զբերդն և նկուն արարին զԱպազան. յետոյ նամակ և մոնոզոնեանց վազիրն առ Ապազան՝ թէ չելանես ի յամրոցէդ՝ ՃՁՌ զաւրաւք մտանեմ ի ներս, ոչ տաճիկ, ոչ քրիստոնեա ա(1) հոգի ոչ ապրի ի ձեռաց իմոց, հրամ(ան) տամ զաւրաց իմոց որ ի սուր սուսերի մաշեմ զիւրեանք, յայնժամ աղաղակ բարձեալ այլասեռին և տառապեալ ազգի մերոյ քրիստոնեայք գոչեցին կողկողագին պաղատանիւք, ով կարէ գրով արկանել զաղաղակ գոչա և անկան ի յայն Ապազին թէ քեզ ազատելու ճար չկա, մեր արեանն էր պարտական լինիս, ով արեանարբու գազան։ Յայնժամ ողորմեցաւ աստուած... և զբարացեալ սիրտն բռնաւորին քաղցրացուց և ելաւ ի յամրոցէն և ազատեցան քրիստոնեայքն և ապա ըմբռնեալ տարան ի յՍտամպալ, վերջն Աստուծոյ է գիտելի» (Հակ. Տաշեանի ցուցակը, № 334, էջ 839բ)։

[67] „Tarih-i Solakzade", էջ 746։

դութեամբ գնաց ի մօտ և վազիրն յայն եկաց և համբուրեցին զմիմեանս և նստան»[68]։

Վերցնելով իր հետ Աբազա փաշային, մեծ վեզիրը վերադառնում է Պոլիս ու հանձնում նրան սուլթան Մուրադ IV-ի դատաստանին։

Համաձայն Ի. Փեչևիի, սուլթանի և Աբազայի միջև տեղի է ունեցել հետևյալ խոսակցությունը.

— Քյաֆիր (անհավատ). ինչ էր քո այս ապստամբությունը,— հարցրել է սուլթանը։

— Իմ ամենազոր փադիշահ. երբ ենիչերիները սպանեցին ձեր հանգուցյալ եղբորը, բոլոր բեկլերբեկերը օրինականություն պահանջեցինք ու իրար հետ դաշինք կնքեցինք,—Ձեր ստրուկը բողոք բարձրացրեց... հո Աբազա ստրուկը ոչ մի նպատակ չուներ փադիշահ դառնալու։ Իմ վրա արշավանքի եկած վեզիրների խոսքերին հավատ ու վստահություն չունեի։ Միայն անձնական ապահովությունից վախեցած հնազանդություն չհայտնեցի։ Հրամանը փադիշահինն է. ահա վիզս ու ահա սուրս.

— Գնա այժմ, քյաֆիր, ներում եմ քեզ, որովհետև իմացար քո չափն ու տեղը,—պատասխանել է Մուրադ VI-ը[69]։

[68] Գր. Դարանաղցի, էջ 225—226։

[69] „Tarih-i Peçevi", հատ. II, էջ 402 և հետ.։ Սուլթանի և Աբազայի տեսակցության ու ունեցած զրույցի մասին մանրամասն գրում է Գր. Դարանաղցին. «Եւ յորժամ տարան (Աբազային) առաջի թագաւորին,—գրում է նա,—և թագաւորն բարկութեամբ ասաց զառաջինն թէ՝ վասն է՞ր այդչափ յանդգնութիւն գործեցեր և իմ հրամանացն դիմադարձ եղեր. և եհան զվալիտին մօրն իւրոյ և զմուֆտուն Ֆաթվայն, եղ առաջին թագաւորին։ Եւ յորժամ ընթերցաւ գիտաց զպատճառն, և նախ այլ տեղեակ էր սակաւ մի լսելով ի մօրէն, և ասաց թագաւորն զՅապազան. ես այլ տեղեակ եմ, որ այդպէս էր. յորժամ զերկու լալաս՝ զմահամմատ փաշան և զնալիլ փաշան՝ քո հայտագիրն զրկեցի, ընդէ՞ր ոչ լուար նոցա, և հրամանաց իմոց զնազանդեր էիր և եկեալ որպէս այժմ, նա լաւ չէ՞ր, քան այնքան արեանց հեղհնազանդեր էիր և եկեալ որպէս այժմ, նա լաւ չէ՞ր, քան այնքան արեանց հեղմունք գործեցան և աւերութիւնք։ Նա պատասխանի ետ և ասաց. այո, բարիոք է որմունք գործեցան և աւերութիւնք։ Նա պատասխանի ետ և ասաց. այո, բարիոք է որպէս ասացեր, այլ յորժամ տեսի որ լաւ զապտշի հաքամ ոչ գոյր նոցա վերակացու, որպէս այժմ գնոսրոֆ դարտաշն մեր, և զուլն ամենայն ի կամս հուեանց ապաստանէին և իւրեանքն առաւել զոդային ի նոցանէ քան զամենայն աշխարհի բոլոր այքն, վասն այնորիկ ոչ հաւատացի նոցա, այլ երկեայ ի թշնամեացս և ընդդէմ կացի նոցա. սակայն այժմ տեսի, որ ստոյգ զապտշի հաքամ նկաւ, նա հնազանդեցայ և եկի առաջի քո, որպէս կամիս այնպէս արա. իմ սրտի մուրատն և փափաքն այն էր, որ զերեսդ տեսանէի և զիմ հայն յարդ առնէի, յորժամ տեսի և բերան ա բերան խօսեցայ, արդ այսուհետև մեռանելն ինձ կեանք է առաջի քո։ Եւ յետ այսքան ու աղերսական բանից և զպատճառն ծանուցանելոյն, նա գոյթ էարկ Աստուած ի սիրտս թագաւորին, որ ողջամբ ընկալաւ զնա սիրով, որպէս ուէրն մեր զանառակ որդին, և սամուր մուշտակ ագուց նորա և վազիրին և սեղան պատրաստել ետուր, որ ի միասին ճաշակեցին» (Գր. Դարանաղցի, էջ 226—227)։

Պայքարելով, իր հերթին, կենտրոնախույս ֆեոդալների ու նրանց ձեռքում գործիք դարձած ենիչերիների կամայականության ու անկարգության դեմ, սուլթան Մուրադ IV-ը չէր կարող չներել Աբազա փաշային, չնայած որ գիտակցում էր, որ երկրի ներսում եղած ապստամբությունները խիստ թուլացնում են Օսմանյան կայսրության տնտեսական, քաղաքական և ռազմական հզորությունը։ Սուլթանը գիտեր միաժամանակ, որ Աբազա փաշայի ապստամբությունը ոչ միայն չէր ուղղված օսմանյան դահի դեմ, այլ ընդհակառակը, այն կոչված էր պաշտպանելու ու ամրապնդելու այդ գահը։

Աբազա փաշային, ինչպես մի ժամանակ Դելի Հասանին, տալիս են Բոսնիայի բեկլերբեկությունը։ «Եւ յետ շորս ամսոյն՝ ի մուտ թվականի ՌՀԷ (1628)-ին ետուն նմա փաշալըխ զտեղի Հասան պէկի՝ եղբօր Ազիճուն, երկնչելով զի մի կրկին ապստամբեցի»[70],— գրում է Դարանաղցին։ Հավատարիմ իր սկզբունքներին ու հետապնդած նպատակներին, այն է ամրապնդել օսմանցիների տիրապետությունը մեղմ ու չափավոր քաղաքականությամբ, Աբազա փաշան այստեղ ևս իրեն դրսևորում է որպես «արդար» կառավարիչ։ «Եւ նա գնացեալ յԱռնաւուտոց և Պոստնացոց աշխարհն, որ են բարբարոսք և խուժադուժք, նա այնպէս էտիլութիւն (արդարություն) և հանգստութիւն արար նոցա, որ յարև կերդուէին և գայլք և գառնիք ի միասին ճարակէին»[71]։ Այնուհետև՝ Աբազային մենք դարձյալ տեսնում ենք Պոլսում սուլթանական պալատում «Նեդիմի-խաս»-ի (փադիշահին զվարճալի խոսքերով ու պատմվածքներով զբաղեցնող անձնավորության) դերում[72]։ Սակայն Աբազայի թշնամիները շարունակում են դավեր լարել նրա դեմ, ու նորից դրդում ենիչերիներին։ Լեհական մի կամպանիայի ժամանակ ենիչերիները պահանջում են սուլթան Մուրադից վերջ տալ Աբազա փաշային «...որքան նա (Աբազան) կենդանի է, մեր ոտքն առաջ չի գնայր ի պատերազմ և ոչ ձեռներս սուր կու ըմբռնէ,— ասում են ենիչերիները.— կամ թագաւորն ի մենէ վաղ տի գայ և կամ Յապաղէ. այս անգամ զինչ լինելոց էլ՝ տի լինի»[73]—շարունակում են նրանք։ Ի վերջո, սուլթանը

[70] Գր. Դարանաղցի, էջ 228։

[71] Գր. Դարանաղցի, էջ 228։

[72] „Tarih-i Nâima" հատ. III, էջ 224։

[73] Գր. Դարանաղցի, նույն տեղում։

Դարանաղցին նկարագրում է, թե ինչպես ակամա սուլթանն ստիպված է եղել տալ Աբազայի մահվան դատավճիռը։ «Եւ եղև օր մի,—գրում է նա,—յորժամ կու գրօսնոյր թագաւորն Ապաղին ի Ձիրնթացսն ասպարիզի ի կողմն Ուսկոդարին, նա

ակամայ տեղիք է տալիս, Աբազայի թշնամի վեզիրների (հատկապես Աբազայի մեծ հակառակորդն է եղել վեզիր Բայրամ փաշան) ու նրանց թիկունքում կանգնած ենիչերիների պահանջներին[74]։

Պատմագիր Նաիման Աբազա փաշայի սպանության պատճառը տեսնում է հետևյալ հանգամանքում՝ նախ, նրան չեն վստահել, նկատի ունենալով նրա անցյալը և երկրորդ, որ կարևորն է, զեկավարող շրջանները խիստ վախեցել են, որ իր համախոհների միջոցով Աբազան նոր ապստամբություն կբարձրացնի կառավարության դեմ[75]։ Իսկ սպանության անմիջական առիթը եղել է «Կարմիր ձվի օրվա» (զատկի) հարցի շուրջը «անհավատ» հայերի և հույների միջև ծագած վեճը։ Ի դեպ, նշենք, որ այդ վեճին Գր. Դարանաղցին ամբողջ երկու գլուխ է նվիրել[76]։ Նրա հաղորդած տեղեկություններից երևում է, որ վեճն ընթացել է ոչ այդքան ծռազատկի, ինչքան այն հարցի շուրջը, թե Երուսաղեմի «սրբավայրերում» առաջնությունը ում պետք է պատկանի՝ հայ թե հույն հոգևորականությանը։ Երկու կողմերն էլ կաշառում են կառավարությանը։ Դարանաղցու վկայություններից երևում է նաև, որ Աբազա փաշան պաշտպանել է հայ հոգևորականության պահանջները։ Եվ ըստ Նաիմայի, իբր հայերից ստացած կաշառքն է առիթ դարձել, որ սուլթանը զայրանա Աբազայի վրա ու մի քանի օր հետո կարգադրի նրան սպանել[77]։ Սպանությունը դրդված էր, ինչպես տեսանք վերևում, ավելի խորը հասա-

բերին սուրհանդակքն և մատուցին առ թագաւորն զրօթալի մահաբեր կնքեալ քարտէզն, և յորժամ ընթերցաւ՝ խռովեցաւ յոգի իւր և դարձաւ ուրախութիւնն ի սուգ և ծաղրն՝ ի լաց, և փղձկեալ սրտիւք և թաթաւտ աչօք ետ ի ձեռս Յապաղային, և յորժամ ընթերցաւ Յապաղան այլ, առ ոտս անկեալ թագաւորին և աղերսելով ասէ ցնա. յորժամ այսպէս խորհեալ են և ասացեալ, նս ի կատար կու տանին զործով. մինչև ցերը ինձ համար տրտունջ և բամբասանք լսելոց ես, այլ ասան զիս, որ նոցա չար զրուցն ի վրայէդ յետ գնայ. և թէ ոչ՝ որ չապանանես, նա շատ փորձանք կու յարուցանեն ի վերայ թեր ևքան զառաջինն յօթնապատիկ չփոթմունք և ազմուկ և վնաս մահու կու զործի...։ Լաւ է ինձ մեռանելն քո հրամանաւն առաջի քո և դու խաղաղութեամբ կենաս և վրդովմունք չլինի և աշխարհի խռովութիւնք և զուլիցն կարողութիւնք»։

[74] „Tarih-i Nâima", հատ. III, էջ 226։

[75] Գր. Դարանաղցի, էջ 235—274։ «Այս երկու գլուխները վերնագրված են. «Վասն լուսոյն Յերուսաղէմայ, որ հոռոմոց ազգն խրեանց հաւատակից ազգակցօքն Ծռազատիկ արարին բայց ի յասորաց, ի խրիմոց և հապաշիցն» և մյուսը՝ «և դարձեալ վասն Գրիգոր եպիսկոպոսին և վասն յունացն՝ թէ ո՞րպէս եղեն և կամ Գրիգորն զի՞նչ արարն»։

[76] "Tarih-i Nâima", հատ. III, էջ 227։

[77] „Tarih-i Nâima", նույն տեղում, էջ 227։

բակական, քաղաքական պատճառներով։ Աբազան կենտրոնախույս ֆեոդալների աչքի փուշն էր դարձել։ Իսկ սուլթանը պիտի որոշակի երախտագիտություն ունենար Արազայի նկատմամբ։ Եվ այդ երախտիքի մասին մի անգամ էլ հիշեցնում է արքային Աբազան լսելով իր մահավճիռը. «...Եւ այլ վերայ քեզ շատ երախտիս ունիմ, որ առի զվրէժ արեան եղբօրն քո և զզուլին կատաղութիւնն զիջուցի և զբորբոքումն հրաբորբոք բարկութեանց նոցա շիջուցի, որ ապա դու թագաւորեցեր և ապա ուղղեցան ամենայն բարեկարգութիւնք թագաւորութեանդ, թէպէտ յետ ժամանակն որ շարացան, աստուծով դու զօրացար և նոքա տկարացան և նկուն եղեն»[78]։

Մուրադ IV-ի կարգադրությամբ Արազա փաշային թաղում են «արքայավայել» մեծ շուքով։ «Եւ յետ այնորիկ հրամայեաց արքայն դիազարդիցն, զի պատեսցեն զնա ըստ օրինի թագաւորացն, և վաղվաղակի կատարիցեն զամենայն հրամայեալսն ի թագաւորէն... Եւ դարձեալ հրամայեաց թագաւորն, որ ամենայն ուլամայքն, շեխք և մուշաեխք և ամիրմունքն ամենեքեան գայցեն ի թաղումն և փառաւորապէս տարցեն ի հանգիստ...»[80]։ Սա, անշուշտ, սուլթանի կողմից օսմանյան գահին Արազայի մատուցած ծառայությունները ճանաչելու արտահայտությունն էր, ծառայություններ, որոնք օբյեկտիվորեն ավելի շատ վնաս հասցրին երկրի հզորությանը, քան օգնեցին նրա ամրապնդմանը։

Իր կենդանության օրերին, ինչպես տեսանք, Աբազա փաշան հայերի, և նախ և առաջ, հայ գյուղացիության «բարեկամի» համբավ էր ձեռք բերել։ Այդ պատճառով, նրա մահը, համաձայն Դարանաղցու, սգում է և հայ ժողովուրդը։ «Եւ թէպէտ որ կոծիցեն զնա թագաւորն և ամենայն տան նորա և սգացին, մանաւանդ աղգս հայոց առաւել սգացաք և լացաք, որ իբրև զհայր հայոց էր խնամարկութեամբն և հոգաբարձութեամբն, որ շատ կենալովն ի մէջ հայոց, տեղեակ էր մեր ամենայն որոյիսութեանցն՝ լաւին և վատին և նեղչացն և վշտակրութեանցն, և սիրէր զաղգս մեր առաւել քան զամենայն ազգսն որ են ի վերայ երկրի քրիստոնեայ անուանք, և գովէր ոչ գերազաց»[81]։

[78] Գր. Դարանաղցի. էջ 230—231։

[79] „Tarih-i Nâima", հատ. III, էջ 230։

[80] Գր. Դարանաղցի. էջ 232։

[81] Գր. Դարանաղցի. էջ 234։

***

Աբազա փաշայի ապստամբության ճնշումով չէր վերանում «ջալալի» կոչված շարժումները։ Նրա ապստամբությանը հետևեցին մի շարք այլ ապստամբություններ։ Այսպես, 1631 թ. կառավարության դեմ մի շարք նոր ապստամբություններ բարձրացվեցին, որոնց գլուխ էին կանգնած Կոնիայում՝ Ռում-Մեհմեդը, Աֆյոն Կարահիսարում՝ Բաբա Օմերը, Այդընում՝ Կրնալիօղլին և ուրիշներ։ 1632 թ. կառավարության դեմ ապստամբեց ինքը՝ Աբազա փաշայի ապստամբությունը ճնշող սերդար Խոսրեվ փաշան։ Նա իր թշնամիների կողմից ամբաստանվել էր Անատոլիայի նոր ապստամբությունների պատճառ հանդիսանալու մեջ։ Թոխատում հաստատված Խոսրեվ փաշայի դեմ ուղարկվեց կառավարական զորք՝ Դիարբեքիրի բեկլերբեկ Մուրթազա փաշայի գլխավորությամբ։ Խոսրեվ փաշան պարտություն կրեց ու գլխատվեց (11 մարտ, 1632 թ. 19 շաբան 1041 թ.)[82]։

Իսկ մայրաքաղաք Ստամբուլում ենիչերիների անվերջ ապստամբություններին հետևում էին սիփահիների ապստամբությունները և հակառակը։ Ապստամբները հաճախ պարտադրում էին իրենց կամքը սուլթանին։ Ի. Փեչեվիի վկայությամբ, ապստամբ, այսպես կոչված զորքաները հաճախ սուլթանին այսպիսի ուլտիմատում էին ներկայացնում՝ «եթե մեր պահանջները չկատարես, դու որպես փադիշահ մեզ պետք չես»[83]։

1648 թ. (1058 թ.) կառավարության դեմ մեծ ապստամբություն բարձրացրեց Սեբաստիայի վալի (կառավարիչ) Վարվար Ալի փաշան, որը մի մեծ ջալալի բանակի գլուխ անցած շարժվում է դեպի մայրաքաղաք, սակայն պարտություն կրում, գերի ընկնում ու գլխատվում է։

1651 թ. մեծ հակակառավարական ապստամբություն բռնկվեց ոմն ջալալի Հասան բեկի գլխավորությամբ։ Նա գրավեց Նիկոմեդիայից մինչև Թոխատի շրջակայքը, ներառյալ Անկարա, Չանկրը, Չորում, Մարսովան, Ամասիա և Զիլե քաղաքները։ Այս ապստամբությունը նույնպես պարտությամբ վերջացավ։

Հետագա տարիներին ապստամբությունները շարունակվում են։ Դրանցից ամենամեծը դա քուրդ Հյուսեյն աղայի գլխավորածն էր՝

[82] J. H. Danişmend, Նշվ. աշխատությունը, հատ. III, էջ 351—353։

[83] Նույն տեղում, էջ 353։ „Bu didüklerümüzü bize virmezsen, sen bize pâdişahluga lâzum de gülsün".

Վանում 1651 թ.։ Այդ ապստամբության մասին մանրամասն պատմում է Առ. Դավրիժեցին։ Ապստամբության պատճառ է հանդիսանում պաշտոնազրկվելու մասին կառավարության հրամանին նրա ընդդիմանալը։ «Այլ և պատահեցաւ գործ ինչ այսպիսի։ Որպէս սովորութիւն է օսմանցւոց ազգին, որ զհին փաշայն մանզուլ առնէն և ի տեղի նոցա ի դրանէ թագաւորին նոր փաշայ առաքեն. այսպէս և զՎանայ քաղաքի հին փաշայէն մանզուլ արարին, և նոր փաշայի մուսալիմ (տեղակալ) ուղարկեցին ի Վան ի դրանէ թագաւորին։ Իսկ Հյուսէյն աղայն և հին փաշայն միաբանեալ ոչ ընկալան զեկեալ մուսալիմն նոր փաշային, այլ յետս դարձուցին ի Ստամբօլ»[84]։ Ապստամբներն հարձակվում են Վարագա վանքի վրա և կողոպտում վանքի հարստությունները։ Ի վերջո, մի քանի տարի տևած ապրստամբությունը պարտություն է կրում, իսկ վանքի հարստությունները վերականգնվում են հայ մեծահարուստ խոջաների կողմից։

[84] Առ. Դավրիժեցի, էջ 494—518։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ջալալիների ապստամբությունների բնույթը. պարտության պատճառներն ու հետևանքները։

Կարա Յազըջիի, Դելի Հասանի, Կալենդար օղլիի, Ջանփոլադի, Աբազա փաշայի և այլոց գլխավորած շարժումներն ըստ էության ունեցել են բարդ ու բազմերանգ բնույթ։ Շոշափելով շարժումների մասնակիցների հիմնական զանգվածների սոցիալական կազմի ու նրանց առաջ դրված խնդիրների հարցը, ուսումնասիրության ընթացքում եկանք այն եզրակացության, որ այդ շարժումները կարելի է բաժանել երեք էտապների։ Այդ երեք էտապներում շարժումները դրսևորվում են յուրահատուկ ձևով, արտահայտելով հասարակության այս կամ յան խավի, ու երբեմն մի ամբողջ ժողովրդի հետամտած նպատակները։ Այդ էտապները ընդգրկում են ա) 1598—1608 թթ. (Կարա-Յազըջիի, Դելի Հասանի, Կալենդար օղլիի ու այլ մանր ֆեոդալների գլխավորած ապստամբությունների շրջան)։ Այս էտապում Փոքր Ասիայի և մանավանդ Արևմտյան Հայաստանի աշխատավոր բնակչության համար թուրք-պարսկական պատերազմների, ջալալիների ապստամբությունների հետևանքով ստեղծվում են ողբերգական վիճակ. բ) 1608—1610 թթ. ջալալիների ապստամբությունները ծավալվում են Արևմտյան Հայաստանի, Փոքր Հայքի հարավային ու հարավ-արևմտյան շրջաններում, ինչպես նաև Սիրիայում, Լիբանանում ու Միջագետքում։ Այս էտապում օսմանյան ֆեոդալների լծի դեմ դուրս են գալիս մի շարք նվաճված ժողովուրդներ, և նախ և առաջ քրդերը, գ) 1622—1628 թթ.—Աբազա փաշայի գլխավորած ապստամբության ժամանակաշրջանը։ Ապստամբությունը այս անգամ էլ ծավալվում է Արևմտյան Հայաստանում ու Փոքր Հայքում, սակայն, համեմատաբար քիչ չարիք է պատճառում հայ աշխատավոր զանգվածներին։

Երբեք էտապներում էլ ջալալիների շարժումները սուր սոցիալական հակամարտությունների արդյունք են և շեշտված ձևով իրենց վրա կրում են դասակարգային պայքարի կնիքը։ Փաստը մնում է փաստ, որ շարժումների մասնակիցների հիմնական զանգվածն եղել է ծանր հարկերից, տուրքերից ու ֆեոդալների կատարած ամեն տեսակի կամայականություններից ծայր աստիճան քայքայված գյուղացիությունը։ Բոլորովին այլ հարց է, թե այդ գյուղացիության մի զգալի մասը կազմում էր դեռևս XVI դարի 60—70-ական թվականներին ապադասակարգայնացված տարրերը (չիֆթբոզաններ, լևվենդներ, սուխտաններ), որոնք վերածվել էին պրոֆեսիոնալ ավազակախմբերի, դառնալով շարիք ու պատուհաս բնակչության գլխին։ Հավանաբար, այս հանգամանքն է դարձել պատճառ այն բանի, որ ջալալիների կողմից ժամանակավորապես գրավված տերիտորիաներում նստակյաց երկրագործ գյուղացիությունը ոչ միայն զանգվածորեն չի անցել ապստամբների կողմը, այլ ընդհակառակը՝ փախուստի է դիմել նրանցից դեպի մայրաքաղաք՝ Պոլիս ու Միջերկրական ծովի առափնյա քաղաքները։ Մինչդեռ ընդհանուր պատմությունից հայտնի է, որ գյուղացիական ապստամբությունների դեպքում, շատ վայրերում գյուղացիները, չսպասելով ապստամբների գալուստին ոտքի են կանգնել և իսկական պատերազմ հայտարարել տիրապետող կարգի ներկայացուցիչներին։ Այդպես է եղել, օրինակ, Ռուսաստանում 1667—1669 թվականներում Ստեպան Ռազինի գլխավորած գյուղացիական ապստամբության ժամանակ։

Արդ՝ որո՞նք են 1598—1608 թվականների շարժումների առանձնահատուկ կողմերը.

ա. Եթե նկատի չունենանք Կարա Յազըջիին Ուրֆայում դաշնակցած Հյուսեյին փաշային, ապա համարյա բոլոր դեպքերում էլ ապստամբության գլուխ են կանգնում «ծառայող» զինվորական դասին պատկանող մանր ֆեոդալները, որոնց մեծ մասը կազմում էին Կերեշտեսի փախստականները («ֆիրարիները»)։ Սրանք հիմնականում պայքարում էին իրենց ավատական տիրույթների ու իրավունքների վերականգնման համար։ Հետևաբար, նրանց համար միանգամայն խորթ է շարժման մասնակից «ստոր ռայաթի» (اراذل رعايا) շահերի պաշտպանության հարցը։ Նրանք լոկ օգտագործում էին գյուղացիներին իրենց նեղ-դասակարգային շահերի համար։

բ. Ո՛չ Կարա Յազըջին, ո՛չ Դելի Հասանը, ո՛չ էլ Կալենդար օղլին երբեք իրենց առաջ խնդիր չէին դրել բռնությամբ տապալել օսմանյան ֆեոդալական հողատիրության սիստեմն ու տիրող կարգերը և գյուղացիությանն ազատել կաշկանդող շղթաներից։ Մինչդեռ Ռուսաստանում Ստ. Ռազինը այսպիսի կոչ է արել գյուղացիներին. «Գործի անցեք, եղբայրներ։ Արդ՝ վրեժ լուծեք բոնակալներից, որոնք ձեզ ստրկության մեջ են պահել ավելի վատ, քան թուրքերն ու հեթանոսները։ Ես եկել եմ ձեզ տալու ազատություն ու փրկություն»։ Հետագայում, Ռուսաստանի գյուղացիության մյուս առաջնորդ Եմելյան Պուգաչովը իր հրատարակած մի շարք մանիֆեստներում խոստանալով հողը, ջուրը, անտառները, բոլոր տեսակի արտադրամիջոցները տալ գյուղացիներին, ազատելով նրանց հարկերից ու տուրքերից—փաստորեն ֆեոդալական հասարակության կործանման խնդիրն էր դնում ընդհանրապես։ Իսկ Կարա Յազըջին, Դելի Հասանը, Կալենդար օղլին ոչ միայն նման խնդիր չեն դրել իրենց առաջ, այլ ընդհակառակը՝ ամեն բոպե պատրաստ են եղել համագործակցելու կառավարության հետ, եթե վերջինից ստանային նեբում և երաշխավորագիր իրենց ավատական տիրույթների վերականգնման մասին։ Գտնվելով պատերազմի մեջ երկու ճակատում՝ Եվրոպայում և Ասիայում, օսմանյան կառավարությունն ստիպված հրաժարվում է ապստամբ ֆեոդալների նկատմամբ կայացրած իր խիստ որոշումներից, և նրանց առավել աչքի ընկնողներին ներում էր շնորհում ու չեզոքացնում նրանց քաղաքական ասպարեզից։ Այդպես վարվեց կառավարությունը Կարա Յազըջիի, Դելի Հասանի ու մյուսների նկատմամբ։ Սակայն ոչ բոլոր ապստամբ մանր ֆեոդալներն էին, որոնք հավատ էին ընծայում կառավարության ներման խոստումներին, նամանավանդ, որ վերջինս գլխատել էր տվել նրանցից մի քանիսին՝ հակառակ նախօրոք տրված խոստմանը։ Այդ իսկ պատճառով, ապստամբությունները տեղ-տեղ նոր պոռթկումներով էին հանդես գալիս, ապրելով մերթ տեղատվության ու մերթ էլ մակընթացության մոմենտներ։

գ. Ջալալիների շարժման առաջին էտապի մյուս առանձնահատկությունը նրա ընդգրկած տերիտորիայի ահռելի մասշտաբն է։ Հաստատ կարելի է ասել, որ այդ ժամանակաշրջանում ջալալիների (նրա հետ զուգահեռ և թուրք-պարսկական զորքերի) կողմից ասպատակվել են Հայաստանի, ի թիվս և Արևելյան Հայաստանի բոլոր շրջանները։ Այդ ասպատակությունները ծայր աստիճան քայքայել են երկիրը և սարսափելի սովի պատճառ են հանդիսացել, սով, որ խլել է հարյուր հազարավոր մարդկանց կյանքը։ Ժողովրդի մի զգալի հատվածը արտագաղթել է երկրից։

1608—1610 թվականներին ջալալիների ապստամբությունների

համար բնորոշն այն է, որ այդ շարժումները ղեկավարում են Թուրք ֆեոդալների կողմից նվաճված մի շարք ժողովուրդների (սիրիացիներ, լիբանանցիներ, քրդեր և այլն) առաջնորդների կողմից։ Հատկապես Ջանփոլադի գլխավորած ապստամբության հիմնական նպատակն է եղել՝ թոթափել Թուրք ֆեոդալների ատելի լուծը։ Ջանփոլադն, ինչպես տեսանք, իր կողմից գրավված շրջանների անկախությունը հռչակեց և կոչ արեց միջերկրածովային մի շարք պետություններին միասնաբար հանդես գալու սուլթանական կառավարության դեմ։ Այսքանով էլ այդ շարժումը, բնականաբար, ուներ առաջադիմական բնույթ։

Շարժման երրորդ էտապը կապված է Աբաղա փաշայի անվան հետ։ Օսմանյան բռնակալ կառավարության ներկայացուցիչների՝ ենիչերիների դեմ ըմբոստացող այդ «բարի» փաշայի ղեկավարած առաջադեմ թվացող շարժումը միանգամայն հետադիմական նպատակներ էր հետապնդում. այն է՝ որոշ բարեփոխությունների միջոցով ամրապնդել ջալալիների շարժումներից ու արտաքին աշխարհում կրած ռազմական պարտությունից ցնցված օսմանյան ֆեոդալական տիրող կարգերը։ Հետևաբար, Աբաղա փաշան, ինչպես և իր նախորդ ու հետնորդ ջալալի ղեկավարներից և ոչ մեկը որոշակի ծրագիր չուներ, որն արտահայտեր աշխատավոր, կեղեքված գյուղացիության շահերը։

Ինչ վերաբերում է ջալալիների ապստամբության պարտության պատճառների հարցին, ապա պիտի ասել, որ պարտության պատճառները թաքնված էին հենց նրա ծագման տարերքում։ Ապստամբության մասնակիցների տարբեր սոցիալական կազմը ու հետևաբար, հետապնդված տարբեր նպատակներն անխուսափելիորեն պիտի տանեին ներքին անհաշտ հակասությունների ու վերջին հաշվով շարժման կործանմանը։

Լինելով օսմանյան ֆեոդալական հասարակության ներքին հակասությունների բարդ պրոցեսի արդյունք, ջալալիների շարժումները մեծապես նպաստեցին Օսմանյան կայսրության հզորության անկմանը։ Այդ շարժումներից հետո ընդհուպ մինչև նորագույն ժամանակաշրջանն էլ Թուրքիան մնաց ֆեոդալիզմի բարբարոսական աստիճանի վրա գտնվող աշխարհի ամենահետամնաց երկրներից մեկը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) Ձեռագիր աղբյուրներ

Ցանկ ՀՍՍՀ Մ. Մաշտոցի անվան պետ. Մատենադարանի օգտագործված ձեռագրերի (համարական հերթականությամբ)։

1282	4515	7744
1354	4692	7786
1875	4912	7816
2039	5057	8104
2672	5345	9222
3178	5675	
3843	6093	
3872	6273	

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի արխիվային ֆոնդում պահպանված Մեսրոպ Մագիստրոսի (Մեսրոպ Տեր-Մովսեսյան) ձեռագիր նյութերը, որոնց թղթապանակների համարները նշված են աշխատության համապատասխան էջերում։

բ) Տպագիր աղբյուրներ

Ազարիա Սասնեցի. Որդ ի վերայ հարուածոց արևելեան գաւառացն և աշխարհին Հայոց ի ձեռաց ճելալեանց, «Հանդէս ամսօրեայ», 1936։

Ալիշան Ղ., «Այրարատ», Վենետիկ, 1890։

Ալիշան Ղ., «Հայապատում», Վենետիկ, 1901։

Առաքել Դավրիժեցի. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Դողթան գաւառի սկսեալ ի ՌԾԱ թուականին հայոց մինչ ի ՌՃԺԱ թ., Վաղարշապատ, 1896։

Գրիգոր Դարանաղցի. Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ (հրատ. Մեսրոպ Նշանյանի), Երուսաղէմ, 1915։

Երեմիա Չելեբի. Պատմութիւն համառօտ ԳՃ տարւոյ Օսմանցոց թագաւորացն որ սուլթան Օսմանէն մինչև այս սուլթան Մուհամետս ԺԹ. թագաւորք են, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1675, էջ 2ա—174ա։

Զաքարիա Քանաքեռցի. Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն, հատ. Բ, Վաղարշապատ, 1870։

Լալայեան Ե., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, պրակ I, Թիֆլիս, 1915։*
Հակոբ Բաբուկենց, *Ողբ ի վերայ Եւդոկիա քաղաքին՝ որ այժմ ասի Թոխաթ, զոր ոմն անօրէն Տելու Հասան ասեն որ եկաւ, այրեաց և աւերեաց զաշխարհն (տե՛ս Ղ. Ալիշան, «Հայապատում», մասն Բ, Վենետիկ, 1901)։*
Հակոբ Կարնեցի, *Տեղագիր վերին Հայոց, յիշատակարան ժէ դարու (հրատ. Կ. Կոստանյանց), Վաղարշապատ, 1903։*
Հովհ. Հակոբյան, *Ուղեգրություններ, հատ. Ա, Երևան, 1932։*
Մանանդյան Հ. և Անտոյան Հ., *Հայոց նոր վկաներ, գիտական հրատ., Վաղարշապատ, 1903։*
«Մաճառ ժամանակագրություններ», *13-րդ, 18-րդ դարերի, կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. I, Երևան, 1951, հատ. II, Երևան, 1956։*
Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., *Վրաց աղբյուրները Հայաստանի մասին, հատ. III, Երևան, 1955։*
Սարգսյան Բ., *Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, հատ. I, Վենետիկ, 1914 և հատ. II, Վենետիկ, 1924։*
Սիմէոն Լեհացի, *Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն (հրատ. Հ. Ակինյանի), «Հանդէս ամսօրեայ», 1934, թիվ 3—4 և 1935, թիվ 7—9։*
Ստեփանոս Թոխատեցի, *Ողբ և ոտանաւոր տաղ ի վերայ Եւդոկիա մեծի քաղաքին որ այժմ Թոխաթ ասի, զոր անօրէն և անհաւատ Տելու Հասան Ղարայ Եաղրճին զալի և ճելալի յայտնեցաւ, և զերկիրս Հայոց և Հոռոմոց յՈւռհայոց մինչև ի յՈւսկուտարան՝ ծովեզերօք և բոլորօքն հանդերձ էրեց և աւերեց, թալանեց և գերեց, զբազումս սպանեց և զշատս փախոյց, զոր ես Ստեփանոս Թոխաթեցի էրեցս զորն աչօք տեսի և զորն ականջօք լուայ, և զսակաւ բանս ասացի անյարմար գոլով (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Բ, է. 605—608)։*
Սիմէոն Կաթողիկոս, *Ջամբռ, Վաղարշապատ, 1870։*
Սրվանձտեան Գ., *Թորոս ազբար, հատ. II, Կ. Պոլիս, 1888։*
Տաշյան Հ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895։*
Փափազյան Հ., *Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, Երևան, պրակ I, 1956, պրակ II, 1959։*

գ. Թուրքերեն աղբյուրներ

Aşıkpaşazade, Die altosmanische chronik des Aşıkpaşazade auf Grund mehrerer neuendeckter Handschriften, von neuem herausgegeben von Friedrich Giese. Leipzig, 1929.

Аграрный строй Османской империи XV—XVIII вв., документы и материалы, составление, перевод и комментарии А. С. Тверитоновой, Москва, 1963.

Ayni Ali, Kavanin-i al-i Osman ve hulasa-i mezamin-i defter-i divan. Istanbul, 1280 (1863).

Avni Omer Efendi, Kanun-i osmani mefhum-i defter-i hakani, Belleten, 1951, c. XV.

Barkan Omer Lütfi, XV ve XVI inci asırlarda Osmanlı Imperatorlugunda ziraî ekonominin hukukî ve malî esasları, I cilt, kanunlar. Istanbul, 1945.

Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (16—17-րդ դդ. կանոնադրություններ), թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Զուլալյանի, Երևան, 1964.

Gökbilgin M. Tayyib. XV—XVI inci asırlarda Edirne ve Paşa livası. Vakıflar—mülkler—mukataalar. Istanbul, 1952.

Husamuddin Huseyn Amasyalı Abdizade, Amasya tarihi, Istanbul, 1327 h. (1935) c. I—IV.

Kâtip Çelebi, Fezleke-i tarih, c. I—II, Istanbul, 1286—1287 (1869—1870).

Kâtip Çelebi, Cihannuma, Istanbul, 1145 (1739).

Kâtip Çelebi, Düstür-ul-amel fi islah-ul-halal, Istanbul 1280 (1863).

(Koçi Bey). Koçi Bey risalesi. Istanbul, 1277 (1860).

Koçi Bey risalesi. Şimdiye kadar elde edilememiş olan tarihi eserin tamamı. Eseri bulup tahsiye eden Ali Kemali Aksüt, Istanbul, 1939.

Смирнов В. Д., Кучибей Гемюрджинский и другие османские писатели XVIII в. о причинах упадка Турции, СПб, 1873.

Тверитинова А. С., Второй трактат Кочибея. Ученые записки института востоковедения, том VI, Москва—Ленинград, 1953.

(Evliya Çelebi). Evliya Çelebi seyahatnâmesi. c. I—10, Istanbul, 1896—1938.

(Evliya Çelebi). Evliya Çelebi seyahatnâmesi, hazirlayan Reşat Ekrem Koçu, c. I—IV, Istanbul, 1938—1949.

(Hammer J.). Narrative of travels in Europe, Asia and Afrika in the seventeenth century, by Evliya Efendi. Translated from the Turkish by the ritter Joseph von Hammer, vol. I—II, London, 1834—1850.

(Naima Mustafa). Tarih-i Naima. c. I—VI, Istanbul, 1280—1863.

Naima. Annals of the Turkish empire from 1591 to 1650 of the christian era Translated by Ch. Fraser, I, London, 1832.

(Selâniki). Mustafa Selâniki. Tarih-i Selâniki, Istanbul, 1281 (1865).

Solakzade Hamdemi, Tarih-i al-i Osman, Istanbul, 1297 (1879).

Սաֆրաստյան Ա. Խ., Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատ. 1—2, Երևան, 1961, 1964 թ.

Пространный реестр Гюрджистанского вилайета. Турецкий текст, издал, перевел, исследованием и комментарием снабдил С. С. Джикия, кн. I, текст, Тбилиси, 1947.

դ. Աղբյուրներ այլ լեզուներով

Brosset M., Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX siècle, SPB 1849—1858.

Chardin, Jean de, Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, tome I—IX, Paris, 1811—1820.

Chéréf—nameh ou fastes de la nation kourde par Chéréf-Ouddine, traduits et commentés par F.B. Charmoy, vol. I—II, SPB, 1868—1875.

Conybeare Fr. C., A catalogue of the Armenian manuscripts in the British Museum, London, 1913.

(De la Croix). Etat général de l'empire ottoman. Par un solitaire turc. Trad. par M. de la Croix, vol. I—3, Paris, 1695.

Della Vallé, Pietro, voyages, Rouen. 1745.

Ebasci Elias, Etat actuel de l'empire ottoman, tome I. Paris, 1792.

Febure Michel, L'état présent de la Turquie ou il est traité des vies mœurs et coutumes des ottomans et autres peuples de leur empire, Paris, 1675.

Couvea, Antoine Fr. de, Relations de grandes guerres et victoires obtenus par le roi de Perse de Cha Abbas contre les empereurs de Turquie, Mahomet et Ahmed son fils. Trad. de l'origine portugais. Rouen, 1646.

Mans, Raphael du, Estat de la Perse en 1660, editée et annotée par Ch. Schéfer, Paris, 1885.

Tavernier J.B. Les six voyages de Jean Bapiste Tavernier en Perse et aux Indes, Paris, 1679, La Haye 1713.

Tournefort, Pitton de. Relation d'un voyage du Levant, vol. I—III, Lyon, 1717.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Հայերեն

Ալպոյաճյան Ա., *Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Կահիրէ, 1952։*

Անասյան Հ. *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., Երևան, 1961։*

Անասյան Հ., *Թուրքական տիրապետությունը Հայաստանում XVII դարում, ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», հաս. գիտ., № 5, 1951։*

Ավդալբեկյան Թ., *Գլխահարկը Թուրքիայում 17—18-րդ դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1959։*

Լեո, *Հայոց պատմություն, հատ. 3-րդ, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., Երևան, 1946։*

Մովսիսյան Ն., *Ջալալիք կամ ճելալիներ, Սիոն, 1958, էջ 152—56։*

Հովհաննիսյան Աշ., *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., Երևան, 1959։*

Ոսկյան Հ., *Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953։*

Ոսկյան Հ., *Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940։*

Չամչյան Մ., *Պատմութիւն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1783։*

Օրմանյան Մ., *Ազգապատում, հատ. Բ, Կ. Պոլիս, 1914։*

բ) Ռուսերեն

Гордлевский В. В., Государство сельджукидов Малой Азии, Москва—Ленинград, 1941.

Гордлевский В. В., Внутреннее состояние Турции во второй половине XVI века. Труды Московского института востоковедения, сб., № 2, Москва, 1940.

Гордлевский В. В., Из жизни цехов в Турции. К истории ахи. Избран. соч., т. I, Москва, 1960.

Гордлевский В. В., Из истории водопользования в Конии, Записки ИВАН, Ленинград, 1934 г.

Ибрагимов Г., Крестьянские восстания в Турции в XVI—XVII вв., Византийский временник № 7, Москва, 1953 г.

Крымский А., История Турции и ее литературы, т. I (от возникновения до начала расцвета), Москва, 1916 г.

Крымский А., История Турции и ее литературы от расцвета до начала упадка, Москва, 1910 г.

Новичев А. Д., Крестьянское восстание в Турции в начале XV века, Проблемы востоковедения, 1960, № 3.

Новичев А. Д., К вопросу о феодальных отношениях и положении крестьян в Турции во второй половине XV века, Уч. записки ЛГУ, № 249, 1961 г.

Новичев А. Д., История Турции, эпоха феодализма (XI—XVIII века), Ленинград, 1963 г.

Папазян А. Д., Аграрные отношения в Ереванском ханстве в XVIII веке. Автореферат, Ереван, 1954 г.

Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI нач. XIX вв., Ленинград, 1949 г.

Рахмани А., Тарих-и алем арай-и Аббаси, как источник по истории Азербайджана, Баку, 1961 г.

Смирнов В. Д., Очерки истории турецкой литературы, СПб, 1901 г.

Смирнов Н. А., Россия и Турция в XVI и XVII вв., Москва, 1946 г.

Тверитинова А. С., Восстание Каря-Яджи—Дели Хасана в Турции, Москва, Ленинград, 1946 г.

Тверитинова А. С., К вопросу о крестьянстве и крестьянском землепользовании в Османском империи (XV—XVI вв.) УЗИВ, том XVII, Москва, 1959 г.

գ) Այլ լեզուներով

Akdağ M. Osmanlı Imperatorlugunun kuruluş ve inkişafı devrinde Türkiyenin iktisadi vaziyeti. „Belleten", c. XIII, 1942, № 51, 55.

Akdağ M. Türkiyenin iktisadi ve ictimaî tarihi. I c. 1242—1453. Ankara, 1952.

(Altınay) Ahmed Refik. Osmanlı devrinde Rafizilik ve Bektaşilik. Istanbul, 1932.

(Altınay) Ahmed Refik, Osmanlı devrinde zorbalar, Istanbul, 1932.

(Altınay) Ahmed Refik, Anadolu'da Türk aşıretleri, Istanbul, 1932.

Babinger F. Die Geschichtsschreiber der Osmanen und ihre werke. Leipzig, 1927.

Belin M. Essais sur l'histoire économique de la Turquie, d'après les écrivains originaux. „Journal asiatique" vol. 3—5, 1864.

Belin M. Etude sur la propriété foncière en pays musulmans, et notamment en Turquie. „Journal asiatique" vol. XVIII, XIX, 1873.

15—206

Belin M. Du régime des fiefs militaires dens l'islamisme et principalement en Turquie. „Journal asiatique", vol. XV, 1870.

Cahun L, Introduction à l'histoire de l'Asie, Paris 1896.

Çark Y. Türk devleti hizmetinde Ermeniler 1453—1953, Istanbul, 1953.

Danişmend I.H. Izahli Osmanli tarihi kronolojisi, c. 1—4. Istanbul, 1947—1955.

Djevad bey, Etat militaire ottoman depuis la fondation de l'empire jusqu'à nos jours, Paris, 1882.

Hammer J. Geschichte des Osmanischen Reiches, Bd 1—10, Pest, 1827—1833. Zweite Ausgabe Bd. 1—4, Pest, 1824—1835.

Hammer J. Histoire de l'empire ottoman, traduit de l'allemand, vol 1—XVIII, Paris, 1835—1843.

Hammer J. Des Osmanischen Reiches Staatsverfassung und staatsverwaltung, Bd. 1—2, Vienne, 1815—1816.

Heyd W. Histoire du commerce du Levant, t. 1—II, Leipzig 1923.

Inan Afet, Aperçu général sur l'histoire économique de la Turquie, Ankara 1943.

Jorga N. Geschichte des Osmanischen Reiches in Europa, Bd 1—V, Gotha 1902—1913.

Jonquière de la, Histoire de l'empire ottoman, t. 1—II, Paris 1914.

Karamursal Ziya, Osmanli mali tarihi hakkinda tetkikler. Ankara 1940.

Lavallée Théophile. L'histoire de l'Empire ottoman, depuis les temps anciens jusqu'à nos jours, Paris, 1855.

Lamartine A. Histoire de la Turquie, t. 1—VIII, Paris 1854.

Мутавчиева Вера. Аграрните отношения в Османската империя през XV—XVI вв., София, 1962.

Osson d'Ignatius Mouradgea. Tableau général de l'Empire ottoman, vol. 1—7, Paris, 1788—1824.

Pakalın M.Z. Osmanli tarih deyimleri ve terimleri sözlügü, c. 1—III, Istanbul, 1946—1955.

Tarih, c. III, yeni ve yakin zamanlarda Osmanli—Türk tarihi, Istanbul, 1931.

Uzunçarşılı I.H. Osmanli devleti teşkilâtlarindan kapukulu ocakları, c, 1—II, Ankara, 1943—1944.

Uzunçarşılı I.H. Osmanli tarihi, c. 1—IV, Istanbul, 1947—1959.

Uzunçarşılı I.H. Osmanli devleti teşkilâtına medhal, Istanbul, 1941.

Uras Es'at. Tarihte Ermeniler ve ermeni meselesi, Ankara, 1950.

Wittek Paul, Devshirme and sharia, Bulletin of the school of oriental and african studies university of London, vol. XVII, part 2, London, 1955.

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԵՍՐՈՊ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ (ՄԱԳԻՍՏՐՈՍ)

Պատմության ինստիտուտի արխիվ, գ. № 30, էջ 102։ ՌՉԷ—1608, գրիչ՝ Սրապիոն սարկավագ Բաբերդացի, ի քաղաքն Պոնտոս, որ է Տրապիզոն

...Քանզ որ ես ազգմանէ շարին բնակարան բանսարկուին մեծ գազան և չար վիշապն. շոմն կատազի և երկրորդ Ըռափսակն. պիղծն Ալիփաշան Ճանփօլատին որդին որ Ժողովեաց բաշում զսրս կիր. հետևակ սակման և քան դայս ուելի և ոչ պակաս զինուորս ձիաւոր և տիրեաց բռնութեամբ երկրին Տիրերայ, որ Հայաստան. և բազում քաղաքաց և գեղօրէից աւեր էած, զոր թէ գրեաք մի քան միջոկ չէ բաւական ասելոյ թղթոյ։ Որև ի սոյն շարէն ապստամբիլն շարն և Խանան տատանատիկք զոա պիղծ Բաւուլն եւ եկեալ ժի հեծելօք ի յերկիրն Կիլիկեցոց և առեալ զԱտանայ եւ զԹարսիս, զՍիս, զՂարս և բազում աւէր էած և եճ արու մատաղ տղայք գերի տարաւ ի Ատանոյ. և անտի գիմեալ ի վերայ երկրին Մարաշոյ աւերելով և եկեալ հասաւ ի Սեբաստիայ։ Եւ անտի եկեալ ի Եկեղեաց գաւառն, և բազում աւէր էած երկիցս և երիցս. որ և սովորեալ էր պիղծ արիւնարբուն որ թոյլ եւ Աստուած փասն ծովացեալ մեզաց մերոց։ Եւ այլ բազում աւերեաց աշխարհի մինչև ի մեծ ծովեզերն Եփեսոս ի Զմորին։ Եւ անտի դարձեալ եկն ի Կոնիան ի Գաղաթիայ, ի Կասատամոնի և անտի ի մեծն Պոնտոս Տրապիզոն և աշրեաց զքաղաքս դայս. և գնաց կրկին ի Երզնկան, զոր տէր Աստուած մեր ոչ կամեցաւ զկորուստ մարդկան, այլ նստուր զօրութիւն այնոր Մուրատ փաշային, որ եկեալ բազում զօրօք էառ զմեծ գուսդն զՃանփալատի որդին և անխնայ կոտորեաց և զինքն փախստական արար և ամենայն տունն բնաջինջ արար և այլ բազում կոտորոս արար և յերկիրս Տիրերայ և անտի եկեալ դիմեաց ի վերայ շարին որ Բաւուլ ասէին։ Եւ եկեալ եհաս ի մեծ դաշտն Տարօնոյ և կոտորեաց զնոսա անխնայաբար, փախուց զսակաւս մինչև ի զղլբաշն, և ինքն քաջ ծերն, որ Աստուած զօրացուց նստաւ ի մեծ դաշտն Բաբերդու և զօրս արձակեաց այս և անդր. և զբազումս գտեալ ի ապստամբ պարոնանցն և փաշանեբուն բերեալ սուր եդ ի վերայ եսպան և զոր զանտէին, բրէին և սպանէին և արար բուն բերեալ սուր եդ ի վերայ երկրի։ Եւ դարձաւ խաղաղութեան ի Ստամբուլ առ թագաւորն իւր, որ զօրացնողն Քրիստոս երկար ժամանակ տացէ սուլտան Ահմատին և իւր մեծ վեզիրին, Մուրատ փաշային, ամէն։

ՄԱԳԻՍՏՐՈՍ

Գործ № 30, էջ 91։

1601—1603, գրիչ՝ քաջ քարտուղար Հակոբ, սկսել է գրել Սեբաստիայում 1601 և ավարտել է Խիզանում 1603 թվին։ Հիշատակարանում պատմում է ոմն Ղարա Եաղիբի անուն ի Սեբաստիա մեծամեծ ոճիրս գործեաց։ «Ասելի քան ԻԹ այր չարդեաց եւ սրախողխող արար. և ութ հարիւր անմեղ տղայս ի Հայոց և ի Հոռոմոց գերի վարեաց և յետոյ զքաղաքն ամենայն հրով այրեաց... Իսկ ի միւս ամին եղբայր նորին Հասանբեկ առաւել քան զԵաղիբին ելեալ բազում զօրօք ի վերայ քաղաքին Եւդոկիոյ և բազում ոճիրս և չարիս գործեաց։ Ահա թէ ինչու Մարգիս կրոնավորը փախչում է և ձեռագիրն ավարտում է Խիզանում։

1602—1604

ՆԱՐԵԿ

Երևան, 1875

Գրիչ՝ Մելիքսեթ եպիսկոպոս Սեբաստացի

վայր՝ Սեբաստիա

229բ

...Զի ի յայսմ ժամանակի որ վասն ի բազմանալոյ անաւրէնութեան մերոյ և ի թոյլ տալոյն ամենազաւրին Այ եւ ժանտաբարոյ և պիղծ թիւնաւոր մի տաճիկ Ղարայ Ագիճի անուն ի հիւսուսոյ կողմանէ ի եկն ի վերա Սեբաստիա քաղաքին։ Եւ տէրն Սեփասթիու բերթին Մահմատ փաշան դեռ մանուկ գոլով երկեաւ ի նմանէ և զողեցաւ բազում և անթիւ հեծելաւք ի մէջ բերդին և ամրացան ինքեանք և մատնեցաւ քաղաքն և երկիրն մարդով և անասնով, ընչուքն և ապրանաւքն ի ձեռն արեանարբու գազանին որ անխնայ կոտորեաց բազում քրիստոնեայս և զմանկունս նոցա գերի տարեալ և հանդերձիւք զարդարէին և ի սուրբ հաւատացն մերկ արարին։ Եւ բազում աւուրս նստեալ յեղբ քաղաքին այրեաց և աւերեաց զգեղեցկայշէն քաղաքն և զաւանքն մինչ զի ամայի մնաց Սեփասթիայ թիմովն ու վիճակովն բազում ժամանակաւ։ Բայց զոհանամք զԱյ զի յետ սակաւ ժամանակի եղև կրկին խաղաղութիւն որ ցրուեալ և ճապաղեալ ժողովուրդն հաւաքեցաւ ի թվին ԹՃԾԳ (1604), ապա դմէկ սմար հացն ի հազար աւիմանի կերաք, փառք Այ։

1604

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՍԷՈՒ ԵՎ ԱՐԻՍՏԱԿԻՍԱՅ

Երևան, 1282

Գրիչ՝ Բարսեղ վարդապետ

վայր՝ Ծոպատ աճապատ, յերկիր Մոկաց

261բ *...Ի դառն և ի վշտալից ժամանակիս ի սասանման և ի վրդովման ներկայիս, որ շուրջանակի սաստկագին երկիւղիւ պաշարեալ կամք՝ ի պարսից ի մարաց և յօսմանականացն։ Որ ի սոյն ամի շարժեցաւ արքայն պարսից շահ Աբասն յԱսպահանայ և եկն ի վերա Դաւրէժ Շահաստան քաղաքի՝ որ ասկէ քարն կոչի, կոտորեաց բազում զարս քաղաքին և առ զնա։ Եւ յետ այնորիկ եկն ի Ջուղայ և ի Նախչաւան՝ տիրեաց զնոցա և եհաս ի Մեծ Հայք՝ ի գաշան արարատեան ի քաղաքն Երեվան՝ պաշարեաց զնա ամիսս ինն, և բազում և ահագին պատերազմն պատերազմեցան աբուրաքիրիքն և օսմանիքն ընդ զօրացն արևելից յետ այնորիկ պարտեալ օսմանիքն և մատնեցան ի ձեռս պարսից վասն ոչ լինելոյ նոքա աւժանդակութիւն ի մեծ արքայէն Կոստանդնուպալսի որ Հոնքարն կոչի։ Եւ այսպէս կայ աշխարհս հայոց ի մէջ երկուց և մանաւանդ երից սուսերաց մերկացելոց վերոյ ասացեալ ազգացն մահմետականաց։*

Յետ այսքան անցիցս աղետից, զկնի սակաւ աւուրց, ել ի Կոստանդնուպալսէ հրամանաւ հոնքարին, որ սուլտան Ահմատ վերանայնեն մեծ զարաւարն որ Ջղալ օղլի կոչի, անհուն և անհամար զարօք, եկն եհաս ի Կարնոյ որ

262ա *է Արզարում քաղաք։ Եւ պարսիցն լրտեսեալ զորքանութիւն զաւրացն տաճկաց իմացեալ թէ ոչ կարէին զդէմ ունել վասն որոյ զլխավորեալ ամաւթով նկուն դարձան առանց պատերազմելոյ և դիմի հարկանելոյ։ Բայց զոճիրս չարութեան և զաւ և զաւար գերութեան զոր պարսիկք ընդ հայք արարին, առաւել է քան զբաբելացւոցն առ իսրայելացիսն, զոր ոչ որ կարէ մի ըստ միոջէ պատմել և կամ ընդ գրով արկանել, զի սկսեալ ի տանէն Շիրակայ մինչև ի Ջուղայ և տունն Գողթնեաց զհայք բնաջինջ արաբեալ տարեալ հանին ի խորին պարսկիս, ի Շօշ և յԱսպահան կաթուղիկոսով և եպիսկոպոսօք, քահանայիւք և ժողովրդովք, արամբք և կանամբք, ընչիւք և զոյիւք և թողին զդաշան Արարատեան և զնախչաւան նահանգօքն և զփարթամն Հոխութեամբ զՋուղա շրջակայիւքն ամայի ու թափուր ի բնակչացն։ Եւ ինքն չարայուշն Աբաս նստեալ ի Դաւրէժ ձմեռեցաւ և Ջղալ օղլին սարդարն և զօրավարն օսմանցի ազգին դարձաւ ի Վան ի յամուրն Շամիրամակերտի ձմեռել, դեռևս զապագայն ոչ գիտեմք, աստուծոյ միայն է գիտելի որ տէրն է ժամանակաց։*

1604

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան, 5345

Գրիչ՝ Զաքարիա

վայր՝ Քաղակ գիւղ

ա.

206բ

Քրիստոս գթած և ողորմած
Քրիստոնէից տեր և աստուած
Զողորմութեան քո դուռն բաց
Լուր տառապեալ քրիստոնեացս
Յամէն դիմաց եմք մենք նեղաց։
Եւ ամէն ազգաց կոխան եղած,
Եկեղեցիք բազումք քակած.
Բազում խաչեր է խորտակած։

Գիրք ։ աւետարան գերի տարած
Կանայք և տղայք գերի վարած
Դիշեր ցերեկ վարանամք
Ահաբեկեալ և զարհուրած
Եւ ոչ ունիմք հանգստութիւն
Այսպէս ի կամք տարակուսած
Եւ այսպէս եմք ի սարտարոս
Որպէս գնաւսն ի մէջ յալեաց
է սայ ամէն ի մեղաց
Որ բարկացաւ հայոց ազգաց։

Ի թվականիս Հայկազան տասմարիս ի ՌԾԴ (1604) ամին... ի ժամանակիս յորում շահ Ապաս արքայն պարսից եկեալ պաշարեաց զԹարւէզ և կոտորեաց զզաւրս տաճկաց։ Քանզի գնացեալ էին Ալի փաշէն և ամենայն զաւրս տաճկացն ի Թարիզոյ ի Նախջ(աւանայ) ի յԵրևանայ ի վերայ Ղազիրէկին և Սալմաստ և ի դառնալն նոցա զամենեսին զնոցա սրախոխող արարեալ և բազումք ի քրիստոնէիցն անդ կոտորեցին և առաեալ զքաղաքն Թարւէզ և անցեալ գնաց էառ գնախիշևան և անցեալ դնաց ի յԵրևան և պաշարեաց զնա ամիս Թ և հարկի կացուցեալ էառ զքաղաքն, բայց չէ փոյթ երկարել մեզ զպատմութիւն մարտի պատերազմիս այսորիկ. այլ եկեսցուք ի Թարվիս ասասցուք փոքր ի շատէ դեղութիւն և զչարչարանս քրիստոնէից ազգիս, Ա՛խ զինչ եղև ընդ մեզ. քանզի ել հրաման յարքայէն թէ ով որ յաժարեսցի բնակիր աստի կացցէ և ով որ ոչ յաժարեսցի երթիցեն իւրաքանչիւր տեղիս իւրեանց։

201բ Յայնժամ բազումք ի հայոց և ի տաճկաց յուղի անկեալ գնացին ի Հանապարհ զաւուրս Բ։ Իսկ անաւրէն պարոնայքն քուրդ ազգին զամենեսեան զնոսա դայլս սպանեցին և զկանայսն և զտղայսն գերի արարին և զայն տեսեալ խնդա և ուրմելի ազգս հայոց յահ և յերկիւղի կացաք ի տուէ և ի գիշերէ յային հանապազ հայրք ի վէրս դաւակաց իւրեանց միշտ և հանապազ վտարանգեալ կային թէ զինչ լինիցիմք։ Յայնժամ ողորմած և մարդասէր աստուածն որ ոչ կամի զմահ մեղաւորին արկեալ զութ ի սիրտ արքային և ետուր հրաման հայոց, թէ հայք ազատք են, բայց երթայոց ումէք հրաման չկայ, թող որ կայցեն աստի մինչև ի գարուն և յորժամ ի մարտ ամիսն մտանիցեն ամենեքեան ելեալ գնասցեն ի Շաւշ քաղաքն որ ի Ասպահան։ Յայնժամ տառապեալ ազգս հայոց զայն լուեալ ուրախացաք յուրախութիւն մեծ և փառս տուեալ Աստուծոյ աւրհնեցաք զարարիչն մեր և յորժամ եղև գարուն ել հրաման ի յարքայէն զի ազգս հայոց թե ասցեն զամենեսին զմեծ և զփոքր և տրին նաֆթաղայ և բերին ուղտ և տաւարք թաղաւորական և վեր առեալ զազգս հայոց բերին ի Ասպահան։ Բայց զազգն պարսից ոչ սիրեն զազգս մեր, այժմ այսպէս եմք և զապադայն աստուծոյ միայն է գիտել։

Այժմ ասասցուք թէ զինչ եղև առ ազգս հայոց։ Զի ել հրաման յարքայէն զի երթիցեն և գերեսցեն զտունս հայոց։ Եւ գնացեալ գերեցուցին։ Զկարս. զՇիրակունիս, զԲասէն, զԿաղզուան, զԱղջաղալէն, զԱլաշկերտ, զԴաւդա, զԽնուս, զՄալազկերտ, զԱխբիլիս, զՏումանիս, զՁլդիր, զԱրտահան. զԿոչաւ, զՇաքի, զՇրուան, զՇամախի, զբ...նակ, զՓասկեր, զՅուխտիք, զՄամրվան, զԹաւրխուն, զՍպեր, զԹերջան, զԿամախ, զՎան, զԱրճէշ, զԱրծկէ, զԲերկրի, զԱրիշատ, զԵրևան, զնախշլուան, զՋուղայ, զԱղրակ, զՄալամատ և այլ բազում զեաւ և քաղաք, զոր ոչ կարեմք ընդ գրով արկանել։ Զի ի Դայվրեժոյ մինչև ի Թէոդորոպալիս որ Արզրում կոչեն անմարդայրնակ արարին և յԵրևանայ մինչև ի Թարւէզ ԿՌ (60.000) (գ)երի արարին, թող զայլս որ զոմանս սրբայխոխոխ արարին, զոմանս սովալրլուկ, զոմանս գետահեղձ. ոմանք ըրքահեղձ, զոր ոչ կարեմք ի թիւ համարել այլ աստուածն որ ստեղծեալ է նայ բովանդակէ զնոսա և զայս տեսեալ խաւարեալ աչաք մերովք և խորեաց ի սիրտ մեր. և զալարի ազիքն մեր, զի այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Բայց հար չունինք

(Վերջին թերթը պատռված է)։

զում զեաւ և քաղաք, զոր ոչ կարեմք ընդ գրով արկանել։ Զի ի Դայվրեժոյ մինչև ի Թէոդորոպալիս որ Արզրում կոչեն անմարդայրնակ արարին և յԵրևանայ մինչև ի Թարւէզ ԿՌ (60.000) (գ)երի արարին, թող զայլս որ զոմանս սրբայխոխոխ արարին, զոմանս սովալրլուկ, զոմանս գետահեղձ. ոմանք ըրքահեղձ, զոր ոչ կարեմք ի թիւ համարել այլ աստուածն որ ստեղծեալ է նայ բովանդակէ զնոսա և զայս տեսեալ խաւարեալ աչաք մերովք և խորեաց ի սիրտ մեր. և զալարի ազիքն մեր, զի այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Բայց հար չունինք

(Վերջին թերթը պատռված է)։

1606
ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, 5057

Բ.

293ա Նորոգեցաւ սբ աւետարանս ի թվականիս ՌՆԵ (1606) այսմ դառն և նեղ ժամանակիս որ բազում վիշտք և նեղութիւնք եղաւ, հեծելշարժութիւն եղաւ. ուռումն ու կարմիր գթակն վրա մեկ մեկի գնաց բազում աշխարհ աւերեցին։ Յենց աւերութիւն եղաւ ու կոտորումն որ չէ յիշելիք. ի սկզբանն մինչև ցայժմ չէր եղեալ, ահ վայ մեզ Ի բերան որ էնց բաներ տեսանք։ Կարմիր գթակն եկաւ ի վերայ Վանայ բազում կոտորում արաց. հայ և տաճիկ բազում քահանայք, բազում գերիք տարան, որ թիւն ու համարն չիմացանք. և յետոյ Ուռումն հեծել ժողովից բազում, գնաց վրա կարմիր գդակին. Ուռումն որ հասաւ ի Թարվէզն զրոհ տուեալ կուեցան ու Ուռումն փախստական եղեալ եկաւ ասկաւ հեծելով անցաւ գնաց Յամիթ։ Յամիթայ մինչ Թարւէզ կրկին աւերութէն եղաւ. խիստ սով եղաւ. էնց սով եղաւ, որ մեր զմանուկն ուրացաւ. ծէ դրամն. հացն փարէ մ էղաւ. ահ վայ մեզ. դեռն չէր ընկեր ձ(մ)եռն բազումք սովամահ եղան. ծ և ծէ մէկ տապան կու գնեմք. բազումք գազան և կատու կերան. յանցինք եթէ ոմանք մարդու միս կերան։ Այս ամէնը եղեալ վասն ծուլացեալ մեղաց մերոց։

1606
ՅԱՅՍՄԱԼԻՈՒԲ

Երևան, № 4721

Գրիչ՝ Սարգիս Քահանա Հիզանցի
վայր՝ Վան

655բ ...Եւ քանզի եղև աւարտումն սբ զրբիս ի դառն և ի նեղ ժամանակիս՝ յորում նեղիմք ի լուռութենէ ։ ի սաստկութենէ այլազգեաց և յանօրինաց՝ զի կայ ի մէջ աշխարհիս բազում նեղութիւն և պատուհաս՝ սով սաստիկ, սուր անխնայ գերութիւն անորմ աւերումն աշխարհաց և քանդումն զիւղաքէից, կործանումն տանց և շարժումն յերկրէ յերկիր և ոչ դոտանէին բնաւ

հանգիստ։ Զի ի մայրաքաղաքէն Ստամբօլայ մինչև յայս աշխարհս արէք շինութիւն ոչ գտանիր, ոչ ի քաղաք և որ ի գեղ, ոչ ի լերինս և ոչ ի դաշտս։ Եւ է յայսմ տեղիս ամենայն իրաց պակասութիւն, քանզի քիլայ ցորէն Զ (6) կարմիր է. լիտր ալեւրն 6 շահի. լիտր եւղն Դ զոշ. լիտր բոուպն և չամիչն ի կարմիր մի. և այլ ամենայն ինչ նմանապէս սոցա իմացիր, որ հազիւ ի ձեռք անկանի։ Որ բազումք ի սովոյ և ի ցրտոյ մեռանէին ի տունս և ի դուրս. ի փողոցս և ի հրապարակս։

Եւ ի յայսմ աւուրս, յուրբաթի օրս լսեցաք որ ԺԲ ոգի ի մի փութիկայէ ի դուրս բերին՝ մեռեալ և չորացեալ ի սովոյ և ի ցրտոյ ոչ գիտէին զանհաւատսն և զհաւատացեալսն։

Եւ այս ամենայն եղև ի շարժել Բ մեծ թագաւորացն՝ արեւելեան և արեւմտեան։ Քանզի զ ամսոյ յառաջ եկն արեւելեան թագաւորն Շահարաս անուն և էառ բազում քաղաք և երկիր ի բնական հայրենեաց իւրոց մինչև ի Խօշաբայ դաշտն որ է Մահմդունք։ Եւ նստեալ պաշարեաց զամենայն տեղիս։ Մինչև

656ա

որ իմացեալ արեւմտեան թագաւորն սուլտան Ահմատն և առաքեաց զմի ի զօրագլխաց իւրոց Ջղալ օղլի անուն, բազում և անթիւ զօրօք և հետամուտ եղեալ Արզռումու կողմանն և ոչ կարացին հասանել իւրեանց չար ցանկութեանցն, քանզի ամենացեալ էր և ժամանակն անցեալ։ Այլ լեռս դարձեալ Ջղալ օղլին զօրօքն իւրովք ի Վան քաղաք և նստաւ յամուրս Շամիրամայկերտին, մինչ ի ժամանակն գարնանային և ցրուեալ զօրացն սակաւ ինչ առ ինքն մնացեալ անհոգ կային։

Եւ իմացեալ հնարագէտն և շատախելքն Շահարաս արքայն՝ և առաքեաց զԱլահուերտի խանն՝ ի վերա Թշնամւոյն ի Վան քաղաքին և զբազումս ի սոցանէ եսպան և զայլս փախստական արար մազապուրծ և հետամուտ մինչ ի դուրս քաղաքին։ Եւ ինքն Ջղալ օղլին ի նա նստելով փախստեամբ և անցեալ ի մյուս կողմն ծովին, և գնացեալ ի Կարնոյ քաղաքն, որ է Արզրոում։ Եւ ձայն արձակեալ յամենայն տեղիս և ժողով արարեալ զօրաց բազմադ աւելի քան զառաջինն. և եկեալ միւս կողմով ծովուն որ ի քաղաքն է Ռստան դաւառին և հասեալ մոտեցան յանդիման Թաւրէզ քաղաքին։

Իսկ զօրացն պարսից առաջս տուեալ նոցին՝ և յանկարծակի հնարիւ դիմեալ ի վերայ անթիւ զօրացն Հոռոմոց և բազումս ի մեծամեծացն սպանին և շատք գերեցուցին, և զայլս փախստական արարին. և ինքն Ջղալ օղլին՝ թողեալ զամենայն ինչսն թագաւորական խազինայս, զոսկի և զարծաթ, զձիս և զջորիս, զթոր և զարրագանդ, զվրան և զամենայն կահս թագաւորութեան իւրոյ և ի գիշերի սակաւ արամբք մնալով փախստական եղև և եկեալ գնացեալ եհաս մինչ ի յԱմիթ քաղաք, և զայլ առաջիկայն ոչ գիտեմք զինչ լինելոց է՝ բայց միայն քաղցր կամացն և բարերարին Այ, որ նա է օր խնամ տանի ի վերայ բնութեանս ազգի և ազատէ յամենայն վշտաց և նեղութեանց մերոց մանաւանդ զմայրաքաղաքս Վան, զքահանայ և զմեծատունս, զաղքատ և զհարուստ, զայր և զկին, զծեր և զտղայ և ամենայն բնակիչս երկրիս և զաւառիս ես առաւել զպարոն Մէլիք Սարգիսն, որ ետ գրել զսա...։

1607
ԳԱՆԶԱՐԱՆ

Երևան. 2672

Գրիչ՝ Ստեփանոս Քահանայ
վայր՝ Կաֆա

400ա

Ի ժամանակս յոյժ անբարի
Զծովուն յայն գիհն Եազին ունի
Ու ճելալի ասեն յայտնի.
Եւ են յաղթողք ։ անպարտելի։
Երեն մբրկեն զբաղաքնի
Զմանուկ տղայքն առնեն գերի.
Ոսկի ։ արծաթ և զգումաշնի
Զայն թալանեն անյագելի։
Ըզշուրչառներ և զբսգեստնի
Եւ ըզծածկոյթ սուրբ սեղանի
Զիսց ծածկոյթ արին յայտնի.
Եւ զայլս հագուստս ճիվանի։
Զխաչ և զրսկիհ, արծաթ, ոսկի
Այլ սրբութիւնս տաճարի
Զիսց բրախտ շինել տվին
Եւ խնդային վերայ նոցին։
Զրսպանելոց թիւն ոչ ասին,
Կամ փախուցեալ լեռ ։ ի սարին
Ոմանք բաղցած և ծարաւի,
Մերկ և բոկիկ արտասուէին։
Եւ բսպանեալքն ի փողոցին
Շունք և գաղանք զայն ուտէին,
Եւ ոչ որ էր թաղէր զնոսին
Զի սաղմոսին բան կատարին։
Աւերեցին և քանդեցին
Զայն շէն բոլոր բղբաղաքընին
Երէք անգամ կողոպտեցին,
Մինչ ճրուաքաղաս արարին։
Զթոխատ բաղաքն զովելի
Որ կոմանու խիստ էր մաւտի,
Յորում տապան էր Յոհանի
Ոսկերերան վարդապետի.
Շատ գիղարարք չէն, բարելի
Այգով, արտով, պաղչով ի լի
Զբրով առատ բոյս բանջարի.

Եղեմ գրատիրն էր Նրմանի։
Դեռն նման էր Եփրատի
Որ թաղանլու նա անուանի,
Բերէր գերան սիներս շէնքի.
Ձկոռ և ըղիայտրս վառելի։
Եւ ըղմիս դեռն թաղրին միջի
Յամէն պարտէղ նոմաւ ջրրմի.
Եւ ղնեբմակ ջուրրն կրրկնակի
Աղբիւրքն անտի կու բաժանի։
Բաղնիկք և խանք կան գովելի.
Մաքուր ջրրով անընմանի,
Խանութքն շուկայքն բարով ի լի.
Վայ ինձ որ ես անտի ելի։
Վաճառաչանաց էր նէ տեղի.
Ի շորս կողմանց զայրն յայանի.
Մախվէր բեռնով ապուրշումնի
Եւ այլ դիրչ որ բեռնով լինի։
Ելնէր նախշի ապուրշումնի,
Գունդգունաց յամէն ջեղի.
Զաղաղի բան և դեբձանի.
Եկիայ, թավքան վայայ շարի.
Չիվիայ թավքայ պարունճունկնի,
Մուղատ ատմներ ։ այլ զումաշնի։
Այս ամենայն գոր յիշեցի
Ի մի զանէն բեռնով ելնի։
Կայր պեզաստան մինն զրմպէքի
Բազում խանութք ի յիր միջի.
Շատ տոլվաթորք նստեալ կարդի.
Մախեն թրթան և բիսայի։
Գրտակ կարնոցն ի յիր թոլի,
Կարեն տակով արախճընների,
Եւ պազաստան մայլ հրբէի
Մէջն էր զումաշ և շուխանի։
Ոսկերշրնոցն էր գովելի։
Շամայ սպահի պազար նմանի
Կայր շատրուան ի միջի
։ վարպապետայք խանութն ի լի։
Ելնէր աղեկ թաս ու թոփի.
Վարպետարան մեծ կրպղանջի,
Եւ գոյնդոյնք սախտանների,
Եւ այլ բաներ զարմանալի։
Զոր մէկն ասեմ բրմուլմախնին
Զանհաթքարքն և զարուսանին
Սիրտքս կայրի և կրսկրծի
Շատ տնազէն և ծիծաղին։
Հիշեմ ղզվանք սուրբ Աննայի

Բ գիւղի նայ ի միջի,
Լրծքեր բազում կայր գոմշքնի
Պախրէ եղներ ժ (—10) ըն լրծի,
Կովեր, հորթեր այծ ։ ոչխարնի
Մեզուի փեթակ և աղատնի
Աղրեբակունք կայրն ի միջի
Ի չորս բոլորն արտ և այգի։

1621
ՄԱՇՏՈՑ
Երևան, 3872

Գրիչ՝ Մելիքսեդ երեց
վայր՝ Աւրոսի առաքելոց

249ա Բայդ դրեցաւ սա ի թիւն ՌԺ (1621) ի ժամանակս մեծ բարեպաշտին մեծին Մովսէսի և Սարգիս պարօն տէր հոր սրբոյ Առաքելոցին Եւտաթէի և սուրբ առաքելաշնորհ աթոռոյն պարոն տէր Մեսրոպ արքեպիսկոպոսի և ի գանութեան շահ Ապասի։

1621
ԲԺՇԿԱՐԱՆ
Երևան, 8104

Վայր՝ Տիգրանակերտ
գրիչ՝ Յակոբ

4ա ...որ ի յայս դատն և ի նեղ ժամանակիս զրեցաց. վասն ծովացեալ մեղաց մերոց եկն այս ցասումն և պատուհասն ի վերա անմեղ հաւատացեալ քրիստոնէից ի թագաւորութեան սուլթան Օսմանին և մերոյս փաշայութեան Ալի փաշին ի թվին հայոց ՌՀ (1621) և երեսփոխանութեան Զաքարիայ խոճայ Միմէոնին և առաջնորդութեան մերում տէր Բարսեղ քաջ բարեպաշտին... Եւ ի յայսմ ամի ժողովեցան հաւատացեալ քրիստոնեայք և եկին ի քաղաքն Համբա գնացին մինչ և Մալաթիայ դէմ Ալի փաշին առ գանկաս մերկ ու բոկոտամբ։ Եւ ետ գալոյն նորա ի Համիթ դրիստոնեայքն ի հնոն եբեր և ի վաղվան օրին տիւան արար գնացին քրիստոնեայքն ի տիւանն, ասաց քրիստոնէից թէ ինչ կիտէր խարաճ. ասացին Գ (3) Ֆոնլյա կէս, տովլաթի փաշայ, կարողութիւն չունինք խիստ գասուն (—նիշար) ենք և վասն մեղաց մերոց այլվի ատուած թոյլ ետ մեզ։ Անթիւծ հազարաց ազգն տաճկաց ժողովեցան միարան և ասացին փաշային թէ կարող են որ ի տան և ապայ փաշան ասաց գնացէք տվեցէք շահի մի այլ աւելի։ Ու թէ ասէք այսոր պատճառն ինչ է, պատճառն այն է որ մեր մեղքն շատցեր ու զմեզ ի տարտարոս կու պահէ։ Աղաչեմք զողորմածն ատուած որ բանայ զդուռն ողորմութեան ի վերայ հաւատացեալ քրիստոնէից ամէն։

1622

ՄԻԵԱՅԻԼ ԱՍՈՐԻ ԵՎ ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒՉԱՆԴ

Երևան 1867

Գրիչներ՝ Ամիրշահ և Յովանէս սարկաւագք
վայր՝ Ամիր

...Յանի իէ ապն ուրբաթ եկին խափուճիկ ի Կ. Պօլսու բերին Ամիա փաշին // կապա ու ասցին թէ ծառայքն խիստ աղմուկ խռովութիւն արարին զսուլթան Աւսմանը սպանին, զրին ի տեղն սուլթան Մուստաֆան, և այլ շատ մեծամեծք վազիրներ սպանին, զչարն և զբարին աստուած գիտէ զմերշին։

1624

ՏՕՆԱԳՐԱՏՃԱՌ

Երևան 2039

Գրիչ՝ Արիստակես Վ. Խարբերդցի
վայր՝ Կաֆա

Ասանաւոր ասացեալ Արիստակէս վարդապետ.

321բ

Եկայք եղբայրք ամենեքեան
Պատմիմ ձեզ բան յոյժ օգրական
Աշխարհ ամէն վրդովեցան.
Յարժամ սպաննաւ Սուլթան Օսմանն։
Ի վերջին ժամանակիս.
Եւ հայկազեան մեծ տումարիս.
Հայաբերորդ հիթանասնիս
Եւ երրորդի յաւելորդիս։
Մեկ մեծ իշխան մի յայտնեցաւ
Ապագա՝ անուն կոչեցաւ.
Ի Կարնոյ քաղաքէն ելաւ,
Մինչ Ախրլծրխէ ինքն հասաւ։
Բազում զորք զնա պաշարեաց
Մեծ-մեծ թոփերն յորժամ ձգեաց,
Զդուռն և զպրանդիքն ի բաց մերժեաց.
Ախրլծխէ ու ինքն տիրեաց։
Յարժամ նստաւ ի մէջ քաշկին
Արքայանիստ մեծ սարային,
Մրմնետիկքն աղաղակին.
Հրամանաւ Ապագային։
Մի սք զզօք մի զրկեցէ.
Մինչ յետին բնիռնն է՝
Թէ չէ զլուխն առ յիս գայցէ.
Ինչքն և ապրանքն արքային է։
Ապա՝ ինքն հրամայեաց
Մեծ մեծ իշխանքը ժոզ(ով)եաց

Հանդիսարանն եկաւ գնաց,
Եւ ենիչերիքն կոչեաց։
Մեծ գատաստան ինքն առնէր,
Զարքային արիւնն խընդրէր՝
Վրէժխնդիր նմա՝ լինէր.
Զենկիչերիքն կոտորէր։
Որդէս և խորհէր նա՝ կատարէր
Նորա՝ սպառողքն սատակէր.
Ընչիցն ապրանացքն տիրէր.
Ընդ իր եղելոցն շնորհէր։
Վասն այն մեծացաւ, զօրացաւ,
Մէջ աշխարհիս համբաւեցաւ
Զարիւն թագաւորին տասաւ.
Սրտին կամքն կատարեցաւ։
Ինքն Ախրլծխէխու դարձաւ
Բազում ամրոց զարհուրեցաւ,
Մինչև որ Գաղատիայ հասաւ։
Մեծ մեծ խանքրն առ ինքն եկան,
Եւ պարոնայքն ամենեքեան։
Ընդ նմա եղան միաբան.
Թէ ուր է մեծ արքայն Օսման։
Միջին աշխարհն Անգորայն
Եւ Բաբիլոն պարսից արքայն,
Հոնաց աշխարհ թաթար կանն,
Մեր մեղաց պատուհաս յարեան։
Արքայն պարսից Շահ Աբբաս էր
Բազում զօրօք սպասակէր
Իթարելոն գայր հասանէր,
Մեքենայիւք զնա պաշարէր.
Բախճանութեամբ ինքն ճէմէր,
Քաշարին վերա բոզոքէր.
Առիւծ անմահ մոռնչէր.
Զնասա յորմայնս համարէր։
Ի գարնան եղանակին
Տէրունական յիսնէրորդին,
Զթարելոն բաղաքն առին,
Զազգն տաճկաց հալածեցին.
Սասակութեամբ քաղաքն մտին.
Զիշխան նորին ըմբռնեցին,
Ապա՝ զինքն կուրացուցին։
Տայր հրաման զօրաց տաճկին,
Թէ ամէնէքեան ժողովեցին,
Յայսմ հետէ ինձ հնազանդին
Որ ոչիկ ես տամ նոցին։
Արդարութիւն կու համարէր
Էգրարելոն քաղաքն առնէր.

222ա Զքաղդէացիան հնագանդէր
Մինչ ի Մուսուլ իշխան դնէր։
Յորժամ երթա ի Կոնիայ,
Սնաստ նըստեր է Ապաղայ,
Մինչև հաշտութիւն չըլինայ,
Ճանապարհին անցիկ չըտայ՝
Ենկիչերիքն ամենեքեան
Ինքեանք եղան յոյժ միաբան
Մեծ ապային հնազանդեցան.
Թէ մեզ է Ապաղայն տուչման։
Նստէր վեղիրն ի Կոնիայ.
Ապաղայն Սնաստ կուլինայ.
Համոզիչքն երթա՝ և գայ
Միթէ խաղաղութիւն լինայ։
Աղզն տանկաց յոյժ խատացան.
Զաղզրս մեր բառնալ կամեցան.
Հարկն և խնդիրքն՝ յաւելան.
Բաղում նեղութիւնք մեզ յարեան։
Սրբոյ ինոզքն Աստուած է.
Անմնայն իրաց տեղեակ է.
Միթէ փրկէ զմեզ նոցանէ
Որդիս արաչութիւն առնէ։
Տէր Աստուած քեզ եմք յուսացեր
Զմեզ յանուէից իյն ազեր.
Ի յոչինչ դոյացուցէր.
Զմարդն ի հողոյ առնալ ստեղծէր։
Արիստոկէաս հարբերդցի.
Զայս սակաւ բաներս ասացի,
Զիրք ժամանակիս պատմեցի
Նեղութիւն մեր մեզ ծանուցի։
Լրսողացն հաճոյ եղիցի.
Տէր Աստուած իրեանց թաղցրուսցի
Զմեզ յիշողացն ողորմեսցի
Արքայութեան արժանացի։
Գաղրք փրկչին ամենայնի
Ընդ հոր իւրում համարուցի
Եւ սուրբ հոգւոյն իւր էակցի
Այժմ և յաւէտ միշտ եղիցի։

1624—1625
ՇԱՐԱԿՆՈՑ
Տաշեան, № 334

Գրիչ՝ Գրիգոր Երէց Կոյոնացի
վայր՝ Կարին

Գրեցի և ծաղկեցի զՇարակնոցս ի դան և յանբարի ժամանակիս որ յայսմ ամի եկաւ ի Ստանպուլա Խոսրով փաշա անուն գնաց ի յԱրզրում որ է

Արեւելք, որ աստուածուրաց Ապաղ անուն փաշա կոչի, որ վազուց հետ ապատամբեալ կայր Թագաւորին և տիրեալ էր զԱրզրումս, որ բազում անգամ զարքն տաճկաց ի վիրս գնացին և յաղթեցին, ապա յաղթահարեաց ի յԱպաղայէն։ Ապա այս Խոսրով փաշայս խաղաղութիւն սերմանելով գնաց ի յԱպաղայի վերայ և ոչ կարաց մենամարտել, մնաւ ի յամբանոց բերդն և զԱստուած ոչ յուսացաւ, այլ ի յամբանոցն յուսացաւ, հիսար եղաւ, որ այսչափ քրիստոնեայքն մնացին ի յանարէն հետ ի բերդն և Խոսրով փաշային զարքն շատ էր, թուով ՃՁԻ (180 հազ.) մարդ, և (40) տարն պատերազմեցաւ ի յամբոցին ի վերայ և Աստուծոյ աջողութեամբն խաղթեցին զբերդն և նկուն արարին զԱպաղան. յետոյ նամակ և մենոզանեանց վարիքն առ Ապաղան՝ թէ չելանես ի յամբոցէդ՝ ՃՁԻ զարաւք մտանեմ ի ներս, ոչ տաճիկ, ոչ քրիստոնեա ամենայն հոգի ոչ ապրի ի ձեռաց իմոց, հրամ(ան) տամ զարաւց իմոց որ ի սուր սուսերի մաշեմ զիւրեանք, յայնժամ աղաղակ բարձեալ այլասեռքն և տառապեալ ազգի մերոյ քրիստոնեայց գոչեցին կողկողագին պաղատանաւք. ով կարէ զբով արկանել զաղաղակ զոցա և անկան ի յոտն Ապաղին թէ բեզ ապատելու մար չկա, մեր արեանն էր պարտական լինիս, ով արեանաթրու զազան։ Յայնժամ ողորմեցաւ աստուած... և զբարեացնեալ սիրան բանաւորին թաղցրացուցց և եկաւ ի յամբոցէն և ապատեցաւ քրիստոնեայքն և ապա բմբռնեալ տարան ի յՍտամպուլ, մերոյն Աստուծոյ ! գիտէիր։

1629
ՀԱՐՑՄԱՆՑ ԳԻՐՔ՝ ԳՐԻԳՈՐԻ ՏԱՊԵՎԱՑԻՈՅ
Երևան 7786

Գրիչ՝ Գիեոս Երէց
վայր՝ Էրզրում

249ա ...Թողութիւն արէք զի ամառնային ժամն չէաք կարել նստել, հաղագորութեան հետ չարշարէաք, և ձմեռն թղթանաքն եփէի՝ նայ գրիչ չէի գտնուլ և թէ գրիչն գտնէի՝ նստոյտեղ չկայր, վասն վրդովման ժամանակիս։

Յորժամ որ սկսայ գրոցս ՌՀԲ (1623) թվին աստուածասատ բարկութիւն իջաւ առաջ ի վերայ Ոսմանեցոյ ազգին, ենկիչարիք զսուլթան Օսման Դաղաւորն սպանեցին, Ըստամպալ քաղաք և վասն իմ ծովացեալ մեղացս աստուած եաւր մեզ չար բանաւոր Առզրում քաղաքիս զԱպաղա փաշան, որ նոր ձեռք ենկիչերուն վերա՝ գնաց զԱխլձէ առաւ և զենկիչարիքն չարթեց զԲաղիր քեհան, այս տեղիս կոտորեց ՌՀԳ (1624) թվին, եկան միահամուռ բաղում զօրօք Զարահեսար առին, զՄուսթապա փաշան հնազանդեցուցին և կոտորելով գնացեալ հասին յԱնկորիայ քաղաք և պաշարեցին Ժ ամիս այլ ոչ կարացին առնուլ սուլտան Մուստաֆան թախտ դրին և նայ այլ փոխեցին և դրին Բաղաւոր սուլտան Մուրատն։ Միաբանեցան սպահիք և ենկիչարիք, վազիր հանին և եկան անթիւ զօրօք, պատերազմեցան Ապաղին հետ Ղայսարի և փախուցին գնա մինչև որ եկաւ հասաւ Արզռում և վազիրն եկաւ նստաւ Դերջան։ Ապա վայպատեց զանմէր քրիստոնեայք և աստուածային ողորմութիւն հասաւ, խաղաղութիւն արին, զարձան գնացին, ենկիչարիք գրկեցին հոս, տեղս կեցան ա տարի մի խաղաղ։ Յետ տարոյն եղև խռովութիւն և այլ եկի նոսա սուր և կոտորեց անխնայաբար Ժ (10) փաշայ, որ ապա-

նեց, որ ձերբակալ արաւ և ցրուեց զամէնքն որպէս փոշի առաջի հողմոյ, և ով որ որ մազապուրժ գնացին ընկան ի մեծ բանակն որ էր վազիր պիծ և ժանան անիծեալ նման ուրացողին Յուլիանոսին և Լանգիամուր կոչեցելոյն, եալիլ վազիրն և նալել որպէս զուխ հեղեղաց ի վերա երկրիս մերս։ Եւ այս պիղծ Ապազայս նոր շարիք արաւ և քրիստոնէից զապրանք զկերակուր թալնեց և ելից ի բերդն. և այլ առաւել չարութիւն այնէր, որ մարդն տանէն դուրս ելից, զտունն և զկայն ամէնքն կրակեց և տոչորեց, և մնաւ ամրացաւ բերդն. և այն չար վազիրն երեկ և պաշարեց զքաղաքն և զինչ որ մնացել էր նայ աւար առաւ ոչ ողորմեցաւ քրիստոնէից, և ամօթով դարձաւ յետս. որպէս առիծ եկն, վասն իւր չարութեան որպէս մուկ եղեւ եւ մյուս ամն ելեալ հօրով անուն վազիր մի բարերարոյ նման Մուրիկ թագաւորին և եղեւ այնպէս որ Աստուած ազատեց յերուսաղէմ ի ձեռաց յաղթեացոց նոյն ողորմութեամբն զթացաւ աստուած և քաղցրացոյց զսիրտս նոցա և նոքա սիրով և միաբանութեամբ առեալ տար(ա)ն զնա առ թագաւորն իւրեանց սուլտան Մուրատին։ Եւ խաղացաւ երկիրս և մեք տկարս նստեալ կատարեցաք ըս(տ) մերում տկարութեանս։

سنهٔ مزبوره ربیع الاولینك دوردنجی کونی وفات ایتدی سیاوش پاشا ایله سلطان سلیمك مغبول ومرغوبی ایدی محبوب اولمغله کوزله دیلدی

(سنه ست عشرة والف همدن وزیر اعظم مراد پاشا بلغراده)

چون سابقاً وزیر اعظم جانب انکروسدن فتح حلایق ایتدکدنصکره دوردولان دعوت حکمی موجبنجه سرعتله دردولته توجه ایدوب سنهٔ مزبوره محرمك اواخرنده استانهٔ سعادته کلوب داخل اولدقده ممالك شرق وتاطولی ده ظهور ایدن اشقیا وعجم طائفه سنی تدمیر ایچون مأمور وسردار عسکر منصور اولدی

(ذکر فرق جلالیان)

سابقاً مرحوم سلطان محمد خان زمانده اغلاق وانکروس احداسی جهتندن بلاد اسلامیه یه توجه ایدن فتن وشرور دفعنه صرف همت اوندقجه اصحاب حق وصفدك تقصیری ایله غایهٔ محاربانه اندفاع حاصل اولیوب اون بش یله قریب امدوشد ممتد وطغیان اشقیا مدت اولمغین عسکر اسلام وطاغندارلرم ایتدکلری سیدن تاطولی دن اراذل رعایا مملکتی خالی بولوب طریق یغماوغارته سالك وهر مسلوك بومار یغمه انطرنه سالك اولوب هر فرقه یه رئیس پیدا اولیوب یلت و راغله اعاده بلوك بلوك اتلو پیاده ممالکه طاغلوب نهب وغارت وهتك حرمات ایتمشلر ایدی اول طریق ضلالتده رئیس اشقیالك بری (قره یازیجی) دیمکله شهرت بولان عبد الحلیم نام بدبخت ایدیکه بکلر بکلر یانده کاه سنجاقلق کاه صوبلشلیق ایله صور بنورایکن وجه مزبور اوزره مملکتی خالی بولیجق اولمش رعایایی کندویه نفر ایدنوب کیدرك امر وحالی کاایرشدی که مدبر لك سوقیری ایله اربلب منصب زمان قلیل ده عزل اولنوب برمنصبه تناول ایدی ایله هیئت اجتماعیه جیاع ظاهر اولمغین اهمال قوت ظاهر ایلین طالب مغلوبك منصب وحالی سالب اولدقده تدبیر قادر اولان اهل منصب حق مزبوره مراجعت وبذل مال ایله اندن استعانت ایلمکین اشقیاسی ایله کلوب اعانت ومنصبده اقامت ایلر ایدی چون کندوده رفع ونصبه قدرت مشاهده ایلدی علم عصیانی برداشته ایدوب (تسع والف) خلالتده چورم وسیواس وتوقات حوالیسنده بلز یغماوتاراجه کریهت وروب جمع اولان اربلب فساد ایله تخریب بلاد ایلکین بلدهات اوزرینه سردار اولز توجه ایتدکجه کاه غالب وکاه مغلوب اولوب بعض قلاعه تحصن ایتکله کیرمك میسر اولمش ایدی بری (حسین پاشا)

Մի էջ կարա Յազջիի ապստամբության մասին Քյաթիբ Չելեբու «Ֆեզլեքե»-ից:

نلم پرشق ایدیکه بکلر بکی اولمس ایکن ظلم وعدوتی حرضی اوندقده فرار ایدوب
کندو یه پناه اولان اعتقادی ایله روملده محصور اولان بلز بجی یه ملحق اولوب
مزبور بلز بجی خلاصندوسیله اولمق احتمالی ایله سردار قلعه دن ایندروب
اول دخی استانه یه نودروب اشد سیاستله قتل اولندیغی محلسده مزبور ایدی
بری دخی مزقوم بلز بجی برادری منته افکن (دلی حسن) در که قرنداشی یرینه
نلم پرشر فساد اوزرنده دائم اولوب طمشوار دن بلغراده کلدکده قتل اولندیغی
سبق ایلمشدی بری دخی (قلندر اوغلی) نام شقی ایدی که بکلر بکی چلوشی اولوب
بعض سنجاق بکلرینه کتخدا و مسلم اولدقدنصکره جنلهزاده ایله نوع ایمزش
ایدوب سنجاق بکی اولنشکن سبقاذ کر اولندیغی اوزره اول منصبده تراجم امثال
سببی ایله ضبط ایده مدیکی اجلدن بیك اون او یچتار یخنده جمع اخلاب اشقیا
ایدوب هلاك اولنجه بلادی غارت واحراق وظلم تعدی فرقانیه خلقان رعایای
افراق ایلدی نته که مال حالی بیان اولنور بری دخی (قره سعید) نام بلید ایدیکه
زنکی قبیح صورت سبس ایکن ارارلدن برنیجه بیك عسکر ایله بلاد وقرایه
مستولی اولوب تخریب ممالك ایلردی لکن اکثر شقی مزبور قلندر اوغلنك ضرب
خاصرینه ملحق ایدی و بری دخی (طویل) نام رذیل ایدیکه سکبانلقدن کلوب
کندی احتالی نجه پرکشته حالی یاننه جمع ایدوب بعض قصبات ایصال خسارت
ایدردی قرنداشی اولان بدبخت الك یرینه سراشقیا اولدقدنصکره مدت
قلیله ده منکوب اولیجق قره سعید کبی قلندر اوغلی پیرلکده هلاك اولدی بری دخی
(یوسف پاشا) نام ترك ایدی که کتخدالری اولدیغی اویس پاشا اوغلی محمد پاشا
ایدین ده تحصیل ایکن وفات ایتدکده یانندهبولنان نقدی قبض ومزبور حراست
اموالی ایچون بنا ایلدیکی قلعه یی ضبط ایتدکده اتفاق زمرهٔ اشرا ایله
اول اطرافده فساد ایدو کنده بروجه استقلال کادنی بکلر بکیلك و یرلوب
الطولیه اولان سرحدارزه ملحق یورلدقجه تعلل و بهانه ایدوب بعض سرکشان ایله
بروجه مشاهره جنك اوزره اولمغین بالاخره لله اولندی و بو اثنادده سپاهی
سرکشلرندن زور بلم نجه یاغیلر ظهور ایدوب اکثر سردار مزبور زمانندهٔ
و بقایاسی نصوح پاشا زمانندهٔ سیف انتقام ایله مقتول اولمشلردر اما بو جمله دن
اشد جانهولاد اوغلی علی پاشا نام شقی در که حلبده تغلب ایدوب کلبس سنجاغی
طوانمی اکراددن طائفهٔ جانبولادیه یه طرف سلطنتدن اوجاقلی طریقله و یرلمکین
بادیهٔ استقلال واندیشهٔ محال ایلمش ایدی فساده باعث منقول اولدوغی اوزره

بودر که

Կալենդար օղլի, Կարա Սալդի, Թավիլ և այլոց դեկավարած ապստամբությունների նկարագրությունը Քյոթիր Զելեբու «Ֆեզլեֆե»-ում:

بودر که مزبورك غیبی حسین پاشا که اسن اعقاب جانبولادیه اولمغله مزبور
اوجاقلی الك تصرفنده اولوب مأمور اولدوغی سفرلرده عشیرتی ایله کیده کلمشکن
سابقاجغلهزاده حدود عجمه قریب یرده ایالت حلبی نصوح پاشادن اکا توجیه
ایتمشیدی منسلی واردقده اوجاقلی صاحبلرینه توجیه ایالت خلاف قانوندر دیو
نصوح پاشایه استانه دن فرمان جدید کلنجه تسلیمده توقف ایدیجك مزبور حسین
پاشا احوالی سرداره انها ایتدکده تسلیم ایتمزسه عسکر چکوب اوزرینه وارد یو
یرامز کوندردی مزبور دخی اکراد واعرابدن اشخاص بی حساب جمع ایدوب
حلب اوزرینه کلدکده نصوح پاشانك مقابله یه قدرتی اولمغله استانه دن
خبر کلدیو اوچکون قدر محصور اولدقدنصکره سردار مزبور استانه یه مکتوب
کوندروب شرق سفرینه مأمور اولانك عزل ونصبی سردارهٔ مفوض اولیه جق
مصلحت بغردیو تمشیت امرنی مطالبه ایتمکله مشار الیه خطاباً حلبی حسین پاشایه
تسلیم ایده سن واستانه یه کله سن دیو یرامز وارد اولدقده چکوب کتمشیدی
حسین پاشا دخی ایالت مزبوره ده طویل وعریض تربع اوزره اولمغله اعدا
محاربه سنه یتشمیوب تهمت تقصیر ایله اتده طعمهٔ شمشیر اولمشیدی چون اولابی وجه
احیا اولدوغی بلاسبب افنا اولندی قوم وعشیرتی خصوصا قرنداشی اوغلی مزبور
(علی پاشانك) سینه سی نار غضب ایله سوخته اولوب چون حلبده مقتول مزبورك
وکیلی ایدی تغلب وجهی اوزره تمکن واختلاط ناسدن جمع ایلدیکی حشراته
تحصن ایلدیکی استانه یه منعکس اولیجق لصلحة حکومت حلب منشوری ارسال
وقصد اغفال اولندقده طغیانی منا کدا اولوب طرابلس شام حاکمی سیف اوغلی
امیر یوسف ایله بی تقریب جنك ایدوب اکا غالب اولدقده مزبور میر یوسف
طرابلسه تحصن ایدیجك مال امان دیو نقد فراوان اولدقدنصکره بارشوب
مصالحه وامید مظاهرت ایله عقد مصاهره ایلدی بعده شام عسکری عداوت
قدیمه سی جهتندن حرب وقتاله اهنك وحوالیٔ شامده عظیم کارزار وجنك
ایتدکده انلردخی هزیمت ایله فرار ودرون قلعه ده قرار ایدیجك محاصره واموال
مسلمینی غارت ومصادره ایتدکدن ماعدا محصورلردن بی نهایه مال الوب
حلبه دونوب وصولندنصکره ایکی نوع عسکری شکست ایتمکله زعمنجه تمام
قوت بولمشیدی من بعد جمع حشرات ایدوب اعلان عصیان واظهار طغیان ایله
استیصال اولنونجه برمدت خزینهٔ حلبی استانه یه وصولدن منع ایلدی مزبورك
سکبانلری انلو یاده ایکی فرقه اولوب پنده سی بکیجری قاعده سی اوزره یوزالتمش

برهفته دنصکره وزیر ایدوب وخواصلرین بالتمام تکمین ایتدردی
وباش دفتردار محمود پاشایی عزل ایدوب حافظ محمودی
دفتردار ایتدردی لکن دفتردار لقده وقوفی اولمیوب مواجب
تکمیلنه قادر اولمامغله کندونك قتلنه باعث اولدی ویرینه
صوفی سنان پاشا قائممقام اولدی

(جلالی طویلك نصوح پاشا ایله محاربه‌سی)

(ونصوح پاشانك انهزامی فی سنه ١٠١٣)

صوفی سنان پاشا قائممقام اولدقده هرطرفدن جلالیلردن
متوالیا فریاد جیلر کلور ایدی برطرفدن طویل واجب التذلیل
برطرفدن صاچلو دیدکلری باشدن ایاغه دکین صوچلو
محصل هرناحیه‌دن بررشتی باش قالدرمغله البته محافظهٔ مملکته
بروزیر کوندرلمك لازمدر دیو پادشاهه عرض ایتمکله داود
پاشایی تعیین بیور دیلر وعلی الجمله چیقسون دیو امر ایتدی لکن
بنم عدم قدرتم هنوز صدر وزارته وصولمدن معلومدر دیو
هزار اعذار بیان ایتدی وبوحینده کج دهان علی پاشایه دخی
اناطولی ایالتی ویرلمش ایدی واناطولی عسکرین جمعه سردار
اولان جغاله‌زاده یه اولشدرمغه مأمور اولمش ایدی ایمدی
اناطولی عسکریله اوته یقه محافظه سندهٔ اولان وزیر نصوح
پاشایه ملاقی اولوب ودفع اشقیاده بیله بولنوب اندن عسکری
جیغاله زاده یه اولشدوره دیو فرمان اولندی چون نصوح
پاشا یانه واردی بولا وادین کیروسندهٔ طویل عویل اوزرینه
واردیلر ومقابله اولدقلری کبی صندیلر ونصوح پاشاجمله دن
مقدم فرارو کوتاهیه وارمیجه بریرده قرار ایتمدی چون کج
دهان دخی عقبجه کوتاهیه کلدی بوانهزامه سن سبب اولدك
دیو قلعه یه اوردی اول کیجه اشین بتوردی علی پاشامرحوم

Թավիլի ապստամբության նկարագրությունը Ի. Փեչևու «Թարիխ-ի փեչևվի» աշխատությունից:

مستفید اولور لردی مقدما بناسی تاملم اولان انقره خصاری الحلم وجلال
مضرتندن صیانتده اهتمام ایتك ایچون انده حاکم ومتلافلنشیدی خلاصه تمیری
بواولدیکه حالا بر بلوك مسلح اشقیایی شهره ادخال جائز دکلدر بزسزه بوجهتله
حصار قیوسن اجازز ولازم کلورسه جنك ایتمدن قاجاززدیو اول اشقیایه
خبر باس کوندریلمك دوبوب قلندر اوغلونه خبر ویردکلرنده هرچند غیظ
وغضبی مشتد اولدی لکن حیله بازلق ملاحظه‌سیله کلوب شهر کنارینه قوندی
وصورت لطفله ادم کوندروب عهد وشرط ایله قاضی طشره چقسون وتنها
ملاقات ایدلم بزی نه بیارسه بایسون یقارسه یقسون دیدی قاضیٔ مشارالیه
جلالدن ایدوب برقاچ ادم ایله چیقسوب مزبور دخی برقاچ شق ایله کلدی
انلر اوزرنده ملاقات وفتح کلام ایدوب بومملکتی بکا پادشاه تملیك ایتمشدر
واطرافنده اولان سنجقلری بنم ادملریمه ویرمشاردر سزنه وجهله رد ایدرسز
دیمك قاضی جسارت سمتندن جواب ویروب بلی امانه دن بوسنجاق سکاتوجیه
صورتی اولنمش اماسز بونده سنجاق بکلری هیچدر کلیوب جلالیلر صورنده
کلدیکز بوکا دلیل بودر که کاوب فقرانك مزارعی ایچنه قوندوکز وغصب ایله
الدیکز دوابی مسلمانلرك اکنه قویدیکز جلالیدن کوزلری قورقش بر بلوك
ضعفانك قارشوسنه کلوب کیمی اولدیروب اسندو کیکزی الورسز اعتقادی ایله
خلق سزدن وهمه دوشوب حصاری قیادیلر اما چون امر پادشاهی موجبنجه
سرداره ایرشمك وسفر اسبابنی بونده کورمك مرادیکز درلوازمی دفترایدوب
برمعتمد ادم ایله بزم یانمزده الیقیوب سزخلقه وحشت ویرمك ایچون شهر اوزرندن
قالقوب برمنزل قلان محله قونه سزوبن سزك تمام مصلحتکزی کوروب خلقه
مایتکزی تألیفه سعی ایدیم بعده خیمه کزه واروب صلح وامانله خلقه اطمینان
ویردکدنصکره سزی شهره کتوریم دیو حسن تمیرایله مکر وحیله ده شیطانه
سبق ویرن قلندر اوغلنه خواب وخرکوش ویروب اول دخی بورنبش خلقده
مفتون اولوب کبار کلابندن بر بدبختی بکرمی اوتوز نفر شق ایله الی قیوب اول محل
معهودده رهن انتظار اولدی بری جائیده اول کلب مهمان فسق وفجور اولوب
همان اول بدمستی وبعض احداث شهره دست درازلیدیجك شهر خلق غلوایدوب
هرقومی قتل ایدرز دیدکده یه قاضی قتال اولدوغی تقدیرده مسلمانلرده
بعضنه دخی ضرر اولق احتمالی وار درلطف حیله ایله حبس ایدلم دیو مزبوری
برطرفه یانه کتوروب واهالیٔ شهری دفع صورتن ایدوب چون بومعتبره

ایکی بلوکلر بریۀ برشور بلجی علوفه‌لری ابتدادن اوجر اغیجه ترقی ایله سکزه وارنجه اوچ ایده بر پوسال وفیون اغیجه سی باروت وفتیل وقورشون میر بدن بالجمله اون التی یك یدیوز توفنك اندازموجود واغاری جمعه ایدی اتلوسی دخی التی بلوك اولوب صاغ وصول جمله اون سکز یك ادم بونلرك اغامی حرتاوی ایدی دفترلری سکره حلبده بولنوب سجله قیداولندی ذکراولنان جلالیانکن یك اون التی اوابنه کلنجه هلاك اولنلراولوب باقی قلانلردن مزبورجانبولاداوغلی وقاندر اوغلی عصیانلری امتداد وطغیان وعداوتلری اشتداد بولمغله ارسال سردار مهم کاراولدی

(سردارمرادپاشاوغالب شدن او برایشان)

چون مرادپاشا سرحدانکروسدن دردولته کلوب سفر شرق تدارکنی کوردی سنۀ مزبوره صفرینك اون طقوزنجی کونی عنه ان سرداری ایله اسکدار صحراسنه کچوب ربیع الاولینك بدنجی کونی جانب حلبه توجه ایتدی روم ایلی ترباکی حسن پاشایه واناطولی مار بول حسین پاشایه ویرلوب چاقرجی باشی خلیل اغا بکیجری اغاسی وباقی پاشا سفردفترداری اولدی بروسه محافظه سنده اولان مصطفی پاشایه قائمقام وزارت تعیین صفرك یکرمی ایکنجی کونی کلوب اوتوردی سردارقونیه یه واصل اولدقده سابق الذکر قلندراوغلی بیك اون بش خلالنده صاروخان ایله دونوب بالدفعات ایل اری و بکرایله محاربه ده غالب اولدی خصوصاالنده صاحب جمعیت اولان یوسف پاشایه مزبور اوزرینه واردیو امر کندکجه اکاجانبدار اولوب وارمامق ایله شروفسادی متزاید اولمشیدی بر زمانه دك مدارامناسبدردیو اسنانه دن مخذول مزبورك مسفطراسی اولان انقره سنجاغنك منشوری سرداره لحوق شرطی ایله ارسال اولندقده انقره اهالیسندن مقدما واردقجه منع وطردایله نجه اذیت کورمکین انلردن انتقام قصدیله قالقوب اول جاعزمی

(رفتن ابی قلندر بجانب انقره)

چون سرداره ملاقات کندینك سبب هلاکی ایدوکنی بیلوب اصل مقصودی برطریقله انقره یه داخل اولمق وخلقنه ظفر بولمق ایدی سرراهه کان دواب ومواشیۀ سورب خسارت ایدرك انقره اطرافنه کلدی صورت امر سلطانی ایله منسلم نامه برمغشده درت یوزجلالی قوشوب کوندردکده بلدۀ مزبوره قاضیسی بولدان زاده مولانااحمد مجرب امور اولمغله انکروس سردارلری انك رای صائبندن

میتفید

Կալենդար օղլու ապստամբության նկարագրությունից հատվածներ Բ. Ջելեբու «Ֆեզլեմե»-ից:

اولمغله برکون بانجۀ خاصه‌ده محبوس بعده مقتول اولدی ویرینه جرکس محمد پاشا سردارلق انضمامیله اول مقام جلیله نصب اولندی وآبازه وبغداد طرفنه توجه ایله مأمور قلندی

(سردار جلیل الشانك آبازه‌یی)

(مقهور ایتدوکیدر سنه ١٠٣٤)

مشار الیه برصالح ودیندار وارتشادن پرهیزکار برسردار ذی وقار ایدیکه اول صدره شمدی‌یه دکین مثلی کلدوکی معلوم دکلدر عصرنده برفردك منصبین بی کناه ویرمدی وبرفقیرك بلا سبب قانه کیرمدی مطلقا برکسه‌دن برحبه ارتشا المدی پرهیزکارلغی مشایخ کبارده یوغیدی ومحاسن حمیده سی غایت جوغیدی چون عسکر فراوان ایله قیصریه سمتنده واقع نام صحرایه نزول ایتدیلر آبازه دیدکلری بی‌دین عسکر شیاطین ایله اوزرینه کلدی ومحاربۀ عظیمه دن صکره منهزم اولوب ارضروم طرفنه فرار واضروم قلعه سن کندویه وعسکر مقهورینه دار القرار ایلدی واظهار عبودیت وکناهنه توبه وندامت کوستروب یعنی که اطاعت ایلدی سردار عالیمقدار دخی کندویه مدارا وکناهلرین سعادتلو پادشاهدن درخواست ایدوب اول بهارده بغداد اوزرینه کتمك اوزره قرار ویردیلر ووقت شتا وهنکام سرما ایرشمکله عسکر منصوره اذن انصراف ویرلوب وبعضیلرینه مناسب مشتالر تعین اولنوب کندوسی دخی دفتردار ووزیر باقی پاشا ایله وبکیجری اغاسی خسرو آغا ایله معا توقاده کلوب اول قیش بلدۀ مزبوره‌ده عیش ایتمك اوزره بر مناسب خانه‌یه نزول بیوردیلر (ومن الغرائب السنم) اول حینده شتا ایچون بلوك خلقنه تعین اولنان قسطمونی سنجاغنده واقع برقریه‌ده برظالم برفقیر تورکدن مقدورندن

— ٥١ —

Արազա փաշայի ապստամբության նկարագրությունը Ի. Փեչևու «Թարիխ-ի փեչևվի» աշխատությունից:

زیاده شی طلب ایدوب عاقبت فقیر قزین اسیر دیو ویرر وزیر اعظم
و یکیچری اغاسی والتی بلوك اغاری توقاده موجود ایکن کنوردی
وتوقات سوقنده بیع من یزید ایدوب فروخت ایتدی اولعصرده که
هنوز سلطان مصطفی عصر یك شأمتی کاینبغی دفع اولنمامش
ایدی عالم برحاله وارمش ایدی بوقدر ضابط نامنه کبار شهرده
موجود ایکن نه کمسه منع ایتدی نه سوز سویلمکه قادر اولدی
صکره باقی پاشایه نقل ایتدکلرنده باشنده بولندم وافر تأسف
چکدی اقچه سن ویرر باباسنه کوندررك دیدی اشـ
دخی سلطان مصطفی مرحومك سلطنتی شأمتیله بویله هر
ایدی حق سبحانه وتعالی حضرتلری سلطان مراد مرحومی غریق
رحمت دریای بی پایان ایده بو مقوله یی انتخاب ایتدی وچوغین
مسلمان ایتدی (سردار مومی الیهك) وفاتی وحافظ پاشانك
وزارتی بعده باقی پاشانك وفاتی وخسرو پاشا دیاربکره متوجه
اولدوغی بوعبد فقیر بمقدار سردار ذی وقار توقاده داخل
اولدقده نصکره ماردین محافظه سندن کلوب شهر مزبوره داخل
ووزیر جلیل الشانك التفات بی غایتنه متواصل اولمش ایدم
وضربخانه خدمتنه مأمور اولوب خزینهٔ عامره ده بولنان زیوف
اقچهٔ عثمانیدن زمان قلیلده اوچیوز یوك اقچه مقداری صحیح
العیار اقچه قطع ایتدیروب وعده سی اوزره منصبه منهی ایکن
چون بودهر دنی غنی وفقیره وامیر ووزیره چای قرار دکلدر اول
وزیر لانظیر دخی بو دولت مالیدن سیر اولوب سنهٔ مزبوره ربیع
الآخرینك اون سکزنجی کونده وداع عالم فانی وسالك بقای
جاودانی اولدی رحمة الله تعالی علیه پس باقی پاشا مرحوم ویکیچری
اغاسی خسرو آغا حافظ پاشا حالیا سرحدده موجود وقبومی
مکمل برامور دیده اسکی وزیر در دیوعرض ایتدیلر وآستانه دن

وزیر آخر تعیین اولنور سه کلمجه وقت کچر بلکه سفر عقده
تأخیره دوشر دیو باز دیلر ورئیس الکتاب دوراق افندی یی
بوعرض ایله کوندر دیلر پس عرضلری موجبنجه وزارت عظمی
حافظ پاشایه اعطا اولندی وآستانه دن نه عجب خسرو اغا
کندویه رجا ایتمش دیمشلر خسرو اغا بوعرضنه نادم اولوب
مادمکه حافظ پاشا وزیر ایدی اول عقده یی خاطرندن اخراج ایتمش
ایدی بوندنصکره باقی پاشا مرحوم دخی ارجعی الی ربك فحواسنجه
سلخ جمادی الآخره ده متاع حیات دنیادن دامن افشان اولمشدر
رحمة الله تعالی علیه بوعبد قاصره دفتردارلق خدمتنی برقاچ کون
مقدم سپارش ایتمش ایدی یکیچری اغاسی دخی قائمقاملق طریقیله
اول منصب جلیلده استخدام ایتمك استدی صکره دیاربکره
وارد ایتمزده صدراعظم حافظ پاشا دخی تکلیف وابرام ایلدی
ولکن پیرلك ضعفیله اشغاله اشتغالده قصور یمز ملاحظه سیله
امتناع ایتدم وبالکز توقات دفتردارلغنه قناعت ایتدم

(کورجستان ملکلرندن ماوراوك قارچیقای خانی)

(قتلی وکورجستانی اطاعت ایتدردکی سنه ١٠٣٤)

مذکور ماوراو نام ملك که عموما کورجستان مملکت کتخداسی نامنه
وشاه عباسه یار وندیم برملك کیرایدی شاه بعض اقتضا حسبیله
مذکور ماوراوه ایکی اوچ خان عسکرلر ایله قوشوب کورجستانه
کوندردکر کورجستانك جانب شاهه نوعا مخالفتی یه ماوراوك
قزلباشدن انتقامه دقتی سببیله ایمش فرصت بولوب قارچیقای
وبیله اولان خانلری قتل ایتمش وعسکرلرندن برایکی بیك قزلباشه
باش ایتمش سنهٔ مزبوره رمضان شریفك یکرمی یدنجی کونی
قارچقانك باشی وسائر قزلباشلرك باشلری ودللری وکره نای
ایله کوسلری وبرایکی اوچیوز بیراقلری ماوراوك اوغلیله

РЕЗЮМЕ

Об истории движения джелалиев, широко распространившегося в центральной и восточной частях Малой Азии, а также в других областях Османской империи в конце XVI—начале XVII в. в арменоведческой литературе до сих пор не имеется специального исследования, тогда как это движение поставленными перед собой задачами и своими последствиями затрагивало жизненные интересы армянского народа и оказало влияние на его историческую судьбу.

Движение джелалиев и «великий сюргюн» (насильственное переселение) армян, организованный в те годы шахом Аббасом, являются одной из самых трагических страниц многовековой истории армянского народа. Весь армянский народ находился тогда на грани гибели.

В настоящей работе, на основе данных первоисточников, сделана попытка исследовать вопросы социально-экономической и политической истории Армении XVI—XVII вв. и на ее фоне рассмотреть историю движения джелалиев. Проблема движения джелалиев рассматривается также на основе социально-экономической и политической истории Османской империи данного периода. Эта проблема включает следующие основные вопросы: а) предпосылки движения джелалиев и б) ход и последствия этого движения.

В работе широко использованы труды крупнейшего австрийского востоковеда И. Хаммера и других европейских ученых, уделено внимание различным исследованиям современных турецких историков, как, например, Хюсаммюддина Амасьялы, И. Х. Данишменда, И. Х. Узунчаршылы, О. Л.Баркана, Ахмеда Рефика, М. Акдага и др. К оценке обширной

литературы мы старались подойти критически, отметив, в частности, методологическую слабость европейской историографии и националистические устремления некоторых турецких историков.

В советской историографии единственная работа о движении джелалиев написана А. С. Тверитиновой. Этот труд является значительным достижением советской историографии, в частности, туркологии. На основании турецких источников XVI—XVII вв. А. С. Тверитинова рассматривает лишь одно из главных звеньев этого движения—историю восстания Кара Языджи и Дели Хасана (1599—1603 гг.). В своей работе А. С. Тверитинова критически подходит к использованным ею источникам и с марксистских позиций правильно разрешает многие сложные проблемы, связанные с движением джалалиев. Однако, не имея возможности использовать данные армянских источников, автор кое-где дает односторонние объяснения и толкования некоторых факторов, почерпнутых из средневековых турецких источников.

В нашей работе использованы труды турецких источников XVI—XVII вв.—И. Печеви, М. Селяники, М. Наимы, Кятиба Челеби, Эвлия Челеби, Кочибея, Айни Али, Авни Омер Эфенди и других.

Все они, будучи представителями господствующего класса и выражая интересы центрального султанского правительства, проявляют резко отрицательное отношение к движению джелалиев. Это движение характеризуется ими как «разбойничье».

Основными армянскими источниками по истории Армении XVI—XVII вв. являются ишатакараны (памятные записи) армянских рукописей, которые очень мало использованы исследователями. Основная ценность ишатакаранов состоит в том, что их авторы современники и очевидцы событий. В ишатакаранах отражены непосредственные впечатления известных и анонимных переписчиков. Имеется немало ишатакаранов, где описывается движение джелалиев. Из этих ишатакаранов мы и почерпнули ценные сведения о восстании Кара Языджи, Дела Хасана, Календар-оглы и Абази-паши. Подавляющее большинство писцов в мрачных тонах описывает

события, связанные с движением джелалиев. Их отношение к руководителям восстания резко отрицательное, они называют их «кровожадными зверями», «бешеными собаками» и т. п.

В исследовании используются также работы армянских источников XVII—XVIII вв. В трудах этих авторов (Аракел Даврижеци, Григор Даранагци, Симеон Ереванци и т. д.) сохранились данные об экономическом, правовом и политическом положении Армении в XVI—XVII вв.

Ар. Даврижеци довольно подробно описывает движение джелалиев. Вся седьмая глава его труда, озаглавленная «О появлении джелалиев, о страшном голоде и о волках-людоедах и о других многих бедствиях, постигших нашу страну», посвящена истории движения джелалиев (в основном после 1607 г. в Восточной Армении).

Самые интересные и подробные сведения о движении джелалиев с момента его возникновения мы находим у Григора Даранагци. Особую ценность представляют его достоверные и подробнейшие данные о восстании Абази-паши в Эрзуруме. Ценным материалом для данной темы послужили страницы его «Истории» или «Хронографии» с описанием политических событий в Западной Армении конца XVI и начала XVII веков.

Среди армянских источников особое место занимает «Плачь об ударах со стороны джелалиев в областях восточных и в стране армянской» Азария Саснеци (см. журнал «Андес амсория», 1936, стр. 306—336) и «400-летняя краткая история османских царей» Еремия Челеби Кёмюрджяна (Матенадаран им. Маштоца, рук. № 1675, стр. 84б—101а).

Азария Саснеци описывает события в качестве очевидца: «...хотелось и вам сообщить,—пишет он,—горечь нашего времени и о многих бедственных событиях, которые я видел своими глазами, и рассказал в стихотворной форме малое из многих [событий], чтобы вы тоже узнали, какие трудности и мучения переживали [армяне]».

Некоторые сведения, касающиеся вопросов, затронутых работой, почерпнуты из сочинений европейских путешественников и авторов XVI—XVII вв. (Пьетро делла Валле, Ж. Б. Тавернье, Рафаэль дю Ман, Мишель Фебур, Эбаски Элиас, Ж. Б. Шарден, Питтон де Турнефор и др).

Во второй главе работы вкратце расматриваются важнейшие политические события XVI—XVII вв. в Армении, турецко-сефевидские войны, происходящие на ее территории, а также их последствия (1500—1639 гг.). Цель этой главы—наглядно показать, в каком тяжелом положении находилась Армения накануне движения джелалиев. Военные действия между Османской Турцией и Сефевидским государством велись на территории Армении за овладение транзитными путями торговли, т. е. за экономическое и политическое господство на Ближнем Востоке. Эти военные действия продолжались вплоть до 1639 года. Они разорили и опустошили Армению, принесли неслыханные бедствия армянскому народу.

В мае 1555 года в городе Амасия был заключен мир между Турцией и Сефевидским государством. Согласно мирному договору, к Османской империи отошли Западная и Южная Армения (Эрзурум, Эрзинджан, Ван, Битлис и т. д.), а Восточная Армения, Восточная Грузия и весь Азербайджан остались в руках сефевидов.

Амасийский мирный договор был нарушен в 1578 году. Начались новые разрушительные военные действия между двумя восточными деспотическими государствами на территории Армении. Военные действия, на сей раз, кончились поражением кызылбашей и заключением Константинопольского мирного договора 1590 года. Согласно договору, Западная Грузия, вся Армения, весь Азербайджан подпали под иго турецких завоевателей.

Завоеванным странам Закавказья османское владычество принесло жестокую эксплуатацию и ограбление трудящихся масс, режим произвола и насилия, религиозные гонения и т. д. Достаточно сказать, что налоги и поборы в этих странах утроились.

Все это вызвало глубокое недовольство среди широких масс населения, а также и у местных феодалов, ибо последние были лишены своих владений и привилегий. Местные феодалы Закавказья обратились к шаху Ирана Аббасу за помощью, считая Иран наименьшим злом. Но помощь, оказанная шахом

Ирана, превратилась для армянского народа в настоящую беду.

В начале XVII в., когда мощное движение джелалиев постепенно охватило почти все центральные и восточные области Малой Азии, угрожая самому существованию Османского государства, шах Аббас счел возможным воспользоваться случаем, чтобы вернуть обратно области, захваченные Турцией по мирному договору 1590 года. Военные действия между Ираном и Турцией снова возобновились. Захватив Восточную Армению, шах Аббас перед угрозой столкновения с огромной турецкой армией Синана-паши, приказал своим войскам отступить к Тавризу, распорядившись поджечь и разрушить все поселения и города, сжечь и уничтожить все посевы, а население угнать в глубокий тыл. Подлежало выселению около 350 тыс. человек с их движимым имуществом.

Основной стратегической целью этих насильственных переселений было опустошение территорий, через которые должна была пройти турецкая армия.

Война еще не окончилась, как разразилось другое бедствие—страшный голод. Охватив всю Малую Азию и Закавказье—от Константинополя до Дербенда, он унес несравненно больше жизней, чем военные действия.

В 1639 г. в Кеср-и Ширине был заключен мирный договор между сефевидами и Турцией, согласно которому снова был подтвержден раздел Армении, произведенный в 1555 г. по Амасийскому договору.

В третьей главе работы на основе большого и разнообразного материала дается обзор социально-экономического положения Западной Армении в XVI—XVII вв. Показывается, что непрерывные опустошительные османо-сефевидские войны на территории Армении, феодальный гнет завоевателей и их тяжелая налоговая система истощили экономику страны, ослабленную до этого войнами и феодальными междоусобицами в XIII—XV вв. Страна оставалась аграрной, города приходили в упадок, кроме немногих (Эрзурум, Эрзинджан, Токат и т. д.), находившихся на больших торговых путях и вне зоны опустошительных военных действий.

В этой же главе рассматриваются категории феодального землевладения, состав класса феодалов и эксплуатируемых классов (крестьян и ремесленников—«реайя»), вопросы церковного землевладения. Духовные феодалы являлись почти единственной категорией коренных армянских феодалов, уцелевшей под владычеством завоевателей, тогда как светские армянские феодалы почти исчезли с исторической арены еще в XIII—XV вв. Здесь же, на основании кануннамэ, изданных О. Л. Барканом, и других материалов, детально рассматривается налоговая система, привнесенная турецкими завоевателями в Западную Армению, на фактах показывается ее тяжесть, грабительский характер и гибельное влияние на экономику страны. Рассматривается также правовый статут армян под игом турецких завоевателей.

В четвертой главе анализируется внутреннее положение Османской империи и на основании исторических фактов выявляются основные предпосылки восстания джелалиев.

В пятой главе изложена история движения джелалиев в Западной и Восточной Армении.

Последняя, шестая глава посвящена обстоятельствам восстания Абази-паши в Эрзуруме.

Движение, возглавляемое Кара Языджи, Дели Хасаном, Календароглы, Джанполадом, Абази-пашой и другими, по существу носило сложный и противоречивый характер.

Рассматривая социальный состав принимавших участие в движении масс и задачи, поставленные перед ними, мы пришли к заключению, что это движение можно разделить на три этапа.

На каждом этапе движение носило специфические черты, выражало интересы разных социальных слоев османского общества, и в первую очередь интересы мелких феодалов.

Первый этап движения охватывает 1598—1603 гг. Это—эпоха восстаний, возглавляемая мелкими феодалами—Кара Языджи, Дели Хасаном, Календар-оглы и др. На этом этапе движение, одновременно с опустошительными турецко-персидскими войнами, создает тяжелое и трагическое положение для населения Малой Азии и Западной Армении.

Второй этап—1608—1610 гг. Радиус движения джелалиев становится шире. Оно распространяется в западной Армении,

в южной и юго-западной частях Малой Армении, а также в Сирии, Ливане и Месопотамии. На этом этапе движения против ига османских феодалов выступают некоторые покоренные турками народы и в первую очередь курды.

Третий этап—1622—1628 гг., эпоха восстаний, возглавляемых Абази-пашой в Эрзуруме. На этот раз движение причиняло сравнительно меньше зла армянским трудящимся массам.

Движение джелалиев на всех этапах являлось результатом острых социальных противоречий. Основными участниками движения фактически были разоренные тяжелыми налогами, поборами и всяческими притеснениями крестьяне. Другое дело, что значительная часть крестьянства уже в 60—70-х годах XVI века, как показывает турецкий историк М. Акдаг, превратилась в деклассированные элементы (чифтбозаны, левенды, сухтаны). Объединившись в профессиональные банды, они стали инструментом в руках феодалов, стремившихся защитить свои феодальные права против посягательств центрального султанского правительства. Эти банды причиняли неслыханные бедствия населению, особенно христианскому. Это обстоятельство, по всей вероятности, и стало причиной того, что на временно захваченных джелалиями территориях оседлое крестьянство не только не переходило на сторону восставших, а, наоборот, избегало их, находя приют в столице Стамбуле и других прибрежных городах Средиземного моря.

Из всеобщей истории известно, что во время крестьянских восстаний часто крестьяне, не ожидая прихода восставших, сами поднимались против представителей господствующего класса. Этого не произошло во время восстания джелалиев.

В условиях средневековой Турции восстание джелалиев носило специфический характер и резко отличалось от крестьянских восстаний других стран. Почти во всех случаях во главе восстания стояли мелкие феодалы, находившиеся на военной службе у султана. Большинство из них были беженцы («фирари») с поля битвы при Керештесе (Венгрия) в октябре 1596 года. Они в основном боролись за восстановление своих феодальных прав и владений. Следовательно, им были чужды интересы защиты основных масс участников движения—крестьянства. Они лишь использовали крестьян для своих узко классовых интересов.

Ни Кара Языджи, ни Дели Хасан, ни Календар-оглы не ставили и не могли ставить перед собой задачу—покончить с османской феодальной системой землевладения и господствующими порядками и, следовательно, освободить крестьян от оков рабства. Они готовы были сотрудничать с правительством, если бы получили от последнего гарантию о восстановлении своих феодальных владений и прав.

Находясь в состоянии войны на двух фронтах—в Европе и Азии, османское правительство вынуждено было отказаться от строгих мер в отношении восставших феодалов и просить наиболее видных представителей восставших феодалов политически нейтрализовать их. Так поступило правительство по отношению Кара Языджи, Дели Хасана и др. Но не все восставшие мелкие феодалы верили обещанию правительства о прощении, тем более, что оно приказало обезглавить некоторых из них вопреки данному ранее обещанию. Поэтому в разных частях Малой Азии восстания вспыхивали с новой силой.

Первый этап движения джелалиев характеризуется огромными масштабами, грандиозностью охваченной восстанием территории (в том числе обеих частей Армении). Эти восстания в крайней степени разрушили страну и в основном явились причиной страшного голода. Именно в это время часть армянского народа была вынуждена покинуть пределы родной страны.

Характерная черта восстания джелалиев 1608—1610 гг., то есть второго этапа, заключается в том, что эти восстания возглавлялись руководителями некоторых покоренных турками народов (сирийцы, курды и т. д.) и ставили перед собой задачу свергнуть ненавистное иго турецких феодалов, как, например, движение, возглавляемое Джанполадом. С этой точки зрения восстание джелалиев того периода носило в какой-то степени прогрессивный характер.

Третий этап движения связан с именем Абази-паши. Последний восстал против янычаров—представителей деспотического османского правительства. Кажущееся прогрессивным, восстание это во главе с «добрым» Абази-пашой, как его пред-

ставляют в армянских первоисточниках, преследовало на самом деле регрессивные цели, т. е. путем некоторых реформ стремилось укрепить господствующие османские феодальные порядки, расшатанные в результате движения джелалиев и военного поражения турок. Следовательно, Абаза-паша, как и его предшественники и последователи из вождей джелалиев, не выражал и не мог выражать интересы эксплуатируемого и разоренного крестьянства.

Что касается причин поражения восстания, то надо отметить, что они были предопределены самой сущностью восстания. Разный социальный состав участвующих в восстании и следовательно разные цели, преследуемые участниками, неизбежно должны были привести к внутренним непримиримым противоречиям и в конечном счете к гибели движения.

Будучи результатом сложных противоречий внутри османского феодального общества, движение джелалиев во многом содействовало ослаблению могущества Османской империи. В этом и заключается прогрессивное значение этого движения.

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աբազա փաշա — 16, 20, 27, 59, 190, 191, 195—215, 217, 220:
Աբդուլ խան — 78:
Աբդուլ Հալիմ — 142, 153, 156:
Ագինի — 177:
Ալավերդի խան — 50:
Ալա էդդին 107:
Ալի — 144:
Ալիշան Գ. — 5, 84, 160, 162:
Ալի փաշա — 167, 175:
Ալապոյանցյան Արշակ — 5, 163:
Ակդաղ Մ. — 117, 123, 124, 130, 133, 138:
Ակինյան Ն. 107, 108:
Անմատ փաշա — 166:
Անմեղ սուլթան — 50, 59, 157, 176, 189:
Աղաչղանփիրի — 166:
Անառյան Հ. — 106:
Ամթեցի Միքայել — 95:
Ամիր բեկ — 181:
Ամիրգունա խան — 49, 52, 54, 179, 180:
Ամիր խան — 180, 181:
Այնի Ալի — 26, 72:
Անասյան Հ. Ս. — 5, 95, 105:
Անջիոլելլո — 102:
Ավնի Օմեր — 68:

Բաբա Օմեր — 215:
Բաբուկենց Հակոբ—158, 160, 162:
Բալայան Բ. — 5:
Բաղիշեցի Վարդան — 99:
Բայրամ փաշա — 213:
Բաշեցի Ավգուստինոս — 53:
Բարկան Օ. Լ. — 70, 100, 104, 117, 131:
Բելեն — 67:
Բեքիր փաշա — 59:
Բոսսե Մ. — 17:

Գզիրոզլի Մուստաֆա բեկ — 166:
Գինոս գրիշ — 206:
Գյուզելչէ Մանմուդ փաշա — 164:
Գորդլեսկի Վ. Ա. — 92, 157:
Գոկապախան Զիլախ — 166:

Դալուանանիպ — 166:
Դանիշմենդ Ի. Հ. — 8, 12, 13—15, 25, 137, 146, 193:
Դավիթ — 130:
Դավրիժեցի Առաքել — 17, 28, 29, 44, 46—48, 50—55, 58, 60, 61, 84—86, 94, 106, 131, 134, 142, 144, 146, 147, 166, 169, 181—184, 186, 187, 216:
Դարանաղցի Գրիգոր — 28, 30, 31, 51, 56, 57, 60, 61, 84, 94, 111, 113, 133—136, 147, 148, 150, 151, 157, 158, 167, 168, 176—178, 189, 192—197, 199—203, 205, 214:
Դելի Զուլֆիղար — 166:
Դելի Հասան (Հասան բեկ) — 16, 27, 153, 156, 157, 158, 159, 160, 163, 164, 166, 167, 174, 190, 212, 215, 217, 218, 219:
Դերջանցի Մ. — 110, 111:
Դիշլենց Հյուսեյին փաշա — 207:
Դյուման Ռ. — 106:
Դ'օսսոն Մ. — 67, 69, 88, 120, 128:

Եմելյան Պուզայով — 219:
Երեմիա Չելեբի — 135, 144, 165:
Երևանյան Գ. Ս. — 188:
Եոլայ Սրդմազ — 166:

Զաքարիա սարկավագ — 184:
Զիլֆիզար փաշա — 192:
Զուլֆիզար խան — 46, 47:

Էբասկի էլիաս — 99:
Էբուսուդ Մուֆտի — 25, 68, 69:
Էլճաջ Ջաֆար — 130:
Էմիր Յուսուֆ Իբնուսայդա — 173:
Էնգելս Ֆ. — 8, 121:
Էսատ Ուրաս — 92:
Էվլիա Չելեբի — 72, 73, 76, 77, 78, 79, 83, 89, 99, 114, 115, 116:
Էֆսիզ փաշա — 167:

Թանմազ Կուլի խան — 60:
Թանմասպ շահ — 35, 36, 39, 57:
Թայար Մահմեդ փաշա — 206:
Թանդրի Թանիմազ — 166:
Թավիլ Անմեդ — 157, 166, 173, 178, 203:
Թեհեյու Մեհմեդ 167:
Թոխատեցի Հակոբ — 150:
Թոխատեցի Ստեփանոս — 158, 160, 161, 162:
Թոփալ Օսման — 182:
Թոքմաք խան — 36:

Իբրահիմ բեկ — 171, 178:
Ինջաղա — 166:
Իսկենդեր Մունշի — 167, 168, 169, 180, 184:
Իսմայիլ շահ — 35:
Իսրայել (գրիչ) — 37:

Լալայան Ե. 128:
Լալա Մուստաֆա փաշա — 36:
Լեո — 5, 112:

Խալիլ փաշա — 59, 195, 208, 211, 212:
Խաչիկյան Լ. Ս. — 70, 108:
Խարբերդցի Արիստակես — 199, 204:
Խոզր բեկ — 172:
Խլաթեցի Գրիգոր — 65.
Խոսրով փաշա — 59, 163, 202, 208, 209, 215:

Կադի Աբդուլ Բաքի — 195:
Կալենդար Օղլի — 16, 27, 147, 166, 169, 172, 174, 177, 178—181, 190 203, 217, 218, 219:
Կարակաշ Անմեդ — 166, 167:
Կարա Մահմեդ փաշա — 58:
Կարա Յազըջի — 16, 20, 27, 142—150, 152—157, 166, 167, 178, 190, 203, 217, 218:
Կարա Սայիդ — 174:
Կարենցի Հակոբ — 88, 93:
Կլավուն—Յուսուֆ փաշա — 204:
Կյուլասերյան Բ. — 31:
Կնալի օղլի 215:
Կոլոնացի Գրիգոր երեց 210:
Կոկիս — 130:
Կոշիբեյ — 9, 23—26, 72, 73, 117 118, 120, 126, 138, 144:
Կուլի խան — 39:

Հալաջյան Գ. — 187, 188:
Հակոբյան Վ. Ա. — 38, 42, 66, 88, 97, 107, 110:
Հակոբյան Հովհաննես — 38, 39, 40, 65:
Համզա Միրզա — 39, 41:
Համմեր Յոզեֆ — 7, 8, 9, 67, 173:
Հաս. Ոսկյան — 81, 82:
Հաջի Թեֆքաշ — 198:
Հաջի Իբրահիմ փաշա — 153, 154:
Հասան Չելեբի — 130:
Հասան փաշա — 45, 155, 156, 157, 163, 173, 192:
Հաֆիզ Անմեդ — 197:
Հեզարֆենի — 26:
Հիլմի Մ. — 110:
Հյուսամմուդին Ամասիացի—9, 10, 12:
Հյուսեյին փաշա—141, 146—148, 166, 201, 202, 218:
Հյուսեյին (աղա) — 215, 216:
Հովհաննիսյան Ա. Գ. — 5, 65, 84, 169:

Ղազար գրիչ — 128:
Ղազի բեկ — 46:
Ղարասանաբ — 166:
Ղարաճիսարցի Մանուել — 94:
Ղարիբյան Խոջա — 83:

Մազաֆիա գրիչ — 163:
Մահամմատ փաշա — 211:
Մահմատ սուլթան 137:
Մահմատ փաշա — 149, 166:
Մահմադ 4-րդ — 20:
Մահմետ — 106:
Մահմուդ փաշա — 205, 207:
Մահմուդ — 163:
Մանանդյան Հ. — 106:
Մահօղլի — 166, 176:
Մարխ Կ. — 8, 26, 104, 121, 122:
Մելիքսեթ Եպիսկոպոս — 149:
Մելիք Ղուլիյան — 83:
Մելիքսեթ կաթողիկոս — 85:
Մեծն Ներսես — 150:
Մեհմեդ աղա — 166:
Մահմեդ փաշա — 147, 156:
Մինաս գրիչ — 176:
Միշել Ֆեբուր — 93:
Միր Ազդին — 171, 172:
Միր Շարեֆ 171, 172:
Միր Մահմեդ — 171:
Միքայել քաջ վոյեվոդ — 136:
Մխիթար դպիր — 128:
Մյուս Մուստաֆա բեկ — 166
Մոդրավ (Սատկանն) 208:
Մուհամմեդ 3—րդ — 9, 50:
Մուհամմեդ փաշա — 164:
Մուհամմեդ բեկ — 79:
Մուհաֆիզ Անմեդ փաշա — 163:
Մուշեղ — 130:
Մուստաֆա փաշա — 36, 201:
Մուստաֆա սուլթան — 194, 195, 197:
Մուրադ սուլթան—119, 137, 198:
Մուրադ 2-րդ — 9:
Մուրադ 3-րդ — 57, 126:
Մուրադ 4-րդ — 9, 20, 60, 68, 205, 206, 211, 212, 214:
Մուրադ փաշա (կույուշու) — 57, 174—180, 189, 195:
Մուրբազա փաշա — 60, 204, 205, 215
Մուֆթի Քեմալ — 40, 41:

Յակոբ — 89:
Յուլար Կապդ — 157:
Յուլար դստի — 166:

Նախմա Մուստաֆա — 20, 144, 153, 162, 213:
Նասուհ փաշա — 176:
Ներսես (գրիչ) 38:
Նիկոլա Մոտիս — 141, 146:

Շահ Աբաս — 6, 29, 35, 43—47, 53, 59, 60, 180, 184, 198, 208:
Շահնազար Մելիք — 44:
Շահվերդի (Բերխուդա)—156, 157, 164:
Շերեֆէդդին — 39, 76, 98:
Շիրին բեկ — 178:

Չարակչուրի բեկ — 79:
Չակալօղլու Հաջի Մեհմեդ 129:
Չամչյան Մ. 110:
Չավուշ — 175:
Չավուշ Մեհմեդ — 147:
Չերբեզ Մահմուդ փաշա — 152:
Չիլախ — 166:

Պետրուշևակի Ի. Պ. — 52, 66, 95, 169, 184:
Պիեռռո դելլա Վալլե — 32, 133:
Պիտտոն դե Տուրնեֆոր — 32:

Ջանիբեկ Գիրայ — 59:
Ջանփոլադ — 176, 177, 190, 203, 217, 220:
Ջանփոլադ Ալի — 16, 27, 166, 172, 173, 175, 177, 195:
Ջեվադ բեյ — 109:
Ջաֆար փաշա — 39, 40, 41:
Ջեմշիդ — 175:
Ջենկինսոն — 38:
Ջղալօղլի (Ջղալզադե) Սինան փաշա—9, 50, 51, 54, 55, 126, 147, 169, 172, 181, 205:

Ջոն Նյուքեր — 40:
Ջուզեպպէ Բարբարա — 65:

Ռեֆիկ Ահմեդ — 79:
Ռում Մեհմեդ — 215:

Սաբբրջի Մահմեդ — 202:
Սակազյան Ա. — 78:
Սայիդ — 203:
Սասնեցի Ազարիա — 31, 132, 136, 144, 145, 148, 149, 155, 158, 159, 163, 164, 170—172, 185, 186:
Սարգիս (գրիչ) — 38:
Սարգիս խահանա — 44, 94:
Սեբաստացի Անանուն — 107, 110:
Սեբաստացի Թադեոս — 108, 109:
Սեբաստացի Մելիքսեթ — 27:
Սելանիկի Մ. — 117, 119, 127, 144:
Սելիմ 2-րդ (սուլթան) — 36:
Սեյֆօղլի Յուսուֆ — 195:
Սեմիկ — 130:
Սեֆի շահ — 60:
Սիմոն Երևանցի — 112:
Սիմոն Լեհացի — 103, 105:
Սմիրնով Ն. Ա. — 35:
Սմիրնով Վ. Գ. — 18:
Սոլակզադե (Մեհմեդ Հեմդեմի) — 18, 20, 202:
Սահպան Թազին — 218, 219:
Ստեփանոս գրիչ — 176:
Սրապիոն (գրիչ) 176:
Սրվանձտեանց Գ. Վ. — 85:
Սուլեյման (սուլթան) — 25, 35, 57, 120:
Սուրմեյան Առաավազդ — 59:

Վարդան Բաղիշեցի 99:
Վարդան — 130:
Վարդան գրիչ — 38:
Վարվար Ալի փաշա — 215:
Վելդան զադե Մեվլանա Ահմեդ — 174:
Վեֆիկ Աբդուրրահման — 98:
Վինչենցո դ'Ալեսանդրի — 39:
Վիտակ Պաուլ — 100:

Տաշեան Յակովպոս — 81, 128:
Տավերնիե ժան Բատիստ — 32, 53, 60, 88, 89, 113, 138:
Տեր-Ավետիսյան Ս. — 49:
Տեր Սիմոն — 188:
Տիշենդորֆ — 67:
Տվերիտինովա Ա. Ս. — 10, 12, 16, 91, 119, 137, 146, 157, 158:

Ուզդեմիր Օսման փաշա — 37, 41:
Ուզունչարշըլի Ի. Հ. — 12—14, 67, 68, 108:
Ուզուն Հասան — 95:

Փափազյան Հ. Դ. — 5, 47:
Փեշևի Իբրահիմ — 19, 21, 40, 48, 126, 142, 156, 197, 211, 215:
Փիլիպոս կաթողիկոս — 28:

Քանանուլու Մահմադ — 182:
Քեսամիս — 166:
Քենան փաշա — 61:
Քյաթիբ Չելեբի — 18, 20—22, 58, 61, 72, 73, 124, 135, 144, 146, 147, 154, 155, 164, 165:
Քյոմուրճյան Երեմիա Չելեբի — 31, 185:
Քյոռօղլի — 166, 184:
Քշտադի Մելիք Հայկազ — 44:
Քոսա Սաֆար — 166, 171:
Քրլու — 166:

Օսման սուլթան — 193—196, 198, 203, 204, 206:
Օսման սուլթան 2-րդ — 192, 200.
Օսման փաշա — 155:
Օրխան սուլթան — 107:
Օրմանյան Մատաթիա — 5, 110:

Ֆախրեդդին Մանօղլի 173:
Ֆերդինանտ բագվոր — 173
Ֆերհադ փաշա — 41:
Ֆրենկ Իբրահիմ փաշա 11:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Գլուխ առաջին

Գրականության և աղբյուրների տեսություն 7

Գլուխ երկրորդ

Հայաստանի քաղաքական դրությունը ջալալիների շարժումների նախօրեին և ընթացքում 33

Գլուխ երրորդ

Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը 16—17-րդ դարերում և հայ ժողովրդի իրավական վիճակը օսմանյան ֆեոդալների լծի տակ 63

Գլուխ չորրորդ

Ջալալիների ապստամբությունների հիմնական նախադրյալները . . 117

Գլուխ հինգերորդ

Ջալալիների ապստամբությունների անմիջական շարժառիթներն ու շարժման ընթացքը 142

Գլուխ վեցերորդ

Էրզրումի Աբաջա փաշայի բարձրացրած ապստամբության հանգամանքները 191
Եզրակացություններ 217
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ 221
Համեմատած 227
Резюме 241
Անվանացանկ 259

ՄԱՆՎԵԼ ԿԱՐԱՊԵՏԻ ԶՈՒԼԱԼՅԱՆ
МАНВЕЛ КАРАПЕТОВИЧ ЗУЛАЛЯН

ԶԱԼԱԼԻՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI—XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Հրատարակվում է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիր՝ Մ. Ս. Հասրաթյան
Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. Հովակիմյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. Կափլանյան
Սրբագրիչ՝ Ս. Կ. Զաքարյան

ՎՖ 04711, Հրատ. № 2633, ԽՀԽ № 995, պատվեր 206, տպաքանակ 5000

Հանձնված է արտադրության 26/III 1966 թ.։
Ստորագրված է տպագրության 20/IX 1966 թ.։
Տպագր. 16,5 մամուլ, Հրատ. 14,13 մամուլ, թուղթ № 2, 60×90 1/16։
Գինը 1 ռ. 05 կ.։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի էջմիածնի տպարան